

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐ

2

ՀԱՅՈՅ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԱՐՅԵՐ




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՅ ՊԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ
ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

2



ՀՀ ԳԱՍ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО "ТИТУТЮН" НАН РА

ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ 2001

A II
86538

787-041(470.25)

ԳՄԴ 63.3(27)

7 282

Ժողովածուն տպագրվում է 77 ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Պատասխանատու խմբագիր՝ 77 ԳԱԱ ակադեմիկոս Դ. Ա. Ավետիսյան
խմբագրական կոլեգիա՝ պ. գ. դ. է. Լ. Դանիելյան
պ. գ. թ. Ա. Ա. Սելբոմյան
պ. գ. թ. Կ. Դ. Խաչատրյան

7 282

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ /Գիտական հոդվածների ժողովածու/
ՀՀ ԳԱԱ- եր., ՀՀ «Գիտություն»
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» խորագրով գիտական հոդվածների երկրորդ ժողովածուում զետեղված են աշխատություններ, որոնք աղբյուրագիտական լայն հենքի վրա լույս են սփռում Հայոց միջնադարյան, նոր և նորագույն պատմության մի շարք վիճահարույց հիմնահարցերի վրա: Ժողովածուն նախատեսված է պատմաբանների և հայագետների համար:

7 0503020913 2001
703/02/-2001

ԳՄԴ 63.3 (27)

ՎՈԱՄԵՆՊՈՒՆ ԱՐՔԱՅԻ ՂԵՏԱԿԱՆ ՄՈՏԵՅՈՒՄԸ ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻՆ

Ս. Մեսրոպ Մաշտոցի համճարով կատարված հայ գրերի գյուտը իր դարակազմիկ նշանակությամբ, ամփոփելով հազարամյակների խորքից եկող Հայոց էթնո-հոգևոր լեզվամտածողության արգասիքները, նոր լիցք հաղորդեց քրիստոնեությամբ հոգեցված դրա հետագա ընթացքին՝ պատմության փոթորկալից ալիքների վրա հայտնված հայ ժողովրդի համար լինելով ազգապահպան վահան: Ս. Մաշտոցը (361-440) իր աստվածաշնորհ գործունեության մեջ միայնակ չէր. նրա մեծ գործին աջակից և սատարող եղան Հայոց Վառձապուհ արքան (388-414) և Ս. Սահակ Պարթև կաթողիկոսը (388-439):

Այդ մեծ իրադարձությունը հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցավ այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ Հայաստանի պարսկահռոմեական առաջին բաժանումից /385/ հետո Մեծ Հայքի թագավորության հետագա գոյությունը վտանգվեց և Վառձապուհ արքայից մեծ խիզախություն պահանջվեց այդ կարևոր գործի իրագործմանն ուղղված Հայոց աշխարհի ուժերի հովանավորը լինելու:

Այս առումով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի հանգամանքի վրա, որը քաղաքական բնույթի էր: Վառձապուհը իր գահակալության ժամանակաշրջանում ի սկզբանե կաշկանդված է եղել իր եղբոր՝ Խոսրովի ձերբակալմամբ պարսից արքունիքի կողմից: Պարսից արքա Շապուհ III-ը (383-388) Հայաստանի արևելյան մասը իր ազդեցության տակ պահելու համար, Խոսրովին թագավոր ուղարկելով, Վառձապուհին, փաստորեն, պատանդ էր պահել արքունիքում: Նույնը տեղի ունեցավ, երբ նրան, որպես թագավոր ուղարկելով Հայաստան, Խոսրովին ձերբակալեց: Պատճառը եղել էր նրա ձգտումը՝ թագավորել Հայաստանի բաժանված երկու մասերի վրա, ինչպես նաև Սահակ Պարթևին առանց Տիգրանի՝ Սասանյան արքունիքի համաձայնության Հայոց կաթողիկոս ճանաչելը: Խոսրովը՝ Վահրամ IV-ի (388-399) և Հազկերտ I-ի (399-421) գահակալության օրոք, մինչև 414 թ. պահվեց Պարսկաստանում և միայն Վառձապուհի մահվանից հետո վերադարձավ Հայաստան և գահակալեց մեկ տարվա ընթացքում: Խոսրովի ձերբակալությունը մեծ նախազգուշացում էր Վառձապուհին՝ իր հետագա ինքնուրույն քայլերը սահմանափակելու համար: Այդ իրավիճակում Հայոց արքան սատար եղավ հայ նշանագրերի ստեղծման և պետականորեն ընդունման գործին: Այդ ուղղությամբ քայլերը այնպիսի հմտությամբ էին կատարվում, որ պարսից արքունիքը ոչ մի խոչընդոտ չհարուցեց այդ գործը իրականացնելու ճանապարհին:

Ինչպես հետևում է պատմիչների հաղորդումներից, թե՛ Սահակ Պարթևը, և թե՛ Վառձապուհը մինչ այդ գործում Մաշտոցին սատարելը, իրենք ինքնուրույնաբար կանգնել էին հայ գրերի ունենալու անհրաժեշտության առջև: Հայոց կաթողիկոսի մտահոգությունը պարզ էր, քանի որ հոգևոր թելերով Աստվածաշունչը կապել ժո-

դովրդի հետ նշանակում էր այն՝ նրա լեզվամտածողությանը հարազատ ոճով հասցնել հայ ժողովրդի հոգուն, ինչին խանգարում էր միայն օտար լեզուներով Ս. Գրքի առկայությունը: Ուստի Վառձապուհ արքան և Սահակ Պարթև կաթողիկոսը արդեն մտահոգ էին հայ նշանագրերի խնդրով, երբ Մեսրոպ Մաշտոցը նրանց դիմեց դրա իրագործմանը ձեռնամուխ լինելու առաջարկով:

Ըստ Կորյունի, Մաշտոցը Գողթնում եղած ժամանակ, ավետարանելիս լեզվական դժվարությունների առջև կանգնելով, մտածումըների մեջ ընկավ, «եթե որպիսի՝ արդեօք ելս իրացն գտանիցե»¹: Սահակ Պարթևին Մաշտոցը «պատրաստական գտանել մին փութոյ հաւանեալ... Ապա ելանէր նոցա պարգեւական յամենաբարին Աստուծոյ ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, եւ ի գիւտ նշանագրաց Յայաստան ազգին հասանել»: Մաշտոցը եւ Սահակը իրենց մտածումըների մասին տեղյակ պահեցին Վառձապուհ արքային, որը նրանց հայտնեց ասորի եպիսկոպոս Դանիելի մասին, «որոյ յանկարծ ուրեմն գտեալ նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի»²:

Այսպիսով, հայերեն նշանագրերի ստեղծման այդ փուլին վերաբերող Կորյունի շարադրանքից հետևում է, որ Մաշտոցի մոտ հայ գրեր ունենալու անհրաժեշտությունը առաջացավ հենց իր ավետարանական առաքելության ընթացքում, Սահակին նա պատրաստ գտավ այդ գործի համար, իսկ Վառձապուհը տեղյակ էր Դանիել ասորու ստեղծած գրերի մասին:

Ըստ Մովսես Խորենացու, Գողթնում և Սյունիքում եղած ժամանակ Մաշտոցը, ուսուցանելիս, բավականին նեղություն կրեց, որովհետև ինքն էր կարդացողն ու թարգմանողը, և եթե իր բացակայության ժամանակ ուրիշն էր կարդում, ապա աստվածաշնչական խոսքը անհասկանալի էր մնում ժողովրդին՝ թարգմանիչ չլինելու հետևանքով: Ուստի նա վճռեց հայերեն լեզվի համար տառեր ստեղծել:

Մովսես Խորենացուց իմանում ենք մի մանրամասնություն, որը լրացնում է Կորյունի հաղորդումը Վառձապուհի արքայի մասին: Հաբել քահանան խոստացել էր Դանիել եպիսկոպոսի կողմից հայերեն լեզվի համար հարմարեցված տառերը բերել, քանի որ Վառձապուհը հույներին եւ պարսիկներին հաշտեցնելու համար մեկնելով Միջագետք, բավական նեղություն էր կրել քարտուղարի պատճառով այն օրից, երբ Մեսրոպը արքունի դռնից հեռացավ: Թագավորը ոչ մի ճարտար դպիր չէր կարողանում գտնել, որովհետև պարսկական գիր էին օգտագործում: Վառձապուհը, վերադառնալով Յայաստան, «գտանէ ժողովեալ ժողովեալ առ մեծն Սահակի եւ Մեսրոպի զամենայն եպիսկոպոսունս, հոգեալ զգիւտ դպրութեան Յայոց, զոր զգացուցին արքային. եւ նա պատմեաց նոցա զասացեալսն վանականին: Զոր իբրեւ լուան՝ թախանձէին զնա փոյթ զանպիտեացն գտանել պիտոյից»: Վառձապուհի արքան խաղտուն տոհմից Վահիրճին ուղարկում է և Հաբելի միջոցով Դանիելից բերում են «կարգեալ ըստ ծելոյ օրինակի յիւնականին զվաղնջուցն գրեալ շարագիր» տառերը և հանձնում Սահակին և Մաշտոցին: Նրանք այդ տառերով ուսուցանում են, սակայն առանց դրական արդյունքի, քանի որ «ոչ լինել բաւականին այնու նշանագրօք ստոյգ հոլովել

¹ Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1981, էջ 88:

² Նույն տեղում, էջ 90:

գիեզեցնայ բառից հայկականաց հազներգարաք»¹: Այսպիսով խորենացուց իմանում ենք, որ Վռամշապուհը ինքնուրույն էր եկել հայերեն գրեր ունենալու պահանջին, իսկ Սահակն այդ գործում արդեն Մաշտոցի կողքին էր:

Ըստ Ղազար Փարպեցու, ասորերեն լեզուն չհասկացող եկեղեցականների ու ժողովրդի ջանքերը ապարդյուն էին դառնում եւ երանելի Մաշտոցն այդ մասին երկար խորհելով մտածում էր. «Մանաւանդ թէ զոն նշանագիրք հայերէն լեզուոյս, որով հնար է՝ ինքեան ծայնիւ եւ ոչ մուրացածոյ բարբառով, շահել զոգիս արանց եւ կանանց առ հասարակ յամենայն եկեղեցիս բազմութեան»²: Մաշտոցն իր մտահոգութեան մասին հայտնում է Սահակին, որը քաջալերում է նրան և ավելացնում. «Քան զաւուրս ինչ յառաջ ոչ բազումս, առեալ բանք յեկեղեցւոջ յաղագս կարօտութեան այդպիսի պիտոյից՝ ասացեալ է ուրեմն ցարքայ, թէ տեսի նշանագիրս հայերէն առ ումեմն եպիսկոպոսի ի գեօղ միում եւ թագաւորն յիշէր զասացեալսն, քանզի եւ ինձ նա պատմեաց»: Այնուհետև Սահակն ու Մեսրոպը գնում են Վռամշապուհի մոտ, նրան հայտնում գործի կարելությունը մասին: Թագավորը, հիշելով Յարբելի խոստումը, դեսպան է ուղարկում նրա մոտ՝ Դանիելից գրերը բերելու համար³: Ուրեմն, Փարպեցին հաղորդում է, որ Մաշտոցը ենթադրել է, որ կային հայերեն լեզվով նշանագրեր, ինչը չի կապվում Դանիելի մոտից բերված տառերի հետ, որոնց մասին նա հետո է իմանում:

Կարելի է տեսնել, որ գրերի գյուտի նախապատմությունը Կորյունի, Մովսես խորենացու և Ղազար Փարպեցու երկերում տարբեր կարգի մանրամասնություններ են պարունակում, որոնք միմյանց լրացնելով, հնարավորություն են տալիս մանրամասնորեն պատկերացնել Վռամշապուհ արքայի, Ս. Մեսրոպ Մաշտոցի և Ս. Սահակ Պարթևի մտածումներին ու գործողությունները: Մասնավորապես պարզվում է, որ Վռամշապուհը՝ նախքան Սահակի և Մաշտոցի իրեն դիմելը, արդեն ուղիներ էր փնտրում հայ նշանագրեր ունենալու համար, քանի որ Յայոց թագավորությունը կառավարելիս խիստ կարիք ուներ մայրենի լեզվով արքունի գործերը վարելու, իսկ այդ նշանակում էր հայ գրեր ունենալու անհրաժեշտությունը: Ուստի Ս. Մեսրոպ Մաշտոցն իր մտահաղացումն իրագործելիս՝ ի դեմս Վռամշապուհ արքայի, գտավ ոչ միայն պաշտոնապես սատարողի, այլև գաղափարակցի: Այսպիսով, Վռամշապուհ արքայի և Ս. Սահակ Պարթևի կողմից Ս. Մեսրոպ Մաշտոցի առաքելության սատարումը բխում էր ինչպես Աստվածաշնչի և եկեղեցական արարողությունների թարգմանության, այնպես էլ երկրի պետական գործերը մայրենի լեզվով վարելու անհրաժեշտությունից:

¹ Մովսես խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 325-326:

² Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց: Թուրք առ Վահան Մամիկոնեան, Երևան, 1982, էջ 30:

³ Նույն տեղում, էջ 32:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻՆ ԱՆԳՐԱԳԱՌՆԱԼՈՒ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՂԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄԵԹՈԴԸ

Մովսես Խորենացին իր «Պատմութիւն Հայոց»-ում, անդրադառնալով Աստվածաշնչից կատարված վկայակոչումներին, ղեկավարվել է պատմա-համեմատական մեթոդով: Աստվածաշնչական թեմաների կիրառման անհրաժեշտությունը, ինչպես հետևում է Խորենացու երկից, թելադրված էր թե՛ համաշխարհային պատմության մեջ Հայաստանի տեղը ցույց տալու և թե՛ Հայոց պատմությունը հոգևոր ամբողջականության մեջ շարադրելու անհրաժեշտությամբ:

Արդեն իսկ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի երեք գրքերում Աստվածաշնչից քաղված նյութերի հիման վրա կատարված շարադրանքի հաջորդականությունից երևում է Պատմահոր աշխարհայացքային ընկալումներից բխող գիտահետազոտական հայեցակարգը, որի հիմնական առաջնությունը էր Հայոց տեղաբնիկ տոհմաբանության և այդ հիմքի վրա բարձրացած ազատագրական պայքարով պահպանվող պետականության զաղափարը:

Առաջին գրքում քննության նյութ դարձնելով Հին Կտակարանի թեմատիկային ուղղակի կամ անուղղակի առնչվող նյութերը, Պատմահայրը, ըստ այդմ, Հայոց հնագույն պատմության շարադրանքը միախլուսել է համամարդկային ազգաբանությանը, ցույց տալով՝ հայ ժողովրդի ծագումնաբանությունից սկսվող Հայաստանի պատմության տեղը հին աշխարհի երկրների պատմության մեջ: Այդ խնդիրը լուծելու համար Մովսես Խորենացին, նույնիսկ ընդլայնելով իր հետազոտության աղբյուրագիտական հենքը, ընդգծել է, որ նաև Սուրբ Գրքից դուրս՝ հին պատմություններից է քաղելու հավաստի տեղեկություններ Նոյի սերունդների ազգաբանությանն անդրադառնալիս: Այս կապակցությամբ նա գրել է. «Աստուածայնոյն Գրոյ զիւրսն ի բաց հատեալ յինքն սեպիական ազգ՝ ելիք զայլոցն իբր զարհամարելեացն և իւրոց անարժան կարգելոց բանից: Զորոց մեք սկսեալ ճառեսցուք՝ որքան է կարողութիւն, որպէս գտաք զհաւաստին ի հնոց պատմութեանց, մերով մասամբ ամեննէին անտուտ»¹:

Հայ պատմիչներից Մովսես Խորենացին առաջինն էր, որ Հայոց աշխարհի ամբողջական պատմությունը, իր ժամանակի առումով, դիտել է Աստվածաշնչի համատեքստում: Այսպես, գրելով Հայկի բնակեցրած տեղի մասին, նա նշել է. «Եւ ինքն խաղայ, ասէ, այլով աղիսիւն ընդ արևմուտս հիւսիսոյ, զայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուանէ զանուն լեռնադաշտին Հարթ, այս ինքն թէ հարթ են աստէն բնակեալք՝ ազգի տանն թորգոմայ»: Ինչպէս նաև, մեկ այլ տեղ գրել է. «... վկայէ և Երեմիա մարգարէ ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատերազմ. «Հրաման տուր, ասէ, Այրարատեան թագաւորութեանն և Ասքանազեան գնդին»²:

Կորյունն իր շարադրանքում *Ասքանազյան* անվանումը որպես պատմական իրողություն է դիտել Հայոց աշխարհի և ազգի կապակցությամբ. «ԶԱՅՔԱՆԱՅԵԱՆ

¹ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 17:

² Նույն տեղում, էջ 33, 67:

Ազգին և զՀայաստան աշխարհին զաստուածապարզել զորոյն...»¹, իսկ Ազաթանգեղոսը. «Ընթերցեալ զԹորգոմայ ազգիս, զՀայաստան աշխարհիս զաստուածապարզեալսն աւետարանսն աւետարանին քարոզելոյ բանին կենաց», «... բոլիսցին Հայոց տանն Թորգոմայ շնորհք քարոզութեան Աւետարանին պատուիրանացն Աստուծոյ», «... բիւրաւորք ի մէջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ»² և Փավստոս Բուզանդը («... տան որդւոց Թորգոմայ աշխարհին Հայոց»³) *Թորգոմայ*ն անվանումը:

Կորյունն արդեն իսկ որպէս Հայոց պատմութեանը վերաբերող պատմական փաստ է ներկայացրել *Ասքանագյան ազգ-Հայոց ազգ* նույնացումը⁴, այն բխեցնելով աստվածաշնչային խոսքից՝ «Այրարատեան թագաւորութեանցն և Ասքանագեան գնդին» մասին, որը հայ պատմագիրներից առաջինը Մովսէս Խորենացին Հայոց պատմութեան առումով էր դիտարկել, գրելով. «Արդ՝ այժմ անցից ի թիւ մերոց արանց, մասնաւանդ թէ թագաւորաց, մինչև ցտերութիւնն Պարթևաց: Քանզի ինձ այսոքիկ արք ի մերոց թագաւորաց են սիրելիք, որպէս բնիկք և իմոյ արեան առուք և հաւաստի հարազատք»⁵: ... Եւ զի արդարև զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ թագաւորութիւն՝ վկայէ և Երեմիա մարգարէ ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատե-րազմ...»⁶:

Աստվածաշնչի գրաբար բնագրի («Պատուէր տուք յինէն Այրարատեան թագաւորութեանցն և Ասքանագեան գնդին»⁷), «Այրարատեան» անվանման հետ «թագաւորութեանցն» բառի կիրառումը հոգնակիով հիշեցնում է նույնպէս հոգնակիով ներկայացված «ի Լերինս Արարատայ» արտահայտությունը⁸:

Մովսէս Խորենացու և Ազաթանգեղոսի հիշատակած «Ազգ տանն Թորգոմայ», «Թորգոմայն ազգ» և Կորյունի՝ «Ասքանագյան ազգ» անվանումները ծագում են Նոյի որդի Հաբեթի թոռների՝ Թորգոմի և Ասքանագի անուններից, որոնք Գամերի որդիներն էին⁹:

Մովսէս Խորենացու տեքստի վերոհիշյալ երկու հատվածները վկայում են Աստվածաշնչի, որպէս սկզբնաղբյուրի նկատմամբ նրա պատմաքննական մոտեցման մասին: Եթե առաջինի դեպքում մա, Հին Կտակարանի համապատասխան մասերը նկատի ունենալով, այն դիտել է գրված «սեպիական ազգ»-ի համար, ապա նույն՝

¹ Պատմութիւն վարդգ և մանուան առ երանելոյ սքոյն Մաշթոցի վարդապետի մերոյ քարգմանչի ի Կորին վարդապետէ, Երևան, 1981, էջ 70:

² Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1909, էջ 12-13, 403, 415:

³ Փաստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, քննադրել Զ Պատկանյանի, Երևան, 1987, էջ 104, 284:

⁴ Նույն տեղում, էջ 302, ծան. 2: Ասքանագ անունը հիշատակված է Աստվածաշնչի մահ Ծննդոց (Ժ 3) և Ա Մնացորդաց (Ա 5) գրքերում, որպէս Յաբեթի թոռ:

⁵ Գ. Սարգսյանը մշել է, որ Մովսէս Խորենացին իր երկում համոզեա եկող երկու հարստութիւններից՝ այստեղ նկատի է ունեցել առաջինը, որն սկսվում էր Սկայոթոյն որդի Պարտյոյով՝ հայերի մախնի Հայկի սերնդից, իսկ երկրորդը՝ Արշակունիների հարստութիւնն էր, որն առաջացել էր պարթև Արշակունիներից (Мовсес Хоренаци, История Армении, перев. с древнеарм. языка, введение и прим Г. Саркисяна, Ереван, 1990, с. 228-229, прим. 144):

⁶ Մովսէս Խորենացի, էջ 66-67:

⁷ Երեմիա, ԾԱ 27:

⁸ Ծննդ., Ը 4:

⁹ Ծննդ., Ժ 2-3:

Հին Կտակարանի Երեմիայի մարգարեությունից քաղված այս հատվածը խորենացին ներկայացրել է որպես Հայոց հնագույն պատմության որոշակի ժամանակաշրջանին (մ. թ. ա. VI դար) վերաբերող ծանրակշիռ փաստ, քանզի գրել է. «Եւ այս հաւաստի գոլոյ մերոյ թագաւորութեանն առ այնու ժամանակաւ»¹:

Պատմահոր երկի առաջին գրքի բովանդակությունը գլխավոր առանցքն է՝ Հայոց ծագումնաբանական արմատների դիտարկումը աստվածաշնչային հավաստիության տեսանկյունից: Այսինքն, Մովսես խորենացին, յուրաքանչյուր կերպարի, կամ դրվագի մասին խոսելիս, Աստվածաշնչի վրա հիմնված ուղղակի և արտաքին սկզբնաղբյուրներից եկող ամուղղակի փաստարկների միջև նույնիսկ հակասությունների առաջացման դեպքում, լուծումները փնտրում է՝ հաշվի առնելով Աստվածաշնչից թխող ընկալումները:

Սկզբնաղբյուրային ոչ-ստույգ բնույթի տեղեկություններից առաջացող հակասություններից խուսափելու անհրաժեշտությունից ելնելով, Պատմահայրը յուրաքանչյուր դեպքում իր պատմաքննական մեթոդից թխող ուրույն վերաբերմունքն է ցուցաբերել, գրելով. «Եւ այսոքիկ զրոյցք տուտ կամ թէ արդարև լեալ՝ մեզ չէ ինչ փոյթ»²: Այստեղ խոսքը Քսիստուրոսի և նրա որդիներից Սիմ-Ձրվանի, Տարբանի մասին զրույցն է: Մովսես խորենացու մոտ նաև այլ տեղեկություններ կան, որոնք նույնպես պետք է զրույցներից քաղված լինեն: Այսպես Գնթունիների տոհմանվան ծագման մասին պատմելիս, խորենացին գրել է, որ Վաղարշակ թագավորը. «Եւ զգեցուցանողս իւր զծեռնս ի գաւակէ Քանանացւոց. և անուն կոչէ ազգին Գնթունիս»: Այն, որ այս կարգի տեղեկությունը կասկած է հարուցում, նշել է ինքը՝ Պատմահայրը, ընդգծելով. «... ոչ գիտեմ էր աղագաւ»³:

Ավելին, Մովսես խորենացին խիստ բացասական գնահատական է տվել պարսից առասպելակերպ զրույցներին: Դիմելով Սահակ Բագրատունուն, Պատմահայրը գրել է. «Բայց զի՞նչ արդեօք տարփանք քեզ՝ և Բիւրասպեայ Աժդահակայ փծուն և անճոռնի առասպելքն իցեն. և կամ է՞ր սակս զմեզ Պարսից անյարմար և անոճ բանից, մանաւանդ թէ առաւել վասն անբանութեան, առնես աշխատ, և անբարի առաջնոյ նորա բարերարութեան, և դիւաց նմա սպասաւորութեան, և ոչ վրիպեցուցանել կարելոյ զվրիպեալն և զտուտն... Զի՞նչ քեզ այսոքիկ կարօտութիւն առասպելք տուտք, կամ զի՞նչ պէտք անմիտ և անհաճար բանից յարմարանք»⁴:

Պատմահոր այսպիսի բացասական դիրքորոշումը պարսից առասպելների նկատմամբ պետք է բացատրել թերևս այն հանգամանքով, որ նա դրանցում տեսնում էր Աքեմենյանների ժամանակաշրջանում գտնվող այն ակունքները (մ. թ. ա. VI դ.), որոնք սնունդ էին Սասանյանների կողմից Պարսկաստանում III դարի երկրորդ կեսին պետական կրոն հռչակված զրադաշտականությանը⁵: Իրանի գահին հաստատվելու

¹ Մովսես խորենացի, էջ 67:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 110:

⁴ Նույն տեղում, էջ 89:

⁵ Фрай Р., Наследие Ирана, М., 1972, с. 302.

հենց առաջին տասնամյակներից Սասանյանները ձգտեցին իրենց ազդեցությունը տարածել հարևան երկրների, մասնավորապես Չայաստանի վրա¹:

Մովսես Խորենացին մանրամասն գրել է այն բռնությունների մասին, որոնք III դ. 60-70-ական թվականներից, երբ Չայոց գահը ժամանակավորապես անցել էր պարսկական արքունիքի հսկողության տակ, զրադաշտական մոզերը գործադրեցին Չայաստանում ի կատարումն Սասանյանների նվաճողական քաղաքականության: Պատմահայրը, պատմելով Չայաստանում սասանյան արքայազն Ռոմիզդ-Արտաշիրի գահակալության տարիների մասին, գրել է. «Իսկ Արտաշիր... զիտլոն որմզդական, որ ի վերայ բազմին որ ի Բագաւան, անշէջ հրամայէ լուցանել: Բայց զանդիսն, զոր արարա Վադարշակ պատկեր իւրոց նախնեացն հանդերձ արեգակամբ և լուսնիւ յԱր-մաւիր, և փոխեցան յԱրմաւրայ ի Բագարան և դարձեալ յԱրտաշատ՝ զայնոսիկ փշոյն Արտաշիր»: Չայաստանում հոգևոր ասպարեզում կատարվող ավերածությունները կազմում էին Սասանյանների կողմից կիրառվող բռնազավթման քաղաքականության մասը, քանի որ, նրանք ուժեղացրին ճնշումը նաև վարչաքաղաքական և տնտեսա-կան ասպարեզներում, ինչպես տեղեկանում ենք Մովսես Խորենացու շարադրանքի շարունակությունից. «Եւ զերկիրս գրով ընդ հարկաւ իւրով արկանէ, և ամենկիմբ զիւր անունն հաստատ: Նա և զսահմանս հաստատեալս յԱրտաշիսէ, զքարինս յերկրի կա-ցուցանելով, նորոգեաց, և յիւր անունն փոխելով Արտաշիրական անուանեաց: Եւ կա-լաւ զաշխարհս մեր որպէս զմի յաշխարհացն իւրոց, պարսիկ գործակալօք, ամս քսան և վեց»: Այս ժամանակաշրջանը Մովսես Խորենացին անվանել է «խառն անիշ-խանութեան»²: Տրդատ Մեծի գահակալությամբ³ և, հատկապես, Մծրինի 40-ամյա պարսկա-հռոմեական պայմանագրի (298 թ.) կնքումից հետո Մեծ Չայքի թագավո-րությունը վերականգնեց իր անկախությունը:

Պարսկահռոմեական նվաճողական քաղաքականության հետևանքով ան-կում ապրած հայ Արշակունիների թագավորության ժամանակակիցն էր Մովսես Խո-րենացին, որը ականատես եղավ թե՛ քաղաքական և թե՛ կրոնական բնագավառնե-րում, նվաճողների իրականացրած բռնությունների: Դենց՝ Խորենացուց ենք իմանում, հատկապես, Սահակ Պարթևի կաթողիկոսության ընթացքում Սասանյանների կիրա-ռած խարդավանքների մասին: Շապուհ III-ը և նրան հաջորդած Արտաշիրը չհան-դուրեցին Խոսրով IV-ի ինքնուրույն քայլերը: «Շապուհ ի ցամաքս ընդ խոսրովայ ի բարեկամանալն Արկադեայ անձամբ, յանհրաման կարգել յեպիսկոպոսութիւն զձեռն Սահակ. վասն որոյ յղեալ մեղադրութիւն հանդերձ սպառնալեօք... Եւ Արտաշ-րի ընկեցեալ զնա ի տերութենէն, փոխանակ կացուցանելով զՎռամշապուհ զեղբայր նորին»⁴: Վռամշապուհի և մի քանի ամիսների ընթացքում նրան հաջորդած Խոսրով IV-ից հետո Չայոց գահին Չազկերտ I-ը նստեցնում է իր որդուն՝ Շապուհին, որի գա-հակալությունը Պատմահայրը բնութագրել է. «... անարգաբար թագաւորեալ Չայոց Շապիոյ»⁵: Վերջին պաշտոնական հարվածը Սահակ Պարթևի կաթողիկոսական իշ-

¹ Երեմյան Ս., Նախշ-ի Ռուտենի «Քաաբա ի Ջարդուշտ» հուշարձանի արձանա-գրության վկայությունները չայաստանի մասին, ՊԲՀ, 1966, N 2, էջ 68, Луконин В. Г., Иран в III в. М., 1979, с. 6-7:

² Մովսես Խորենացի, էջ 215-216:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 320-321:

⁵ Նույն տեղում, էջ 321, 332:

խանութանը հասցրեց պարսից արքա Վռամ (Վառահիրան) V-ը (421-439 թթ.): Արտաշես-Արտաշիր Արշակունուն թագավորական իշխանությունից գրկելուց և ձերբակալելուց հետո, Վռամը «նոյնպես և զձեռն Սահակ, և զտունն կաթողիկոսական ունել յարքունիս, և տալ փոխանակ նորա յաթոռ եպիսկոպոսապետութեանն Հայոց զՍուրմանկ զայն»¹:

Սասանյանների ռազմությունները կրոնական ասպարեզում բխում էին նրանց ձգտումից՝ թուլացնել Հայ եկեղեցին, որը, հանդիսանալով Ընդհանրական եկեղեցու բաղկացուցիչ մասը, միևնույն ժամանակ, արդեն իսկ IV դարի ընթացքում անկախացել էր Հռոմեական կայսրության սահմաններում գտնվող Կեսարիայի միտրոպոլիտների ազդեցությունից և, փաստորեն, կայացել որպես ազգային եկեղեցի²: Սասանյանները, գիտակցելով Հայ եկեղեցու ազգապահպան և միավորիչ նշանակությունը հայ ժողովրդի կյանքում, պառակտիչ գործողություններ էին ձեռնարկում կաթողիկոսական իշխանության դեմ: Այդ ուղղությամբ կատարվող քայլերից էր Սուրմանկի կարճատև աթոռակալությունից հետո ոճն ասորի Բրքիշոյի աթոռակալումը: Նրա օրոք Հայ եկեղեցուն հասցրած վնասի մասին Խորենացին գրել է. «Սա եկեալ վատթար ընկերակցօք, ածեալ ընդ ինքեան և կանայս տնկալուչս, անժուժաբար և աւելորդօք և յափշտակութեամբ վախճանեցելոցն վիճակաց վարեալ ամս երիս»³:

Այս ժամանակաշրջանում, նույնիսկ պարսից արքունիքի հետապնդումների պայմաններում, այնքան մեծ էր Սահակ Պարթևի հեղինակությունը, որ Բրքիշոյից հետո, Վռամը, խիստ սահմանափակություններ նշանակելով, թույլ տվեց վերադառնալ Հայաստան մեկ՝ այլ ասորի դրածոյի հետ: Ինչպես Խորենացին է գրել. «Եւ զձեռն Սահակ արծակեալ՝ թողու ի նա գեօղս սակաւս ի նորին տանէ, զի նստցի միայն յինքեան վիճակի, իշխանութիւն ունելով միայն վարդապետտութեան սովորական կրօնիցն, և ձեռնադրութեան զայնոցիկ՝ զորոց և Շանուէն յանձն առնուցու»⁴: Շնուելը, ինչպես և սպասվում էր, շարունակեց Բրքիշոյի անփառունակ գործը, ինչի մասին վկայում է Պատմահայրը, որը Հայ եկեղեցուն և հատկապես Սահակ Պարթևին բաժին հասած հալածանքների ականատեսն էր⁵: Շնուելի մահվանից հետո, երբ նախարարները խնդրեցին Սահակ Պարթևին կրկին բարձրանալ կաթողիկոսական աթոռին, նա չհամաձայնեց, իր հրաժարումը հիմնավորելով իրեն երևացած տեսիլքով⁶: Իհարկե, Սահակ Պարթևի հրաժարման պատճառներից պետք է լիներ այն անբարենպաստ մթնոլորտը, որը ստեղծվել էր իր կաթողիկոսության տասնամյակների ընթացքում պարսից

¹ Մովսես Խորենացի, էջ 349:

² Տես՝ Հարությունյան Բ., Հայոց արքունիքի դերը Հայոց եկեղեցու անկախության գործում. - «Հայոց եկեղեցի և պետություն», Սիջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2000, էջ 28-48: Ա.Մուշեղյանը գրել է. «Պապ թագավորի ջանքերով Հայ եկեղեցուց վերացավ Կեսարիայի աթոռի գերիշխանությունը, իսկ Հայաստանը դադարեց լինել «Կեսարիայի աթոռի նահանգ», ինչպես համարվում էր Գրիգոր Լուսավորչի ձեռնադրման ժամանակից ի վեր» (Նույն գրքում՝ Մուշեղյան Ա., Հայ եկեղեցու և Հայոց պետության փոխհարաբերությունները V դարի հայ մատենագրության մեջ, էջ 53):

³ Մովսես Խորենացի, էջ 349:

⁴ Նույն տեղում, էջ 350:

⁵ Նույն տեղում, էջ 354:

⁶ Նույն տեղում:

արքունիքի վարած քաղաքականության հետևանքով¹, որը, ծգտելով թուլացնել Հայ եկեղեցին, հող էր նախապատրաստում Հայաստանում մազդեզականություն տարածման համար: Այսպիսի իրողությունով պետք է թելադրված լիներ Մովսես Խորենացու խիստ քննադատական մոտեցումը պարսից առասպելներին:

Մինևույն ժամանակ, առասպելների մասին խոսելիս, Մովսես Խորենացին, կիրառելով համեմատական մեթոդը, պարսկական առասպելներից զանազանել է հունական առասպելները, նշելով. «Մի՞ արդեօք յունական պերճ ողորկ առասպելք իցեն հանդերձ պատճառաւ...»: Այս նախադասության շարունակությունում Պատմահայրը խիստ կարևոր ընդհանրացում է կատարել այս կարգի առասպելների պատմական արժեքի մասին, ինչը նրա կիրառած պատմա-համեմատական մեթոդի արգասիքը կարելի է համարել հին գրույցների առասպելների ուսումնասիրության բնագավառում: Պատմահայրը գրել է. «... որք զճճարտութիւն իրաց այլաբանաբար յինքեանս ունին թաքուցեալ »²:

Մովսես Խորենացին հնագույն ժամանակներից եկող՝ նախաքրիստոնեական-հեթանոսական և քրիստոնեական դարաշրջանների Հայոց պատմությունը ընդգրկող շարադրանքի հիմքում դնում է Աստվածաշունչը, գրելով. «Եւ սկսայց՝ յորոց և այլքն, որք յեկեղեցուք և ոյք ըստ Քրիստոսի, աւելորդ համարելով զարտաքնոցն երկրորդել յազգաս ակզբանն առասպելս, բայց եթ զկնիսն՝ ժամանակս ինչ արդեօք և զարս յայտնիս, որում և աստուածայինքն ի ճահ զայցեն պատմութիւնք բանից. մինչև ի հարկէ երթեալ հասանիցենք ի հեթանոսականսն գրուցատրութիւնս. սակայն և ի նոցանէ՝ զոր ինչ հաւաստին կարծենք, ամնուկ»³: Այսինքն, այս տողերը, փաստորեն, ներկայացնում են Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգի ծրագիրը՝ իր կողմից օգտագործվող սկզբնաղբյուրների հանդեպ:

¹ Սահակ Պարթևը, չնայած պարսից արքայի կողմից զրկվել էր կաթողիկոսական աթոռից, այնուամենայնիվ, իր հնարավորության սահմաններում շարունակում էր հոգևոր-կրթական գործը, ինչպես հաղորդում է Խորենացին. «Այլ մեծն Սահակ ոչ ինչ կասեաց զհոգևոր կարքն ղիեցուցանել մանկանց եկեղեցոյ հանդերձ Մեսրոպաւ, զոր թողեալ խարսխեաց յեկեղեցուցն կաթողիկէ, որ ի Վաղարշապատ քաղաքի, ինքն կալով ի Բագրևանդ գաւառի, ի տեղուցն՝ ուր ծագեաց լոյս յերկնից ի մկրտել սրբոյն Գիրգորի ԳՏրդատ արքայ և զբոլոր Հայս» (Նույն տեղում, էջ 354):

² Նույն տեղում, էջ 89-90:

³ Նույն տեղում, էջ 12:

**ՀԵՏՔԱՂԿԵԳՈՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ /V ԳԱՐԻ II
ԿԵՍ-VI ԳԱՐ/ ԳԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐԻ
ԵՌԻՐՋ**

Եկեղեցու պատմության հետքաղկեղոնական ժամանակաշրջանի կարևորությունը պատմական, գրական, փիլիսոփայական, անշուշտ նաև աստվածաբանական տեսանկյունից արդեն իսկ ընդունվել և արժեքավոր ուսումնասիրման է ենթարկվել որոշ հայտնի գիտնականների կողմից¹:

Հետքաղկեղոնական ժամանակաշրջանը շարունակական մի պայքար է միաբնակ և երկբնակ հատվածների միջև: Եվ այս պայքարում ակնհայտ է հակաքաղկեղոնական հատվածի մեծացող հզորությունն ու աճող գերակշռությունը Քաղկեդոնի կողմնակիցների նկատմամբ: 451թ.-ից հետո «միաբնակները հաղթանակող կուսակցություն էին եկեղեցու ներսում գրեթե մի ամբողջ սերունդ»²:

Քաղկեդոնի ժողովը լայն արծագանք գտավ Արևելքի բոլոր նշանավոր թեմերում, առաջացնելով մի ճգնաժամ, որը դժվար էր վերահսկել: Հարցն արդեն սոսկ աստվածաբանական բանավեճ չէր և կամ եկեղեցական հեղինակությունների ու պատրիարքական իրավասությունների միջև գնացող պայքար: Իրականում այն իրենից ներկայացնում էր մի կոնֆլիկտ՝ Բյուզանդական կայսրության ողջ եկեղեցական քաղաքականությունն արտահայտող: Քաղկեդոնի ժողովը «դարձավ պորթլենդ բառի կատարյալ իմաստով, փաստորեն՝ ժամանակի պորթլենդ»³:

Պայքարը Քաղկեդոնի ժողովի շուրջ ամենևին էլ չէր սահմանափակվում Կ. Պոլիս մայրաքաղաքով, այն տարածվեց ողջ Բյուզանդական կայսրության մեջ՝ ընդհուպ մինչև Եգիպտոս: Ինչպես Ջաքարիա Միտիլենացին էր գրում, այն «ցնցեց ողջ աշխարհը, և գումարեց չարիք չարիքի վրա և լցրեց աշխարհը երկպառակությամբ»⁴:

Ժողովին մասնակցած և նրա դավանաբանական որոշումների տակ ստորագրած եպիսկոպոսների մեծ մասն իրենց թեմերը վերադառնալով՝ հանդիպում էին տեղական հոգևորականության թշնամական վերաբերմունքին: Նրանք համարվում էին դավաճաններ ավանդական հավատի նկատմամբ: Թեմական իրավունքները

¹ St'u W. A. Wigram, The separation of the monophysites, London, 1923. Draguet, Julien

d' Halicarnasse, Louvain, 1924.

² W. A. Wigram, Op. cit., p. 147.

³ Karekin Sarkissian, The council of Chalcedon and the Armenian Church, London, 1965, p. 45.

⁴ F. I. Hamilton, E. W. Brooks, The Syriac Chronicle known as that of Zachariah of Mitylené, London, 1899, bk. III, ch. I, p. 41. Ջաքարիա Միտիլենացու «Ժամանակագրության» 7-12-րդ գրքերը թարգմանված են հայերեն, տե՛ս Ջաքարիա Միտիլենացիի «Ժամանակագրություն», Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ասորական աղբյուրներ, թարգմանությունը քննադրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Գ. Մնեյրոնյանի, Երևան, 1976:

վերստին ստանձնելու համար այդ եպիսկոպոսները կամ պետք է անընդիստ գտնվեին կայսերական իշխանությունների պաշտպանության ներքո, կամ ինչպես շատ հաճախ պատահում էր/ միավորվեին ընդդիմությանը: Խռովություններ են լինում Երուսաղեմում, Ասորիքում, Սիջագետքում, Ալեքսանդրիայում. «ընդարձակ մարզերում ժողովը մերժվեց միանգամից և ոչ մի տեղ, բացառությամբ Դոմոնի, որևէ խանդավառություն չկար նրա վարդապետության նկատմամբ»¹:

Օրինակ, Երուսաղեմում իրավիճակը սրվում է այն աստիճան, որ պատրիարք Յոբնադիսոը ստիպված էր վերադառնալ Կ. Պոլիս՝ օգնություն խնդրելու կայսրից: Խռովություններն Ասորիքում ծավալվում էին արագորեն, թեպետ Ամսիոքը համդիսանում էր Քաղկեդոնում սահմանված քրիստոնեության երկաթնակ դպրոցի պատվարը: Անհամաձայնությունը Քաղկեդոնի դավանաբանական որոշումների նկատմամբ սաստկացավ այնպես, որ ավելի ուշ, արդեն VI դարում Ամսիոքը դարձավ միաբնակության ամենագլխավոր կենտրոններից մեկը: Իսկ օրինակ, արյունոտ միջադեպերն Ալեքսանդրիայում, որ անմիջապես հաջորդեցին Քաղկեդոնի ժողովին, հիշատակվում են անգամ «Յենոտիկոն»-ում, բազմիցս նաև Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» մեջ: «Յենոտիկոն»-ում հետևյալ բառերն են ակնարկում այդ արյունոտ տեսարանները. «... առ մարդկային անխնայ պառակտելի վախճանն հասանել մահունս բազում անգամ իշխեցեալ գործել հեղձամբ արեամբ պղծեալ զերկիր, և ոչ զերկիր միայն, այլ և զաւրդը»²: Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» մեջ ընդգծվում են ավելի պարզորոշ են. «... և զուղղափառսն ի Քիրստոսաստր քաղաքին Աղեքսանդրի և յանձնայն Եգիպտոսի և ի Պաղեստինէ և յայղս քաղաքս, սպանին և սպանանեն մինչև յայժմ և հալածեն...»³, և կամ «քանիք հազարք սակս այսորիկ խողխողեցան վասն Քրիստոսի, և յԱղեքսանդրիա և յԵգիպտոսի և յԵրուսաղէմ, զի ոչ հաւանեցան հաւասարել ժողովոյն Քաղկեդովնի, այդ զսա նգովէին համարձակութեամբ»⁴: Դենց իր Տիմոթեոս Էլուրոսի փոթորկալից կյանքը կարող է նույնքան փոթորկալից ժամանակաշրջանի նկարագրման լավագույն օրինակը հանդիսանալ:

Բոլոր այս խլտումների հիմնական պատճառը Քաղկեդոնի ժողովի դավանաբանական որոշումների նկատմամբ ունեցած թշնամական վերաբերմունքն էր⁵, «ժողովի նոր ձևակերպումների նկատմամբ աստվածաբանական անսովորությունը»⁶, որովհետև ժողովում որպես «Յակատո սահման» /Regula Fidei/ ընդունված Դոմոնի Լ-նոն պապի «Էսո Փլաքիանոս» ուղղված թուղթը, ընդհանուր առմամբ հայտնի որպես «Լևոնի Տոմար», ինչպես նաև քաղկեդոնական սահմանումը քրիստոսաբանության դիոֆիզիտ ուղղության անթաքույց գաղափարներ էին պարունակում: IV տիեզերական ժողովում ընդունվել էր Քրիստոսի մեջ առկա երկու բնությունների գաղափարը,

¹ W. A. Wigram, Op. cit., p. 16.

² Տե՛ս Գիլք Թրոքս, Թիֆլիս, 1901, էջ 270:

³ Տե՛ս Տիմոթեոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ «Հակաճառություն» առ սահմանափակ ի ժողովոյն Քաղկեդովնի, ի լոյս ընծայեալ աշխատութեամբ Կարապետ Վարդապետի եւ Երեմանդ Վարդապետի, Ս. Էջմիածին, 1908, էջ 43:

⁴ Նույն տեղում, էջ 149:

⁵ Թեև որոշ գիտնականների կողմից այս հակառակության դրդապատճառը դիտվում է արևելյան եպիսկոպոսների «տիպիկ արևելյան համառությունը», տե՛ս, R. V. Sellers, The council of Chalcedon: A historical and doctrinal survey, London, 1953, p. 116.

⁶ Karekin Sarkissian, Op. cit., p. 50.

/կենտրոնական բանաձևը՝ «Մի Քրիստոս, յերկուս բնութիւնս», ի տարբերություն նախորդ, Եփեսոսի 431թ. III տիեզերական ժողովում ընդունված «Մի բնութիւն բանին մարմնացելոյ» բանաձևի: Դուալիստական երանգավորում ունեցող այս նոր վարդապետությունն անհարարիք էր «արևելյան ավանդական քրիստոնեական մտածողությանը, որը որպես այդպիսին, գերակշռորեն հետևում էր Ալեքսանդրիայի քրիստոսաբանական դպրոցին»¹: Հետևաբար զարմանալի չէ, որ աստվածաբանական մտածողության երկու հակադիր Ալեքսանդրիայի և Անտիոքի դպրոցների բախումը վերջնականապես առաջ եկավ հատկապես Քաղկեդոնի ժողովից հետո: Ինչ վերաբերում է հայ եկեղեցու պատմության այս շրջանին, ապա այն առանձին ուսումնասիրության առարկա է: Հայվի առեւելվ այն հանգամանքը, թե V դարն առհասարակ որքան ճակատագրական ժամանակաշրջան էր հայ ժողովրդի և հայ եկեղեցու համար, կարելի է հասկանալ, թե ինչու հետքադեղդոնական առաջին շրջանում հայոց եկեղեցին որևէ մասնակցություն չունեցավ Քաղկեդոնի ժողովի պատճառով ծավալված դավանաբանական սուր պայքարին: Երվ. Տեր-Մինասյանի դիպուկ խոսքերով, «հայերն ամենից առաջ պետք է աշխատեին դեռ առհասարակ քրիստոնյա մնալ»²: V դարի II կեսից ընդհուպ մինչև VI դարի սկիզբ, երբ գումարվեց Բաբգեն Ութմսեցի կաթողիկոսի գլխավորած եկեղեցական ժողովը /506թ./ և ուր հայ եկեղեցին առաջին անգամ որոշակիորեն իր վերաբերմունքն արտահայտեց Քաղկեդոնի ժողովի նկատմամբ, հայ եկեղեցու կողմից որևէ հետաքրքրություն չենք տեսնում դավանաբանական հարցերի նկատմամբ: Հետևաբար, Քաղկեդոնի ժողովի մերժման հանգամանքը հայ եկեղեցու կողմից արդեն VI դարի կեսին, Ներսես Բագրևանդու գումարած Դվինի II 554թ. ժողովում, ավելի է կարևորվում հատկապես այն առումով, որ հայոց եկեղեցին երբևէ ուղղակիորեն չի ներառվել քաղկեդոնական պայքարի մեջ՝ չմասնակցելով ոչ նախաքաղկեդոնական և ոչ էլ հետքաղկեդոնական բուռն վեճերին:

Մարկիանոսի բոլոր հաջորդները՝ Լևոնը /457-474/, Բասիլիսկոսը /475-476/, Ջենոնը /476-491/, Անաստասը /491-518/, Հուստինոս I-ը /518-527/, Հուստինիանոս I-ը /527-565/, առանց բացառության, ներգրավվել են քաղկեդոնական պրոբլեմի մեջ: Վերջինս չլուծվեց անգամ Հուստինիանոս I-ի օրոք: Ավելի ուշ բյուզանդական կայսրերը կրկին բախվեցին այնքան վիճաբարության այս հարցին, որն արդեն կորցրել էր իր աստվածաբանական կարևորությունը, դառնալով սոսկ եկեղեցու պրոբլեմը՝ քաղաքական հիմքերի հարաբերակցությամբ:

Եվ ամենաառաջագրավ այն է, որ վերը նշված կայսրերի մեծ մասը կա՛մ հովանավորում էր հակաքաղկեդոնական շարժումը, կա՛մ էլ պատրաստ էր գնալ փոխզիջման՝ Քաղկեդոնի ժողովի կարևորությունը նվազեցնելու ճանապարհով: Եվ եթե նրանք ընտրեցին քաղաքական այս գիծը, ապա գլխավորապես հակաքաղկեդոնականների հզորությունը նկատի առնելով:

482թ. հրապարակվում է նշանավոր «Հենոտիկոնը»՝ «Միության գիրք», երկու կողմերի հաշտեցման մի եղիկտ: Այն հրապարակվում է Ջենոն կայսեր անունով, սակայն նրա իրական հեղինակն ու նախագծողը ժամանակի Կ. Պոլսի պատրիարք Ակակիոսն էր /471-489/: Վերջինս երկու կողմերը միավորելու միտում ուներ և այդ

¹ Նույն տեղում, էջ 56:

² Երվ. Տեր-Մինասյանց. «Հայոց եկեղեցու յարաբերությունները Աստուծոց եկեղեցիների հետ», Էջմիածին, 1908, էջ 64:

նպատակով համագործակցում էր Ալեքսանդրիայի պատրիարք Պետրոս Սոնգոսի հետ, որն, իմիջայլոց, Տիմոթեոս Կուզի ջերմ հետևորդն էր: Ակակիոսի և Պետրոսի թղթակցությունը պահպանվել է Գիրք Թղթոցում¹:

Ակնհայտ է, որ «Հենոտիկոնը» եթե անգամ հակաքաղկեդոնական ծեռնարկում չէր, ապա, անկասկած, Քաղկեդոնի հեղինակությանը մեծապես դիպչող ակտ էր: Այն վերականգնեց նախաքաղկեդոնական վարդապետությունն այնպես, ինչպես շարադրված էր Եփեսոսի III տիեզերական ժողովում: Թեպետ Քաղկեդոնը չմերժվեց ուղղակիորեն, այն այլևս անհրաժեշտ չէր ուղղափառության պահպանման համար /որպես այդպիսիք պարտադիր էին համարվում Նիկիայի /325թ./ I և Եփեսոսի III տիեզերական ժողովները/: Ավելին, Կյուրեղ Ալեքսանդրացու քրիստոսաբանության տերմիններում արված հավատի համառոտ մեկնաբանումից հետո, նրանում նշվում էր. «Իսկ զայնպիսիս, որ օտար ինչ խորհեցան կամ խորհին, կամ այժմ կամ այլ ուրեք եւ կամ ի Քաղկեդոնի, կամ յորում եւ իցէ ժողովի, նգովեմք»²: Քաղկեդոնը հիշատակվում էր ընդամենը մեկ անգամ, բայց այնպես, որ գրեթե հավասար էր դատապարտության:

«Հենոտիկոնը» պատճառ հանդիսացավ Հռոմի և Կ. Պոլսի միջև 482թ.-ից, իսկ ավելի փաստացի՝ 484-518թթ. տևող խզման: 484թ. Հռոմի պապ Ֆելիքս II-ը քաղաքացիական պատերազմից հետո, որ պապի զայրույթը ոչ թե Ձեռնոն կայսեր, այլ հատկապես Ակակիոսի դեմ էր, մի անգամ եւս հաստատում է, որ վերջինս էր «Հենոտիկոնի» իրական հեղինակը:

Հռոմի պապն ընդդիմացավ «Հենոտիկոն»-ին ոչ որովհետև այնտեղ արտահայտվող քրիստոսաբանությունն այլադավան էր, այլ որովհետև այն իր բովանդակությամբ արհամարհում էր Քաղկեդոնի ժողովը: Եվ եթե վերջինս քրիստոնեական ուղղափառության հիմնաքար էր Հռոմի համար, քանի որ «Հռոմը մնաց համառորեն քաղկեդոնական»³, ապա սույն ժողովը նույն նշանակությունը չուներ Արևելքի քրիստոնյաների համար:

IV տիեզերական ժողովը պաշտպանելու Հռոմի համառությունն ավելի որոշակիորեն դրսևորվեց հաջորդ՝ VI դարում այսպես կոչված «Երեք գլխաների» վրա վիճաբանության ժամանակ, որի մասին կխոսվի ստորև:

Քաղկեդոնի վճիռները կայսրության քրիստոնյաներին պարտավորեցնելու քաղաքականությունն ավելի վճռականորեն, քան Հուստինոս I-ի գահակալության ժամանակ, իրագործում է Հուստինիանոս I-ը /527-565թթ./: Հուստինիանոսը, որ վճռական դեր խաղաց արևելյան քրիստոնեության պատմության մեջ, հատկապես միաբնակների և քաղկեդոնականների հաշտեցման կապակցությամբ, կատարելապես գիտակցում էր այն իրական դժվարությունները, որ զգացվում էին միաբնակներից: Նա ուներ իր նախորդների ողջ փորձառությունը: Հետևաբար, անհրաժեշտ էր ճանապարհներ փնտրել՝ հաշտեցնելու միաբնակներին քաղկեդոնականության հետ: Եվ Հուստինիանոսին հաջողվեց գտնել իսկական խղճնորդող, ի դեմս նեստորականության, որը վերացնելուց հետո կհարթվեր հաշտեցման ճանապարհը: Թեպետ նեստորականությունը դատապարտվել էր և՛ Եփեսոսի, և Քաղկեդոնի ժողովներում հա-

¹ Գիրք Թղթոց, էջ 243-276:

² Տե՛ս Գիրք Թղթոց, երկրորդ հրատարակություն, Երուսաղեմ, 1994, էջ 117: Այս հավելումն առկա է միայն «Հենոտիկոնի» հունարեն բնագրում:

³ W. A. Wigram, Op. cit., p. 19.

վասարապես թե՛ միաբնակների, և թե՛ երկարեակների կողմից, այն բանադրվել էր միայն մի մարդու՝ Նեստորի անվան ներքո: Մինչդեռ այդ վարդապետությունը Նեստորինը չէր, այլ պատկանում էր Անտիոքի հռչակավոր դպրոցին: Նեստորը սոսկ այդ քրիստոսաբանական համակարգի մի ներկայացուցիչ էր, որն այն բերեց բաց կոնֆ-լիկտի ալեքսանդրյան քրիստոսաբանության հետ:

Նեստորի դատապարտումը Եփեսոսի ժողովում 431թ. հունիսի 26-ին, աքսորը, ինչպես նաև 435թ. կայսերական հրամանը, որով հավաքվեցին և կրակի մատնվեցին Նեստորի զովածքները՝ առաջ չբերեցին նրա վարդապետության մարում, որովհետև այն, շարկապված լինելով իր ամենաակնառու ուսուցիչների՝ Դիոդորոս Տարսուսացու և Թեոդորոս Մոպսուեստացու հիշատակի հետ և բավական երկար պատմություն ունենալով, չէր կարող մարել այդպես հանկարծակի:

Առհասարակ, Նեստորն ու Նեստորականությունն ամենևին էլ նույնական չէին: Չնարավոր էր հավատարիմ ճնշված վարդապետությանը, ճանաչված որպես Նեստորականություն, կամ որ ավելի ճիշտ է՝ դուալիստական քրիստոսաբանություն, առանց անհրաժեշտորեն լինելու Նեստորի հաջորդը բառի ճշգրիտ իմաստով: Անտիոքյան դպրոցի բազմաթիվ հետևորդների համար պարզ համոզմունք դարձավ այն համոզմանքը, որ կարելի է փրկել իրենց վարդապետությունը՝ սահմանազատելով այն Նեստորի անունից: Ուստի Նեստորի դատապարտման վերահաստատումն արդեն Քաղկեդոնի ժողովում այլևս որևէ լուրջ նշանակություն չուներ. Նեստորը պատկանում էր անցյալին: Կային այլ ուսուցիչներ, որոնք կարող էին իրենց անվան ներքո պատսպարել վարդապետությունը: Արդեն հետքաղկեդոնյան շրջանում Նեստորականությունը վախճանվեց ծածկվել էր այնպիսի հեղինակավոր անունների տակ, ինչպիսիք էին Թեոդորոս Մոպսուեստացին, Թեոդորեոս Կյուրոսցին և Իբաս Եղեսացին:

Թեոդորոս Մոպսուեստացին /Մոպսուեստիայի եպիսկոպոս /391/392-428թթ./ Անտիոքյան դպրոցի մագիստրոսն էր և համարյա նույն կարգի դիրք ուներ քրիստոսաբանության անտիոքյան դպրոցում, ինչպես մեծահռչակ Կյուրեղ Ալեքսանդրիացին՝ ալեքսանդրյան: Քանի որ հատուկ կայսերական հրամանագրով արգելվել էր ուղղափառ եկեղեցու հետ հաշտ ու խաղաղ մահացած եկեղեցականների անունները հիշատակել վեճերի մեջ և նրանց վերաբերմամբ նզովական որոշումներ կայացնել¹, նրա անունը չշռափվեց Քաղկեդոնի ժողովում: Վերջինիս լուծությունն էլ ավելի բարձրացրեց Մոպսուեստացու հեղինակությունը:

Ինչ վերաբերում է Թեոդորեոս Կյուրոսցուն և Իբաս Եղեսացուն՝ Նեստորի ջերմ կողմնակիցներին, ապա նրանք երկուսն էլ ուղղափառ ճանաչվեցին Քաղկեդոնում: Իմիջիայլոց, հիմնական չափանիշը, որով պետք է «ստուգման» ենթարկվեր նրանց ուղղափառությունը, բանադրանքն էր Նեստորի դեմ, որ նրանք արտասանեցին²: Նրանց վերադարձվեցին իրենց եպիսկոպոսական թեմերը՝ Կյուրոսի և Եղեսիայի, որոնցից զրկվել էին 449թ. Եփեսոսի ժողովում բանադրվելով Ալեքսանդրիայի պատրիարք Դիոսկորոսի կողմից: Իր ժամանակին Գոմի պապն այդ ժողովը բնորոշել էր «ավազակային»:

¹ J. D. Mansi, Sacrorum Conciliorum Nova et Amplissima Collectio. t. V. G.- Austria, 1960, p. 1009.

² St'u Acta Conciliorum Oecumenicorum, ed. by E. Schwartz, 1914, t.III, vol.I, pt.3, p. 9.

Հատկապես վերջին երկուսի՝ Թեոդորետոսի և Իբասի ուղղափառության ճանաչումը IV տիեզերական ժողովում հիմնական խայծն էր միաբնակների ձեռքին՝ նույնացնելու քաղկեդոնականությունը նեստորականության հետ:

Հուստինիանոս I-ը որոշեց, որ այս երեքը պետք է դատապարտվեն: Այստեղից՝ «Երեք գլուխների» պրոբլեմը: «Երեք գլուխները»՝ Թեոդորոս Մոպսուեստացին և իր մեծաքանակ գրվածքները¹, Թեոդորետոս Կյուրոսցին և նրա հակակյուրեղյան գրվածքները² և Իբաս Եղեսացու մամակը Պարսկաստանի Արդաշիր քաղաքի եպիսկոպոս Մարիին³ դատապարտվեցին եկեղեցու կողմից 4. Պոլսի V տիեզերական ժողովում 553թ.: Այս ակտով ինչ-որ չափով կայունություն ու խաղաղություն հաստատվեց կայսրության մեջ ընդհանրապես, եկեղեցու ներսում՝ մասնավորապես:

Հռոմն ընդդիմացավ մահ «Երեք գլուխների» դատապարտմանը, ինչպես բանավեճերի ընթացքում, այնպես էլ բանադրումից հետո: Հիմնական պատճառն այն էր, որ դատապարտել «Երեք գլուխները», հատկապես Թեոդորետոսի և Իբասի գրությունները, նշանակում էր անտեսել Քաղկեդոնի ժողովի որոշումները:

A^{II}
86538

¹ Իր ժամանակին Մոպսուեստացին ճանաչվել էր որպես Սուրբ գրքերի մեկնիչ:

² Թեոդորետոսի գրվածքները ուղղված են եղել գլխավորապես Կյուրեղ Ալեքսանդրացու և նրա աստվածաբանության դեմ: Բացի «12 նզովքների» դեմ ուղղված գրքից, որը գրվել է 431թ. սկզբին, Թեոդորետոսը գրել է երկուսը ևս Եփեսոսի III տիեզերական ժողովից հետո, I-ը՝ Կյուրեղի և Եփեսոսի ժողովի դեմ, II-ը՝ ի պաշտպանություն Դիոդորոս Տաբսոնացու և Թեոդորոս Մոպսուեստացու: Դժբախտաբար նրանք երկուսն էլ կորել են իրենց բնագիր տեքստերով: Պահպանվել են միայն փոքր բեկորներ:

³ Այս մամակի նյութը Կյուրեղ Ալեքսանդրացու և Նեստորի վեճն է, ուր հեղինակն ակնհայտորեն անցնում է վերջինիս կողմը: Իբաս Եղեսացու մամակն ավելի ուշ նեստորականները տարածում են որջ Պարսկաստանում: Այս մասին ավելի համազամանորեն տե՛ս Երվ. Տեր-Մինասյան, «Նեստորականությունը Հայաստանում», Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան-1971, էջ 330-393:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՍՏԵՐՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԲՈՒՆ ՏՈՀՄԱՆՈՒՆԸ

XII դ. երկրորդ կեսից - XIV դ. առաջին կեսը Հյուսիսային Հայաստանի և վրացական թագավորության ռազմաքաղաքական, պետական ու մշակութային կյանքում հսկայական դեր խաղացած հայկական Ջաքարյան իշխանական տոհմի պատմության հետ կապված որոշ հարցեր մեկուկես դար հետազոտության առարկա լինելով հանդերձ, այսօր էլ վիճելի են: Դա պայմանավորված է ոչ միայն աղբյուրագիտական նյութի սակավությամբ կամ իրարամերժությամբ, այլև վրացագիտության մեջ վերջին տասնամյակներում Ջաքարյանների պատմության՝ աչառու քննությամբ: Դրա նպատակը ոչ միայն վրաց միջնադարյան պատմության ոսկեդարի կերտմանը զորավիգ այդ տոհմի դերի նսեմացումն է, այլև նրան վրացի հռչակելը, դարավոր բարեկամ ու դաշնակից հայ ժողովրդի պատմության հաշվին սեփականի՝ դրա կարիքը չունեցող հարստացումը:

Վրացագիտության մեջ այդ դիրքորոշումը սկիզբ առավ Ս. Զանաշիայի խմբագրությամբ 1946 թ. հրատարակված «Վրաստանի պատմության» դպրոցական ձեռնարկով՝ և նրա ստորագրությամբ 1947 թ. ռուսերեն երիցս տարբեր խորագրերով լույս տեսած հոդվածով¹: Դրանցում առաջ քաշված դրույթներն ու պատմական իրադարձությունների մեկնաբանություններն արտացոլում էին նաև Ջաքարյանների երոմշակութային պատկանելության մասին վրացագիտության դրսևորած մոր մոտեցումը, որը հետագայում ոչ միայն չսրբագրվեց, այլև ավելի խորացվեց²: Ջարգացնելով «Վրաստանի պատմության» ձեռնարկի մտքերը, Ս. Զանաշիայի ստորագրած հոդվածում առաջ է քաշվել նաև այն դրույթը, ըստ որի Ջաքարյանների առավել նշանավոր ներկայացուցիչներ Ջաքարե ամիրսպասալարն ու նրա եղբայր Իվանե աթաբեկը «վրաց ազնվականական տոհմի ներկայացուցիչներ էին, որոնք սերնդն սերունդ կրում էին Մխարգոծելի տոհմանունը: Այդ մաքուր վրացական անունը ... թարգմանությամբ իսկապես նշանակում է Երկայնաբազուկ, բայց այն պետք չէ թարգմանել...: Այսպիսով Երկայնաբազուկը մտացածին ձև է, իսկ Ջաքարյանը՝ ուղղակի զավեշտա-

¹ «История Грузии», т. I, Тбилиси, 1946, с. 220.

² Джанашия С., Об одном искажении исторической правды («Вопросы истории», 1947, N 5, с. 71-89); его же, Грубое искажение исторической правды («Заря Востока», 1947, 25. I); его же, Об одном примере искажения исторической правды. По поводу книги Н. М. Токарского «Архитектура древней Армении», Тбилиси, 1947.

³ Дондуа В., Некоторые замечания на коллективный труд истории армянского народа («Мимомхелишвили», т. III, Тбилиси, 1953, с. 317-321), Բաքրաձե Ա., Այդպես է վկայում պատմիչը («Միաբորի», 1970, N 4, էջ 183-186, վրացերեն), Մխիթար Շ. Ա., Վրաստանի ներքաղաքական վիճակը և պետական կառուցվածքը XII դարում, Թբիլիսի, 1979 (վրացերեն) և ուրիշներ:

կան»¹: Իր ուսուցչի դրույթներն ամեն զնով հիմնավորելու նպատակ հետապնդած Շ.-Մեսխիան նպատակադիր չիմացությամբ զուգորդված քննությամբ ցանկալին իրականությամբ փոխարինելով ի վերջո պնդել է, թե իբր աղբյուրների վկայությամբ Մխարգրծելին ոչ թե անձնական մականուն է, այլ՝ տոհմանուն, որը կարող է կրած լինել Ջաքարեի ու Իվանեի պապ Ջաքարիան և որ ջրողական ծագման այդ տոհմի ազգանվան զուտ վրացական Մխարգրծելի ձևը մատնանշում է նրա ի սկզբանե վրացիանալը և վրացական ֆեոդալական տոհմ դառնալը²: Սակայն, ինչպես արդեն ապացուցվել է, XIII դ. հայ պատմագրության մեջ արծարծված՝ Ջաքարյանների ջրողական ծագման վարկածը ստույգ չէ, և այդ տոհմն ի սկզբանե հայկական է եղել³:

Իսկապես, ժամանակի վրացական գրչագիր աղբյուրներում Ջաքարյանները հիշատակվում են Մխարգրծելի պատվանուն – մականվամբ, որը վրաց իրականության մեջ փոխարինել է նրանց բուն՝ Ջաքարյան, տոհմանվանը: Ընդ որում, Մխարգրծելի պատվանուն-մականունն առաջին անգամ հանդիպում է XIII դարով թվագրվող «Թեմակիրների պատմությունն ու գովասանականը» երկում: Նրանում Թամար Թագուհու առաջին պատմիչը, որբալով Ջաքարե ամիրսպասալարի մահը, նրա բարեմասնությունների հիմքում դնում է ծագումը ևս՝ գրելով, թե «դա տոհմից էլ էր՝ նա Արտաքսերեսես Մխարգրծելի ազգակիցն էր և հավատով հայ էր»⁴: Այսպիսով, վրաց պատմիչը ելնելով ազգության իր ժամանակի նաև կրոնադավանական ըմբռնումից, Ջաքարեին իրավացիորեն հայ է դիտում⁵ և, միաժամանակ, նշանավոր տոհմերին հա-

¹ «Вопросы истории», 1947, N 5, с. 85, Այսպես գրելով հանդերձ, Ս. Ջանաշիան շրջանցում է մխարգրծելի բառը վրաց պատմիչի կողմից թարգմանաբար գործածվելու իրողությունը: Ի դեպ, հայերեն երկայնաբազուկ բառը վրացերեն մխարգրծել բառի թարգմանությունը չէ: Աս. Շահնազարյանը և Լ. Մելիքսեթ Բեկը վաղուց նկատել են, որ մխարգրծել հայերեն նշանակում է երկարատև կամ երկարաթիկունք (Շահնազարյան Աս., Ջաքարյան (Երկայնաբազուկ) տոհմի ծագումը, գաղթը դեպի Չորագետ և նախորդները («Շողակաթ», Վարդաշապատ, 1913, էջ 67, Մելիքսեթ Բեկ Լ., Հայերը վրաց հին գրականության մեջ («Գեղարվեստ», 1921, N 7, էջ 38, ծան. 3):

² Մեսխիա Շ. Ա., նշվ. աշխ., էջ 251-253:

³ Շահնազարյան Ա. Բ., Ջաքարյանների տոհմածառի հարցի շուրջ («Պատմա-բանասիրական հանդես», 1985, N 3, էջ 209), Մարգարյան Հ. Գ., Ջաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմության մեջ (նույն տեղում, 1992, N 2-3, էջ 140-151), նույնի՝ Ջաքարյանների ծագումը (նույն տեղում, 1994, N 1-2, էջ 156-175), Շահնազարյան Ա. Բ., Ջաքարյանների ծագումնաբանությունը (ՀՀ ԳԱԱ «Լրագրեր հասարակական գիտությունների», 2001, N1, էջ 39-58):

⁴ «Զարթիս ցխովրեբա», հ. 2, Թբիլիսի, 1959, էջ 110 (վրացերեն):

⁵ Ըստ երևույթին պարսկական իրականության հետ Ջաքարյաններին կապելու հիմքում ընկած է Հայաստանի հարավից դեպի հյուսիս այդ տոհմի՝ Պարսկաստանի վրայով գաղթած լինելը, ինչի մասին պահպանված ավանդությունը փաստել է նաև Իռանի Բագրատիդներին (Կ. Կելեկիձեի անվան հին ձեռագրերի ինստիտուտ, ֆ. Տ. ձեռ. N 3729, ք. 10V): Հ. Մանանդյանն իր հերթին նկատել է, որ «Ջաքարյանների տոհմի «երկայնաբազուկ» կոչումը մոր ծագում ունի և հիմնված է Զարթիս-Ցխովրեբայի սխալ վկայության վրա, որ իբր թե ամիրսպասալար Ջաքարեն (Բ-ը) Պարսից Արտաքսերեսես Ա. Երկայնաբազուկի ցեղիցն էր» (Մանանդյան Հ., Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 126, ծան. 3): Գ. Հովսեփյանն այս վարկածն առասպել է համարել («Հովսեփյան Գ., Խաղբակյանը կամ Պռոշյանը հայոց պատմության մեջ, Ամբիլիաս, 1969, էջ 2):

ճախ օտար լեզուի ծագում վերագրելու համընդհանուր պատմագրական ավանդույթին տուրք տալով ու Ջաքարյանների սերմանը քաղաքական ենթատեքստ հաղորդելով, Ջաքարեին դիտում է Բ.ա. Մդ. ապրած Արտաքսերքսես I Աքեմենյանի ազգականը: Դա, ինչ խոսք, պատմական իրականության հետ որևէ աղերս չունի: Ինչպես ցույց է տվել Կ.Կեկելիձեն, Թամար թագուհու առաջին պատմիչը, ելնելով պատմագրական ավանդույթից և իր ժամանակի քաղաքական մտածողության պահանջներից, Թամար թագուհուն սերված է համարել աստվածաշնչային Դավիթ թագավորից, իսկ նրա ամուսին Դավիթ Սոսլանին՝ Դավիթ թագավորի եղբորորդի Եփրեմից, դրանով իսկ շեշտելով Թամարի ազնվագարնությունն ամուսնու նկատմամբ: Վրաց պատմիչը նույն կերպ է վարվել վրացական թագավորությունում Բագրատունիներից հետո երկրորդ դեմքը հանդիսացող Ջաքարյանների տոհմաբանությունը կերտելիս՝ նրանց վերագրելով հին, օտար, արքայական, բայց իրենց սյուզերեններից ցածր ծագում: Ինքը՝ Շ.Մեսխիան էլ է նկատել, որ «XII-XIII դդ. Վրաստանում հնագույն արքայական տոհմին Մխարգոծելիների տոհմի՝ ազգակից լինելու վերաբերյալ պաշտոնական տեսություն է ստեղծվել»¹, դրանով իսկ ընդունելով Արտաքսերքսես I-ին Ջաքարյանների ազգական լինելու մասին վրաց պատմագրության մեջ շրջանառված, բայց պատմական անցյալի հետ որևէ կապ չունեցող տեսության քաղաքական ենթատեքստը: Դրանից պետք է բխեր նրա այն մտահանգումը, որ Արտաքսերքսես I-ի պատվանուն-ձականունից բխած մխարգոծելի բառը ոչ թե Ջաքարյանների բուն տոհմանունն է, այլ իրական արմատներ չունեցող հորջորջումը: Սակայն, Շ.Մեսխիան ոչ միայն դա չի արել, այլև պնդել է, թե իբր. վրաց պատմիչը դրանով բացատրել է բուն տոհմանվան՝ Մխարգոծելիի ծագումը:² Ընդ որում, Շ.Մեսխիան շրջանցել է այն հանգամանքը, որ Ջաքարյաններն իրենց մերթ Արծրունիներից, մերթ Բագրատունիներից սերված համարելով հանդերձ³, երբեք չեն փորձել ազգակցական կապեր փնտրել Աքեմենյանների հետ:

Տեսնենք, թե ինչպիսին են աղբյուրագիտական տվյալները⁴, որոնցով Շ.Մեսխիան փորձել է հաստատել Ջաքարյանների բուն տոհմանունը Մխարգոծելի լինելու վերաբերյալ Ա.Ջանաշիայի պնդումը⁵: Վերջինիս վկայակոչած Արուճի, Զաղբատի և Օծունի վիճագրերին նա հավելել է երկու հայերեն (Անիի ու Սամահի), երկու վրացերեն (Քոբայրի ու Դնեվանքի) արձանագրություններ, ինչպես նաև Վահանավանքի վրացերեն կանոնադրությունը: Իրականում այդ հինգ հայերեն վիճագրերից չորսում հիշատակված Մխարգոծել բառը ոչ թե տոհմանուն է, այլ Ջաքարե ամիրսպասալարի որդի Շահնշահի (Սարգիս) բազմաթիվ զավակներից մեկի՝ Մխարգոծելի, անձնանուն-

¹ Կեկելիձե Կ., Վրացական քաղաքական մտածողության մի դրվագ դասական ժամանակաշրջանի գրականության մեջ («Էտյուդներ հին վրաց գրականության մասին», հ. 1, Թբիլիսի, 1956, էջ 312-318, վրացերեն):

² Հմմտ. Մարգարյան Լ.Գ., Ջաքարյանների ծագումը, էջ 163-164:

³ Մեսխիա Շ. Ա., նշվ. աշխ., էջ 210:

⁴ Նույն տեղում:

⁵ «Պատմա-քանաքական հանդես», 1971, N 1, էջ 86, «Դիվան հայ վիճագրության», պրակ VI, Երևան, 1977, էջ 22:

⁶ Այս տվյալների քննությանն անդրադարձել է նաև Խ.Թոթոյանը («Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը», որպես Ջաքարյան Հայաստանի ու Ջաքարյանների պատմության սկզբնաղբյուր», Երևան, 1992, էջ 202-220):

⁷ Մեսխիա Շ. Ա., նշվ. աշխ., էջ 249-253:

նը¹: Ս.Ջանաշիան և, հատկապես, Շ. Մեսխիան այդ արձանագրությունները ներկայացրել են կամ սխալ ընթերցմամբ, կամ Մխարգրծելի անունը նյութի ենթատեքստից կտրված, կամ էլ՝ շարադրանքի իմաստը կեղծելով²: Պատկերը նույնն է նաև Զոքայրի արձանագրության հետ կապված, որտեղ ևս խոսքը Շահնշահի որդի, նույն Մխարգրծելի մասին է³: Ի դեպ, Շ.Մեսխիան փորձում է Կիրակոս Գանձակեցու կողմից Շահնշահի որդիների թվում Մխարգրծելի չհիշատակվելն⁴ առիթ դարձնելով ժխտել նրա գոյությունը: Սակայն, նա ամենեսում է, որ Կիրակոս Գանձակեցին չի հիշատակել⁵ Շահնշահի նաև Աղբուղա ու Գևորգ որդիներին, ինչը բնավ էլ չի ենթադրում նրանց չգոյությունը: Վահանավանքի կանոնադրությունում հիշված Մխարգրծելը ևս ոչ թե տոհմանում է, այլ, ինչպես պարզվում է հիշատակարանից ու մի լուսանագրից, Սարգիս Թնոզվեցու որդի Մխարգրծելի անունը⁶: Սեծ Սարգիս Ջաքարյանի և նրա եղբայր Վահրամի սերունդներում Մխարգրծել անվան կրկնությունը պատահական չէ, որովհետև այդ տոհմում հաճախ պատվանուն-մականունը կամ նույնիսկ տիտղոսը, վերածվել են անձնանվան: Դրա վկայությունն են Շահնշահ, Մխարգրծել և Աթաբեկ անունները: Բացի այդ, Ջաքարյաններին ևս հատուկ էր իրենց տոհմին բնորոշ անձնանունների կրկնությունը: Դնեվանքի արձանագրությունը մեզ հետաքրքրող հատվածում եղծված է և պարունակում է «...թուխուցես Մխարգրծելների» տառաշարը⁷: Վիճագրի վերջին հրատարակիչ Պ.Սուրադյանը, ելնելով Մխարգրծել բառի հոգնակի գործածությունից, առաջարկել է «Ի արևշատության Ջաքարիա ամիրսպասալարի և Իվանե մսախուրթուխուցես Երկայնաբազուկների (Մխարգրծելների - Ա.Շ.) քերականորեն անհարթ (պետք է լիներ «Ջաքարիա ամիրսպասալար»), բայց տրամաբանորեն ընդունելի վերականգնումը: Այսպես հրատարակիչը, ելնելով վերականգնումից և արձանագրությունում հիշատակված Թեոդորե II կաթողիկոսի քրոնակալության ժամկետից, այն թվագրել է 1200-1206թթ. միջամասով⁸: Չմայած նա արձանագրության հեղինակի ինքնությունն առկախ է թողել, դրա բովանդակությունը ցուցում է, որ այն Ջաքարեն կամ Իվանեն չէ: Այսպիսով, այս արձանագրությունը ևս Շ.Մեսխիայի պնդումը չի հավաստում, քանի որ դրանում հիշատակված Մխարգրծելներ բառն իբրև պատվանուն-մականուն է օգտագործված, իսկ վրաց իրականության մեջ Ջաքարյանների նման հորջորջումը ոչ մի հետազոտող չի վիճարկել: Տվյալ պարագայում կարևորն այն է, որ Դնեվանքի արձանագրության հեղինակը Ջաքարյաններից չէ:

Անկում իր կառուցած (կամ վերաշինած) եկեղեցում թողած արձանագրության բանաձևային սկզբամասում Ջաքարե ամիրսպասալարը գրում է. «Ի ժամանակս Աստուածածեալ եւ բարեպաշտ եւ թագոհեաց թագոհոյն Թամարի, ես հաւատարիմ

¹ «Վիճական տարեգիր», կազմեց Կ.Կոստանյանց, Ս.Պետերբուրգ, 1913, էջ 126, Կ. Ղաֆադարյան, Մանսինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 125, նույնի՝ Հադրատ, Երևան, 1963, էջ 171, Ս.Ա.Ավագյան, Վիճական արձանագրությունների քառաբնություն, Երևան, 1978, էջ 126:

² «Вопросы истории», 1947, N 5, с.85, Մեսխիա Շ. Ա., նշվ. աշխ., էջ 250-253:

³ Մուրադյան Պ.Մ., Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 177:

⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 393:

⁵ Նույն տեղում:

⁶ «Վրաց իրավունքի հուշարձաններ», հ. III, Թբիլիսի, 1970, էջ 150:

⁷ Մուրադյան Պ.Մ., նշվ. աշխ., էջ 144:

⁸ Նույն տեղում:

ծառա նորին, որդի մեծ իշխանաց իշխանին ամիրսպասալար մխարգրծելին Սարգսի, մանդատորթութուցե ամիրսպասալար շահնշահ Ջաքարե...»¹։ Անիի ազատագրման (1199) և Թամարի մահվան (1207) թվականները ստիպում են արձանագրությունը թվագրել այդ միջակայքով։ Դրանում Բագրատունիների տիտղոսաշարի մեջ մտնող շահնշահի պատվանունով Ջաքարեի հանդես գալը վկայում է, որ նա «մխարգրծել» բառը ևս հետին թվով օգտագործել է իբրև հոր պատվանուն-մականուն։ Դականակը պնդելիս կստացվի, որ նա իրեն սերված է համարել Բագրատունիներից, իսկ հարազատ հորը՝ Աթեննյաններից։ Ուստի այս վիճագիրը ևս չի հիմնավորում Մխարգրծելին Ջաքարյանների բուն տոհմանունը լինելու մասին վրացագիտության մեջ ամրագրված տեսակետը։ Ավելին, վերո քերված աղբյուրները գալիս են կրկին հաստատելու Ջաքարյան տոհմի ներկայացուցիչների կողմից երբևէ Մխարգրծելի տոհմանունով հանդես չգալը։ Անգամ Դոմոնի պապ Դոմորիոս III-ին Ռուսուդան թագապետ և Իվան Են արքայի Ջաքարյանի հոգած պաշտոնական մամուլներում ոչ առաջինն է Իվանին Մխարգրծելի տոհմանունով հիշատակում, ոչ էլ երկրորդը՝ իրեն ու եղբորորդի Շահնշահի — Սարգսին, որին, ի դեպ, կոչում է ոչ թե անվան վերածված շահնշահի պատվանունով, այլ՝ Սարգիս կնքանունով²։ Դատելով գիտական շրջանառության մեջ գտնվող հայերեն ու վրացերեն արձանագրություններից՝ Մեծ Սարգիս Ջաքարյանը ևս բացառյալ Անիի վիճագիրը, երբեք /այն էլ հետին թվով/ Մխարգրծելի պատվանուն-մականունով չի հիշատակվել։ Դետևաբար, Ս.Երեմյանը վրիպել է՝ պնդելով թե իբր Մեծ Սարգիսը վրացիներից ստացել է «Մխարգրծելի» մականունը³։

Դենվանքի և Անիի 1199-1207թթ. միջակայքով թվագրվող արձանագրությունները թույլ են տալիս ճշտելու Ջաքարյանների՝ Աթեննյանների ազգականները լինելու մասին վրաց իրավաբանության մեջ պաշտոնական տեսության ստեղծման ժամանակը։ Մինչպես տեսանք, «Թագակիրների պատմությունն ու զովասանականը» երկում այդ մասին խոսվում է Ջաքարե ամիրսպասալարի՝ 1212թ. տեղի ունեցած մահվան կապակցությամբ։ Մինչ այդ դրանում Ջաքարյանները բազմիցս հիշատակվում են, սակայն նրանց ծագման մասին ոչինչ չի խոսվում։ Մինչդեռ տրամաբանված կլիներ, եթե վրաց պատմիչն այդ մասին խոսեր կամ Անիի 1161թ. իրադարձությունների հետ կապված՝ Մեծ Սարգիս Ջաքարյանին առաջին անգամ հիշատակելիս, կամ էլ՝ 1185թ. նրա ամիրսպասալար դառնալ արձանագրելիս։ Այնինչ, վերջին դեպքում նա բավարարվել է միայն նրա ազգվագրությունը նշելով։ Դետևաբար, պնդել է, որ այդ տեսությունը ստեղծվել է Մեծ Սարգսից (+ 1187) հետո՝ նրա որդիների օրոք, XII դ. վերջին կամ, որ ավելի հավանական է, XIII դ. սկզբներին, երբ Ջաքարյանները հաստատուն բռնել էին վրացական թագավորությունում վրաց Բագրատունիներից հետո երկրորդ ֆեոդալական տունը դառնալու ուղին⁴։

¹ «Դիվան հայ վիճագրության», պրակ I, Երևան, 1966, էջ 58։

² Տաքարուա Ի.Ս., վրաստանը Եվրոպայի արխիվներում ու գրապահոցներում (XII-XVI), Թբիլիսի, 1984, էջ 176-178 (վրացերեն)։

³ Երեմյան Ս., Ամիրսպասալար Ջաքարիա Երկայնաբազուկ, Երևան, 1944, էջ 12-13։

⁴ Հետազոտողները «Թագակիրների պատմությունն ու զովասանականը» երկը բաժանում են երկու հատվածի՝ սահմանաբաժան ընտրելով Շամբքի 1195թ. ճակատամարտը։ Ոմանք էլ այս համագամաքից ելնելով՝ ենթադրում են այդ երկի երկու հեղինակ ունենալը։ Եթե դա այդպես է, ապա Ջաքարյանների՝ Աթեննյանների ազգականը լինելու տեսությունը սկսել է շրջանառվել վերջին հատվածի հեղինակի կողմից։

Այսպիսով, Մխարգրծելի տոհմանունը Ջաքարե ամիրսպասալարի ու Իվանե աթաբեկի պապ Ջաքարիայի կրած լինելու մասին Շ.Մեսխիայի ականարկը, ինչի հետ համերաշխվել է Խ.Թորոսյանը¹, հիմնազուրկ է։ Դա է վկայում Ստեփանոս Օրբելյանի հետևյալ վկայությունը . «...Թամարն մեծարեալ զորդիսն Սարգսի՝ որդւոյ Ջաքարէի իշխանի, հայ ազգաւ և ուղղափառ հաւատով»²։ Ուրեմն, վրաց մատենագրությանը հասկանալի պատճառներով քաջածանոթ Սյունյաց պատմիչը Ջաքարեի ու Իվանեի պապին ոչ միայն Մխարգրծելի պատվանուն- մականունով չի օժտել, այլև նրա հայ լինելու հավաստմամբ չբավարարվելով՝ շեշտել է նաև «ուղղափառ», այսինքն՝ լուսավորչական դավանանքը։ Հետագայում, անդրադառնալով 1280-ական թվականների իրողություններին, նա հականե հանվանե հայտնել է Իվանեի, Ջաքարեի ու նրանց հորեղբորորդի Բլուզ Ջաքարեի՝ հայ պատմագիտության մեջ Վահրամյանների կոչվող սերունդների այդ ժամանակ ընդունված տոհմանունները. «զտունն Ավագեան և զտունն Շահնշահեան և զԳագեցիսն»³։ Այս տոհմանունները ձևավորվել են ամենավաղ և ամենավաղ և ամենավաղ և ամենավաղ (Ավագ, Շահնշահ, Գագ) և ազգանամականակերտ «եան» ու «եցի» ածանցներով⁴։ Այսպիսով, Մեծ Սարգսի անգո Մխարգրծելի տոհմանունը նրա և իր եղբայր Վահրամի՝ Բլուզ Ջաքարեի հոր, սերունդներին անցած լինելու մասին Շ.Մեսխիայի պնդումը ևս սնանկ է⁵։ Սակայն, նա իրավացի է՝ գրելով, որ հայկական աղբյուրներին բնորոշ է ֆեոդալներին տոհմանունով նշելը⁶։ Հենց այդպես էլ վարվել է Ստեփանոս Օրբելյանը, ինչը վրացագիտության մեջ համապատասխան հետևությունների, ցավոք, չի հանգեցրել։

Ջաքարյանների այս սերունդների միտոքոնդրի, այսինքն՝ նրանց բուն տոհմանվան հարցում Ստեփանոս Օրբելյանին լրացրել է նրա ավագ ժամանակակից Վարդան վարդապետը։ Անդրադառնալով Անիի 1161թ. իրադարձություններին՝ նա հայտնում է, որ Գեորգի III-ի կողմից դավաճանության մեջ կասկածվող Անիի քաղաքացիական կառավարիչ Սադունին պաշտոնազրկելուց հետո «գիշխանն Ջաքարեան զՍարգիս՝ դնեն ի տեղի նորա ի յԱնի»⁷։ Այս վկայությանը քաջածանոթ Շ.Մեսխիան անվարան պնդել է, թե իբր «այս դեպքում, հասկանալի է, նկատի է առնված Սարգսի՝ Ջաքարիայի որդին լինելը և ոչ թե Ջաքարյան տոհմի գոյությունը»⁸։ Իբրև իր պնդման կովան, նա վկայակոչել է XVIIդ. հեղինակ Մ.Չամչյանի «եղ վերակացու քաղաքին զՍարգիս ոմն հայ իշխան երևելի՝ որդի Ջաքարեայ, որպես գրե Վարդան»⁹ խոսքերը։ Քանի որ Մ.Չամչյանի «ոմն հայ իշխան» արտահայտության վիճարկումը Շ.Մեսխիա-

¹ Մեսխիա Շ. Ա., նշվ. աշխ., էջ 216, 232, Թորոսյան Խ., նշվ. աշխ., էջ 199:

² «Պատմութիւն մահաճգին Միսական արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 391:

³ Նույն տեղում, էջ 426:

⁴ Հայկական ազգանունների ձևավորման պատմության և կազմվելու օրինաչափությունների մասին տես Ավետիսյան Ս.Մ., Հայկական ազգանուն, Երևան, 1987:

⁵ Մեսխիա Շ. Ա., նշվ. աշխ., էջ 216:

⁶ Նույն տեղում, էջ 252:

⁷ «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 137:

⁸ Մեսխիա Շ. Ա., նշվ. աշխ., էջ 252:

⁹ Չամչյանց Մ., Պատմութիւն հայոց, Կ.Գ., Վենետիկ, 1784, էջ 79:

յին տվյալ դեպքում ձեռնտու չի եղել (որա հերքումը կասկածի տակ կդնել Մ.Չամչյանի ասածի ճշտությունը), այն ստիպված անտեսելով, վրաց պատմաբանը հայտարարել է, թե իբր «Ջաքարյան տոհմի գոյությունը հայկական ու վրացական աղբյուրներով չի հաստատվում: «Ջաքարյան» տոհմանունն արհեստականորեն ստեղծվել է որոշ ուսումնասիրողների կողմից, Սարգսի հոր հատուկ անվան՝ Ջաքարիայի հիմամբ»¹: Վարդան վարդապետի վկայությանը ծանոթ է եղել նաև Խ.Թորոսյանը, որի Ջաքարյան տոհմանվան իրական լինելն ապացուցելու ջանքերը տրամաբանական մտահանգումներից այն կողմ չեն անցել և խնդիրը մնացել է բաց: Նրա ջննդության մեջ միակ ընդունելի միտքն այն է, որ Վարդան վարդապետը Սարգսի անունը որոշյալ առումով է օգտագործել, ինչից հետևում է, որ «Ջաքարեան»-ը ոչ թե որդիության, այլ՝ տոհմանվան ցուցիչ է²:

Մ.Չամչյանի ներկայացրած Ջաքարյանների տոհմածառից երևում է, որ նա այն հստակ չի պատկերացրել, քանի որ գրել է. «Հայր սոցա (Ջաքարեի ու իվանեի-Ա.Շ.) Սարգիս՝ եր որդի Ջաքարի, որդւոյ Վահրամայ՝ որդւոյ առաջնոյն Սարգսի»³, սակայն Մեծ Սարգսին Ջաքարիայի որդին համարելով, ճիշտ է վարվել: Բայց նա սխալ հասցե է ընտրել, երբ Մեծ Սարգսի՝ Ջաքարիայի որդին լինելը հաստատելու համար, վկայակոչել է Վարդան վարդապետին: Բանն այն է, որ վերջինս Կիրակոս Գանձակեցու մոտ Ջաքարյանների տոհմածառի՝ մեզ հետաքրքրող հատվածը ճիշտ չի պատկերացրել, ինչը պայմանավորված է իր դասընկերոջից կամ երկուստեք մույն աղբյուրից օգտված լինելով: Ըստ Վարդան վարդապետի, Ջաքարյանների տոհմածառը հետևյալն է. «Ջաքարե է Իւանէ, որդիք Սարգսի, որդւոյ Վարիամայ, որդւոյ Ջաքարի, յորդւոյ Սարգսի»⁴: Կիրակոս Գանձակեցին իր հերթին գրել է. «...էին յԱրևելս երկու եղբարք, որդիք Սարգսի բարեպաշտ իշխանի, որդւոյ Վահրամայ, որդւոյ Ջաքարի»⁵: Երբեք, որդիք Սարգսի բարեպաշտ իշխանի, որդւոյ Վահրամայ, որդւոյ Ջաքարի»⁶: Այսինքն, եթե Մ.Չամչյանը Մեծ Սարգսի հայր է համարել Ջաքարին (Ջաքարիա), ապա Վարդան վարդապետն ու Կիրակոս Գանձակեցին՝ Վահրամին: Երկու պատմիչների կողմից Մեծ Սարգսի հայրը Վահրամին, իսկ պապը՝ Ջաքարիային (Ջաքար) համարելը վկայում է XIII դ. հայ պատմագրության մեջ Ջաքարյանների տոհմածառի տվյալ հատվածն այդ կերպ պատկերացնելը: Մինչդեռ, իրականում Վահրամը եղել է Մեծ Սարգսի ոչ թե հայրը, այլ՝ եղբայրը, իսկ Ջաքարիան հանդիսացել է Մեծ Սարգսի ոչ թե պապը, այլ՝ հայրը: Այս իրողությունը հայ-վրացական աղբյուրների համադիր ջննդությամբ վաղուց միմյանցից անկախ պարզել են Աս.Շահնագարյանը և Ս.Կակաբաժենը⁷, ինչը Շ. Մեսխիային հայտնի լինելը երևում է Ջաքարյանների՝ նրա կազմած տոհմածառից⁸: Հետևաբար, Վարդան վարդապետը «զիշխանն Ջաքարեան զՍարգիս» ասելով, նկատի է ունեցել ոչ թե Մեծ Սարգսի՝ Ջաքարիայի որդին լինելը, այլ՝

¹ Մեսխիա Շ. Ա., նշվ. աշխ., էջ 252:

² Թորոսյան Խ., նշվ. աշխ., էջ 222-233: Ի դեպ, Խ.Թորոսյանն իր սովորության համաձայն, այս դեպքում ևս առողջիքի հեղինակի և այլ հետազոտողների աշխատություններից առատ քաղազրույթներ անելով հանդերձ, համապատասխան հղումների չի դիմել:

³ Չամչյանց Մ., նշվ. աշխ., էջ 149:

⁴ Վարդան վարդապետ, էջ 138:

⁵ Կիրակոս Գանձակեցի, էջ 162:

⁶ Շահնագարյան Աս., նշվ. աշխ., էջ 77, Կակաբաժեն Ս., ՌՊ էր և ե՞րբ է ապրել Սարգիս Թմուզկեցին, Թբիլիսի, 1913, էջ 7-13:

⁷ Մեսխիա Շ. Ա., նշվ. աշխ., էջ 227:

տոհմանունը: Հակառակ դեպքում նա Ջաքարյանների տոհմածառի սխալ իմացության պարտադրանքով Մեծ Սարգսի որդիությունը բնորոշելու նպատակով, կօգտագործեր «զիշխանն Վարիամեան զՍարգիս» արտահայտությունը: Բացի այդ, որ Վարդան վարդապետն անձի որդիությունը, թոռնությունը և տոհմանունն իբրև կանոն խիստ հստակ է արձանագրում, վկայում են նրա աշխատությունում հանդիպող թեկուզ հետևյալ արտահայտությունները. «Գրիգոր Մամիկոնեան», «Աշոտ Բագրատունի որդի Սմբատայ», «Քազաւորացն Բագրատունեաց», «յազգէն Սենեբերիմայ», «որդին Ապուլեթին Իւանէ», «Օրբելեանց», «Պետրոս Խոնթկայ որդին», «թոռն Վիգենայ Շահնշահ», «Վաղթանգ Սակոեանց», «զԳրիգոր իշխանն կոչեցեալն որդի Խաղբակայ», «Կիւրիկեանց Ասխարթանայ», «Աւագն որդի Իւանէի», «Ջաքարե որդի Շահնշահի»¹: Բերված փաստերին ևս Շ.Մեսխիայի ծանոթ լինելը, կասկածից վեր է: Սակայն Ջաքարյան տոհմանունը մտացածին, արհեստական համարելու ձգտմամբ պայմանավորված, նա չի նկատել այն, ինչը հնարավոր չէր չնկատել:

Այսպիսով, Ջաքարյաններին ժամանակակից աղբյուրների համադիր քննությունն ապացուցում է, որ հայկական այդ իշխանական տոհմի բուն անվանումը եղել է Ջաքարյան: Այն ծագել է Մեծ Սարգսի հայր Ջաքարիայի կամ, ելնելով այդ տոհմի սերունդների անվանակոչության օրինաչափություններից, վերջինիս թերևս - Ջաքարիա կոչված պապի անունից²: Հետագայում արդեն, երբ այդ տոհմը բազմաճյուղվ, բաժանվել է տարբեր ճյուղերի, դրանք կոչվել են կամ իրենց հիմնադիրների անձնանվանական հիմքով, կամ էլ նստավայրերի տեղանվանական հիմքով ու համապատասխան ածանցներով ձևավորված տոհմանուններով՝ Ավագյան, Շահնշահյան, Գագեցի, Թմոզվեցի: Ինչ վերաբերվում է վրաց իրականության մեջ Ջաքարյանների Մխարգրծելի հորջորջմանը, ապա այն իրական հիմքից զուրկ պատվանուն-մականուն է՝ վրաց մատենագրության և ընդհանրապես իրականության մեջ բարձրացված տոհմանվան աստիճանի:

¹ Վարդան վարդապետ, էջ 70, 87, 92, 122, 130, 133, 140, 143, 145, 148:

² Ս.Երեմյանն ու Հ.Մանանդյանը և, նրանց հետևողությամբ, Խ.Թորոսյանը գտնում են, որ Ջաքարյան տոհմանունն առաջացել է Մեծ Սարգսի հայր Ջաքարիայի անունից (Ս.Երեմյան, նշվ. աշխ., էջ 12-13, նույնի՝ Юрий Боголюбовский в армянских и грузинских источниках («Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ», հ. XXIII, Երևան, 1946, էջ 190), Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 125, ծան. 2, Թորոսյան Խ., նշվ. աշխ., էջ 231:

**ԱՆԱՆՅԻՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԳԱԳՐԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԸ ԸՍՏ ԹՈՒՐԹԱԿԱՆ ՀԱՐԿԱՅՈՒՅԱԿՆԵՐԻ
(16-րդ դ. վերջ - 18-րդ դ. սկիզբ)**

Արևմտյան Հայաստանում վարչամիավորների կազմավորման առաջին փուլում 16-րդ դարում, ստեղծված նահանգների մեջ իր ուրույն տեղն ու դիրքն ունեւր սահմանամերձ Չլդրի էյալեթը: 1625 թ. Չլդրի բերդաքաղաքի ավերումից հետո, նահանգի կենտրոնավայրը տեղափոխվեց Ախալցխա, որի համար վարչամիավորը, պահպանելով իր նախկին անունը, սկսեց կոչվել նաև Ախալցխայի էյալեթ ձևով: Այս վարչամիավորի տարածքային բաժանման վերաբերյալ առաջին ամբողջական վկայությանը հանդիպում ենք թուրք պատմիչ Ֆերիդուն բեյի «Սուլթանների գրություններ» աշխատությունում: Նրա օգտագործած պաշտոնական նյութերի համաձայն 16-րդ դարի 80-ական թթ. սկզբին Չլդրի նահանգն ընդգրկում էր 16 գավառ՝ Մեծ Արտահան, Էրլի (Օլթի), Բերմեքդեք (Բերդագրակ -Ա.Ս.), Էրլուհ, Շուշատ, Նըսֆի Լիվանե, Մամեհեյլ (Մահեյլ), Լիք, Վերին Աջարա, Ստորին Աջարա, Եմիրհոյ, Էսփիշե, Բոսջոք (Փոռխով), Խերթվիս, Ալթուն կալա՝ Օսթիերտի հետ միասին, Մեհրեք:¹

Առաջին լուրջ և համապարփակ գրավոր աղբյուրն այս նահանգի վարչատարածքային բաժանման, ժողովրդագրական իրավիճակի և տնտեսական կյանքի մասին, անտարակույս, «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարն» է: Այս եզակի փաստաթղթի քննությունը համոզում է, որ խնդրո առարկա վարչամիավորը հիմնականում ընդգրկել է նախկին Սամցխե-սաաթաբազոյի իշխանության տարածքը՝ ընդհուպ մինչև 19-րդ դարի առաջին երեսնամյակը, թեև այդ ժամանակահատվածում ենթարկվել է բազմաթիվ վարչական վերաձևումների: Ժամանակ առ ժամանակ Չլդր-Ախալցխայի էյալեթը, հիմքում պահպանելով պատմական բաժանումը, ավելի ընդարձակվել է և իր մեջ միավորել ոչ միայն ամբողջ պատմական Տայք աշխարհն ու Գուգարքի մեծ մասը, այլև՝ առանձին գավառներ Բարձր Հայքից, Այրարատից, Խաղտիք-Լազիստանից: Ինչևէ, բոլոր դեպքերում, զանազան օբյեկտիվ հանգամանքների ազդեցությամբ, վարչական համակարգում շարունակել են գերակշռել պատմաաշխարհագրական գործոնները:²

Չլդրի էյալեթը, քանի որ հյուսիսից սահմանակից է եղել Վրացական թագավորությանը և իր մեջ ներառել է պատմական Վրաստանի որոշ գավառներ, թուրքերի կողմից նախապես անվանվել է Գյուրջիստանի (Վրաստան) է-

¹ Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ.Բ, Ե., 1964, էջ 219-220:

² Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 142, վ. 170, թ. 12ա:

յալեթ կամ վիլայեթ:¹ Նման անվանակոչումը հուշում է, որ թուրք նվաճողները, ինչպես այս ժամանակաշրջանում, այնպես էլ հետագա դարերում, չեն բավարարվել ձեռքբերածով և նպատակ են ունեցել «Գյուլըջիստան» անվանված միավորին միացնել նաև բուն Վրաստանը:

Ըստ «Մեծ դավթարի», որն արտացոլում է հիմնականում 1580-ական թվականների վերջից մինչև 1595 թ. ընկած ժամանակահատվածի վիճակը, Չլդրի նահանգն ունեցել է 9 լիվա-գավառ՝ Ախալցխայի, Խերթվիսի, Ախալքալաքի, Չլդրի, Փոցխովի, Պետրեի, Փանաքի (Փենեք, Բանակ), Մեծ Արտահանի և Օլթիի, որոնցում հաշվվում էր 37 նահիե-գյուղախումբ:² Սուլթանական կառավարության հրամանով, թուրք պաշտոնյաների կազմված այս ընդարձակ հարկացուցակի համաձայն, ամբողջ վիլայեթի տարածքում հարկման է ենթարկվել ավելի քան 1250 բնակավայր, ինչպես և եկամուտ ապահովող այլ վայրեր՝ լճերի ու գետերի ձկնային տնտեսություններ, ջրաղացներ, այգիներ և այլն: Ընդ որում (բացի Օլթիի լիվայից) հիշատակված են ոչ միայն բոլոր մարդաբնակ ու ամայի բնակավայրերի անվանումները, այլև դրանցում ապրող ժխերի առաջնորդների անունները, նրանցից գանձվող բնամթերային ու դրամական հարկի տեսակն ու չափը և այլ մանրամասներ:

«Գյուլըջիստանի վիլայեթի ընդարձակ դավթարում» թվարկվում են ոչ միայն գավառները՝ իրենց գյուղերով, այլև՝ բերվում են յուրաքանչյուր բնակավայրում ապրող ընտանիքների թվաքանակը, նրանցում ապրող ծուխերի նահապետների անվանացանկերը, որոնք բացառիկ նյութ են տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը վեր հանելու համար: Տրվում է նաև ամեն մի բնակավայրից ու հարկման ենթակա այլ վայրից վճարվող ընդհանուր հարկի չափը, այդ թվում՝ դրամահարկը (խսփենջ, որը յուրաքանչյուր բնակչից գանձվում էր 25 միավոր), հարսանեկան և այլ կարգի հարկերը, մշակվող հացահատիկային (ցորեն, գարի, տարեկան, կորեկ, ոլոռ) և բոստանային կուլտուրաների, պահվող անասունների ու մեղվափեթակների, ձկնորսության (Տաբաժդուր, Սաղամո, Փարվանա, Խանջալի լճերից) դիմաց գանձվող հարկաչափերը և այլն: Հարկման ենթակաների անվանացանկերից պարզվում է, որ Ջավախքի ու նրա շրջակա գավառների բնակավայրերի մեծ մասում բնակիչները քրիստոնյաներ էին և կրում էին հայկական ու վրացական կամ հայերի և վրացիների մեջ մեծ տարածում գտած անուններ: Հայկական կամ հայերի կողմից լայնորեն գործածվող անուններ հանդիպում ենք Ջավախքի հետևյալ բնակավայրերում:³

¹ Հմտ.: Ինժինեան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Ի.Ա. Վենետիկ, 1806, էջ 122 և Զուլայան Մ.Վ., Արևմտյան Հայաստանը 16-18-րդ դդ., Ե., 1980, էջ 182:

² Գըրջիստանի ցոլաօջտոս ղօղջի ղաջտան, Միջնա 2, տօղլօս 1941, թ. 7-21, 392-386, 393-402:

³ Ցանկում վկայակոչել ենք նաև Ախալցխայի գավառի մի քանի բնակավայրեր: Աղյուսակի վերջին սյունակում նշված է վկայակոչված նյութի էջը՝ ըստ հարկացուցակի վրացերեն թարգմանության հրատարակության:

Բնակավայրի անվանումը	Ընտանիքների թիվը	Չարկի չափը դրամով (իսփենջ)	Գանձվող ամբողջ հարկը (միավոր)	Հիշատակվող հայկական կամ հայերի շրջանում տարածված ունեցող անունները	Կրթության -ով լուսավորված մեջ
Ախալցխա	174	4350	30000	Յարալ Սիմոնի, Շահվել Սիրխանի, նրա որդի Ասվա(ծա)տուր, Ռոստոմ Ղովաթխարի, նրա որդի Շահնուրադ, Դավթի որդի Ասվա(ծա)տուր, Արտաշես, Մանվել Շերգիլի, Խաչատուր Դուրալի, Մանաս Սարգսի, նրա եղբայր Ասատուր, Արմանա Դա-գարի, նրա եղբայր Գոգալ, Մովսես Սոմ(ե)խի (Խայի - Ա.Մ.), Մասուր Ավանուսի (Ավանեսի)	22-24
Շուղորուք	32	800	26600	Սարգիս, Գաբրիել	25-26
Տատանիս	30	750	20000	Կարապետ	27
Ծիրա	8	200	18500	Ջաքարի որդի	29
Սաժել	57	1425	22200	Կիրակոս, Միհրան	39
Վ.Պամաճ	18	450	13000	Սիմոն	44
Բալաջուր	24	600	4000	Կիրակոս Միտիչի (Մկրտչի)	60
Ասպինձա	50	1250	25000	Սարգիս Մուրադի, Կիրակոս Շահվելի, Սպենդիար, Չազարգուլ, նրա եղբայր Աբրահամ	130-131
Տաճալա	5	125	8000	Բասիլ (Վասիլ), Ռոսեր	136-137

Խերթվիս	127	3175	25000	Խոսիկ Դավթի, Գաբրիել, Պապու Գրիգորի, նրա եղբայր Մելիք, Զաքար, նրա եղբայր Գրիգոր, Սարգիս Մելիքի, Դանես, Խաչատուր Դայրապետի, Բատատա Խաչատուրի, Բազրատի թոռ, նրա եղբայր Միտիչ, Սարգիս, Ումիկ Խանդամայի, նրա եղբայր Ասվա(ծա)տուր, Խաչատուր Սորազանի, Գաբրիելի եղբայր Խաչատուր, Աբրահամ Մազանայի, Կիրակոս, Աբոյի եղբայր Բայանդուր, Խաչատուր Զատիկի, Բատատա Կիրակոսի, Ումիկ Խաչատուրի	171
Օրջա	18	450	20000	Դանես Իշխանի, նրա եղբայր Սարգիս, Ավագ Դանեսի	192
Ն.Օրջա	14	350	13000	Վահրամ, Եղիազար, Սիմոն, Սարգիս Վելիջանի	226
Կոթելիա	3	75	10000	Զաքար	194
Բարալեթ (Բարալիս)	21	525	25000	Միտիչի (Մկրտչի) թոռ, նրա որդի Սարգիս, Սամսոնի որդի	196
Վերին Ալաստան	15	375	10500	Արզուման	196
Տուրգլի	10	250	15000	Մասուրի որդի Սարգիս, Ավագ	198
Խանդո	61	1525	15000	Դակոբ	202
Վաչիան	17	425	19500	Քերոբ	214
Ափնիա	35	875	10000	Աբաս, Իսազուլ	214
Լոմատուրցի	8	200	10500	Ռոստոմի որդի Ալիբեկ, Նորսես (Ներսես)	198
Քարծեկ	54	1350	14630	Բայանդուր	215-216

Հոկամ	20	500	31000	Մանվել Սարգսի	217
Քիլդա	8	200	14500	Խաչատուր	218
Վ. և Ն. Խոսպիա- ներ	9/16	225/400	3200/5490	Միտիչ (Մկրտիչ) Տեր-Բե- կի, Խոսիկ-Հոսիկ, Սահակ	218,2 33
Ջիգրաշեն	16	400	11160	Ջաքարի թոռ	219
Մեծ Մա- ջադիա	18	450	13000	Հակոբ	219
Փոքր Մաջադիա	4	100	4000	Դավիթ Խուղավերդի	221
Արագովա	6	150	16000	Միհրան, Իսահակի թոռ, Սարգիս	220
Նաքա- լաքև	7	175	8000	Հավաթեղ Կարապետի	220
Կորիս	19	475	12000	Ռոստոմ, նրա որդի Կիրա- կոս, Շահաբա Մկրտչի, Հանես Սարգսի, Կիրակոս Ասվատուրի	221
Գուժբուր- դո	20	500	25000	Խարաբայի որդի Դավիթ, Մկրտիչ՝ Ամիրխանի որդի, Յարալ Կիրակոսի, Շահ- կուլի որդի Աբրահամ, Մա- նուկ	222
Օլավերդ	27	675	11000	Աբաս	223
Խուլզումո	19	475	9000	Ասվա/ծա/տուր, Արտաշես	224
Հեշտիա	12	300	21000	Տեր-Հակոբ	225
Մեծ Խորենիա և Չամդու- րա	28	700	20000	Գրիգոր, նրա եղբայր Մո- սե, Սահակ Գրիգորի, նրա եղբայր Սարգիս, Տեր-Հա- կոբ, նրա եղբայր Յարալ, Խաչատուր, Մուրադ Ջի- հանշեի	225
Ջրեսկ	16	400	10000	Շահմուրադ, Ռոսեփ (Հով- սեփ), Սիմոն, Սամսոն, Աս- վա/ծա/տուր	227
Ղաուրմա	3	75	12000	Սարգիս	227- 228

Բավրա	6	150	7665	Բայանդուր	228
Թորիա	21	525	13000	Առաքել, Բայանդուր, Ջանիբեկ Սարգսի, Սկրտիչ	229
Արուլ	12	300	14000	Եղիազար, Դավիթ, Սարգիս	229
Ախալթալայի բերդ	3	75	7000	Մուրադ, մրա եղբայր Ջահիկ	235
Փոքր Մուրջալսթ	6	150	2000	Հանես Սարգսի	236
Փոքր Մամզարա	11	275	8000	Դուլիկ Ասվա/ծա/տուրի	237
Ծունդա	12	300	13000	Ջոջիկ Ջհանշեի, մրա եղբայր Մանուկ	242
Բեժանո	12	300	10000	Սիմոն	195
Ջակ	7	175	10000	Եղիազար, Ռոսեփ-Հոսեփ	204
Բուռնաշեթ	11	275	14000	Սարգիս	205
Գոմ (Գոման)	25	625	6000	Իսահակ	222
Գավաշեն* (տեղն անհայտ է)	27	675	12000	Դավիթ Կիրակոսի, մրա եղբայր Կարապետ, Դեսպազ Սուքիասի	217

Ուշագրավ է, որ կային բնակավայրեր, որոնք գրեթե լիովին հայաբնակ էին: Այսպես. վերոհիշյալ Օրջա, Վերին Օրջա, Կորիս գյուղերում հիշատակվող բնակիչների մեջ միայն քչերն էին, որ հայկական անուններ չէին կրում: Այդ հանգամանքը հաստատվում է նաև առ այսօր հատկապես Օրջայի շրջատարածքում պահպանվող բազմաթիվ եզակի խաչքարերով: Ա.Կարապետյանի կողմից ուսումնասիրված այնտեղի 12 խաչքարերից 7-ի վրա կան արձանագրություններ, ընդ որում երեքն էլ թվակիր են և վերաբերում են 1463-1465 թվականներին:¹ Նույն ժողովրդագրական իրավիճակն էր տիրում նաև նշանավոր *Թմուկ (Թմոզլի)* բերդաքաղաքում: Այնտեղ համդիպում ենք հետևյալ անունների. Սարգիս Առաքելի, Ռոստոմ, Ամանիայի որդի, մրա եղբայր Սկրտիչ, որդի Կարդանի, որդի Եղիգարի, Հովհաննես Բայանդուրի,

¹ Կարապետյան Ա., Ջավախքի խաչքարերը, Ե., 1995, էջ 9:

Պապու Շիրինի, Բերիկ Փիրագիզի, նրա որդի Սկրտիչ, Մուրադ, Տեր-Հակոբ, Բերիկ Մուրադի, նրա եղբայր Մարգար, Հակոբ, Մարգիս Մելիքի և այլն: Ձուտ հայաբնակ էր Չլդրի գավառի *Քենարբեկ (Քանարբեկ) գյուղը*՝ Ծառուկի որդի, նրա եղբայր Ասվա/ծա/տուր, Մարգարի որդի, Ղուլիջանի որդի Նորսես (Ներսես), Խոսիկ-Հուսիկ, Ռոստոմի որդի, Մարգիս Մուխթարի, Միկիրտիչ Վելիջանի, Միտիչի որդի, նրա եղբայր Մարգիս, Մուրադ Կարապետի, Մարտիրոս Ավանեսի, Հովհաննես Ամիրագիզի, նրա եղբայր Կարապետ, Խաչիկ Համբարձումի, Թոռնիկ Ծառուկի, Խաչատուր Ալեքսանի, Մարգար, Պապու Մարգարի և այլք, *Մրագվալ գյուղը*՝ Ասվա(ծա)տուր և այլն:

Հայաշատ էին նաև նույն գավառի *Մեծ և Փոքր Կարծախ* գյուղերը՝ Նադար Շահնազարի, Կարդան, Գրիգոր Մուքիասի, Ջիանշե Կիրակոսի, Սկրտիչի որդի, նրա եղբայր Վարծել, Բայանդուր, Խաչիկ Յարալի, որդի Սահակի, որդի Անտոնի, Տեր-Հակոբ Ջոմերդի, նրա որդի Շահագիզ, Յարագիզ Տեր-Հակոբի, Մարգիս, Ասվա/ծա/տուր, Դիարբեկ Սահակի, նրա եղբայր Ասվա/ծա/տուր և այլն: *Սուլդայում* հանդիպում ենք Շերմագանի որդի Սիմոն, *Էրինջայում (Երնջակ)* Եղիազարի որդի Մանաս, Խոզաբուն կամ Խոզափին լճի արևմտյան ափին ընկած համանուն *Խոզարունում*՝ Մանուկ Ասվա/ծա/տուրի, *Շղարոսթավում*՝ Այվազի որդի Շահում, նրա եղբայր՝ Շիրին, Սահակի որդի Կիրակոս, Ավագ, Պարոնվարդ, Խաչատուր և այլ անունների: Հատկանշական է, որ վերոհիշյալ անունների մեջ բազմիցս հիշատակվում է Տեր-Հակոբ անունը, իսկ Խոսպայում՝ Տեր-Բեկը, համաձայն, որը վկայում է տվյալ բնակավայրում հայ քահանայի, այն է՝ նաև հայկական ծխի ու եկեղեցու առկայության մասին: Ուշագրավ է նաև Շղարոսթավում Պարոնվարդ անվան հիշատակումը, որը պետք է հասկանալ որպես պարոն վարդ, ամենայն հավանականությամբ՝ հողատեր մարդու մասին վկայություն:

Ինչպես երևաց վերոհիշյալ աղյուսակից՝ գրեթե նույն իրավիճակն էր նաև Ախալցխայի գավառում, ուր հայաշատ էր ոչ միայն քաղաքը, այլ նաև շրջակա գյուղերը: Այս համաձայնեցը հաստատվում է նաև եվրոպացի ուղեգիրների վկայություններով, որոնց համաձայն 17-րդ դարում Ախալցխա քաղաքում ապրում էր 50 հազ. մարդ՝ մեծ մասամբ հայեր և հրեաներ:²

Չլդրի էլալթի տարածքում հայ բնակչությունը բացարձակ գերակշռություն էր կազմում Մեծ Արտահանի լիվայում: *Փարականի* բերդում հիշատակվում են Սկրտիչ Անտոնի, Խաչատուր Ասվատուրի, Մելիք, նրա եղբայր՝ Կիրակոս, Գրիգորի թոռ, Հա(յ)րապետի թոռ, Կարթան (Կարդան) Տղապարոնի (Տղա պարոնի), *Ղուլունա* գյուղում՝ Տեր Հակոբ, Խաչիկ, Մարգար, Վելում Եղիազար և այլ հայկական անուններ:³

Այսպիսով, հնարավոր չէ համաձայնվել «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարի» թարգմանիչ և հետազոտող Ա.Ջիքիայի, ինչպես և այլ հեղի-

¹ «Դավթարի» մի ընդարձակ հատվածում հիշատակվող վերոհիշյալ բոլոր անուններն ըստ բնակավայրերի տեղի գրքագրության ջոլապետի ձեռն ձեռնար, Գ. 2, թ. 191-243, 275-278. 285.

² Иоселиани, Города существовавшие в Грузии, Тифлис, 1850, с. 29.

³ Գրքագրության ջոլապետի ձեռն ձեռնար, Գ. 2, թ. 403, 462. 464.

նակների հետ այն հարցում, թե այս սկզբնաղբյուրի տվյալները վկայում են այդ վարչամիավորում ամբողջապես վրացական (великом грузинский) բնակչության առկայության մասին:¹ Անշուշտ, շատ բնակավայրերում կարելի է հանդիպել վրացական անունների. օրինակ՝ *Պրտեմայում*՝ Գիորգի, Պետրե, Գոգիչա, *Ղաղեշում*՝ Գագուչա, Էլիա, Լոմկացի, Պապուսնա, *Կարտիկանում*՝ Գոգուչա, Սաբա, Գիորգի, *Խավեթում*՝ Գրիգու, Աբեսալոմ և այլն:² Բայց, անկասկած, դա հիմք չի տալիս նմանօրինակ «ընդհանրացումների» համար, որոնք ավելի շուտ հետապնդում են քաղաքական նպատակներ՝ «ապացուցել», որ Ջավախքում և նրա շրջատարածքում հայ բնակչության հայտնվելը կապվում է միայն 1830 թ. արևմտահայերի գաղթի հետ:

Դետեկլով նույն սկզբնաղբյուրում հիշատակվող մարդկանց անունների ցանկին՝ կարելի է նկատել, որ այս տարածաշրջանում թե՛ հայերի և թե՛ վրացիների շրջանում մեծ տարածում են ունեցել քիչ գործածվող այնպիսի անուններ, ինչպիսիք են «Վարծելը», «Յարալը» և այլն: Կարծում ենք, որ Վարծել անվան գործածությունը պատահական չէ և կարող է կապված լինել այս շրջանում խիստ հարկի «Վարծավունիք» կամ «Վարծիա» պատմական անունների հետ: Այնքի է զարնում նաև մեկ այլ փաստ. միևնույն անունը կրել են և՛ հայերը և՛ վրացիները: Հաճախ կարելի է հանդիպել դեպքերի, երբ հայրն ունեցել է վրացու, որդին՝ հայի, կամ եղբայրներից մեկը՝ հայի, մյուսը՝ վրացու անուն: Օրինակ. *Չունջիա (Չունջիսել)* գյուղի բնակիչ, վրացաճանոթ Սամուկայի որդիներից մեկը՝ Բայիթառն էր, մյուսը՝ Վարդանը (Էջ 176): Նման փաստերը վկայում են խառը բնակչություն ունեցող գյուղերի գոյության և նրանցում երկու ազգերի միջև ոչ միայն համոլորժողովան, այլև բարյացակամ վերաբերմունքի առկայության մասին: Այսպիսի իրավիճակը ձևավորվել էր նախորդ ժամանակաշրջանում Սամցխեի աթաբեկության շրջանում և կարող էր լինել նաև հայության շրջանում քաղքեղոնականության տարածման հետևանք:³

Ամփոփելով տարածաշրջանի ժողովրդագրական իրավիճակի քննությունը՝ ընդգծենք ևս մի քանի բնորոշ հատկանիշներ: Թուրքական նվաճման սկզբնաշրջանում հիշատակվում են ավելի շատ բնակավայրեր, քան հետագայում: Մի շարք գյուղեր, որոնք 16-րդ դարի վերջին տրոհված են եղել երկու մասի՝ Մեծ ու Փոքրի, կամ՝ Վերին ու Ներքինի (Օրջա, Ալաստան, Մաջադիա, Մուրջախեթ, Մամգարա, Խանդո (հիշատակվում է նաև երկորորդ

¹ Пространный реестр Гюрджистанского вилайета, турецкий текст издал, перевел С.С. Джикия, книга 1, Тб., 1947, с. XV (թուրքերեն):

² გურჯისტანის გეოგრაფიკული და დემოგრაფიკული, წ. 2, გვ. 176-177, 230, 276.

³ Այսօրինակ հայ-վրացական երևույթնական միավորն էր, որ թուրքական դժմոհակ տիրապետության պայմաններում, մահմեդականացավ և օրեցօր ներթափանցող թուրքական երևույթների հետ, սկսեց համոզեալ գալ «մեխիսեցի»՝ հավաքական աշխարհագրական անվան տակ: Մյուս կարևոր հանգամանքը՝ բնակիչների մեջ մահմեդական անունների գրեթե բացակայության փաստն է: Այն, անշուշտ, այդ փուլում պայմանավորված էր դեռ օսմանյան գերիշխանության թուլությամբ, հանգամանք, որի մասին արդեն չենք կարող ասել հաջորդ ժամանակաշրջանի վերաբերյալ:

համդրոն), հետագայում միավորվել են կամ մնացել է նրանցից միայն մեկը: Որոշ գյուղեր էլ առհասարակ վերացել են, ինչպես Գավաշենը, Տիկաշենը, Ալմալին, Ազմանան և այլն: Բնակամաքար, այս ոչ նպաստավոր միտումները օսմանյան դաժան տիրապետության հետևանք են եղել:

Այուս բնորոշ հատկանիշն այն էր, որ խոշոր բնակավայրեր՝ քաղաքներ ու ավաններ գրեթե չեն եղել: Բացառություն կարելի է համարել միայն Ախալցխա քաղաքը, իսկ բուն Ջավախքում՝ հերթվիս և Թմուկ բերդերը: Համապատասխանաբար առաջինն ունեցել է 174 (յուրաքանչյուր ընտանիքում 7 շունչ հաշվելով՝ 1200 մարդ), երկրորդը՝ 127 (մոտավորապես՝ 900 շունչ), երրորդը՝ 63 ընտանիք (մոտավ. 500 շունչ) բնակիչ:¹ Ամենամեծ գյուղերը բաժին են ընկել Ջավախքի սարահարթի հարավային հատվածին: Այստեղ Զարծեփն ունեցել է 54, Քանարբելը՝ 52, Խավթը՝ 36 ծուխ բնակիչ:² 18-27 ծուխ, այն է՝ 150-200 շունչ բնակչություն ունեցող գյուղեր են եղել Գավաշենը, Օլավերդը, Գոմը, Թորիան, Բարալենը, Կորխը, Խուլգուման, Գումբուրդան, Օրջան, Կոկիան, Վարևանը, Մեծ Մաջադիան և այլն:³

Գյուղերի մյուս խումբն ունեցել է 10-18 ծուխ կամ 80-150 շունչ բնակիչ, իսկ ամենասակավ բնակչությամբ գյուղերում՝ հաշվվել է 80-ից պակաս մարդ: Այս խմբի բնակավայրերի մի մասում ապրել է ընդամենը մի քանի ընտանիք մարդ: Դրանց թվում հանդիպում ենք նույնիսկ Ախալքալաք բերդաքաղաքին՝ 3 ընտանիք բնակիչներով: Դա նշանակում է, որ երկրամասի թուրքական բռնազավթման ընթացքում այն մեծապես տուժել է՝ բնակչությունը կոտորվել է, գերեվարվել կամ արտագաղթել:

Այժմ փորձենք անդրադառնալ նաև Ջավախքի տեղանունների, մասնավորապես՝ բնակավայրերի անունների խնդրին, որը միշտ զանազան մեկնաբանությունների տեղիք է տվել կամ ուղղակի շրջանցվել է: Գոյություն ունի այն կարծիքը, թե դրանց մեծ մասն ունի զուտ արաբաթուրքական կամ վրացական ծագում: Սակայն առաջին դեպքում անհասկանալի է դառնում, երբ բնակավայրերի ճշշող մեծամասնությամբ, ինչպես տեսանք, հանդիպում ենք վաղ շրջանում՝ մինչև արաբական ու թուրքական տիրապետությունները: Նշանակում է, տեղանունների մահմեդական ծագում ունենալու վարկածը, բավական հեշտությամբ հերքվում է: Նույնիսկ մահմեդականների շրջանում տարածում ունեցող «Աբուլ» հատուկ անունը, ոչ մի կապ չունի Աբուլ լեռան ու համանուն գյուղի անվան հետ, քանի որ Apulum ձևով հիշատակվում է դեռևս Պետինգերյան քարտեզում: Ինչ վերաբերում է առանձին դեպքերում որոշ տեղանունների ուղղակի թուրքերենով թարգմանվելու հանգամանքին (օրինակ՝ Չամդուրա. իբր՝ չամ (փայտի տեսակ) և դուրամ՝ հարթավայր), դրանք ավելի շուտ պատահական զուգադիպություններ են կամ՝ մտացածին բացատրություններ: Տվյալ դեպքում կասկած չի մնում, երբ Չամդուրայի անունը նախապես հանդիպում ենք այլ ձևով՝ *Չամծկուլա*

¹ Զարդուստիանոս յօղտօյտոս ճօղճ ճօղտօն, Գ. 2, ԶՅ. 22-24, 171, 240-241

² Նույն տեղում, էջ 215-216, 275-276:

³ Գյուղական վայրերում յուրաքանչյուր ծխում միջինը հաշվվել է 8 մարդ (տես՝ Մելքոնյան Ա., Էրզրում, Ե., 1994, էջ 103-112):

տարբերակով: Մահմեդական անուններ ունեցող առանձին տեղանուններն հիմնականում ավելի ուշ շրջանի ծնունդ են: Օրինակ. Խոջաբեկ, Օրոջալար (լար՝ թուրքերենում հոգնակերտ մասնիկ է, որ տվյալ դեպքում կնշանակի Օ-որջաներ կամ Օրջաներ):

Տեղանունների մի մասի՝ վրացական հիմքեր ունենալու տեսակետը, անշուշտ, առանձին դեպքերում, կասկած չի հարուցում: Օրինակ՝ Սաղամո (վրաց.՝ saRamo՝ երեկո), Դիլիսկա (հնարավոր է՝ dili (դիլի, նշանակում է՝ առավոտ) և kari (կառի՝ դուռ), այսինքն՝ առավոտյան դուռ, Արշալույս) և այլն: Սակայն այդպիսի դեպքերը շատ չեն: Իրականությունն այն է, որ տեղանունների զգալի մասը, դժվար է, շատ դեպքերում էլ՝ ուղղակի անհնարին է ստուգաբանել. այսպես՝ Մաջադիա, Գոնդուրա, Տուրցխ, Վաչիան, Խանդո, Բավրա, Խուլզումա, Կարտիկամ, Կորխ և այլն: Սակայն խնդրի ուշադիր քննության դեպքում, այնուամենայնիվ, հնարավոր է լինում նկատել որոշակի օրինաչափություններ: Աչքի է զարնում այն համագամներ, որ շատ տեղանուններ կրում են բազմաթիվ լեզուներում, ինչպես և հայերենում, *տեղ, երկիր* նշանակող «իա», «ստան» վերջավորություններ (Կոկիա, Կոթելիա, Մաջադիա, Խորենիա, Խոսպիա, Ալաստան և այլն): Մյուս մասը կրում է կամ հայկական «շեն»՝ տեղանունակերտ արմատը, կամ ուղղակի ունի հայկական ու հայափունջ անվանում՝ Ափնիա (Կուրի ափին ընկած բնակավայր), Քարծեփ (քար և ծեփ), Բարալես (Բարիլույս, որ հետո դարձել է Բարալես), Խորենիա (խորոնք, խորակերտ, խորաշեն), Երնջակ (հետագայում էրինջա), Գոմ (Գոման), Մերոնիա (մյուռոնի երկիր, ապա՝ Մերենիա), Խոզարուն (խոզերի բուն, այնուհետև՝ Խոզափին), Առաքյուլ (առաքյալների վայր, հետագայում՝ Արագյալ), Գավաշեն (հավանաբար՝ Կավաշեն), Տիկաշեն, Ջիգրաշեն, Ասպնջակ (Ասպինձա), Գանձ (Գանձա), Ծունդա (Ծնունդ, Ծննդածին), Թմուկ (Թմբուկ, Թմոզի), Մարգաստան (մարգերի երկիր) և այլն: Եվ վերջապես, կան դեպքեր, երբ տեղանվան կեսն ունի հայկական, կեսը՝ վրացական ծագում՝ Սամսար (*sami* - սամի, վրացերեն՝ երեք և *sar* - հայերեն՝ լեռ, այսինքն՝ Եռալեռ):

Այժմ կրկին վերադառնանք ուսումնասիրվող վարչամիավորի տարածքային խնդիրներին: Ախալցխայի նահանգի վերածնունդը շարունակվեցին: Տարբեր աղբյուրների հիման վրա Անդրեաս Բիրքենի կատարած հետազոտությունների համաձայն այս նշանի կազմում ընդհանրապես հիշատակվում է 33 լիվա:¹ Բացի վերոհիշյալ գավառներից տարբեր ժամանակներում հանդիպում ենք նաև հիշատակումների հետևյալ լիվաների մասին՝ Փոքր Արտահան,² Գյուլե (Կոդ, Կոլա), Մաիջիլ, Մամրվան (Նարիման), Թավուսկեր (պատմական Տայոցքար գավառ) և այլն: Կարճ ժամանակով Ախալցխային են ենթարկվել նույնիսկ Քութայիսը՝ Իմերեթիայի կենտրոնը,³

¹ Birken A., A., Provinzen des osmanischen Reiches, էջ 154-160:

² Փոքր Արտահանը հիմնականում եղել է Կարսի նահանգի կազմում և միայն կարճ ժամանակով է ենթարկվել Ախալցխային:

³ Քութայիսը Ախալցխային ենթարկվել է միայն սուլթան Մահմուդ 4-րդի օրոք (1648-1687), երբ գրավվել է Մուրթեզա փաշայի կողմից, տե՛ս Էվլիյա Չելեբի, Թուրքական աղբյուրներ, հ. 9, Ե., 1967, էջ 23:

Ապերը, որը հիմնականում եղել է երգրումի նահանգի կազմում,¹ և այլն: Ախալցխայի ենթակայության տակ հանդիպում ենք նաև գավառների, որոնց տեղագրությունը բավականաչափ բարդ է: Օրինակ՝ Երզան, Սասին, Թարա-լաթ և այլն:²

16-րդ դ. վերջին և 17-րդ առաջին կեսին՝ օսմանյան տիրապետության ամրապնդման ուղղված սուլթանական կառավարության ձեռնարկած միջոցառումների արդյունքում, ինչպես ամբողջ Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Չլդրի (Ախալցխայի) նահանգում, տեղի ունեցան վարչաժողովրդագրական որոշակի տեղաշարժեր: Նախ, ինչպես նշվեց, մոտավորապես 17-րդ դարի առաջին կեսին, երկարատև պատերազմների ընթացքում ավերված Չլդր բերդաքաղաքից, էյալեթի կենտրոնը տեղափոխվեց բարգավաճ վիճակում գտնվող Ախալցխա քաղաք: Վերջինս այդուհետ վերածվեց փաշայանիստ քաղաքի: Շավշեթի բեկի կողմից վերակառուցված Ախալքալաքի բերդն էլ դարձավ էյալեթի ռազմավարական նշանակություն ունեցող բերդաքաղաքներից մեկը: 17-րդ դարի առաջին կեսին Ախալցխայի փաշան, որին հաճախ նախկինի պես անվանում էին աթաբեկ, իսկ նրա նահանգը՝ Չլդրի էյալեթ,³ լիովին հպատակեցրեց դեռ հարաբերական ինքնուրույնությունից օգտվող Օլթիի տարածքը և դարձավ բավական ընդարձակ նահանգի ինքնիշխան տիրակալը:

17-րդ դարի առաջին կեսի թուրք հեղինակների (Այնի Ալի, Կոչիբեյ, Ալի Չաուշ, Էվլիա Չելեբի և ուրիշներ) հաղորդած տեղեկությունների համաձայն Ախալցխայի էյալեթի լիվաների թիվն արդեն հասել էր 13-ի՝ նախկին 9-ի փոխարեն:⁴ Նահանգի հյուսիս-արևմուտքում՝ որպես մոր գավառներ հանդես էին եկել Շավշեթը, Արտանուջը, Աճարան (Աջարիա), Բերդագրակը, Լիվանան, Նիսֆի Լիվանան: Ինքնուրույն լիվայի էր վերածվել Ախալցխայի (Արևահար) գավառի նախկին ճաճարակի նահիեն:⁵ Այլև չի հիշատակվում Պետերի լիվան: Հավանաբար այն արդեն դուրս էր մնացել օսմանյան ենթակայությունից և վերամիացվել էր վրաց թագավորությանը:

¹ Տե՛ս Մելքոնյան Ա., երգրում, էջ 28, 77-88, 163: Լոռին 16-րդ դարի վերջին մի կարճատև փուլում եղել է թուրքական տիրապետության տակ, ապա՝ վերակցվել Քարթլիի թագավորությանը:

² Birken A., նշվ. աշխ., էջ 154-160: Թարալեթը, թերևս, կարող է կապ ունենալ Թրիալեթ-Թոեղեթի հետ:

³ Էվլիա Չելեբին հստակ գրում է, որ թեև փաշայանիստ քաղաքն արդեն Ախալցխան էր, «սակայն փաղիշահական (սուլթանական - Ա.Մ.) դեպերխանեում գրվում է «Չլդրի էյալեթի մյութասարիֆ այսինչ փաշան (տե՛ս Էվլիա Չելեբի, Թուրքական աղբյուրներ, հ. 9, էջ 108):

⁴ Էվլիա Չելեբի, Թուրքական աղբյուրներ, հ. 9, էջ 23: Է. Չելեբին այդ 13 գավառների թվում հիշատակում է Օլթին, Խերթվիսը, Արտանուջը, Հաջրեքը, Արտահան Բյուզյուքը, Փոսխովը, Մախսիլը, Աջարան, Փենեքը, Փերթեքը (Բերդագրակ), Լիվանեն, Նըֆսի Նիսֆի/ Լիվանեն և Շևշաթը (տե՛ս նույն տեղում, էջ 26, 110):

⁵ Խոջաբեկ Զադեյեթ Զաճա ճաճտար, տոճլուս, 1979, թ. 80-81, Birken, նշվ. աշխ., էջ 154-160, Pitcher Historical Geography, էջ 128.

Ախալցխայի էյալեթի 17-րդ դ. վերջի և 18-րդ դարի վարչատարածքային իրավիճակն ավելի հանգամանորեն ներկայացնելու համար դիմենք արդեն հիշատակված «Չլդրի էյալեթի ջաբա դավթարի» օգնությամբ: Ըստ այս ինքնատիպ հարկացուցակի, որն արտացոլում է 1694-1732 թթ. ընկած ժամանակահատվածի վիճակը, Ախալցխայի նահանգը, որն աղբյուրում առաջվա նման շարունակում է կրել «Չլդրի էյալեթ» անվանումը, բավականաչափ ընդարձակվել էր և այժմ տրոհվում էր հետևյալ գավառների՝ Ախալցխա, Ախալքալաք, Չլդր, Փոցխով, Խերթվիս, Արտանուջ, Օլթի, Մեծ Արտահան, Փոքր Արտահան, Փանակ (Բանակ) և Մամրվան:

Հարկացուցակում բացի վերոհիշյալ գավառներից, որոնց կազմում վկայակոչված են կոնկրետ 38 գյուղախմբեր, հանդիպում ենք ևս 10 լիվաների՝ առանց նահիեների հիշատակումների, հանգամանք, որը ենթադրել է տալիս վերջիններիս կազմավորման փուլում գտնվելու մասին: Դրանք են՝ ճաճարակ, Ասպինձա, Աթունկալա (Ոսկեբերդ), Օցխե, Վերին Աճարա, Ներքին Աճարա, Շավշեթ, Լիվանա, Սիսֆի Լիվանա և Բերդագրակ:

Նախորդ ժամանակաշրջանի աղբյուրների տվյալների հետ համադրությունից երևում է, որ նահանգը զգալիորեն ընդարձակվել է և տեղի են ունեցել նաև ներքին սահմանների վերաձևումներ: Որոշ նահիեներ վերածվել են լիվաների: Նախկինի նման պատմական Ջավախքի տարածքն ընդգրկվել է Ախալքալաքի, Խերթվիսի և Չլդրի լիվաների մեջ:

Ի՞նչ ժողովրդագրական տեղաշարժեր կատարվեցին Ախալցխայի նահանգում թուրքական տիրապետության առաջին փուլում՝ մինչև 18-րդ դարը: Այդ խնդրում որոշակի պատկերացում ենք կազմում, երբ բաղդատում ենք բազմիցս վկայակոչված «Գյուլքիստանի վիլայեթի մեծ դավթարի» և «Չլդրի էյալեթի ջաբա դավթարի» նյութերը, որոնցից առաջինը, ինչպես հայտնի է, արտացոլում է 16-րդ դարի վերջի, այսինքն՝ օսմանյան տիրապետության հաստատման շրջանը, մյուսը՝ 17-րդ դարի վերջի և 18-րդ դարի սկզբի իրավիճակը:¹ Ամնիջապես աչքի է զարնում այն փաստը, որ մեկ հարյուրամյակի ընթացքում շեշտակի նվազել էր նահանգի բնակավայրերի թիվը: Բերենք օրինակներ հիմնականում Վերին Ջավախքի օրինակով՝ այն ներկայացնող երեք գավառներով.

	1595 թ.	1694-1732 թթ.
1. Ախալքալաքի լիվայի նահիեներ		
ա) Ակշեհիրի	84	33
բ) Թմուկի	22	7
գ) Սիալխսուրի	33	17
2. Խերթվիսի լիվայի նահիեներ		
ա) Անտառային Ջավախքի	69	23
բ) Խերթվիսի	38	19
գ) Ստվերոտ	-	2
դ) Բուզմարեթի	12	1

¹ Այդ ժամանակաշրջանում Ջավախքի երեք լիվաներում (Ախալքալաք, Խերթվիս և Չլդր) հիշատակվող գյուղերի անունները տե՛ս Բոլղաճուրի յոթնամյա ճաճա ճաճար, ԶՖ. 106-109.

3. Չլրրի լիվայի նահիեններ

ա) Ջանբազի	51	22
բ) Գայլաբերդի	16	6
գ) Բանարբեյի	33	12
ընդամենը՝	358	142

Այսպիսով, մեկ հարյուրամյակ, կամ մի փոքր ավելի անց, Ջավախքում հիշատակվող բնակավայրերի թիվը 358-ից կրճատվում է 142-ի, այսինքն՝ 2,5 անգամ: Եթե նախկինում հանդիպում ենք միևնույն անունը կրող մի քանի գյուղերի՝ Վերին և Ներքին, Մեծ, Միջին և Փոքր, ապա այժմ նրանց մի մասն առհասարակ չի հիշատակվում, մյուսներն էլ՝ նշվում են իբրև մեկական գյուղեր:

Մյուս առանձնահատկությունը, որ նկատվում է, գյուղատեր բնակիչների մեջ քրիստոնեական անուններ ունեցողների փոխարեն, գրեթե առանց բացառության, հանդես են գալիս մահմեդական անուններ կրող մարդիկ, հանգամանք, որը վկայում է մահմեդականների կողմից բոլոր հողերի բռնագավթման մասին: Օրինակ, Ուջմանայում հիշատակվում է Մահմեդը, Տիկաշենում՝ Սուլեյմանը, Խուլգունոյում՝ Մուստաֆայի որդի Մեհմեդը, Դիլիսկայում՝ Աբդուլլահը և Մեհմեդը, Բումաշեթում՝ Հասանը, Կոթեիայում՝ Աբդուլլահի որդի Հալիլը և այլն:¹ Անկասկած, այս փաստը չի խոսում առհասարակ բնակավայրերի մեծ մասում միայն մահմեդականներ ապրելու տեսակետի օգտին, այլ հուշում է մահմեդապաշտ գործընթացների արագացման, այս տարածաշրջանում մահմեդականացման, վերջինիս արդյունքում «մասխեթցիների» էթնոկրոնական համայնքի հանդես գալու միտումների մասին: Օսմանյան կայսրությունում հայերի և մյուս քրիստոնյա ժողովուրդների մշտական կոտորածների, բռնի մահմեդականացման քաղաքականությունը հստակորեն երևում է, երբ քննական վերլուծության ենք ենթարկում արևմտահայ տարբեր վարչամիավորների էթնոժողովրդագրական տեղաշարժերը օսմանյան տիրապետության ողջ ընթացքում: Պարզվում է, որ էթնիկ հայաթափման միտումները համընդհանուր երևույթ են եղել ողջ Արևմտյան Հայաստանի համար:

Խոսելով օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում ինչպես ողջ Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Ախալցխայի նահանգում տեղի ունեցած ժողովրդագրական տեղաշարժերի մասին, հայերի շրջանում կարելի է առանձնացնել էթնիկ զարգացումների հետևյալ միտումները.

ա) Վրացիներից բացի, մահմեդականացում են մեծ թվով հայեր:

բ) Հայերի մի գալի մասը դավանափոխ է լինում. ովքեր ընդունում են ուղղափառությունը, նախ՝ վրացանում են, ապա, կորցնելով ազգային ինքնապաշտպանական հատկանիշները, բավական արագ էլ մահմեդականանում-թուրքանում են՝ համալրելով «մասխեթի» էթնոկրոնական շերտերի շարքերը:

¹ Խոլզորոնցի ցուցանիշների շարքում: Զգ. 141, 151, 153, 155, 156, 158, 177.

գ) Հայության մի հատված, եվրոպական կաթոլիկ քարոզիչներից ստանալով որոշ աջակցություն և անձի ու գույքի ապահովության խոստումներ, կաթոլիկանում է:

Այս բոլոր երևույթները հստակորեն նկատել է Ղուկաս Ինճիճյանը: Խոսելով Ախալցխայի էյալեթի ամայացած ու լքյալ բազմաթիվ բնակավայրերի ու եկեղեցիների առկայության մասին, նա նշում է, որ դրանց տարածքում այժմ ապրում են «տաճիկներ», որոնք ժամանակին եղել են հայեր ու վրացիներ. «Գիւղօրէք այսր նահանգի սակաւ ըստ մեծութեան նորա, յորս ըստ մեծի մասին երևին մինչև ցայժմ մենաստանք և եկեղեցիք մեծաշէնք, այլ կամ լքեալք և կամ քայքայեալք: Բնակիչք նոցա ըստ մեծի մասին տաճիկք, *դարձեալ գրեթէ առհասարակ կամ ի հայոց և կամ ի վրաց»* (ընդգծումն իմն է - Ա.Մ.):¹ Այսօրինակ զանգվածային մահմեդականացումը թելադրված էր ոչ միայն քաղաքական, այլ նաև տնտեսական դրդապատճառներով. գործում էր մի օրենք, ըստ որի իսլամն ընդունած քրիստոնյան ազատվում էր դրամահարկ՝ իսկինք վճարելուց:²

Ղ. Ինճիճյանը նկատում է նաև Ախալցխային բնորոշ եթնիկ գործընթացների մյուս առանձնահատկությունը՝ հայերի ուղղափառ, այս դեպքում, ավելի ճիշտ՝ վրացադավան դառնալն ու վրացացումը: Նա այն միտքն է հայտնում, որ նահանգի քրիստոնեաբնակ գյուղերի բնակիչների մեծ մասը նախապես եղել են հայեր. «Են և գիւղօրէք բնակեալք մինչև ցայժմ ի քրիստոնէից հայոց նաև ի վրաց, որք գրեթէ առհասարակ սերեալ երևին ի հայկազեանց»³ (ընդգծումն իմն է - Ա.Մ.): Այնուհետև, հմուտ պատմաբան-աշխարհագետը պարզորոշ անկմաբանում է այդ երևույթի ողջ էկոլոգիան: «Բազմութիւն իշխանաց մերոց, նաև հասարակ ժողովրդեան,- գրում է նա,-որք ապա սակաւ առ սակաւ սովորեալք ի լեզու ի բարս, նաև ոմանք ի ծեսս վրաց, փոխեցան յազգ նոցա»:⁴ Ի դեպ, «ծեսս» ասելով, Ինճիճյանն ի նկատի ունի դավանական ծիսական խնդիրները, այսինքն՝ վրացադավանության ընդունումը:

Մյուս երևույթները՝ հայերի կաթոլիկացումն սկսվեց ավելի ուշ՝ 18-րդ դարի երկրորդ կեսին և ընդգրկեց հիմնականում Ախալցխա քաղաքն ու շրջակա գյուղերը: Ախալցխան ինքնուրույն էքմիաժնական թեմ էր և ժամանակ առ ժամանակ ենթարկվում էր էրզրումի թեմակալ առաջնորդին: 1750-

¹ Ինճիճեան Ղ., նշվ. աշխ., էջ 123: Այն տեսակետը, ըստ որի տաճիկների՝ թուրքերի զգալի մասը նախապես եղել են ոչ միայն վրացիներ, այլ նաև հայեր, պաշտպանում է պրոֆ. Պ.Հակոբյանը. «Ախալցխայի ...հին գիւղերում ապրում էին նաև թուրք ընտանիքներ,-գրում է նա,- որոնք ամենայն հավանականութեամբ, երբեմնի հայեր էին եւ բռնութեամբ հաւատաւիոխ էին դարձել երկրամասի իսլամացման շրջանում» (Հակոբյան Պ., Հայ կաթոլիկութիւնը պատմաբանական լոյսի տակ, Հրաւեր ողջմտութեան, Ե., 1993, էջ 88): Նույն կարծիքին է նաև արևելագետ Ավ.Փափազյանը (Փափազյան Ա., Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Ե., 1999, էջ 27):

² Փափազյան Ա., նշվ. աշխ., էջ 44:

³ Ինճիճեան, նշվ. աշխ., էջ 123

⁴ Նույն տեղում:

ական թվականներին այնտեղ հայտնված կաթոլիկ քարոզիչների պառակտ-
չական գործունեության հատկանշով հաջողվեց 60-ական թթ. վերջին հա-
մայնքը երկփեղկել: Սկսվեց Հայ առաքելական եկեղեցիների բռնազավթ-
ման, էջմիածնից հրաժարվելու մի եղծալի շրջան: Հայոց կաթողիկոս Սիմեոն
Երևանցու ջանքերը՝ կաթոլիկացած հայերին իրենց դավանանքին վերա-
դարձնելու ուղղությամբ, հաջողություն չունեցան:¹ Արդյունքում Ախալցխայի
և Երա գյուղերի մեծ մասը դարձավ կաթոլիկ: Նրանց ձեռքն անցան քաղաքի
հիմնավորց Ս.Նշան և Ս.Հովհաննես եկեղեցիները: Ս.Աստվածածին եկեղեցին
հայտնվեց կապուչինականների հսկողության ներքո:² Եկեղեցիներից
գրկված և փոքրամասնության մեջ հայտնված հայ առաքելական համայնքը
ստիպված եղավ ձեռնամուխ լինել նոր եկեղեցու շինարարությանը:

Օսմանյան տիրապետության շրջանում ազգային-կրոնական հալա-
ծանքների, լեռնականների ասպատակություններից ազատվելու մղումնե-
րով, կաթոլիկացած հայերի մեծ մասը, ստանալով Հռոմի պապի և եվրոպա-
կան երկրների որոշ աջակցությունը, առժամանակ խուսափեց մահմեդակա-
նացումից ու վրացացումից և շարունակեց պահպանել իր նախկին հայեցի
ինքնության շատ տարրեր:

Այսպիսով, պարզորոշ երևում է, թե օսմանյան լուծը որքան աղետա-
բեր էր եղել ինչպես հայ, այնպես էլ վրացի բնակչության եթնոկրոնական վե-
րակերպումների, ազգածուլման համար: Ցավոք, այս գործընթացները չդա-
դարեցին և շարունակվեցին մահ 19-րդ դարի առաջին քառորդին և, ի վերջո,
հանգեցրին երկրամասի ժողովրդագրական պատկերի արմատական փոփո-
խության:

¹ Ախալցխայի և շրջակայքի գյուղերի կաթոլիկացման պատմությունը մանրամասն
տես՝ Յակոբեան Պ., նշվ. աշխ., էջ 51-72:

² Ինժինեան Ղ., նշվ. աշխ., էջ 124, Յակոբեան Պ., նշվ. աշխ., 72:

ԷԶՄԻԱՇՆԻ ՎԱՆԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԵՐ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ /16-18-րդ դդ./

Հայաստանյաց Առաքելական եկեղեցու հոգևոր և եկեղեցավարչական գերագույն կենտրոնական իշխանության՝ Էջմիածնի Ամենյան Հայոց կաթողիկոսության 16-18-րդ դդ. սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը հայ պատմագիտության մեջ համեմատաբար քիչ լուսաբանված թեմաներից մեկն է: Այն հիմնականում կատարվել է ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական պատմության լուսաբանման ընդհանուր ֆոնի վրա: Մինչդեռ հարկավոր է այն ուսումնասիրել համակողմանիորեն, հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով նրա տնտեսական կյանքի պատմության ուսումնասիրման վրա, քանի որ տնտեսությունն ուսումնասիրելը, նրա զարգացման կոնկրետ օրինաչափությունները բացահայտելն այդ հասարակության սոցիալ-տնտեսական հարաբերությունների լուսաբանման հիմնական հարցն է: Բացի այդ, ի հայտ են եկել նոր աղբյուրներ, որոնք լուրջ կոման են հանդիսանում մի շարք հարցերի համակողմանի քննարկման կամ նորոպի լուսաբանման համար:

Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանի ագրարային հարաբերությունների էությունը բացահայտող պատմական փաստաթղթերի գիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ այն փաստարկումը, թե հողը պետության կամ թագավորի գերագույն սեփականությունն էր, գիտականորեն հերքվում է: Հողատիրության հարցերը մեկնաբանելիս առաջին հերթին պետք է ելնել տվյալ ժամանակաշրջանում հաստատված սոցիալ-տնտեսական հարաբերությունների օբյեկտիվ վերլուծությունից: Այդ հարցերը չի կարելի բացատրել հենվելով միայն մուսուլմանական կրոնական դոգմաների վրա, որոնք, ինչպես ճիշտ նկատել է Վ. Մինորսկին «յուրաքանչյուր երկրում այլ տեսք ունեն և մեզ հետաքրքրող հարցերի համար ոչ այլ ինչ էին, եթե ոչ միայն իրավական ծածկույթ, որ գալիս էին ծածկելու տեղում ընդունված կարգերը»¹:

16-18-րդ դդ. Հայաստանի Արևելյան մասում մասնավոր հողային սեփականության հիմնական ձևը մուլքն էր, որն ընկած էր պետական, արքունական, մասնավոր սեփականատիրական, կրոնական հաստատություններին պատկանող ու ազատ համայնքապատկան հողատիրության տեսակներին հիմքում:

Իր ունեցած առանձնահատկություններով հողատիրության տեսակների մեջ տարբերակվում էր վանական-եկեղեցականը: Հարկ է նշել, որ թեև

¹ Tadhkirat al- muluk, a manyal of Safavid administration, by V. Minorsky, London, 1943, p. 195.

Հայաստանն իր երկու մասերով էլ նվաճված էր, այնուհանդերձ եկվոր տիրակալներին չհաջողվեց երկրում արմատավորել իրենց հոգևոր ինստիտուտները: Թեև չկար միասնական հայկական պետականություն և երկիրն էլ դեռ չթոթափած թաթար քոչվորների ասպատակությունների թողած հետքերը դարձել էր թուրքմենական ցեղերի անվերջ կռիվների թատերաբեմ, հայ եկեղեցու կենտրոնը կրկին փորձեց ստանձնել ազգի առաջնորդի իր երբեմնի դերը: Հասկանալի է, որ ամիրաժեշտ էր առաջին հերթին պայմաններ ստեղծել վաճառական-եկեղեցական տնտեսության առաջընթացի համար: Այն սկսվեց հայ աշխարհիկ ավատատերերի նվիրատվություններով: Այս ուղղությամբ ամիրաժեշտ է կարևորել այն իրողությունը, որ բնաշխարհի ավատական դասի ներկայացուցիչների նախաձեռնությամբ հայ հոգևոր ինստիտուտներին տրվող և բավական մասսայական բնույթ ստացած նվիրատվությունների փաստերը ստեղծված պայմաններում նվաճողների սոցիալ-տնտեսական քաղաքականության դեմ պայքարի յուրահատուկ ձևեր էին: Նման գործի նախաձեռնողը հանդիսացավ Կարա-կոյունլուների արքունիքում մեծ վեզիրի պաշտոնն զբաղեցնող, Կարա-Խսբանդարի գլխավոր խորհրդական Ամիր Ռոստոմը, որը Օրբելյան իշխանական տան ներկայացուցիչն էր: Դեռ 1431թ., երբ արդեն տեսանելի էր Հայոց Ընդիանրական Աթոռն էջմիածին տեղափոխելու իրողությունը, Ռոստոմ Օրբելյանն Արագածոտն և Նիզ գավառներում իր սեփականությունը հանդիսացող թվով 7 գյուղեր /Վաղարշապատ, Աշտարակ, Բաթրինջ, Նորազավիթ, Աղվանատուն, Քիրաշլու, Մուղնի/ 540000 դինարով¹ վաճառում է բարձրաստիան հոգևորական Գրիգոր Մակվեցուն, որն էլ իր հերթին դրանք նվիրում է էջմիածնի վանքին²: Նկատի ունենալով այն իրողությունը, որ հայ ավատատերերի կարծիքով եկեղեցու իրավունքների ամրապնդումը կնպաստի հետագայում իրենց իշխանության վերականգմանը, պետք է ենթադրել, որ տվյալ դեպքում վաճառքը զուտ ձևական էր, քանզի չէր բացառվում, որ նշված գումարը Մակվեցուն տված լիներ հենց Ռոստոմ Օրբելյանը:

Էջմիածնի վանական հաստատությանը սեփականատիրության իրավունքով հողերի նվիրման փաստերը առավել մեծ չափեր ընդունեցին 17-18-րդ դդ.: 1658թ. կալվածագրերից մեկում, ուր նկարագրվում է Նորագյուղ և Եղվարդ գյուղերի սեփականության իրավունքի էջմիածնի վանքին նվիրելու պատմությունը, կարդում ենք. «Պատճառ այսր շարիատի բացատրե այն զի բարեպատեհ միջոցի և ի բարե վայրկեանի ներկայացաւ շարիատին բարեհամբավեալն ի քրիստոնեից խոջա Յակովբ որդի Աթի հայ քնակիչ Երևանայ և ըստ իւրեանց անձնական համաձայնութեան և ցանկութեան անբաւարար թումբք է յոժարական նկրեաց ի վերա հիման կանոնաց շարիատի, վանիցն էջմիածնի զամբողջ գիւղն Նորագեղ յերևանայ նահանգի ու գջորորդ ու կե

¹ Դինար-դիան, արծաթ դրամի միավոր: 15-18-րդ դդ. եղել է անփոփոխ մեծության: 10000 դինարը կազմում էր 1 թուման:

² Կալվածագրեր, կազմեց՝ Հար. Աբրահամյան, Երևան, 1941, էջ 12-14 /այսուհետև՝ Կալվածագրեր/:

մասունս ի վրայ ամբողջ մասեաց¹ գիւղն եղվարդ ի գաւառին Գառնայ»²: Արժանահիշատակ է վրաց Ռոստոմ թագավորի Նախնեղու գյուղը էջմիածնին նվիրելու վերաբերյալ կալվածագիրը: Դա հավաստումն է էջմիածնի հեղինակության բարձրացմանը նույնիսկ Չայաստանի սահմաններից դուրս: Կալվածագրում մասնավորապես ասվում է. «Կամաւ և օրինականութեամբն աստոյ մենք թագաւոր թագաւորաց Քարթլայ և Կախեթու երկուց իշխանութեանց իշխօղ և տիրող տէր և թագաւոր Ռոստոմ... շնորհեցաք այսպէս. Նախնեղան մեր արքունի հայրենիքն, որք կային ի Նախնեղուն, վասն երկարակից մեզ լինելոյ, նուրիեցաք էջմիածնայ»³: 1769թ. մեկ այլ կալվածագիր վկայում է քանաքեռցի ոմն Ջավահիրի ու նրա դուստր Գայանէի կողմից էջմիածնի վանական հաստատությանը հողատարածք նվիրելու մասին. «Ձօրութիւն գրոյս այս է. որ ես քանաքեռցի ճավահիրս և իմ դուստր Գայանէս... մեր յօժար կամօք և ուղիղ սրտիւ և երկօքեանս ի միմեանցս հաւանութեամբ յիշատակ և վախճ տվինք մեր մուլքն մեր ինչքն Սուրբ իջման տեղին վասն փրկութեան հոգւոյ և բոլոր ննջեցելոց մերոյ»⁴:

1639թ. թուրք-իրանական պատերազմի ավարտից հետո, երբ երկրում հաստատվեց համեմատաբար երկարատև խաղաղության մի ժամանակաշրջան, նպաստավոր պայմաններ ստեղծվեցին էջմիածնի վանական տնտեսության կարգավորման, նրա հետագա զարգացումն ապահովելու ուղղությամբ: Եվ պահական չէ, որ Եսայի Չասան-Ջալալյանը 17-րդ դարի երկրորդ քառորդը և հետագա ժամանակաշրջանը բնութագրում է որպես հայոց աշխարհի և էջմիածնի նորոգման պատմության ժամանակաշրջան⁵: Շնորհիվ Սովսես Տաթևացի/ 1629-1633թթ./, Փիլիպպոս Աղբակեցի/ 1633-1655թթ./ ու հատկապես Չակոբ Ջուղայեցի/ 1655-1680թթ./ կաթողիկոսների կառուցողական ջանքերի, աստիճանաբար կարգավորվում է վանական հաստատության տնտեսական գործունեությունը: Դրվատելով Փիլիպպոս Աղբակեցու այդ ուղղությամբ կատարած աշխատանքները, Առաքել Դավրիժեցին գրում է. «Եւ որքան եկաց Փիլիպպոս կաթողիկոսն ի վերայ երկրի, թե ի ժամանակս վարդապետութեան իւրոյ, եւ թե ի ժամանակս կաթողիկոսութեան, անդադար եւ անխափան արար եւ գործեաց նա արդիւնս ի մեջ աշխարհի, եւ մանաւանդ բարձրագահ աթոռն սբ. էջմիածին, սովաւ առաւել հարստացաւ և փարթամեցաւ եկեղեցական ամօրով, ոսկւով և արծաթով: Այլ եւ հոյլք անբան կենդանաց, ուղտք, եւ ջորիք, եւ ջուլիք մատակ ծիցոց, եւ ջոկք խաշանց եւ անդեոց, այլ եւ արտս, եւ զայգիս եւ բուրաստանս»⁶: Գոյանում են ֆինանսական միջոցներ, որոնց օգտագործումով հնարավորություն է ստեղծվում ընդարձակելու վանական հաստատության հողատարածութեան

¹ Մեկականությունն օտարման ենթարկվելու դեպքում քաժանվում էր 6 մասերի, որը իրանական արքայութեանը կոչվում էր դանգ, իսկ իայկականում՝ ստակ: Մեկ ամբողջական կալվածքը 6 ստակ էր:

² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 4, էջ 8:

³ Կալվածագրեր, էջ 18-19:

⁴ Նույն տեղում, էջ 24:

⁵ Եսայի Հասան-Ջալալյան, Պատմութիւն յաշխարհին Աղուամից, Երուսաղեմ, 1868, էջ 15:

⁶ Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 263:

յունների չափերը: Գնումների ճանապարհով էջմիածնի հողատիրական իրավունքների ընդարձակումը դարձավ կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու գործունեության հիմնական առանցքը: Ստորև ներկայացնում ենք այն գյուղերի ցանկը, որոնց սեփականատիրական իրավունքը գնումների միջոցով ձեռք է բերել Հակոբ Ջուղայեցին:

N	Գյուղի անունը	որ մասն է գնվել	արժեքը	վաճառողը	գնման տարեթ.
1	Ֆրանկանոց	6 դանգ	9թում. 9500դին.	Ալի աղայի որդին	1655
2	Քեշիշքենդ	6 դանգ	2 թուման	Իսմայիլ աղա	1671
3	Նորք	6 դանգ	55 թուման	Խոջա Սարգիս	1674
4	Յայջի	6 դանգ	17 թուման	Քալանթար Սահակ	1660
5	Ամիրի գյուղ	4,5դանգ	13 թուման	Քալանթար Սահակ	1660
6	Մելիք	6 դանգ	2 թուման	Ռզա-Կուլի	1664
7	Բաթրինջ	1 դանգ	16000 դինար	Բայրամ բեկ	1655
8	Հարադոյունլու	6 դանգ	22 թուման	Խոջա Սուքիաս	1650
9	Մանկանոց	6 դանգ	11000 դինար	Հաթի բեկ	1670
10	Օշական	1,5դանգ	13 թուման	Համադան-Կուլի	1655-1676
11	Քյատուր	6 դանգ	2 թուման	Ռզա-Կուլի	1674
12	Մաստարա	2,5դանգ	3 թուման	Ռզա-Կուլի	1664 ¹

Դժվար չէ նկատել, որ որոշ գյուղերի սեփականության իրավունքին տիրելու համար համեմատաբար թանկ է վճարվել: Դա բացատրվում է հիմնականում այդ գյուղերի հողերի բերքատվության աստիճանով, նրանց եկամտաբերությամբ: Այդ մասին է վկայում թեկուզև Օշական գյուղի օրինակը, որի 4,5 դանգը գնվել է Փիլիպոս Աղբակեցու, իսկ 1,5-ը՝ Հակոբ Ջուղայեցու կողմից:

N	որ մասն է գնվել	արժեքը	վաճառողը	երբ է գնվել	ով է գնել
1	0,5 դանգ	5 թուման	Սուլթան բեկ	1639	Փիլիպոս Աղբակեցի
2	1 դանգ	7 թուման	Բաբա, Բեկում	1640	-
3	0,5 դանգ	6 թուման	Հասան, Հուսեյն	1640	-
4	0,5 դանգ	5 թուման	Իսմայիլ Բեկ	1641	-
5	0,5 դանգ	6 թուման	Սեֆուկիլի Բեկ	1642	-

¹ Միմեռն Երևանցի, Ջմարտ, Վաղարշապատ, 1873, էջ 109-129, «Ջամբռ», էջ 109-129: Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 2, 204: Չաքարիա Քանաքեռցի, Պատմագրություն, հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 62/այսուհետև՝ Չաքարիա Քանաքեռցի/:

² «Ջամբռ», էջ 108-111, Չաքարիա Քանաքեռցի, հ. Բ, էջ 62:

6	0,5 դանգ	4 թուման	Շահգեյնյաք	1643	-
7	0,5 դանգ	6 թուման	Մեջլում Բեկ	1644	-
8	0,5 դանգ	5 թուման	Հուսեյն Բեկ	1644	-
9	0,5 դանգ	5 թուման	Խանադան-Կուլի	1655	Հակոբ Ջու-
10	0,5 դանգ	7 թուման	Բազազ Դարգահ	1676	դայեցի
11	0,5 դանգ	10 թուման	Գասպար	1676 ²	

Ամենայն Հայոց կաթողիկոսների կողմից հողային սեփականության իրավունքի ձեռք բերման գործում փութաբան աշխատանքներ են կատարել նաև Ալեքսանդր Ջուլայեցի /1706-1714թթ./ և Աստվածատուր Համադանցի /1715-1725թթ./ կաթողիկոսները: Այդ ուղղությամբ նրանց կատարած աշխատանքներից է հատկապես Մաստարա գյուղի սեփականության իրավունքի ամբողջացումը, որի վրա ծախսվում է 22 թուման 5000 դիմար գումար¹: Մինչ այդ ձեռք է բերվում նաև Նորագյուղի՝ 6 դանգը, Եղվարդի՝ 4,5 դանգը, Բոխենիսի՝ 6 դանգը, Դիպակուլի՝ 6 դանգը, Ծոպանիսի՝ 6 դանգը²: Ընդհանուր առմամբ, մինչև 17-րդ դարի վերջերը Էջմիածնի վանական հաստատությունն ամբողջությամբ կամ մասամբ տիրել է թվով 23 գյուղերի սեփականատիրական իրավունքին, ընդ որում դրանցից 7-ին, ինչպես արդեն նշել ենք, դեռ 1431թ.-ից տիրել է «վակֆային» իրավունքի պայմանով: «Վակֆային» /աղբյուրներով նաև վախճ / իրավունքի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Սիմեոն Երևանցին: Նկարագրելով Գիրգոր Մակվեցու կողմից Էջմիածնի վանքին Վաղարշապատ գյուղի նվիրատվության օրինակը, նա գրում է. «Եւ Գրիգոր կաթողիկոս գրեցուցանէ ի յերիս դապալայոջսն ևս թէ Գրիգոր խալիֆայն առնու զգեօղս զայն վախճ տա Էջմիածնի Աթոռոյն: Քանզի որովհետև յամենայն յազգս օրէն է, զի վախճն ոչ վաճառէ և ոչ յետս դառնայ վասն այսօրիկ այսպես գրեցուցանէ, զի մի ոք իշխեսցէ յետոյ վաճառել և գնել»³: Հետևապես, վակֆային իրավունքի հիմնական նախապայմանը այն է, որ նվիրված հողը պետք է լինի նվիրողի «հալալ ինչքը», այսինքն ժառանգված կամ գանձագին տիրույթը, հակառակ դեպքում գործարքը օրինական չէր համարվի: Այս տեսակետից հատկաշնչական է Մաստարա գյուղի օրինակը: Ինչպես տեղեկացնում է Սիմեոն Երևանցին, հիշյալ գյուղի սեփականության 2,5 դանգը 12000 դիմարով 1656թ. ոմն Ոսկանի որդի Թարխան նախ գնում է, վեր ածում այն իր «հալալ ինչքի» և նոր միայն նվիրում Էջմիածնի վանքին⁴: Նույնակերպ, 1660թ. Էջմիածնի իրավասությանն է անցնում Կոտայքի գավառի Նորագյուղ համայնքի սեփականության ամբողջական իրավունքը, նույն գավառի Եղվարդ գյուղի սեփականության իրավունքի

¹ «Ջամբռ», էջ 115:

² Նույն տեղում, էջ 117-129:

³ Նույն տեղում, էջ 101:

⁴ Նույն տեղում, էջ 114-115: Սիմեոն Երևանցու հավաստմամբ, այդ գործարքը օրինական չի համարում ոմն Ուզա-Կուլի, որին հաջողվում է դատարանում հաստատել իր պահանջը: Հակոբ Ջուլայեցին էլ ստիպված էր նրան վճարել 3 թուման և ետ բերել գյուղի սեփականության իրավունքի 2,5 դանգը:

4,5 գանդը¹: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Բոխենիս գյուղի սեփականատիրական իրավունքի ձեռք բերման փաստը: Ինչպես վկայում է Սիմեոն Երևանցին. «Գեօղս այս ի բնէ անտի ի գիւղականաց իւրոյ վախմ է տուեցեալ Սրբոյ Աթոռոյս կամաւ և յօժարութեամբ իւրեանց»²: Հետագայում, ինչպես նշում է «Ջամբռ»-ի հեղինակը, գյուղացիները կամ իրենց չունևորության, կամ էլ օգտվելով վանքի թուլությունից /«յանջութենէ Աթոռոյս»/ իրաժարվում են վանքի նկատմամբ որևէ պարտավորություն կատարելուց: Եվ միայն Հակոբ Ջուղայեցու հորդորանքներից հետո, գյուղի բնակչությունը վճռում է. «անդրէն դարձուցանեն զվեց դանկ մուլք գեղջն իւրեանց ի Սուրբ Աթոռ»³: Կարծում ենք, որ Երևանցին այստեղ առանձին միտումով է շեշտում «ի բնէ անտի» արտահայտությունը: Հավանաբար, մենք գործ ունենք դեռևս նոր, իր ազատ իրավունքներից զրկված ու արդեն կախյալ դարձած գյուղական համայնքի հետ, այլապես ոչնչով չի պատճառաբանվում գյուղի բնակչության ընդգլուծումը:

Աղբյուրների միաբերան վկայությամբ, վակֆային իրավունքի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նման կալվածքներն ազատվում էին պետական հարկերի վճարումից, այսինքն ստանում էին մուաֆության /աղբյուրներում նաև մաղաֆության, թախսանության/ իրավունք: Հայ իրականության մեջ մուաֆայության իրավունքի մասին հիշատակություններ կան ավելի վաղ ժամանակներից: Ինչպես վկայում է արձանագրություններից մեկը, 1210թ. Սարգիս Ջաքարյանի Ջաքարե որդին Հաղպատի վանքին է նվիրում իր «հայրենիք» Աշոցք է հողով և ջրով, խոտամարգերով, լեռամբ և դաշտիւ ազատ և թախսան յամենայն հարկէ»⁴: Եվ՛որ տիրակալների համար ևս առանձին դեպքերում մուաֆության իրավունքը դիտվել է որպես իրենց գործունեության նախապայման: Հենց դրա մասին է վկայում Կարա-կոյունլու Հասան Ալիի 1468թ. հրովարտակը Տաթևի և Վաղաղնի վանքերը հարկերից ազատելու, վանքապատկան գյուղերի բահրան նրանց նվիրելու մասին: Հրովարտակում մասնավորապես ասվում է. «Թող հայտնի լինի, որ քրիստոնյաների պարծանք Շմավոն վարդապետը և Ստեփանոս կրոնավորը եկան աշխարհի ապավենի դուռը և խնդարկու լինելով, արքայական ողորմածությամբ ներկայացրին իմ հանգուցյալ նահատակ հոր կողմից նրանց անվամբ շնորհված հրովարտակները այն մասին, որ Տաթևի և Վաղաղնի վանքերից, որոնք նրանց պաշտոնատեղին ու բնակավայրն են եղել, և այդ վանքերի վակֆերին վերաբերող ու նրանց կողմից մշակվող հողերից մալ⁵, իխ-

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 4, էջ 8-9, հմմտ. «Ջամբռ», էջ 121:

² «Ջամբռ», էջ 126:

³ Նույն տեղում:

⁴ Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, Պետերբուրգ, 1913, էջ 50-51:

⁵ Մալ-գլխավոր եկամտահարկը և սեփականության հարկը: Գանձվել է ինչպես բնամթերքով, այնպես էլ դրամով:

րաջաթ¹ և ավարիզ² չպահանջեն, նրանց և նրանց հետ կապ չունեցող մարդկանց վարելահողերից ու ցանքսերից մալ ու խարաջ³ չվերցնեն»⁴։ Ինչպես տեղեկացնում ենք սեֆյան շահ Աբաս II-ի 1644թ., ինչպես նաև Երևանի Քեյ-խոսրով խանի 1649թ. էջմիածնի իրավունքները հաստատող հրովարտականներից, վանքը միայն Վաղարշապատում ուներ թվով 10 տարբեր չափերի առանձին հողակտորներ ու 5 այգիներ, Օշականում 2, Ձորագյուղում, Նորքում և Շիրաբաղում մեկական այգիներ, որոնցից պետական հարկերի գանձումն արգելված էր⁵։ Իհարկե, էջմիածնի վանական տնտեսությունն ուներ հողային այլ տարածքներ ևս, սակայն այն հանգամանքը, որ հիշյալ հրովարտականներում թվարկված են միայն որոշակի քանակի տնտեսական օբյեկտներ, ապացույց է այն բանի, որ մնացածներն իբրև գանձագին մուլք ապահարկ դառնալու իրավունք չեն ունեցել։ Ինչպես նշել ենք, Հակոբ Ջուղայեցու կաթողիկոսության տարիներին էջմիածնի վանքը տիրել է թվով 23 գյուղերի սեփականատիրական իրավունքին, որոնցից 12-ին ամբողջական կամ մասնակի վակֆային իրավունքով, իսկ մնացած 11-ին՝ գանձագին մուլքի իրավունքով։ Հետագայում, ծանր պարտքերի տակ ընկնելով, կաթողիկոսը մեծահարուստ որոշ անձանց գրավ է դրել վանքապատկան շատ կալվածքներ, որոնք նրա մահից հետո, երբ լրացել է պարտքերի մարման ժամկետը, յուրացվել են պարտատերերի կողմից⁶։ Աղբյուրների ուսումնասիրությունից պարզվում է, որ տվյալ դեպքում իբրև գրավ յուրացվել են կաթողիկոսության ոչ թե վակֆային, այլ գանձագին մուլքերը։ Հետևապես, այն փաստը, թե Հակոբ Ջուղայեցու ձեռքով գնած մուլքերը 17-րդ դ. վերջին համարյա ամբողջությամբ դուրս էին եկել էջմիածնի տնօրինումից, վկայում է, որ ի տարբերություն վակֆային կալվածների այն գանձագին մուլքերը, որոնք իրավական ձևակերպմամբ չէին հաստատված իբրև վակֆ, ենթակա էին ամեն կարգի օտարման, ինչպես նաև դրանց նկատմամբ չէր կիրառվում մուաֆուրյան իրավունքը։

Վակֆային իրավունքի անձեռնմխելիության մասին է խոսում նաև այն իրողությունը, որ մեծան կարգավիճակ ունեցող կալվածքների նկատմամբ ոտնձգություն անողները պատժվում էին պետական իշխանության կողմից, իսկ բռնագրավված վակֆային կալվածքը կրկին վերադարձվում էր նախկին տիրոջը։ Այս առումով հատկանշական է Սուլդի գյուղի օրինակը։

¹ Իխրաջաթ-այսպես էին կոչվում այն արտակարգ ծախսերը, որ տարբեր առիթներով գյուղացիները պարտավոր էին հատուցել պետությանը։

² Ավարիզ-գյուղացիների պարտադիր աշխատանքը արտակարգ պատահաբների ժամանակ։

³ Խարաջ-16-18-րդ դդ. հասկացվում էր քնակչությունից գանձվող մի շարք պետական հարկերի իմաստով, որպես հավաքական հարկային տերմին։

⁴ Մատենադարանի պարսկերեն հրովարտականքը, պր.1, կազմեց Հ. Հ. Փափազյան, Երևան, 1956, էջ 47-48։

⁵ Մատենադարանի պարսկերեն հրովարտականքը, պր. 2, կազմեց Հ. Հ. Փափազյան, Երևան, 1959, էջ 114-116, հմմտ «Ջամբո», էջ 158-159։

⁶ Ջաբարի Ագուլեցու Օրագությունը, Երևան, 1938, էջ 110, 139, հմմտ «Ջամբո», էջ 106-107։

հնչպես գիտենք, այդ գյուղն այն յոթից մեկն էր, որը 1431թ. վակֆային իրավունքի պայմանով տրվել էր Էջմիածնի վանքին: 329 տարի անց, երևանի Յուսեյն Ալի-խանի ոստիկանապետ Իբրահիմ աղան զարտուղի ճանապարհներով տիրում է գյուղի սեփականության իրավունքին: Եվ միայն 1768թ. Սիմեոն երևանցուն հաջողվում է համապատասխան փաստաթղթեր ներկայացնելուց հետո /որոնց մեջ նաև 1431թ. կալվածագիրը/ շարիաթական դատարանի վճռով կրկին ետ բերել խլվածը¹: Հիշատակության է արժանի նաև Վաղարշապատ գյուղի օրինակը: Ինչպես հայտնի է, երևանի խանության կազմավորումից հետո, նրա կառավարիչ է նշանակվում Ամիրգունա խանը: Վերջինս ի թիվս այլ կալվածքների բռնագրվում է նաև Վաղարշապատ գյուղի սեփականության իրավունքը /«զաթեալ ուտե զգեօղս մեր»/: Սի քանի բարձրաստիճան հոգևորականներ, ինչպես տեղեկացնում է Սիմեոն երևանցին «Ժողովեալք ի յթոռս՝ զմացեալ արզ առնեն Ամիրկիւնե խանին, և զգրիգոր կաթողիկոսի մեծ վախուպնամայ դապալայն ևս ցուցանեն, ասելով թե՛ այս գեղց զվեց դանկ մուլքն սրբոյ Էջմիածնի է ի բնի անտի: Եւ Ամիրկիւնե խանն ևս վերահասու լեալ իրին ստուգութեան, վերադարձուցանե զվեց դանկ մուլքն գեղջս այսմիկ Աթոռոյս, և հաստատուն գիր ևս տայ կնքով թե այսուհետև ով ոք յազգե իմմե և յայլոց իշխեսցե զմուլքն գեղջս այսմիկ հանել ի յԷջմիածնայ, նգովեալ լիցի»²:

Բնավ, չպետք է կարծել, թե հայ եկեղեցու աթոռանիստ կենտրոնի հողային տարածությունների ամբողջականության ապահովումը միշտ էլ արժանացել է եկվոր տիրակալների ուշադրությանը: Հարկավ, մուսուլման տիրակալների պետական քաղաքականությունից իբրև իրավագուրկ հարկատու ժողովուրդ բազմապատիկ տուժում էր հայ աշխատավորությունը, սակայն հայ եկեղեցու ու հոգևոր դասի վիճակն էլ բնավ մխիթարակն չէր: Այդ ակներև է թեկուզ և գեթ այն նկարագրությունից, որ մեզ է թողել ռուսական արքունիքին հասցեագրած նամակի հեղինակ Հակոբ Ջուղայեցին, երբ դիմելով ռուսական ցարին խնդրում է միջնորդել Իրանի շահի առաջ՝ ժողովուրդի վիճակը փոքր ինչ բարվոքելու համար. «Պարսկաստանում մեզ և մեր եկեղեցու վրա,- գրում է կաթողիկոսը,- պարսից պաշտոնյաների կողմից դրվում են անհա օտառտի հարկեր և մեզ, որ չենք կարողանում մեր չքավորության և աղքատության պատճառով հատուցանել այդ հարկերը, քշում են դեպի բանտ, չարչարում են, տանջում և վերջապես, որ մահմանդականների հետապնդած նպատակների հետինն է ու գլխավորը, հարկադրում են ընդունել իրենց դավանանքը»³: Շատ փաստեր էլ վկայում են, որ հայ եկեղեցուն համդիսավոր հրովարտականերով տրված խոստումները կյանքում ամենակոպիտ ձևով ունահարվում էին: Այս առումով հատկանշական է հենց Բաթրինջ գյուղի օրինակը: Այս գյուղը դեռ 1431թ. վախճ էր արված Էջմիածնի վանքին: Հետագայում, ինչպես տեղեկացնում է Սիմեոն երևանցին «զկնի ժամանակս ի խառ-

¹ «Ջամբռ», էջ 118:

² Նույն տեղում, էջ 103:

³ Աշ.Հովհաննիսյան, Հակոբ Ջուղայեցու մի գրությունը ռուս արքունիքին, «Արարատ», 1915, էջ 775:

նակմանց երկրիս», գյուղի սեփականության իրավունքը բռնազավթվում է օտարների կողմից: Հակոբ Ջուղայեցու ջանքերը՝ կրկին կաթողիկոսությունը վերադարձնել գյուղի սեփականության իրավունքի 6 ամբողջական մասը, անցնում են ապարդյուն: Եվ միայն 1655թ. նրան հաջողվում է 16000 դինարով գնել մեկ դանգ մուլը¹:

Հարկ է նշել, որ մուաֆուքյան իրավունքը միօրինակ երևույթ չէր: Պետական հարկերից լրիվ ազատված լինելը տալիս էր ամբողջական մուաֆուքյան իրավունք, այսինքն, ինչպես ասվում է «Ջամբռ»-ում «Հայրապետն ու միաբանը ոչ տայցեն զկերպիւ իւիք հարկս մարմնաւոր տերանց՝ որպէս տան աշխարհականք: Անդք, այգիք և կալք սորին ոչ չափիցին, անասունք և գրաստքն ոչ ի թիվ արկցին, ջրաղացք և այլք այսպիսիք ոչ գրիցին մուտը և ելք սորին, ոչ տայցեն զմաքս, և ոչ տալ զգլխահարկս, զհնգորդս, զտասնորդս, զտնախարժ, զանասնախարժս և զմլքախարժս»²: Նման իրավունքներ ունեին տեղի մուսուլմանական հոգևոր հաստատությունները, ինչպես նաև էջմիածնի վանքի միաբանությունը: Նույն պայմանով էջմիածնի վեհապետության իրավունքները ճանաչվել են և օսմանյան սուլթանների կողմից: Այսպես, 1774թ. Սիմեոն Երևանցին սուլթանից ստանում է մի հրովարտակարտոնագիր, համաձայն որի «կարգաւորք ազատք են յամեն հարկապահանջութնից» և որ կաթողիկոսը պարտավոր է «վերահասու ի գործել ի վերայ ամեն յիշատակաց վագըֆ անուանեալ և այլք մի ձեռնամուխ լինիցին ի նա»³: Հասկանալի է, որ էջմիածնի միաբանությունը աշխատում էր որքան հնարավոր է ընդարձակել իր ապահարկ հողատարածությունների չափը: Եթե 1654թ. էջմիածնի վանքը ձեռք է բերում հողատարածքի մեկ գութանի սերմի չափով մուաֆուքյան իրավունք, այսինքն մեկ գութանի տեղի բերքից բահրա չտալու արտոնություն /«մէկ գութանի վարելոյ չափ տեղ հագիւ կարեմք զտերմն արկանել», ապա 1770թ. վանքն ստանում է երկու գութանի տեղից բահրա չվճարելու արտոնություն / ... գերկու գութանս սկսանի ի կիր արկանել սուրբ Աթոռ»⁴: Եթե Արրահամ Կրետացին 1735թ. բահրա չգանձվող հողերի քանակը հասցնում է «վաթսուն և վեց խալվարի»⁵, որ է վեց հազար վեց հարկ լիտր⁶ երեսնու», ապա 1763թ. Սիմեոն Երևանցին այդ թիվը հասցնում է 75 խալվար 25 լիտրի⁷: Մուաֆուքյան իրավունքից օգտվող էջմիածնի վանքապատկան վարելահողերի քանակը միայն Վաղարշապատում 18-րդ դ. երկրորդ կեսին հասնում է 11-ի, ընդհանուր առմամբ 1500 սոմար⁸ տարածքով⁹:

¹ «Ջամբռ», էջ 125-126:

² Նույն տեղում, էջ 130:

³ Տես Մ. Ջուղայան, Արևմտյան Հայաստանը XVI-XVIIIդդ., Երևան, 1980, էջ 222:

⁴ «Ջամբռ», էջ 131-133:

⁵ Խալվար-Ընդեղենի չափ, կազմել է 480 կգ:

⁶ Լիտր-Երևանի լիտրը կշռել է 4,8 կգ:

⁷ «Ջամբռ» էջ 135, 145, 149, 151:

⁸ Սոմար- տարածության չափ. Արարատյան դաշտում այն կազմել է 0,25 հա:

⁹ «Ջամբռ», էջ 154-155:

Մուաֆուքյան երկրորդ տեսակը տալիս էր բահրայի մասնակի ապահարկության իրավունք: Այն որոշվում էր սերմանելիքի որոշակի քանակի շրջանակում, այսինքն շատ ցանելու համար ավելորդի դիմաց պետք է վճարվեն հնգորդ: Դա տալիս էր սահմանափակ մուաֆուքյան իրավունք: Եկվոր տիրակալները փորձել են էջմիածնին ամեն կերպ պարտադրել մուաֆուքյան հենց այդ տեսակը. «Իսկ չարն Մահմատ-Ղուլի,- գրում է Սիմեոն Երևանցին,- որ խան էր երկրիս Երևանու, կամեցաւ հնգորդ առնուլ ի ցանելոց հասիցն Սրբոյ Աթոռոյս»¹: Երևանի Նաջաֆ-կուլի խանի նման ուսնծութեան դեմ շահ Աբաս II-ին բողոքում է Զակոր Ջուղայեցին ասելով. «... Մեկ գութանի տեղ հագիւ կարեմք սերմանել, ի նմանէ ևս կամին գհարկս անուուլ»²: Ինչպես վկայում են հետագա իրադարձությունները, նույնիսկ շահական կարգադրությունները ի գործու չէին օգնելու էջմիածնի միաբանությանը: Այն բանից հետո, երբ Ալեքսանդր Ջուղայեցի կաթողիկոսին հաջողվեց էջմիածնի համար ձեռք բերել «երկու գութանի» սերմանելիքի չափով իրավունք, տեղի իշխանները պատճառաբանելով, թե էջմիածնին ունեւր մուաֆուքյան իրավունք միայն «մեկ գութանի» չափով, կրկին պարտադրում են տնտեսությանը բահրա վճարել: Թեև շահ Սուլթան-Յուսեյնը 1711թ. հատուկ հրովարտակով կարգադրում է չանհանգստացնել էջմիածնի միաբանությանը, դրությունը ոչնչով չի փոխվում: Չի օգնում նաև Աստվածատուր Դամադանցու 1723թ. շահ Թահմասպ II դիմած խնդրագիրը: Էջմիածնին ստիպված էր չնախատեսվածի համար վճարել: Այդ մասին ուղղակի վկայություն ունի Սիմեոն Երևանցին: Նկարագրելով մուաֆուքյան իրավունք ունեցող հողատարածքները, նա այնուհետև գրում է. «Իսկ մնացեալ տեղիքն, որք ի մեջ ռաղամիցդ ոչ գոն» պարտավոր են հարկվելու: Այդ հողատարածքների չափը միայն Վաղարշապատում հասնում էր 15-ի, 1370 սոմար ընդհանուր չափով³:

Այսպիսով, 16-18-րդ դդ. Զայաստանի թե՛ Արևելյան, և թե՛ Արևմտյան մասերում արտադրական հարաբերությունների հիմքը կազմում էր հողի մասնավոր սեփականությունը: Մուլք կալվածքը, անկախ իր մեծությունից ու պատկանելիությունից, ընկած էր ոչ միայն վանական-եկեղեցական, այլև հողտիրության մյուս տեսակների հիմքում, կազմելով ավատական հողատիրության համամիացված ձև: Չմայած երկրում ստեղծված ոչ նպաստավոր քաղաքական պայմաններին Զայ Առաքելական եկեղեցու հոգևոր կենտրոնը շնորհիվ իր առաջնորդների նպատակասլաց գործունեության, կարողացավ հիմնականում պահպանել իր հողային տարածքների ամբողջությունը և կարևոր դեր խաղալ երկրի թե՛ տնտեսական, և թե՛ քաղաքական կյանքում:

¹ Նույն տեղում, էջ 131:

² Նույն տեղում, էջ 132:

³ Նույն տեղում, էջ 152-155:

ԺՈՂՈՎՐԳԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԿԱՐՄԻ ՆԱ- ՀԱՆԳՈՒՄ 19-Ի ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՈՒՄ

19-րդ դարի սկզբին Ռուսաստանը, հաստատվելով Արևելյան Վրաստանում և Հայաստանի հյուսիսային շրջաններում, իր հետագա առաջխաղացումն ապահովելու նպատակով, քարեհաճ վերաբերմունք էր ցուցաբերում երկրամասի ժողովուրդների հանդեպ: Ուստի պատահական չէր, որ 1800թ. հունվարի 23-ին Վրաստանում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Կ.Ֆ. Կնորինգին ուղղված հրահանգում Պավել 1-ինը պահանջում էր երկրամասին տիրելու խնդրում նախապատվությունը տալ ոչ թե բռնամիջոցներին, այլ երկրամասի ժողովուրդներին Ռուսաստանի կողմը թեքելու գործելակերպին¹:

Ցարական կառավարությունը հատկապես մեծ նշանակություն էր տալիս այդ տարածքներում ապրող հայ ազգաբնակչության հետ տարվող քաղաքականությանը: Այդ մասին ուղղակիորեն ասվում էր Վրաստանում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Պ. Դ. Ցիցիանովին ուղղված կայսր Ալեքսանդր Առաջինի 1802թ. սեպտեմբերի 26-ի հրամանագրում: Ընդգծվում էր, որ «հայերն արժանի են հատուկ... ուշադրության և պաշտպանության: Խորհուրդ եմ տալիս հայերի նկատմամբ վարել հատուկ քաղաքականություն՝ նրանց մեր կողմն ուղղելու նպատակով»²: Մյուս կողմից, ռուսական արքունիքը համոզված լինելով, որ նվաճված տարածքները դժվար կլինի պաշտպանել առանց հուսալի բնակչության, ուստի սկսում է արագացնել վերաբնակեցման գործընթացը՝ երբեմն հաշվի չնստելով տեղական բնակչության շահերի հետ:

Հետամուտ այս քաղաքականության արդյունքն եղավ այն, որ 1804-1813 թթ. ռուս-պարսկական և 1806-1812թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, ինչպես պարսկական, այնպես էլ թուրքական տիրույթներից մեծ թվով հայեր տեղափոխվեցին Արևելյան Հայաստանի հյուսիսային շրջաններ և Վրաստան:

Անդրկովկասում ռուսների հայտնվելը մեծ ոգևորություն է առաջացնում արևմտահայության, այդ թվում նաև՝ կարսեցիների շրջանում: Այս մասին է վկայում Կարսի Հովհաննես արքեպիսկոպոսի 1802թ. հունիսի 10-ի նամակը Կ.Ֆ. Կնորինգին: Հոգևոր առաջնորդը, ակնկալելով Ռուսաստանի հզորացումը, միաժամանակ խնդրում էր ռուսներին շտապել և իրենց փրկության խնդրում գորավիզ լինել հայերին. «...մի դադարի դնե՞լ փրկելոյ, քան-

¹Տես՝ Մելքոնյան Ա., Ժողովրդագրական տեղաշարժերը Ջավախքում և Ախալցխայի գավառում 19-րդ դարի առաջին քառորդին, Իրան-նամե, թիւ 1-2-3, 1998, էջ 12:

²Акты кавказской археографической комиссии, /այսուհետև՝ АКАК/ т. 2, Тифлис, док. 5.

գի ի վերուստ աստուած ենք ապաւինեալ և վայր զքեզ, որ ենք անօգնական ազգաւ հայոց և դու փութացեր մեզ օգնութիւն առ ի վերուստ ...»¹:

Փամբակը Ռուսաստանին միացնելուց հետո՝ զգալի թվով հայեր Կարսի նահանգից տեղափոխվում են այնտեղ՝ կազմելով տեղի հայության գերակշիռ մասը:² Հարկատու բնակչություն ունենալու շահագրգռւթյունը Վրաստանի և Լոռու կալվածատերերին ևս մղում էր ակտիվ գործողություններ: Արևմտյան Հայաստանից և այլ վայրերից Փամբակ գաղթած բնակչությանը «տեղական սովորութիւնների համաձայն» բնակեցնելու համար, մեկը Ջումշուդ Շահնազարյանը տրամադրում է 800 ռուբլի³:

Կարսի նահանգի էթնիկ տեղաշարժերն ավելի մեծ ծավալ են ընդունում հատկապէս 1806-1812թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Երբ ռազմական գործողություններն սկսում են ծավալվել Կարսի նահանգում, ռուսական հրամանատարությունը զուգահեռաբար իրականացնում է իր ծրագրերը: Այդ ամենին նպաստում է թուրքերի դեմ ռազմական գործողությունների հաջող ընթացքը: Կարսի շատ հայեր իրենք են ընդառաջ գնում գաղթելու խնդրում ռուսների ցանկություններին: Անշուշտ, գաղթի դժվարին ուղին նախընտրելը պետք է համարել ոչ այնքան ռուսասիրության հետևանք, որքան թուրքական հալածանքներից ազատվելու դրսևորում: Արտագաղթի գլխավոր դրդապատճառը գավառում Մաղասբերդի տիրակալ Կարա բեկի հաստատած արյունալի ռեժիմն էր, որից փրկվելու միջոցը կարսեցիների համար Ախուրյան գետը՝ Ռուսաստանի նորահաստատ սահմանը հատելն էր:

1807թ. մարտի կեսերին ռուսական զորքերը գնեռալ Պ.Դ.Նեսվետսկի գլխավորությամբ, անցնելով Ախուրյանը, մեկօրյա մարտերից հետո գրավում են Բաշ-Շորագյալը: Գերի վերցված զգալի թվով բնակիչներ, մեծ մասամբ՝ հայեր, գաղթեցվում են Արևելյան Անդրկովկաս⁴: Այնուհետև ռուսները գրավում են Կարս քաղաքի արևելյան՝ Բայրամ փաշա թաղը: Սակայն ստանալով գլխավոր հրամանատար Ի.Գուղովիչի հրամանը, հաջորդ օրը Նեսվետսկը նահաջում է: Նահանգի ժամանակ նա հանդիպում է 500 տուն հայերի, որոնք զանազան տեղերից և գլխավորապէս՝ Ախուրյանի ձախափնյա ռուսական տիրութեններից գերի էին քշվում դեպի Կարսի կողմերը: Ազատված այդ բազմությունը կազակների ուղեկցությամբ վերադարձվում է իրենց բնակավայրերը⁵: Նույն ժամանակ 700 ընտանիք կարսեցիներ ռուսների աջակցությամբ գաղթեցվում են Շորագյալ և Փամբակ⁶: Այս դեպքերը խիստ զայրացնում են Կարսի փաշային, որը և քրիստոնյաների դեմ նոր հալածանքներ է սկսում. «վասն քրիստոնեությունիւն ռուսաց ուրուրեք որ պատահէին քրիստոնեայքն հատանէին զգլուխն և տանէին առ րոշխն քաղաքին և առնէին զընծայս իւրենց և յորժամ հատանէին ուրախանային և համարէին

¹ Присоединение Восточной Армении к России. Св. Документов, т.1, Ер. 1972, лок.62.

² Նույն տեղում, лок.162:

³ Նույն տեղում, лок. 135:

⁴ Մատենադարան, Չեռագիր 6517, ք. 2:

⁵ Լեռ, Հայոց պատմություն, երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1984, էջ 392 :

⁶ Մատենադարան, Ճեռագիր 6517, ք. 2:

պաշտոն մատուցանել աստուծոյ»,-նշվում է մատենադարանում պահպանված ձեռագրերից մեկում¹:

1807թ. ապրիլի 6-ին Նեսվետաևը, գրավելով Կարսի մոտ գտնվող Կզլախչախ գյուղը, թուրքերից ազատում է 500 ընտանիք՝ մեծ մասամբ հայերի: Վերջիններս, ինչպես և բազմաթիվ այլ ընտանիքներ, Գուղտլիչի հրամանով բնակեցվում են Շորագյալում և Փամբակում²: Նույն ժամանակ, ռուսական տիրապետության տակ գտնվող հողերում վերաբնակվելու խնդրանքով, գեներալ Նեսվետաևին են դիմում շուրջ 200 հայ ընտանիքներ, որոնք հավաքվել էին Անիի մերձակայքում³:

1807թ. հուլիսի կեսերին փոխգնդապետ Պեչորսկու գլխավորությամբ 15-րդ եգերական զուգում առանց դժվարության գրավում է Մաղասերդը: Ռուսներին աջակցությունից զրկելու նպատակով՝ թուրքերը բնակչության զգալի մասին բռնում են լեռները: Կարա բեկը 20 գյուղերի բնակիչների հետ անցնում է Կաղզվան, իսկ Զարիշատի բեկը՝ իրեն ենթակա 1000 ընտանիքներով՝ Ախալցխայի փաշայություն⁴: Ռուսներին հաջողվում է գաղթեցված այդ բնակչությունից փրկել միայն 170 ընտանիք, որոնք հիմնականում հայեր ու թաթարներ էին, և բնակեցնել Շորագյալում:

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվող մի վավերագրի համաձայն, 1807թ. Մեծ Ղարաքիլիսա գյուղում բնակություն էր հաստատել 21 ընտանիք՝ կամ 95 շունչ, իսկ Համամլուում՝ 8 ընտանիք / 41 շունչ: Այս գյուղում նրանց հետ էին նաև Ալիբեկից և Մակուից գաղթածները, որոնք համարվում էին ալիբեկցի Նիկաղոս քահանայի հպատակներ: Պարսի գյուղում հաստատվել էր ևս 350 հոգուց բաղկացած 58 ընտանիք: Այս գյուղի կարսեցի վերաբնակիչներն ունեին սր.Սարգիս անունով եկեղեցի, որի քահանան տեր Առաքելն էր: Փոքր Ղարաքիլիսայում տեղավորվել էր 45 ընտանիք / 271 շունչ՝ 137 ար., 134 իգ./: Նրանց սր. Հովհաննես եկեղեցին ուներ 4 քահանա: Գյումրիում հաստատվել էր 41 ընտանիք / 183 հոգի՝ 95 ար. և 88 իգ./: Նրանց եկեղեցին սր. Աստվածածինն էր, որի քահանան էր Կարսի Համգագարակ գյուղացի տեր Ավագը: Մի քանի ընտանիք էլ բնակություն է հաստատում Արթիկում⁵: 1807թ. Կարսից Արուտինովի որդի Միքայել Աղալովը ամբողջ ընտանիքով և մեծ թվով այլ գաղթականների հետ բնակություն են հաստատում Շորագյալի Ղիչաղ գյուղում⁶: 1808թ. դեկտեմբերի 24-ին եփրեմ կաթողիկոսի կոնդակով Փամբակում եղած գաղթականների համար գործակալ է նշանակվում տեր Ղազարը:

Ռուսական հրամանատարությունը փորձում էր գաղթականներին ապահովել հողերով: 1808թ. հունվարին կարսեցիների ավագ Հակոբ Խանբաբ Մելիքովի դիմումից հետո, Գուղտլիչը հրամայում է Նեսվետաևին Փամ-

¹ Նույն տեղում:

² АКАК, т. 3, Тифлис, 1869, док. 1035.

³ АКАК, т. 3, док. 1053.

⁴ Նույն տեղում, док. 959, 1043, 1052:

⁵ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, քղթ. 22ա, վավ. 86:

⁶ Присоединение... т. 1, док. 445.

բակի տարածքում բուրդովին դատարկ մի հարմար վայր գտնել, և զարնանը նրանց բնակեցնել այդ հողերում¹:

Կարսի նահանգից բնակչության արտագաղթը շարունակվում է նաև հաջորդ տարիներին: Այսպես, 1809թ. Կարս բեկի տիրույթներից՝ Մաղաս-բերդի մերձակայքից շուրջ 1000 ընտանիք հայեր և կարափափախներ, անց-նելով Կարս գետը, տեղափոխվում են ռուս-թուրքական սահմանային գոտի՝ Ախուրյանի առափնյա Բաշ-Շորագյալ, Մոլամուս, Աթախուլ գյուղերը և ցան-կություն հայտնում վերաբնակվել ռուսական տարածքներում: Կարսի Աբդուլ փաշան, իմանալով այդ մասին, ռուսներին խնդրում է սահմանն անցնելու դեպքում փախստականներին հանձնել իրեն²: 1811թ. դեկտեմբերին «կարմ-րագլուխ սևափակեղ կոչեցել բռջալիք բնակիչք ղարսայ չու առախ մինչ ի էճ /700/ տունք, -ասվում էր մատենադարանի նույն ձեռագրում,- գնացին երկիրն արարատեան և բնակեցան ի գաւառն Կօղէից (Կոտայք - Յ.Ս.) որ այժմ կոչէն Խըրդուլուլաղ (Կրիսթուլախ)»³: Արտագաղթին մեծապես նպաս-տում է նաև վրա հասած սովը. «...այս մահաբեր սաստկութիւնն սովուն եր-կիրն Ղարսայ և Կարնոյ ցիրուցան եղեն, ոմանք Երևան, ոմանք ի Ղազախ, ոմանք ի Գանձակ, ոմանք ի արցախ, ոմանք ի փայտակարան, ...և որք գնա-ցին գնացին» /այսինքն՝ չվերադարձան- Յ. Ս./,-ասվում էր նույն ձեռագրում⁴:

1811թ. նոյեմբերի սկզբին գեներալներ Պաուլուչչիի և Լիսանկիչի ջանքերի շնորհիվ 100 ընտանիք կարսեցիներ, որից 15 տունը՝ հայեր, իրենց համայնքի առաջնորդ Աբդուլահի աղայի գլխավորությամբ անցան թուրք -- ռուսական սահմանը: Գեներալ Լիսանկիչին հրամայված էր նրանց տեղավո-րել Լոռի քաղաքի հին ամրությունների մոտ: Առաջարկվում էր նաև, առանց հարևան գյուղերի բնակիչներին նեղություն պատճառելու, հողը հերկելու համար նրանցից երեք օր ժամանակով վերցնել անհրաժեշտ քանակու-թյամբ գութանի խոփեր⁵: Ներքին գործերի նախարարին ուղղված նոյեմբերի 11-ի զեկուցագրում Պաուլուչչին խնդրում էր դիմել ցարին՝ զաղթականնե-րին 7 տարով հարկերից ազատելու, եկած կալվածատերերին ևս տեղի հո-ղատերերին տրված նույնատիպ արտոնություններին չա տեղի հո-ղայն փաստ է նաև, որ դարասկզբի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների հետևանքով, Ռուսաստանին ենթակա Արևելյան Հայաստա-նի շատ տարածքներ անվտանգության տեսակետից անապահով էին, ուստի արևմտահայ շատ վերաբնակիչներ, որոշ ժամանակից հետո, թողնում էին Հայաստանը և անցնում էին Վրաստանի խորքերը⁶:

Սիաժամանակ, փաստերը վկայում են, որ կատարվել է նաև հակա-ռակ գործընթացը: Ռուսների առաջխաղացումն իր հերթին խթան հանդիսա-

¹ Նույն տեղում, փաստաթուղթ 386:

² АКАК, т.3, док. 1071, 1072.

³ Մատենադարան, ձեռագիր, 6517, ք 3:

⁴ Նույն տեղում, ք 4:

⁵ АКАК, т.5, Тяфлис, док.10. Шу նաև՝ Присоединение... т.1, док.481.

⁶ Նույն տեղում:

⁷ Шу՝ Մելքոնյան Ա, նշված հոդվածը, էջ 14:

ցավ Փամբակի, Շորագյալի, Բորչալուի մահմեդական բնակչության փախուստին՝ դեպի Կարսի փաշայության և Երևանի խանության տարածք։ Այդպիսի մեծ տեղաշարժ նկատվեց հատկապես Ցիցիանովի Երևանյան արշավանքի ժամանակ, երբ վրաց արքայողիներ Ալեքսանդրի, Յուլդուի և Փարսավազի հետ պայմանավորվածության համաձայն, Փամբակի 27 գյուղերի բնակիչներ, իրենց աղալարների գլխավորությամբ, փախչում են Կարսի փաշայության տարածք¹։ 1804թ. մայիսի սկզբներին Կարս է հասնում նաև Փամբակի Արդի - բեկ գյուղի բոլոր բնակիչներ՝ 13 ընտանիք / 43 շունչ՝ 20 տղամարդ և 23 կին /։ Մայիսի 15-ին սրանց են հետևում նաև Փամբակի Ղաթաղչի գյուղի բնակչությունը՝ աղալար Վելի բեկ խալիլովի գլխավորությամբ, թվով 43 ընտանիք կամ 211 շունչ (115 տղամարդ և 96 կին)²։ Փամբակից փախած 300 տուն թաթարների աղալար Ռախիմ բեկի հետ միասին ընդունում է Կարսի փաշայի եղբայր Կարա բեկը³։ Նեսվետաևի կողմից Արթիկը նվաճելու ժամանակ ևս բավական մեծ թվով թաթարներ հեռացան Երևանի խանություն և Կարսի փաշայություն։ Նրանց վերադարձնելու համար ռուսները նույնիսկ պատանդներ են պահում։ Այսպես, Ցիցիանովին ուղղած իր զեկուցագրում Նեսվետաևը գրում է, որ պատանդներին պահում են Կարս փախած թաթար բնակիչներին ետ բերելու նպատակով։ Գեներալը հայտնում է նաև, որ նրանց մի մասն արդեն վերադարձել է։ Անհանգաստացած Ղազախի և Բորչալուի թաթարների առևտրական գործերով Կարս մեկնելու և նրանց այնտեղ երկար մնալու իրողությունից, Նեսվետաևն իր մտավախությունն է հայտնում Ցիցիանովին, թե բոլոր հիմքերը կան կարծելու, որ նրանք այլևս չեն վերադառնա իրենց նախկին բնակավայրերը և առաջարկում է միջոցներ ձեռնարկել⁴։

Ցարական արքունիքը 1801թ. Վրաստանում գործող իր պաշտոնյաներից մի կողմից՝ պահանջում էր խրախուսել Թուրքիայից քրիստոնյաների ներգաղթը, մյուս կողմից՝ Օսմանյան կառավարության դժգոհությունը չառաջացնելու համար, հրահանգում էր այդ ձեռնարկումները ներկայացնել իբրև Վրաստանից կայսրություն փախած նախկին բնակիչների վերադարձ։ Դրահանգվում էր նաև զաղթողներին բնակեցնել պետական հողերում⁵։ Միաժամանակ, չպետք է ժխտել նաև այն հանգամանքը ևս, որ Սկա Մահմադ խանի արշավանքի պատճառով Արևմտյան Հայաստանում հաստատվել էին Փամբակից, Շորագյալից և Բորչալուից փախած ոչ քիչ թվով բնակիչներ։ Այնուհանդերձ, դա միայն պատրվակ էր ռուսների համար, և նրանք հաճախ էին շահարկում այս փաստը։

Այն բանից հետո, երբ Կարսի Մամեդ փաշան խաբում է Ցիցիանովին և չի օգնում պարսիկների դեմ ռազմական գործողությունների ժամանակ, նրանց հարաբերությունները աստիճանաբար լարվում են։ Առիթն օգ-

¹ Дувровин Н., Закавказье от 1803-1806., Спб, 1866, с.358.

² АКАК, т.2, док. 1153.

³ Присосдинение... т.1, док.258.

⁴ АКАК, т.2, док. 1122.

⁵ АКАК, т.1, док. 544, 555.

տագործելով՝ ռուսական հրամանատարությունն իրենց հպատակներ համարելու հիմնավորումով, փաշայից պահանջում է վերադարձնել Շորագյալի, Բորչալուի և Փամբակի բնակիչներին: 1805թ. մարտի վերջերին Նեսվետաևը Կարսի փաշային զգուշացնում է, որ իր պահանջը չկատարելու դեպքում, ինքը կդիմի սուլթանին ու ցարին:¹ Սակայն, երբ նույն թվականի սեպտեմբեր ամսին Ռախիմ բեկն է ցանկանում իր հպատակներով հետ վերադառնալը, այս անգամ նրանց ճամփան փակում է Մաղասբերդի տիրակալ Կարա բեկը: Կարսի փաշան էլ իր հերթին խանգարում է հայ մելիք Ջումշուդի մի քանի ընտանիքների վերադարձին, որոնք ժամանակին անցել էին Կարսի փաշայության տարածք: Մելիքի զանգատից հետո, Ցիցիանովը դիմում է Մահմադ փաշային՝ թույլատրելու նրանց իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու համար:² Ցիցիանովը նույնիսկ իշխան Աբեռուլովին ուղարկում է Կարս՝ Փամբակի բնակիչներին վերադարձնելու համար:³ Բեբուրովը նախապես խնդրել էր Նեսվետաևին՝ Համամլու չտեղափոխել Բեբուրով գյուղի բնակիչներին, գյուղը չվերաբնակեցնել, քանի որ Կարսում գտնվող Փամբակի բնակիչները ցանկություն էին հայտնել հաստատվել հատկապես այդ գյուղում:⁴ 1805թ. օգոստոսին Կարսում գտնվող Փամբակի բնակիչներին ընդունելու համար ուղարկվում է նաև Փամբակի մուուրավ իշխան Օրբելիանին: Ցիցիանովը, տեղեկանալով այդ մասին, գրում է. «... համոզված եմ, Կարսի փաշան, որ խոստացել էր 10 օրից վերադարձնել Փամբակի մեր բնակիչներին, նորից կխաբի, ինչպես որ արել է ժամանակին»:⁵

Այնուհանդերձ, ներկայացնելով Շորագյալի և Փամբակի իրավիճակը, Նեսվետաևը ուրախությամբ հայտնում է գեներալ Պորտնյագինին, թե պետք է շնորհակալ լինել աստծուց, քանի որ Շորագյալի և Փամբակի տարածքներն այժմ դարձել են մարդաշատ: Նոր խմբեր են ապաստվում Կարսից և Երևանից:⁶

Կարսի փաշան միաժամանակ բռնել էր ընդգծված խուսափողական դիրք: Ռուսական հրամանատարության բոլոր պահանջները վերադարձնելու Կարսի տարածքում գտնվող ռուսահպատակներին, Մամեդ փաշան թողնում էր անպատասխան կամ խուսանավում էր: Ցիցիանովին գրած իր պատասխան նամակում փաշան հավաստիացնում էր, որ Ռախիմ, Սայիդ և Նայի բեկերին ինքն անգամ չի թույլատրել մտնելու իր տարածքները: Իսկ Բեբուրովին ենթակա բնակիչները հեռացել են Ալեքսանդր արքայորդու մոտ: Փամբակի բնակիչներ Հաջի-Մուսա խանի և Վելի բեկի ձերբակալությունն ու համձնումը ռուսներին տեղի չի ունենում, քանի որ տեղեկանալով այդ մասին, նրանք փախչում են Ախալցխա՝: Մինչդեռ Փամբակի աղա-

¹ Присоединение... т.1, док. 220.

² Նույն տեղում, док. 155.

³ Նույն տեղում, док. 214, 215, 217.

⁴ АКАК, т.2, док. 2039.

⁵ Присоединение... т.1, док.262.

⁶ АКАК, т.2, док. 1870.

⁷ Նույն տեղում, док. 1880:

լարներն իշխան Ադամ Բերտրուկի հետ եղել են Կարախան և Օջախ – օղլի գյուղերում: Հետագայում Մամեդ փաշան խոստովանում է, որ Նես-վետակի խնդրանքով ինքն ապաստան է տվել նրանց ու թույլատրել ձմեռն իր տիրույթներում անցկացնել: Սակայն դա քիչ հավանական է, քանի որ ռուսական հրամանատարությունը ջանք չէր խնայում օր առաջ վերաբնակեցնել իր նորանվաճ տարածքները: Այդ խոստովանությամբ փաշան միայն փորձել է արդարացնել իր քայլերը:

Գաղթականների «վերադարձման» խնդրի լուծումը Անդրկովկասի ռուսական իշխանություններն այնքան են կարևորել, որ Ցիցիանովը նույնիսկ դիմել է Էրզրումի Սայիդ-Մահմադ փաշային: Վերջինս հարցը բարձրացնում է Բարձր Դռան առաջ: Տեղեկանալով հարցի ձգձգման մասին՝ 1806թ փետրվարի 14–ին իշխան Չարտոռիյսկին պարտավորվում է Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Իտալիանսկու միջոցով հարցը բարձրացնել Բ.Դռան առաջ, որ վերջինս ազդի Ախալցխայի և Կարսի փաշաների վրա, Ցիցիանովի բոլոր պահանջները բավարարելու համար¹: Սակայն, ռուսական կողմի բոլոր ջանքերին հակառակ, Կարս գաղթած մահմեդական բնակչությանն ամբողջովին վերադարձնել չի հաջողվում:

Ցարական կառավարությունն ամայացած Կրաստանը և Արևելյան Հայաստանի իրեն ենթակա շրջանները վերաբնակեցնելու նպատակով նույնատիպ աշխատանքներ է ծավալում նաև հարևան տարածքների մահմեդական կարափափախների շրջանում:

1809թ. ապրիլի 17–ին Գուդովիչին փոխարինած գեներալ Ա. Տորմասովը մայրոք Քանաճովին հանձնարարում է Կարսի կարափափախների ավազներին համոզել արտոնյալ պայմաններով Լոռի գաղթելու համար, այդ թվում երկու տարով հարկերից ազատելու պայմանով:² Կարափափախները 12 օր ժամանակ են խնդրում բացատրությամբ, որ վերաբնակեցման համար Կարսի փաշայի մոտ պատանդության մեջ գտնվող աղալարներից համապատասխան կարգադրության չեն ստացել: Նման պայմաններում Քանաճովը առաջ է քաշում Ախուրյանի աջ ափին ընկած կարափափախների գյուղերը ռազմական ուժով վերաբնակեցնելու հարցը, որի համար Տորմասովից թույլտվություն է խնդրում: Նույն կարծիքին էր նաև գնդապետ Ուրակովը, որին ևս հանձնարարված էր զբաղվել կարափափախների վերաբնակեցման խնդրով: Տորմասովին գրած իր զեկուցագրում նա հայտնում էր, որ կարափափախները կամովին մտադիր չեն վերաբնակվել նորանվաճ տարածքներում, մանավանդ, որ նրանցից մի քանիսն ընտանիքներով արդեն ուղղություն են վերցրել դեպի Երևան և Ախալցխա: Գնդապետը ևս ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքը տեսնում էր ուժի զործադրման մեջ³: Սակայն Տորմասովը, դեռևս չիրաժարվելով «խաղաղ» եղանակներով զործելու իր

¹ Նույն տեղում, թղ. 2046:

² АКАК, т. 4, док. 1181.

³ Նույն տեղում, թղ. 1183, 1184, 1186:

եղանակներից՝ այդ նպատակի համար գործի է դնում դրամական միջոցներ՝ շուրջ 200 չերվոնց¹:

1809թ. հունիսի 11-ին կարափափախները, հավաքվելով Ախուրյանի աջ ափին, Քանաճուկին հրավիրում են իրենց մոտ: Բանակցությունների ժամանակ համաձայնություն է ձեռք բերվում ռուսական տիրապետության տակ անցնելու վերաբերյալ: Սակայն, երբ լուր է ստացվում պարսկական զորաբանակի Երևան շարժվելու մասին, կարափափախները փոխում են իրենց մտադրությունը: Միայն ութ ընտանիք է անցնում սահմանը և բնակություն հաստատում Փամբակում²: Պետք է նշել, որ վերաբնակեցմանը մեծապես խանգարում է նաև արքայորդի Ալեքսանդրը:

Կարափափախների վերաբնակեցման խնդրում ծագած դժվարությունները կապված էին նաև պարսկական իշխանությունների՝ նրանց հանդեպ բռնած բարեհաճ դիրքորոշմամբ: Ինքնին խոսում է կարափափախների՝ պարսկական բանակի հետ ռուսների դեմ ծավալված ռազմական գործողություններին համատեղ հանդես գալու փաստը և դեպի պարսկական տիրույթներ գաղթելու նրանց մեծ ձգտումը: Ռուսի ռուսական հրամանատարությունը, նկատի ունենալով այդ հանգամանքը, սկսում է ակտիվացնել իր գործողությունները: 1810թ. օգոստոսի 12-ին Պորտյազիկը նորից է դիմում կարափափախների աղալարներին՝ ռուսական տարածքներ անցնելու առաջարկությամբ³: Իրենց հերթին պարսիկները 1811թ. Յուսեին Կուլի խանի հրամանով 400 հոգանոց մի հեծելազոր են ուղարկում Կարսի կարափափախներին Երևանի տարածք տեղափոխելու համար⁴:

Իրականում, կարափափախները, ունենալով առավելապես պարսկաթուրքական կողմնորոշում, ձգտում էին ամեն կերպ խուսափել արտագաղթից: Կարափափախների այս դիրքորոշումը հետապնդում էր միայն մեկ նպատակ. ամեն զնով հեռու պահել ռուսներին իրենցից և այդ խառնակ իրադրությունում ժամանակ չահել: Սակայն ռուսական իշխանությունները համառորեն շարունակում են արտագաղթեցնելու իրենց փորձերը. այս անգամ արդեն նրանց խոստանալով 5 տարվա հարկային արտոնություններ, ամասնապահությամբ և գյուղատնտեսությամբ զբաղվելու համար՝ հողատարածքներ, անվտանգության ապահովման նպատակով՝ հատուկ զինվորական ջոկատ:⁵ Կարափափախները խոստանում են վերաբնակվել գարնանը, պայմանով, որ վերաբնակեցման պահին յուրաքանչյուր աղալարին ենթակա հայերն ու թաթարները մնան իրենց աղալարների մոտ և օգտվեն 5 տարվա հարկային բոլոր արտոնություններից: Այդ ժամկետը լրանալուն պես նրանք պարտավորվում են Վրաստանում բնակվող թաթարներին համահավասար հարկեր վճարել, միաժամանակ պահանջում ազատ ելքի և մուտքի արտոնություն: Պետք է ներում շնորհվեր նրանց կատարած հանցագոր-

¹ Նույն տեղում, լոկ. 1433:

² Նույն տեղում, լոկ. 1185:

³ Նույն տեղում, լոկ. 1112:

⁴ Նույն տեղում, լոկ. 1154:

⁵ Նույն տեղում, լոկ. 1123:

ծություններին համար, ինչպես նաև տրամադրվե՞ր ռազմական ջոկատ: Ընդ որում, կարափափախները ցանկություն են հայտնում բնակվել հատկապես Լոռիում: Նրանց այս ցանկությունը, կարծում ենք, պայմանավորված էր նրանով, որ Լոռին մոտ էր ռուս-թուրքական սահմանին և առիթի դեպքում, նրանք կարող էին անարգել անցնել սահմանը: Տորմասովը Վրաստանի կառավարիչ գեներալ Յախվերդովին խորհուրդ է տալիս չսպասել զարմանը և համաձայնվել նրանց բոլոր պահանջների հետ¹:

1810 թ. նոյեմբերին կարափափախների հետ բանակցությունները վերսկսվում են: Կողմերը ներկայացնում էին Քերիմ ու Իսմայիլ աղաները և զնդապետ Ուրակովը: Կարափափախները զանազան պատճառաբանություններով կրկին փորձում են ձգձգել արտագաղթը: Ուրակովը հրամանատարության առջև դարձյալ պնդում է հոգուտ ռազմական միջամտության անհրաժեշտության²: Հրամանատարությունն էլ, իր հերթին, Փամբակի և Շոթաբայի զինվորականությունից՝ պահանջում է՝ ամեն կերպ խոչնդոտել կարափափախների գաղթն այլ վայրեր³:

Կարափափախներին համոզելու համար ռուսները փորձում են օգտագործել Քերիմ խանի Գյումրիի Ջաֆար բեկի հետ խնամիական կապերի առկայությունը: Վերջինիս ռուսները կրկին վերահաստատում են 5 տարվա հարկային արտոնություն տալու, Լոռու հարուստ վայրերում սեփականության իրավունքով հողեր հատկացնելու իրենց խոստումը⁴: Սակայն ռուսների ջանքերն այս անգամ էլ ապարդյուն էին:

Այսպիսով, ռուսական դիվանագիտությունն, առանց հաշվի առնելու Ռուսաստանի նկատմամբ Կարսի և հարակից նահանգների տարածքում ապրող ազգերի տրամադրությունները, չարդարացված համահարթեցված վերաբերմունք է դրսևորել՝ առաջնորդվելով միայն զուտ հպատակներ ձեռք բերելու ձգտումով՝ շատ դեպքերում անվերապահորեն համաձայնվելով մահմեդականների առաջադրած պայմանների հետ: Ռուսական իշխանությունների կողմից որդեգրած ժողովրդագրական այս քաղաքականությունն առաջին հերթին պայմանավորված էր ռազմաքաղաքական կոնկրետ իրավիճակով և թելադրված էր նվաճված տարածքները հպատակներով բնակեցնելու ձգտումով: Մյուս կողմից, ռուսական իշխանությունները դիմում էին բոլոր միջոցների ետ վերադարձվող տարածքների բնակչությանը՝ ռուսական սահմաններ գաղթեցնելու նպատակով: Իհարկե, այդ ջանքերը միշտ չէ՛ որ հաջողությամբ էին պսակվում, իսկ առանձին դեպքերում նման քաղաքականությունն ուղղակի ձախողվում էր:

¹ Նույն տեղում, լոկ. 1188.

² Նույն տեղում, լոկ. 1189.

³ Նույն տեղում, լոկ. 1190.

⁴ Նույն տեղում, լոկ. 720.

УЧАСТИЕ АРМЯН НА КАВКАЗСКОМ ФРОНТЕ РУССКО-ТУРЕЦКОЙ ВОЙНЫ 1806-1812

В истории армяно-русских отношений одной из сравнительно мало изученных страниц является участие армян в боях на Кавказском фронте русско-турецкой войны 1806-1812гг. 18 декабря 1806 г. Турция объявила войну России. Боевые действия начались сразу на двух фронтах-Европейском и Кавказском. Находящиеся на Кавказе русские войска получили приказ императора Александра сразу перейти к активным действиям против турок, чтобы сковать и не допустить переброски частей азиатской армии на Дунай. Согласно плану боевых действий на Кавказе, основные силы русских войск, во главе с главнокомандующим И. Гудовичем, собранные в районе Цалки, должны были, заняв Ахалкалакскую крепость, действовать в направлении Ахалциха. Выбор Ахалцихского пашалыка для нанесения главного удара был обусловлен необходимостью удержать турецкие войска от вторжения в Западную Грузию, а также отвлечь внимание эрзрумского сераскира от Карса. Другой отряд, на левом фланге русских войск, под командованием генерал-майора Невсетаева, в составе войск, находящихся в Памбаке и в Шираке, должен был из Гюмри действовать в направлении Карса¹. Взятие Карса считалось незатруднительным, т. к. Карсский Мамед-паша неоднократно проявил свою пророссийскую ориентацию. Даже после официального объявления войны Карсский паша через Андрея Аршакова /который координировал всю разведывательную деятельность русских в районе Карса и Еревана/, вел тайные переговоры о снабжении русских войск продовольствием, сообщал сведения о подготовке Эрзрумского сераскира к военным действиям и прочее. Так что русское командование надеялось, что с прибытием русских войск Мамед-паша без боя сдаст Карс².

Для усиления русских войск на Кавказе вновь было собрано ополчение. По приглашению главнокомандующего И. Гудовича, к русским войскам присоединился также Карабахский мелик Абов со своим сыном и отрядом из 100 армянских всадников. Участие мелика Абова, который обосновался на границе Турции в районе Болни-Хачена, со своим отрядом было для русских тем более важно, т. к. мелик Абов в течение многих лет неоднократно совершал дерзкие рейды в Ахалцихский пашалык и хорошо знал местность и состояние обороны края. Учитывая это, граф Гудович даже освободил мелика Абова и подвластных ему армян от налоговой повинности

¹ Присоединение Восточной Армении к России, т. 1, Ер., 1972, стр. 383.

² АКАК, т. II, док. 1009, 1011, 1016, 1019.

на время нахождения мелика Абова в действующей армии¹. Кроме этого, к отряду присоединилось также и армяно-татарское конное ополчение, собранное в Казахской дистанции, под командованием армянина И. Бебутова². Весной 1807 г. русские войска начали боевые действия в Ахалцихском пашалыке. По мере продвижения русских войск к Ахалкалаку лезгины, составлявшие большую часть отрядов ахалцихского паши, неоднократно пытались остановить русские войска, но были прогнаны русской кавалерией. Продвижение русских войск затруднялось тем, что коренное армянское население Джавахка, в ходе бесконечных войн, в том числе и походов русских войск в начале 19 в. частью было переселено в русские владения, частью просто бежало из родных краев³. Некогда многолюдный край обезлюдел и только разбойничьи шайки лезгин рыскали с целью грабежа и - разбоя. Русское командование не могло рассчитывать на поддержку местного населения, что затрудняло ведение боевых действий.

Ахалкалакская крепость была довольно хорошо укреплена, имела высокие стены и мощные башни. Взятие Ахалкалака имело важное значение для русских, т. к. в этом случае она обеспечила бы сообщение с Тифлисом и прикрывала дорогу на Ахалцих. Поэтому граф Гудович решил на незамедлительный штурм Ахалкалака, который был назначен на рассвете 9 мая 1807 г. Однако турки были заранее извещены о месте штурма, что лишило русские войска фактора внезапности⁴. Это, а также недостаточно проработанный план штурма и наличие в составе русских войск молодых, плохо обученных частей предредило неудачный исход штурма. Первый штурм Ахалкалака закончился неудачей, русские понесли большие потери, до 900 человек убитыми и ранеными, одно орудие⁵.

После неудачного штурма Гудович снял осаду и отступил к Цалке. В ходе ахалкалакского похода вновь отличился мелик Абов, обеспечивая охранение и тыл русской армии, ведя разведку. Действия Абова вносили страх и ужас на шайки лезгин⁶.

Неудачно начал свои действия и отряд генерал-майора Невсетаева. Подойдя к Карсу, отряд, который ожидал сдачи Карса, был встречен огнем крепостных орудий. Учитывая малочисленность своего отряда, Невсетаев не решился на штурм Карса и возвратился обратно в Гюмри. Эрзрумский Юсуф-паша, воодушевленный первоначальными неудачами русских войск, собрав

¹ Присоединение..., т. I, д. 355.

² АКАК, т. III, док. 403.

³ Մելքոնյան Ա., Արևմտահայ տեղաշարժերը և ռուսական քաղաքականությունը 19-րդ դարի առաջին թվադարձին. Հայ-ռուսական հարաբերությունների պատմության հարցեր /Եկուբերի ժողովածու/, Եր., 1998, էջ 46-49:

⁴ Присоединение..., т. I, док. 383.

⁵ Նոյն տեղում:

⁶ Մատենադարան, Ալ. Երիցյանի ֆոնդ, քրթ. 156, գ. 353:

многочисленную армию, перешел в наступление из Карса, обещая покорить всю Грузию и занять Тифлис. 10 тысячный корпус Юсуф-паши вторгся в Ширак. Отряд Несветаева, значительно уступавший противнику, занял оборону в Гюмрийском укреплении. Два раза турки штурмовали Гюмри, но русские войска, вместе с местным армянским населением, отражали все атаки неприятеля. В ходе боев турки понесли большие потери, было захвачено главное знамя эрзурумского сераскира¹. Юсуф-паша, не добившись успеха, был вынужден отступить и поставить лагерь у реки Арпачай, ожидая подкреплений.

Граф Гудович, узнав о боях у Гюмри, поспешил на помощь отряду генерал-майора Несветаева. Пройдя маршем 260 верст, 14 июня 1807 г. Гудович соединился с отрядом Несветаева. Общая численность русских войск составила около 6 тысяч человек². 18 июня 1807 года на реке Арпачай произошло сражение между русскими войсками и турецкой армией, достигшей к тому времени численности в 20 тысяч человек. В результате 7 часового боя турецкая армия была разбита³. Трофеями русских войск стали неприятельские знамена, 10 орудий и 2 мортиры, турки потеряли более 1000 только убитыми. Потери русских составили 82 убитыми и ранеными⁴.

В ходе Арпачайского сражения отличились и были награждены многие армяне, служившие в ополчении. Князь Луарсаб Тарханов был произведен в майоры, Н. Георгий Абамелик в капитаны, Ага Аргутинский в подпоручики, тифлиссские армяне Ростом Корганов и Сагинов - в подпоручики⁵. Полковник Ф. И. Ахвердов, командир 9 артиллерийской бригады, за умелое командование артиллерией и храбрость, проявленную во время Арпачайского сражения, первым среди армян-офицеров русской Кавказской армии был награжден орденом Св. Георгия 4 степени - высшей воинской наградой Российской Империи⁶.

Разгром турецких войск при Арпачайском сражении надолго ликвидировал угрозу турецкого вторжения на Кавказе. Русские войска, с возобновлением боевых действий с Персией, вплоть до 1810 года не вели ширококомасштабных наступательных действий против турок. Война России с

¹ АКАК, т. III, д. 946.

² Присоединение..., т. I, д. 383.

³ РГВИА - Российский Государственный Военно-Исторический Архив, ф. ВУА, д. 2889, л. л. 27-33 об.

⁴ АКАК, т. III, д. 957.

⁵ РГВИА, ф. ВУА, д. 2889, л. л. 23-25; ЦТИА Грузии /ЦТИАГ/, ф. 2, оп. I /1807/, д. 107, л. 379.

⁶ Гизетти А. Л., Сворник сведений о Георгиевских кавалерах и военных знаках отличия Кавказских войск, Т., 1901, стр. 12, Справ: Ավետիսյան Հ., Ռուսական բանակի Հայ զորավարները և սկզբնական /18-րդ դարի երկրորդ կես- 1914 թվական/, Հայ-ռուսական հարաբերությունների պատմության հարցեր /նյութերի ժողովածու/, Եր., 1998, էջ 90-91:

Турцией в этот период приняла характер приграничных боев и стычек, в которых участвовали ограниченное количество русских войск и местное ополчение.

Во время одного из таких рейдов в июле 1807 г. Андрей Аршаков, во главе армянского кавалерийского отряда, рассеяв неприятельский отряд, обеспечил переселение жителей нескольких приграничных армянских селений в Гюмри¹.

3 августа 1808 г. 500 курдов и карапахов со стороны Ахалцихского пашалыка вторглись в приграничные владения. Генерал-майор Орбелиани во главе борчалинской конницы выступили в дорогу вторгшимся разбойникам. Обогнав курдов, они организовали засаду у озера Мода-тапа. Ударив по неприятелю, они разгромили и преследовали его до деревни Сахта, отбив награбленное курдами. Как докладывал генерал-майор Орбелиани в своем рапорте: "Во все время преследования неприятеля нами ни не произведено одного выстрела, кроме действия саблями; убито с их стороны на месте 116 человек, взято в плен куртинцев- 3 человека, из них один взят Соломоном Меликовым"².

В 1810 году русские войска снова вступили в Ахалцихский пашалык и подошли к Ахалциху, но штурм крепости не принес успеха русским войскам и они вновь отступили. В ходе осады Ахалциха и в боях под его стенами принимала участие и кавалерия, набранная из Казахской и Шамшадинской дистанций³. Полковник Иосиф Бебутов находился при главнокомандующем Тормасове- "для особых поручений"⁴. Возглавляемая им казахская кавалерия широко использовалась против турецких и персидских войск⁵.

В 1811 году новым главнокомандующим на Кавказе был назначен маркиз Ф. О. Пауллуччи. Русское командование хорошо понимало значение Ахалцихского пашалыка, являющегося передовым форпостом для действий турецкой армии против Закавказья. Было вновь решено овладеть Ахалкалаком, который прикрывал турецкие коммуникации, ведущие в глубь Западной Армении. Совершив тяжелый зимний переход, русский отряд под командованием Котляревского очутился под стенами Ахалкалака. В ночь на 7 декабря 1811 года был предпринят штурм крепости. Ночной штурм Ахалкалака является редким примером штурма хорошо укрепленной крепости силами одной лишь пехоты, без поддержки артиллерии. "Ночной штурм Ахалкалака представляет собой выдающиеся пример воинской доблести и - тактического мастерства"⁶. Взятие Ахалкалака имело большое значение для -

¹ АКАК, т. III, док. 1055.

² Там же, док. 1002.

³ РГВИА, ф. ВУА, л. 2889, л. л. 85-93.

⁴ АКАК, т. IV, док. 1227.

⁵ ЦГИАГ, ф. 16, оп. I, л. 1207, л. л. 1-3.

⁶ Фадеев А. В., Россия и Кавказ в первой трети XIX в., М., 1960, стр. 161.

дальнейшего хода русско-турецкой войны 1806-1812 гг. на Кавказском фронте. Главнокомандующий Пауллучи, в своем рапорте императору, писал: "Гордая Ахалкалакская крепость, приподную искусством укрепленная, вмещавшая в себе гнезда разбойников, наносивших с давних пор важные бедствия Грузии, наконец после упорного боя, продолжавшимся полтора часа, была повержена двумя батальонами Грузинского гренадерского полка"¹.

В ходе войны армянское население Западной Армении также оказывало посильную помощь русской армии. Ходжаванский архимандрит Погос и Карсский священник Абраам Чалалян и другие, неоднократно через А. Аршакова сообщали русскому командованию разведывательные сведения о состоянии турецких войск². Сам А. Аршаков, лично побывавший с разведывательной миссией в Карсе, смог собрать крайне важные для русского командования сведения о прибытии турецких подкреплений и дополнительного количества оружия и боеприпасов, что позволило русскому командованию создать ясное представление о военных замыслах турок³. Население 78 армянских деревень Карского пашалыка выразило готовность перейти в русское подданство⁴. Разведывательные сведения о военнополитическом состоянии Ахалцихского пашалыка были получены русским командованием через тифлисского армянина Агалю Ениколопова⁵. Важные сведения о Ахалкалакской крепости, в частности о пребывании там царевича Александра и выступлении шаек лезгин для грабежа, доставил болнисский армянин Акоп⁶.

Взятие Ахалкалака являлось одним из последних эпизодов русско-турецкой войны 1806-1812 гг. на Кавказе. Разгром турецкой дунайской армии М. И. Кутузовым под Рущуком заставил Турцию 16 мая 1812 года подписать Бухарестский мир. Намечавшийся вскоре поход Наполеона на Россию заставил русских согласиться на весьма скромные условия мира. Россия получила на Кавказе лишь узкую береговую полосу Черного моря в Абхазии, все остальные завоевания русского оружия, в том числе и Ахалкалакская крепость были возвращены Турции. Таковы были итоги русско-турецкой войны 1806-1812 гг., в котором армяне приняли деятельное участие.

¹ АКАК, т. V, док. 254.

² Там же, т. III, д. 1056, 1059, 1061, 1068.

³ Фадеев А. В., указ. соч., стр. 127.

⁴ Там же, док. 1021.

⁵ Там же, док. 987.

⁶ Там же, док. 1195.

ԱԼԵՔՍԱՆԳՐ ԽՈՒԳԱՐԱՇՅԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՅԻ ՀՈՒՐԶ

1859թ. Սանկտ Պետերբուրգում լույս տեսավ Ալ.Խուդաբաշյանի «Հայաստանի տեսությունը աշխարհագրական, պատմական և գրական առումներով» աշխատությունը¹:

Ալեքսանդր Խուդաբաշյանը /1780-1863/ 19-րդ դարի Պետերբուրգի հայագիտական դպրոցի նշանավոր ներկայացուցիչն է: Ասել թե, Խուդաբաշյանը հայտնի չէ մեր պատմագիտական շրջանակներին, իրավացի չէր լինի: Սակայն, պետք է զարմանքով նշենք, որ հրապարակի վրա եղած իր մեծածավալ ու արժեքավոր մենագրությամբ հանդերձ, Խուդաբաշյանն արժանի ուշադրության ու զնահատականի չի արժանացել մեր պատմաբանների կողմից: Նրան տարբեր որակումներ են տվել, բայց ոչ պատմաբանի: Ասվածն առարկայական դարձնելու նպատակով, Հայկական հանրագիտարանից ուղղակի մեջբերենք Խուդաբաշյանին վերաբերող հատվածը. «Հայ ազատագրական շարժման գործիչ, քառադանազիր /ընդգծումը մերն է- Ռ.Յ.:/ 1817թ. եղել է Կովկասի կառավարչապետ զեներալ Ա.Պ.Երմոլովի անձնական քարտուղարը, նրա պատվիրակության կազմում մեկնել Թեհրան՝ բանակցություններ վարելու Ֆաթի Ալի շահի հետ: 1827-ին Խ.Լազարյանի և Կ. Արդուբյանի հետ Խուդաբաշյանը մշակել և ցարական կառավարությանն են ներկայացրել Ռուսաստանի հովանավորության ներքո Հայաստանի ինքնավարություն ստեղծելու նախագիծ: Խուդաբաշյանը գրել է «Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ» /հ.1-2, 1838/, որն իր տեսակի մեջ առաջիններից է: Ընդգրկում է 35000 գլխաբառ և բազմաթիվ ոճեր»²: Այսքանը, և էլի մեկ-երկու նախադասություն բառարանի մասին: Եվ ուրիշ, ոչինչ: Այն, որ Խուդաբաշյանի կենսագրականում նշված չէ նույնիսկ նրա պատմագիտական ուսումնասիրությունը, ոչնչով պատճառաբանված չէ: Պատճառն, իհարկե, հասկանալի է: Ալ.Խուդաբաշյանն իր հասարակական-քաղաքական հայացքներով ներկայացնում էր հայ ազգային-պաշտպանողական ուսանող և դրանով արդեն իսկ, մարքսիստական պատմագիտության կողմից արժանացավ խիստ որակումների: Ուստի, արդի պատմագրության պահանջներից ելնելով՝ Ալ.Խուդաբաշյանի պատմագիտական ժառանգությունը կարոտ է վերագնահատման:

Աշխատության ներածականում, ինչը հատուկ է ժամանակի հայագիտական գրեթե բոլոր գործերին, Խուդաբաշյանը կարևորում և պարզաբանում է իր հետազոտության նպատակը. այն է՝ հայոց պատմության ուսումնա-

¹ Шу' Ал.Худабашев "Обозрение Армении в географическом, историческом и литературном отношении" СПб, 1859:

² ՀՄ հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 97:

սիրության անհրաժեշտությունը համաշխարհային պատմության ընդհանուր համակարգում. «Չնայած Հայաստանի պատմությունը չունի այնպիսի փառավոր էջեր, ինչպիսին Ասիայի մյուս հզոր պետությունների պատմությունն է, - գրում է Խուդաբաշյանը, - այնուհանդերձ, հայոց պատմությունն ունի այնպիսի կողմեր, որոնք լիովին արժանի են համակողմանի ուշադրության՝ յուրաքանչյուր հետաքրքրասերի, առավել ևս գիտական ոլորտի մարդկանց համար»¹: Որպես ասվածի հավաստում, Խուդաբաշյանն այնուհետև լրացնում է. «Եզրիպոսիները, ասորիները, խալդեերը, բաբելացիները, փյունիկիացիները, թրակիացիները, մարերն ու կապադովկիացիները և բազում այլ ժողովուրդներ տարբեր ժամանակներում հայերի ժամանակակիցն են եղել և նույնիսկ մեր հարևանները: Նրանք, և իրենց քանակով, և հարստությամբ, և թե առևտրական գործունեությամբ ու ռազմական ուժով նույնիսկ գերազանցել են հայերին: Սակայն հասնելով հզորության գագաթնակետին, նրանք աստիճանաբար իջել են պատմության թատերաբեմից և անհետացել՝ մյուս ժողովուրդներին թողնելով իրենց հողը, ազգությունն ու հավատը: Ո՞ւր են նույնիսկ հետք չթողեցին պատմության մեջ: Ո՞վ կարող է այժմ գտնել գեթ մեկ փյունիկացու կամ կապադովկիացու... նրանք հավերժ անհետացել են»²:

Խուդաբաշյանը շեշտում է, որ միայն հայ ժողովուրդն էր, որ «ենթարկվելով ճակատագրի բազում անակնկալների, կարողացավ գոյատևել մինչև օրս, պահպանեց իր լեզուն ու հավատը, հիշողությունն ու սովորությունները, որոնք կենսունակ են, ինչպես իրենց՝ հայերը»³: Ավելի որոշակիացնելով իր միտքը, հեղինակը գրում է. «Գտնվելով Արևելքի խոշորագույն տեղությունների կենտրոնում և իր կշիռն ու ազդեցությունն ունենալով աշխարհի ճակատագրի վրա, իսկ հաճախ էլ, նրանց հետ բաժանելով քաղաքական իրադրությունը, Հայաստանն իր գործունեության, բայց և միաժամանակ, տառապալի մասնակցությունն ունեցավ Արևելքի բոլոր կարևորագույն իրադարձություններին: Ուստի, նրա ճշմարիտ ու իրական պատմությունն առանց հայոց պատմության, չի կարող լրիվ լինել և ոչ էլ բավականաչափ արժանահավատ: Ասիայում կատարված բազում իրադարձություններ իրենց ճշմարտացի տեսքն են ստանում միայն հայոց պատմության լույսի ներքո»⁴: Փաստորեն, Խուդաբաշյանը ևս ընդգծում է իրական ու ճշմարիտ այն միտքը, որ Արևելքի, առավել ևս Առաջավոր Ասիայի պատմությունն առանց հայոց պատմության պատշաճ ուսումնասիրության, թերի է ու անիրական:

Խուդաբաշյանը գտնում է, որ հայ ժողովուրդը պետք է իր արժանի տեղն ունենա համաշխարհային պատմության մեջ. «Այս ժողովուրդը, - գրում է նա, - դարերով ենթարկվելով քաղաքական, հասարակական ու ֆիզիկական դաժանությունների, այժմ էլ աշխարհին ներկայանում է բավականին կենսու-

¹ Shu' Ar.Xydasamea, նշված աշխատությունը, էջ 11:

² Նույն տեղում, էջ 272:

³ Նույն տեղում, էջ 273:

⁴ Նույն տեղում, էջ 11:

նակ և ուժեղ»¹: Ճիշտ է, համեմատելով հին դարերի և իր ժամանակի հայերին, հուղարքայանն այն միտքն է արտահայտում, թե հնում հայերն ավելի մաքրասիրտ էին, քաջ ու ազգասեր: Նրա կարծիքով, դրա հիմնական պատճառը պետք է փնտրել օտարների երկարամյա տիրապետության մեջ, որը նրանց որոշ չափով դարձրել է զիջող, անտարբեր, անվստահ ու վեհերոտ, նկատելի է նաև եսասիրությունը: Սակայն ի պատիվ հեղինակի, հուղարքայանը հավատացած է հայ ժողովրդի դրական հատկանիշների գերազանցությանը. «Ներկայումս այս ժողովուրդը,- գրում է նա,- դեռևս պահպանում է իր նախնիների լավագույն ավանդույթները»²: Որպես բնորոշ դրակներ, նա առաջին հերթին ընդգծում է հայերի անձնագոհությունը, հյուրընկալությունն ու հավատարմությունը՝ համարելով դրանք հայ ժողովրդի անբաժան արժանիքներ: Խուղարքայանը համոզմունք է հայտնում նաև, որ «այս ժողովուրդը դեռևս չի կատարել իր կոչումը և ամենևին էլ մոտ չէ իր մահվանը»³:

Գրքի առաջին բաժնում, որը կրում է «Հայաստանի աշխարհագրություն» խորագիրը, հեղինակը մանրամասն անդրադառնում է Հայաստանի բնաշխարհին ու վարչական բաժանմանը: Առանձին ենթաբաժիններով ներկայացված են Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Հայաստանի տարածքները: Միևնույն ժամանակ, Խուղարքայանը հարցը չի ներկայացնում զուտ աշխարհագրական տեսանկյունից, այլ դիտարկում է պատմության հետ սերտ կապի մեջ: Այս առումով, նրա շարադրանքը նորություն ու թարմություն էր հայագիտության մեջ: Աշխատության ներածականում նա գրում է. «Առանց պատմության և աշխարհագրության միջև ամուր կապի և երկրի բնական հատկության բնորոշման, պատմական իրադարձությունները չեն կարող ներկայացվել անհրաժեշտ պարզությամբ ու հստակությամբ, որոնցում նրանք գտնվել են: Ուստի, որպես պատմության լրացում,-գրում է նա,- հարկ է սկզբում համառոտ ակնարկով անդրադառնալ Հայաստանի աշխարհագրական միջավայրին»⁴: Զարգացնելով իր միտքը, հեղինակը հայոց պետականության դերի գնահատության հարցում դրսևորում է յուրովի մոտեցում.«Իր բնական դիրքի պատճառով Հայաստանին վիճակված չէր Ասիայի պատմության մեջ խաղալու այն դերը, որը հասու է եղել Ասորեստանին, Պարսկաստանին և արաբներին»⁵:

Խորացնելով հարցի բնությունը, Խուղարքայանը գտնում է, որ Հայաստանում այդպես էլ չի ստեղծվել կենտրոնացված ու միասնական պետություն: Հեղինակը դրա հիմնական պատճառը փնտրում է երկրի բնույթի՝ աշխարհագրական դիրքի մեջ. «Այսպիսի անհարթ տեղանքում, որտեղ լեռները կարծես թե պատնեշ ու սահման էին, բաժան-բաժան արեցին ժողովրդին, իսկ վերջինս էլ չկարողանալով ամուր հաստատվել իր հողում և ստեղծել միասնական ու ուժեղ իշխանություն»⁶: Խուղարքայանն այնուհետև եզ-

¹ Նույն տեղում, էջ 398:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ III:

⁵ Նույն տեղում, էջ I:

⁶ Նույն տեղում:

րակացնում է. «Յեռավոր ժամանակներից սկսած, Հայաստանը պատմությամբ և ներկայացել է որպես մասնատված մի պետություն, գերագույն իշխանությունից անկախ ու մեկը մյուսից տարանջատված իշխանություններ: Այդպիսով, գրկված լինելով միասնականությունից և թուլանալով ներքին անկայունությունից, որի պատճառը մեկ քմական դիրքն էր, հայոց թագավորությունները չդիմացան ներխուժումներին և ընկան օտարի տիրապետության տակ»¹: Այս միտքը մա ընդգծում է մեկ գրքի երկրորդ մասի առաջաբանում, մշելով, որ «Յեռավոր ժամանակներից սկսած, հայ ժողովուրդը մշտապես գոյատևել է բաժան-բաժան և զարգացել է ինքնուրույնաբար»²: Այնուհանդերձ, Խուդաբաշյանի կարծիքով, այս «անբարեմասնությունները» նույնիսկ չեն կարող նսեմացնել հայոց պատմության դերն Ասիայի ընդհանուր տարեգրության մեջ, և որ նրա պատմության դասերն անգամ ունեն համամարդկային և համաշխարհային մշանակություն:

Հայոց պատմության քննական տեսությունը հեղինակը շարադրում է գրքի երկրորդ մասում, որը կրում է «Հայաստանի քաղաքական պատմությունը» խորագիրը: Խուդաբաշյանը հայոց պատմությունը շրջաբաժանում է վեց ժամանակահատվածների, ելնելով ոչ միայն դինաստիական գործոնից, ինչը տիրապետող էր ժամանակի հայոց պատմության քննական տեսություններում, այլ մեկ հայոց պատմության կարևոր իրադարձությունների ու երևույթների տրամաբանությունից: Այս ժամանակահատվածներից զատ, մա ավելորդ չի համարել առանձին բաժին նվիրել հայկական գաղթօջախների պատմությանը:

Խուդաբաշյանը գրքում մանրամասն քննարկում է հայ ժողովրդի ծագման մասին հայ և օտարազգի պատմիչների հաղորդած տեղեկությունները: Նրանցում հեղինակն, իհարկե, նախորդների մեման, նախապատվությունը տվել է Մովսես Խորենացուն: Չխորանալով հեղինակի ներկայացրած հին հայկական պետության պատմության մանրամասների մեջ, որը և կազմում է նրա պարբերացման առանձին փուլը, ասենք, որ հայոց պատմության այդ ժամանակահատվածը մա գրել է Խորենացու «Հայոց պատմության» հիման վրա՝ չմոռանալով, անշուշտ, բարեխղճորեն տողատակում հիշատակել նրան /այս հանգամանքի վրա հարկ է ուշադրություն դարձնել- Յ.Յ. /: Դրա հետ մեկտեղ, Խուդաբաշյանն այստեղ մեջբերել ու քննարկել է մեկ օտար աղբյուրներ՝ Յերոդոտոս, Քսենոփոն, Դիոդոր Սիցիլիացի և ուրիշներ:

Հայոց պատմության երկրորդ և երրորդ շրջափուլերը Խուդաբաշյանն ամբողջությամբ նվիրել է Արշակունյաց թագավորության պատմությանը: Ընդհանուր առմամբ, մա բարձր է գնահատում Արշակունյաց թագավորության տարիները. «Արշակունիների օրոք Հայաստանը պարթևներից հետո, Յյուսիս-արևմտյան Ասիայի ամենագորեղ ու ծաղկուն պետությունն էր: Այդ դինաստիայի շատ թագավորներ անմահացրել են իրենց անունը բարեգործական ձեռնարկումներով՝ հողագործության, արդյունաբերության, առևտրի և գիտության հովանավորությամբ, և այն ամենով, ինչն ապահովում

¹ Նույն տեղում, էջ I-II:

² Նույն տեղում, էջ 76:

էր ժողովրդի բարեկեցությունը»¹: Գրքում մանրամասն ու հանգամանորեն ներկայացվում են Արշակունյաց ժամանակաշրջանի կարևոր դեպքերն ու գահակալները:

Հայոց պատմության պարբերացման չորրորդ ժամանակահատվածը 5-րդ դարի ազատագրական պատերազմներն են: Գրքում դրանք բարձր գնահատանքի են արժանացել. «Վարդան Մամիկոնյանն աչքի ընկավ բարեպաշտությամբ, հայրենիքի նկատմամբ ունեցած մեծ սիրով ու ռազմական գործի հմտությամբ: Հայերը,- շարունակում է նա,- որոնք բնությամբ խաղաղասեր էին, արձագանքեցին սպարապետ Վարդանի կոչին և զենքի դիմեցին: Հայոց բանակը շտապեց կանգնել նրա դրոշի ներքո»²: Հեղինակը բարձր է գնահատում նաև Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբությունը, հանգամանորեն ներկայացնում է Նվարսակում կնքված 484թ. հայ-պարսկական հաշտությունը: Բաժնի վերջում խուդաբաշյանը համեստորեն հայտնում է. որ «այս իրադարձությունների բոլոր մանրամասները նկարագրված են Եղիշեի, Ղազար Փարպեցու և Ղևոնդի պատմության մեջ, որոնք այդ իրադարձությունների ժամանակակիցն էին»³:

Հայոց պատմության հինգերորդ շրջափուլը խուդաբաշյանի մոտ ընդգրկում է Բագրատունյանց թագավորության պատմությունը: Շարադրելով այդ պատմությունը, նա իրավացիորեն գտնում է, որ հայոց թագավորության կործանման գլխավոր պատճառը նրա մասնատումն ու տրոհումն էր առանձին թագավորությունների. «Տիրույթների այդպիսի բաժանումը և հաճախակի դարձած պատերազմները՝ այն էլ այնպիսի փոքր երկրում, ինչպիսին Հայաստանն էր,- գրում է նա,- նրա դժբախտության գլխավոր պատճառը դարձան և վերջացավ նրանով, որ բոլոր այդ թագավորները կորցրեցին իրենց անկախությունը և Հայաստանը նորից ընկավ օտարի լծի տակ»⁴:

Խուդաբաշյանի պարբերացման վեցերորդ փուլը նվիրված է Կիլիկիայի հայկական պետության պատմությանը: Հեղինակը հաջորդականորեն ներկայացնում է Կիլիկիայի գահակալներին, առանձին դեպքերում քննում և համեմատում է հայ և օտար պատմաբանների տեղեկությունները: Օրինակ, նա բավականին հաճախ է մեջբերում Կիլիկիայի նշանավոր պատմիչ Սմբատ Գունդստաբլին: Մեկ այլ տեղ, խոսելով Լևոն 6-րդի գահակալության տարիների մասին, վկայակոչում է իսպանացի պատմաբան Գիլ-Ղավիթ Գոնսալեսին, որի պատմության մեջ տեղեկություններ են պահպանված Կիլիկիայի թագավորական տան վերջին ներկայացուցչի Մադրիդում գտնվելու մասին: Գրքում մեջբերված է նաև իսպանացի պատմաբան Գ. Բոֆարուլի աշխատությունում հրապարակված երկու նամակի բովանդակությունը, որոնց հեղինակն Արագոնի թագավոր Պետրոս 4-ն է: Նամակները գրված են 1380թ. սեպտեմբեր-հոկտեմբերին: Նրանցից առաջինն ուղղված էր Եգիպտոսի սուլթանին, իսկ երկրորդն՝ իր ծովակալին՝ Լևոն 6-ի ազատագրությունն արա-

¹ Նույն տեղում, էջ 294:

² Նույն տեղում, էջ 307:

³ Նույն տեղում, էջ 308:

⁴ Նույն տեղում, էջ 311:

գացնելու համար: Հետաքրքրական է նաև հետևյալ քաղվածքը, որը հուղաբայանը կատարել է Յուզիմալ Ուրսինսկու՝ «Չարլզի պատմությունը» գրքից. «Հայոց թագավորը,- գրում էր հեղինակը,- երկար ժամանակ ապրելով Ֆրանսիայում, վարում էր բարոյական ու առաքինի, ազնիվ և քրիստոնյային վայել կյանք... Նրա թաղմանը ներկա էին թագաժառանգներ և բարձրասիճան այլ պաշտոնյաներ..... Շատերն էին սգում նրա մահը՝ զնահատելով նրա առաքինի կյանքը»:

Հուղաբայանն առանձին ենթաբաժնով ներկայացնում է նաև հին Հայաստանի նշանավոր քաղաքները, անդրադառնում է դրանց հիմնադրման պատմությանը, տալիս է այդ քաղաքների մանրամասն նկարագրությունը:

19-րդ դարի հայագիտական գրականության մեջ մի հետաքրքիր միտում է նկատվում. հայոց պատմության ընդհանուր շարադրանքին զուգահեռ՝ անդրադարձ է կատարվում խոշորագույն տերություններում հայերի ծավալած գործունեությանը: Հուղաբայանի մոտ ևս հանգամանորեն ներկայացված է եվրոպական և ասիական երկրներում հայերի ծավալած գործունեությունը:

Մեր կարծիքով, որոշակի դրական միտումով հանդերձ, հուղաբայանը գերազնահատում է վաճառականության դերը գաղութարենակ հայության որոշ շերտերի հարաբերական բարեկեցության խնդրում: Նա, կարելի է ասել, ավելորդ ոգևորությամբ է մեջքերում Պար Մորերի² այն միտքը, թե «արևելքի բոլոր ժողովուրդներից և հնարավոր է, ողջ աշխարհի, հայերն ամենից ընդունակ են առևտրի մեջ»³: Եվ այնուհանդերձ, բաժինն ամբողջությամբ վերցրած, կարելի է հաջողված համարել, քանի որ իրականում ու ճշմարիտը գրքում գերակայում է: Ասենք, թեկուզ արևմտահայերի մասին բնութագրությունում. «իրենց նվիրելով հողագործությանը, արվեստին և արհեստներին, նրանք, միևնույն ժամանակ, իրենց ձեռքն են կենտրոնացրել Ասիական թուրքիայի համարյա ողջ ցամաքային առևտուրը: Հայերի ձեռքում է կենտրոնացած նաև դրամական ողջ շրջանառությունը, դրամահատությունը և կառավարությանը ենթակա գործարանները: Կ. Պոլսի լավագույն ոսկերիչները, արծաթագործները, գեղագիրները, որմնադիրներն ու հյուսները մեծամասամբ հայեր են»⁴:

Մյուս կողմից, հուղաբայանը չափից ավելի լավատես էր արևմտահայերի հետագա ճակատագրի խնդրում և շատերի նման, նա ևս հավատում էր մեծ տերությունների միջամտությանը. «Կարելի է հուսալ,- գրում է նա,- որ եվրոպական տերությունների միահամուռ ուժերի շնորհիվ, կբարելավվի թուրքիայում ապրող քրիստոնյաների ու հայերի դրությունը, և նրանք վերջապես դուրս կգան ներկայիս հոգևոր ու հասարակական անկումից»⁵:

¹ Նույն տեղում, էջ 383:

² Պար Մորերը «Ճանապարհորդություն Պարսկաստան, Հայաստան և Փոքր Ասիա» գրքի հեղինակն է:

³ Նույն տեղում, էջ 399:

⁴ Նույն տեղում, էջ 400:

⁵ Նույն տեղում:

Հայազգի հայագետն իր աշխատանքում, անշուշտ, կարևոր տեղ է հատկացնում հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը: Խուդաբաշյանը հստակ նշում է, որ իր այս ուսումնասիրության նպատակներից մեկն էլ հայ-ռուսական հարաբերությունների ու կապերի խորացմանը նպաստելն է. «Ռուսների ներածին չափով, - գրում է նա, - ինչպես Ռուսաստանում ապրող հայերի, այնպես էլ ռուս ընթերցողների մեջ համագործակցությունը խորացնելու ցանկությունը պատճառ դարձավ այս գրքի լույսընծայման համար»¹: Շարադրանքում մի անվերապահ համակարանք կա դեպի Ռուսաստանը, և հեղինակը դա չի թաքցնում:

Ուստի, համեմատելով պարսկական և ռուսական տիրապետությունները, Խուդաբաշյանը գտնում է, որ 1828 թվականից սկսած զգալի փոփոխություններ կատարվեցին հայերի կյանքում. «Ռուսաստանի տիրապետության տակ անցնելով, հայերն ապրեցին ավելի ապահով և բարեկեցիկ կյանքով: Այդ անվերապահ համակարանքն էլ, ի վերջո, հեղինակին բերում է որոշ ծայրահեղությունների: Այսպես, նա ակնհայտ չափազանցում է, երբ գրում է, թե «Ռուսաստանում հայերն օգտվում են ամենալայն իրավունքներից ու արտոնություններից: Նրանց կարելի է տեսնել քաղաքացիական կառավարման բոլոր բնագավառներում»²: Գրքում մանրամասն ու հանգամանորեն ներկայացված են հայ այն գործիչները, որոնք բարձր դիրքի են արժանացել ռուսական արքունիքում. Ղազար Քրիստափորով, Վասիլ Բեիբուքով, Մովսես Արղության-երկայնաբազուկ, Վալերիան Մադաթով, Ավան Յուզբաշի, Լազարյաններ, Հովհաննես Աբամելիք / հրետանու գեներալ, դեկավրել է Պետերբուրգի և Կիևի զինանոցները/, գեներալ Ղազիթ Դեյանով և Իվան Գասպարով /գաղտնի խորհրդական/, Իվան Սումբատով /պետական խորհրդական/, Հովհաննես Մանուկ բեյ /պետական խորհրդական/, Պավել Մելիքով³, Հովհաննես Դեյանով /Դավիթ Դեյանովի որդին, գաղտնի խորհրդական, Պետերբուրգի ուսումնական օկրուգի հոգաբարձու/, գեներալ-լեյտենանտ, Դավիթ Հախվերդով, գեներալ-մայոր Պավել Արապետով⁴, գեներալ-մայոր Սկրտիչ Գալուստով /պետական խորհրդական/ և ուրիշներ⁵: Ինչպես նկատում ենք, Խուդաբաշյանի բերած անուններից ոչ բոլորն են հայտնի մեր պատմագիտությանը, և այդ առումով, նրա աշխատությունը որոշակի ճանաչողական արժեք ունի:

Խուդաբաշյանը հանգամանորեն անդրադարձել է նաև հայկական

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ Վերջինիս է նվիրված Լազարյանների տպագրած «Տեղեկություններ Պավել Մելիքովի կյանքի մասին» գրքույկը, որում ներկայացված է գեներալ-մայոր Պ.Մելիքովի կենսագրականը: Նրանում հայտնվում, որ նա եղել է մեծ քարերաք և իր միջոցներով հայ մանուկների համար բացել է մի քանի մանկատներ:

⁴ Վերջինիս որդին՝ Ի.Պ. Արապետովը մույնպես բարձր դիրքի է արժանացել ռուսական արքունիքում, եղել է տարածքային նախարարի գրասենյակի տնօրենը. «խելացի մարդ, պաշտոնական փաստաթղթերի փորձառու խմագիր»- այսպիսի գնահատականի հանդիպեցինք նրա մասին «Русская старина» ամսագրում. / 1880, հ.11, էջ 387/:

⁵ Նույն տեղում, էջ 404-405:

գաղթօջախներին, ներկայացրել նրանցում ապրող հայերի վիճակագրությունն ու զբաղմունքը: Հեղինակն, անշուշտ, իրավացի է, երբ գտնում է, թե հայերի գաղթն այս կամ այն երկիր կատարվել է հարկադրաբար, և որ. «Հայերը մշտապես պահպանել են կապվածությունը իրենց հայրենի օջախի նկատմամբ»¹: Այս ամենից հետո, սակայն, խուղաբաշյանը հետագայում, շարունակելով քննարկել հարցը, ընկնում է հակառակ ժայռահեղության մեջ և հարցին սխալ բացատրություն է տալիս: Նրա կարծիքով, հայերի՝ գաղթին ընտելանալու գործում վճռական դեր է խաղացել քրիստոնեության ընդունումը. «Ժողովրդի բարոյական կեցությունը նույն ժամանակ էլ ուժեղ ձևափոխության ենթարկվեց... հայերը հետևելով քրիստոնեության եղբայրության օրենքին, հեշտությամբ դարձան կոսմոպոլիտ /- Չ.Յ./: Նրանք առանց դժվարության հեռացան իրենց ծննդավայրից... գտնելով, որ ավելի լավ էր հեռանալ հայրենիքից, քան պաշտպանվել հայրենի երկրում»²: Անշուշտ, խուղաբաշյանն այս հարցում խոցելի է:

Հայկական գաղթօջախների հարցում խուղաբաշյանի համակրանքը ևս անվերապահորեն ռուսահայ գաղթօջախի կողմն է: Նա գտնում է, որ եվրոպական երկրներում սփռված հայության համեմատ, Ռուսաստանում հաստատված հայությունն արժանացել է իրավաքաղաքական որոշակի արտոնությունների. «Ռուսաստանում ապրող հայերն են միայն, որ երջանիկ են, անձեռնամխելի, պահպանում են իրենց ազգությունն ու հավատը... Ռուսական կառավարությունը հայրական հոգատարություն է ցուցաբերում հայերի նկատմամբ՝ չխնայելով իր թոշակները, արտոնություններն ու ազնվականական կոչումները»³: Իհարկե, խուղաբաշյանին այստեղ հասկանալ կարելի է. գրել և մտածել է որպես ռուսական պետական պաշտոնյա, որպիսին ինքն էր: Սակայն դա չէ կարևորը: Պատմագիտության մեջ տարածված կարծիք է, թե փոքր ժողովուրդների նկատմամբ Ռուսաստանի ազատագրական առաքելությունը, առաջին հերթին, հիմնավորել են ռուսական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչները: Համոզվածությամբ ենք ասում և որքանով նկատում ենք՝ ոչ միայն: «Ազատագրական առաքելության» տեսակետի ամենից ջերմ պաշտպանները, որքան էլ փաստ է, մաս հայ հեղինակներն էին: Հեռու ջգմանք. «Այդ ժամանակից սկսած, - գրում է, - օրինակ, խուղաբաշյանը, - Հայաստանի ճակատագիրն ամուր կերպով կապվեց Ռուսաստանի հետ և նրա բարերար հովանավարությամբ, հայերն այժմ լիովին վայելում են այն բարեկեցությունը, որին նրանք չէին կարող հասնել սեփական ջանքերի շնորհիվ և ոչ մի երկրում»⁴: Իր տեսակետը հավաստելու համար, խուղաբաշյանը վկայակոչում է հայ-ռուսական հարաբերությունների պատմության հիշարժան դրվագները, առավելապես ընդգծելով, իհարկե, այդ պատմության շահեկան պահերը:

Այս առումով, ավելորդ չէ նշել, որ խորհրդային տարիներին և հատ-

¹ Նույն տեղում, էջ 383:

² Նույն տեղում, էջ 383:

³ Նույն տեղում, էջ 394:

⁴ Նույն տեղում, էջ 412:

կապես ետպատերազմյան տասնամյակներում, հայ-ռուսական հարաբերությունների և Ռուսաստանի հայկական գաղթօջախների պատմությանը նվիրված փաստալից ու մանրախույզ բազմաթիվ ուսումնասիրություններն, իրենց հերթին, վկայում են խուղաբաշյանի այս հարցում ունեցած հայացքների ճշմարտացիությունը:

Խուղաբաշյանը գրքում հանգամանալից անդրադառնում է նաև հայկական մշակույթի հարցերին և ճշմարիտ մեկնաբանություններ է տալիս. «բաղաբական ծանր ցնցումներն ու հեղաշրջումները,- գրում է նա,- որին ենթարկվեց հայոց պետությունն իր գոյության ժամանակաընթացքում, չկարողացան հայերի մեջ կոտրել ստեղծագործական տաղանդի ուժը և Հայաստանը բոլոր ժամանակներում ներկայանում է իր պատմիչներով, որոնք արժանի են գիտական աշխարհի լուրջ ուշադրությանը... Հին Ասիայի պատմության շատ հարցեր լրացվում են բացառապես նրանց շարադրանքների շնորհիվ»¹: Հեղինակը հատկապես բարձր է գնահատում Լազարյան, Ներսիսյան և Աղաբաբյան դպրոցների խաղացած դերն այդ խնդրում և հանգամանորեն ներկայացնում է 19-րդ դարի նշանավոր այդ կրթօջախների գործունեությունը: Եվ ընդհանրապես, բնութագրելով հայոց մշակույթի օջախները, Խուղաբաշյանն ընդգծում է հին ժամանակներից սկսած նրանց զարգացած լինելու հանգամանքը. «Խորը հնարարում, երբ դեռ Հռոմը նոր-նոր էր բարձրանում խրճիթներից,- գրում է նա,- լուսավորությունը և այնպիսի արվեստներ, ինչպիսիք էին ճարտարապետությունն ու քանդակագործությունը, Հայաստանում արդեն զգալի առաջընթաց էին ապրում: Հայոց երկրում լիուլի են եղել ցորենը, գարին, վուշը, բրինձը, գինին, զարգացած էր անասնապահությունը»²:

Խուղաբաշյանը հայկական մշակույթի ամնախաղեպ զարգացումը, անտարակույս, կապում է հայոց գրերի գյուտի հետ. «Մեսրոպ Մաշտոցի վերադարձից հետո,- գրում է նա,- Սահակ Պարթևի գլխավորությամբ Հայաստանում կազմավորվեց գիտական ընկերություն: Այդ ընկերությունը թարգմանեց Աստվածաշունչը: Փիլիսոփայական, բնագիտական, կենսագրական և պատմական բնույթի բազմաթիվ գործեր թարգմանվեցին հունարենից, լատիներենից և այլ լեզուներից: Այսպիսով, հինգերորդ դարը դարձավ հայոց մշակույթի ոսկե դարը»³:

Խուղաբաշյանը հայագիտության մեջ մի կարևոր նորամուծություն էլ ունի: Ի տարբերություն դարաշրջանի հայագետների, որոնք հայոց պատմության ընդհանուր շարադրանքում բավականին համառոտ են անդրադարձել հայ եկեղեցու պատմությանը, նա առաջինը ռուս ընթերցողին հանգամանորեն ներկայացրեց հայ եկեղեցու ամբողջական պատմությունը, Գրիգոր Լուսավորչից սկսած մինչև իր օրերը: Ընդ որում, հայ եկեղեցու պատմությանը հեղինակն անդրադառնում է ոչ թե առանձին դրվագներով, այլ հարցը ներկայացնում է ամբողջական ձևով:

¹ Նույն տեղում, էջ II:

² Նույն տեղում, էջ 285:

³ Նույն տեղում, էջ 304:

Խուղաբաշյանն իրավացիորեն հայ եկեղեցու պատմությունը դիտում է որպես «ազգի պատմությունն ամբողջացնող կարևոր բաղադրամաս»¹: Բարձր գնահատելով հավատի համար հայ ժողովրդի մղած պայքարը՝ նա գրում է. «Հնայած Չայաստանը մշտապես ստիպված է եղել զիջել Արևելքի նվաճողների զենքի ուժին և կորցնել իր անկախությունը, սակայն հայը երբեք չի կորցրել իր հավատն ու աստվածապաշտությունը: Որոշ ժամանակով միայն խոնարհելով իր գլուխը հաղթողների առջև, նույն ժամանակ էլ հայը վերականգնել է իր անկախությունը և ավելի հաստատուն դարձել իր հավատի մեջ»²: Հեղինակը գտնում է, որ մինչև քրիստոնեության ընդունումը, հայերն առավելապես կապված են եղել Պարսկաստանի հետ, սակայն քրիստոնեության ընդունումը փոփոխություն առաջ բերեց հայերի քաղաքական կողմնորոշման հարցում և նրանք հակվեցին դեպի Բյուզանդիան: «Այդ պահից սկսած,- գրում է նա,- պարսից տիրակալները բազմիցս փորձեցին հայերին ետ պահել իրենց հավատքից, սակայն ապարդյուն»³:

Խուղաբաշյանը հայ ժողովրդին դասում է աշխարհի կրոնասեր ժողովուրդների շարքը և հաստատում, որ ոչինչ չի կարողացել նրան ետ պահել իր հավատից. «Գաղթերը, պատերազմներն ու հալածանքները և ամեն տեսակ չարչարանքները,- գրում է նա,- բազմիցս ճնշել են հայ ժողովրդին, սակայն ո՛չ ճակատագրի փոփոխությունները և ոչ էլ նոր ժողովուրդների հետ մերձեցումը, չեն ազդել հայերի՝ կրոնի համոզեալ ունեցած նվիրածության վրա... Ո՛ր էլ որ գտնվել են հայերը, նրանք մշտապես կապված են եղել իրենց նախնիների հավատի հետ և ամենուրեք պահպանել են հայ եկեղեցու սովորույթներն ու ավանդույթները»⁴: Հանգամանորեն ներկայացնելով հայ եկեղեցու պատմության մանրամասները, Խուղաբաշյանը այստեղ էլ չի մոռանում գովեստի խոսքեր ուղղել ռուսաց կայսրությանը. «Հայ ժողովուրդը և հոգևորականությունը մշտապես ենթարկվել են մի կողմից Պարսկաստանի, մյուս կողմից Թուրքիայի հալածանքներին... Անհավատների դեմ պայքարում հայերի միակ պաշտպանը Ռուսաստանն էր»⁵:

Խուղաբաշյանի ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը բավականին հարուստ է: Աշխատության ներածականում նա բարեխղճորեն նշում է այն աղբյուրներն ու գրականությունը, որոնցից օգտվել է: Այսպես, աշխարհագրական բաժինը Խուղաբաշյանը շարադրել է Փարիզի Արևելյան ակադեմիայի անդամ Գ.Բորեյի «Արմենիա» աշխատության հիման վրա. «Այդ շարադրանքը,- գրում է նա,- ունի այն արժանիքը, որ նրա հեղինակը չխորանալով մանրուքների մեջ, կանգ է առել կարևոր իրողությունների վրա և դրանք նկարագրում է բացառապես այն կողմերով, որոնք առավել կարող են հետաքրքրել մեծաքանակ ընթերցողներին»⁶: Խուղաբաշյանը, միաժամանակ, զգուշացնում է, որ ինքն ամեն ինչ չէ, որ ճշմարիտի տեղ է ընդունել և չի

¹ Նույն տեղում, էջ VI:

² Նույն տեղում, էջ 76:

³ Նույն տեղում, էջ 384:

⁴ Նույն տեղում, էջ 127:

⁵ Նույն տեղում, էջ 130:

⁶ Նույն տեղում, էջ IV-V:

սահմանափակվել միայն պարզ թարգմանությամբ, այլ կարդացել է այնտեղ նշված աղբյուրները, անհրաժեշտ ուղղումներ կատարել տեքստում, ճշգրտել հատկապես հայկական անուններն ու տեղանունները:

Ուսումնասիրության պատմական մասը Խուդաբաշյանը շարադրել է գլխավորապես հայկական աղբյուրների հիման վրա: Սակայն հեղինակը չի սահմանափակվել միայն հայ պատմիչների շարադրանքով և որպես «լրացուցիչ գրականություն»- ինչպես ինքն է նշում,- օգտվել է իր ժամանակի ռուսական մամուլի հրապարակումներից», որոնցից նա բազում քաղվածքներ է կատարել: Խուդաբաշյանն աղբյուրների ցանկում նշում է նաև Փարիզում լույս տեսած Շահնագարյանի «Հայաստանի պատմության ուրվագծեր» աշխատությունը, որը, սակայն, հեղինակն օգտագործել է որոշ վերապահումներով: Գրքում լայն քննարկման է արժանացել նաև Ֆրանսիացի հայագետ Սեն-Մարտենի «Հիշատակարան Հայաստանի պատմության և աշխարհագրության» աշխատությունը: Վերջինիս մասին Խուդաբաշյանը գովեստով է խոսում նշելով, որ այդ աշխատությունն ավելի է համապատասխանում իր հավակնություններին:

Ուսումնասիրության գրականության բաժնի համար գլխավոր աղբյուր է ծառայել հայտնի մխիթարյան, Սուքիաս Սոմալյանի «Հայ գրականության պատմության ուրվագծեր» աշխատությունը, որը հրատարակվել էր 1829թ. իտալերեն լեզվով Վենետիկում: Ընդհանրապես, չի կարելի մեղադրել հեղինակին՝ աշխատանքում արժարժված այս կամ այն հարցի անկատարության մեջ, քանի որ, ինչպես ինքն է գրում ներածականում, արել է այն, ինչը հասանելի է եղել իր ուժերին¹:

Խուդաբաշյանի գրքի երրորդ բաժինը թեպետ կրում է «Հայոց լեզվի մասին» խորագիրը, սակայն ամբողջովին նվիրված է հայոց պատմությանն ու հայ գրականությանը: Հայագիտական առումով, այն ևս կարելի է հաջողված համարել: Սկզբում Խուդաբաշյանն ափսոսանք է հայտնում, որ քրիստոնեության ընդունումն իր հետ բերեց նաև բացասական հետևանքներ. «ոչնչացվեցին հեթանոսական մշակույթի բարձրարժեք նմուշներ: Այդ պատճառով է, որ մեզ հայտնի են միայն քրիստոնեական Հայաստանի մշակութային արժեքները»²: Խուդաբաշյանն այդ հանգամանքով է բացատրում նաև այն փաստը, որ Հայաստանի հին շրջանի պատմությունն ուսումնասիրելիս, ինքն ստիպված է եղել դիմելու նաև օտար պատմիչներին: Ուստի, մի ամբողջ բաժին նվիրել է օտարագծի այն պատմաբանների աշխատությունների քննարկմանը, որոնք անդրադարձել են հայոց պատմությանը: Հեղինակը հիշատակում է վերջին. չորս հարյուրամյակներում հրապարակված հայագիտական նշանավոր հրատարակությունները: Հայ գրականությանը նվիրված բաժնում նա հանգամանորեն ներկայացնում է նաև հայ մշակույթի երախտավորներին՝ Մեսրոպ Մաշտոցից ու Խորենացուց սկսած՝ մինչև Մխիթարյաններ, Միքայել Զամյան... և այսպես, մինչև 19-րդ դարի կեսերը:

Ավարտելով Ա. Խուդաբաշյանի գրքի մասին մեր ասելիքը, հարկ

¹ Նույն տեղում, էջ VIII:

² Նույն տեղում, էջ 417:

ենք համարում շոշափել մի կարևոր հարց ևս: Պատմագիտության և բանասիրության մեջ, հուղաբաշյանի գրքի առնչությամբ հաճախ թմբկահարվել է Միքայել Նալբանդյանի կրթոտ գրախոսականը: Ուսումնասիրողներից ումանք, առանց հիմնավոր ծանոթանալու հուղաբաշյանի գրքի բովանդակությանը, տիրապետող գաղափարախոսության միտումներին ընդառաջ, անվերապահորեն հաստատել են հեղափոխական-դեմոկրատի տեսակետներն ու կարծիքները: Գիրքը քննելու ժամանակ մենք այս հարցին մտացածին չանդրադարձանք, քանի որ մեր ուսումնասիրողներից, թերևս, քչերը գիտեն, որ Միքայել Նալբանդյանի այդ քննադատությունը վերաբերում է միայն հուղաբաշյանի եկեղեցու պատմությանը նվիրված բաժնին: Խնդրի մեջ հստակություն մտցնելու, և որ ամենից կարևորն է, ճշմարտությունն ասելու մղումով էլ, թերևս, սկսենք Նալբանդյանի դիտողություններից. «Երբ առաջին անգամ երևեցավ պ. հուղաբաշյի գիրքը,- գրում է նա,- մենք հարկադրվեցանք կարդալ նորա ականա, ականա կարդում էինք, հառաջուց ճանաչած լինելով պարոնի թե հայագիտության և թե այլ բաների մասին ունեցած տեղեկության չափը: Եվ մեր ընթերցանության հետևանքը հաստատեց մեզ, որ իրավունք ունեինք չկարդալու հոժարությամբ և այսորժանքով մի այդպիսի գրված»¹:

Նալբանդյանն այնուհետև շարունակում է. «Ավելորդ է նաև ընդդեմ գինվորի մի աշխատության, որ յուր չնչին կարծիքները ևս այս կամ այն տեղից /օրագրերից/ լրագրերից/ մուրացած տեղեկությունքը և հայացքը հաստատելու համար, աղճատում էր պատմական իրողությունքը և զրպարտում էր այնպիսի մարդիկ մեր երևելի հայրապետներից, որոնց և ոչ կոշիկների խրացը արժանի էր լուծանել»²: Եվ ապա՝ «Բայց ինչպես չբողոքենք այն զրպարտությունների ընդդեմ, որ պարոնը ժողովում է մեր երանելի և սուրբ նախահարց գլխին, որպիսիք էին սուրբ Պարթևը, սուրբ Մովսես Խորենացին և սուրբ Ներսես Շնորհալիւն»³- չենք կարծում,- շարունակում է իր միտքը Մ.-Նալբանդյանը,- թե պ. հուղաբաշյի ցանկությունը եղած լինի ընկնել հայ մատենագիրների կարգը, եթե այդպես լիներ, ապա նորա աշխատությունքը պիտի լինեին հայերեն և հարկավորապես այլ կերպարանքով և այլ ոգով. թողնում ենք, որ ներկայումս մի փոքր ավելի բան հարկավոր է հայ մատենագիրին, քան թե ուներ պ. հուղաբաշյանը»⁴:

Եվ վերջապես, Նալբանդյանի վերջին լուրջ դիտողությունը. «մի գործ, որ հառաջաբանից մինչև վերջը պատկերացնում է մի անկարգություն, մի զարհուրելի քառս, որպիսի հագիվ թե եղած է տիեզերքի արարչագործութենից հառաջ: Շատ ենք ցավում, որ իբրև հիշատակագիր, մի փոքր մերկանդամ հարկադրվեցանք ցույց տալ պ. հուղաբաշյանի ճշմարտության երեսը, գուցե թերևս դրդելով նորա սեփական կարծիքը յուր /օգտակար անվա-

¹ Տես՝ Միքայել Նալբանդյան, ԵԼԺ, հ.3, Երևան, 1982, էջ 204:

² Նույն տեղում, էջ 204-205:

³ Նույն տեղում, էջ 207:

⁴ Նույն տեղում, էջ 205:

նած/ գործի մասին»¹:

Անտարակույս, 19-րդ դարի յուրաքանչյուր հայագիտական գործ, սկսած Գլինկայից, Արզանովներից և վերջացրած Խուդաբաշյանով և մյուսներով, բոլորի գործերն էլ, առանց բացառության, պատմական դեպքերի ու դեմքերի նկարագրության ու գնահատության հարցում, խոցելի տեղեր ունեն: Սակայն այս ամենով հանդերձ՝ անդրադառնալ, զրքեր գրել և օտարներին ծանոթացնել հայոց պատմությունը, նրա առանձնահատկություններն ու ներդրումները, և այն էլ 19-րդ դարի կեսերին, երբ դեռ նոր-նոր էր բարձրանում հայոց տունը, ուստի մոռացված ու բզկտրված Չայաստանի և հայ ժողովրդի մասին ծայր բարձրացնելը, անշուշտ, պետք է գնահատել: Սա՝ մեր կարծիքն է: Եվ ով կմտածեր, որ ռուս ռազմական պատմաբան Նիկոլայ Դուբրովինը իր ուսումնասիրությունների համար քաղվածքներ կընտրեր մի զրքից /խոսքը Жизнь Артемия Арапетского, урожанца селения Вагаршапат...СПб, 1813, զրքի մասին է-Յ.Գ./, որը չէինք ասի, թե մեր պատմաբանների կողմից առանձնակի ուշադրության է արժանացել²: Հասկանալի է, որ հարցն առաջին հերթին նրա ռուսերեն թարգմանության մեջ է, եթե ոչ միայն:

Անշուշտ, իր քննադատական դիտողություններում Միքայել Նալբանդյանն անկեղծ էր, սակայն լիովին արդարացի էր, թե՛ ոչ, այլ հարց է: Ուստի, մերօրյա ժողովրդավարության և բացախտության ժամանակաշրջանում, 19-րդ դարի ռուս և հայ հեղափոխական գործիչների արմատական դատողությունները, պատմաբանների կողմից իրավացիորեն պետք է վերապահությամբ ընդունվեն: Ասենք, հենց նույն Միքայել Նալբանդյանի բացասական կարծիքը Գաբրիել արքեպիսկոպոս Այվազովսկու մասին և այլն³:

Չպետք է մոռանալ նաև, որ Խուդաբաշյանները, Արզանովներն ու Գլինկաները ժամանակի շառավղից դուրս չէին կարող լինել և պետք է գրեին այն նյութը, որը հնարավոր կլիներ անցկացնել ցարական դաժան գրաքննության պայմաններում: Մյուս կողմից, եթե ժամանակի հայագիտական գործերին նայենք Նալբանդյանի սոցիալական ծայրահեղ խստապահանջության տեսանկյունից, ապա այդ պահանջներին չեն կարող բավարարել վերոհիշյալ գրեթե բոլոր հեղինակները:

Այնուհանդերձ, հետևենք, մի կողմից՝ Նալբանդյանի քննադատականներին, մյուս կողմից, նույն հարցերի առնչությամբ Խուդաբաշյանի շարադրանքին: Այսպես, Նալբանդյանը զրքի հեղինակին մեղադրում է նրանում, որ հաճախ բացասական կարծիք է հայտնել «ժողովրդի համար սրբություն դարձած կաթողիկոսների մասին»: Ուշադրությամբ ընթերցելով Խուդաբաշյանի գործը, մենք այդպես էլ այդ կաթողիկոսների մասին բացասական կարծիքի չհանդիպեցինք: Սկսենք, հենց Ներսես Շնորհալույց, որին Նալբանդյանը հաճախակի է հիշատակում իր քննադատականում: Ներսես կաթողիկոսի գործունեությանը Խուդաբաշյանն անդրադառնում է հոռմկլայի

¹ Նույն տեղում, էջ 219-220:

² Шу' Военный сворник, 1874, т.156, с.159.

³ Шу' Վ. Ա. Միքայելյան, Հրիմախոյց պատմություն, Երևան, 1989, էջ 302-336:

ժողովի կապակցությամբ, որտեղ ինչպես հայտնի է, դրվել էր հունական եկեղեցու հետ միության հարցը: Հեղինակը մանրամասն ու հանգամանորեն /էջ 216-279/ անդրադառնում է ժողովին նախորդած և հետագա դեպքերին, թե ինչպիսի միջոցների էր դիմում կայսրությունը՝ Ներսեսին հունական եկեղեցին թեքելու համար: Այս ամենից հետո, հուղաբաշյանը գրում է. «Սինչդեռ, երբ նորից վերսկսվեցին հոգևոր ժողովի նիստերը, Ներսեսը չէր դադարում պաշտպանել հայոց եկեղեցու դավանանքը ավելի մեծ համառությամբ, և ոչինչ չէր ուզում որոշել ինքնուրույն՝ հետաձգելով բոլոր քննարկումները մինչև նախատեսվող հոգևոր մեծ ժողովը»¹: Իսկ Նալբանդյանը գրում է, թե «յուր ներկա աշխատության մեջ /հուղաբաշյանը- Յ.Գ./ նկարագրում է Ներսես Շնորհալուն, որպես մի երկդիմի մարդ, յուր ազգը խաբող, հունական օգուտը պաշտող և ավելի հույն քան թե հայ»²: Եվ այդ այն պարագայում, երբ Շնորհալու մասին հուղաբաշյանի մոտ կարդում ենք. «Հայ ժողովրդի կողմից Ներսես Կլայեցին իր բնութագրի և ստեղծագործականության համար կոչվեց Շնորհալի, այսինքն՝ բարերար և իր սրբացած կյանքի համար դասվեց հայոց եկեղեցու սրբերի շարքը Հայաստանը նրանով կորցրեց իր երկրորդ Լուսավորչին»³: Ուստի, դժվար է համաձայնել Նալբանդյանի այն բնութագրի հետ, որը վերագրում է հուղաբաշյանին Ներսես Շնորհալու հարցում:

Հուղաբաշյանը միևնույն վերաբերմունքն է դրսևորել նաև մյուս կաթողիկոսների հարցում: Այս քաղվածքը Ներսես Աշտարակեցուն նվիրված հատվածից է. «Ներսեսը,- գրում է նա,- Կովկասը թողեց 1828 թվականին: Սակայն նրա սխարանքների հիշողությունը, եկեղեցու և ժողովրդի համար կատարած գործերն անմոռաց կերպով ապրում էին նրա հայրենակիցների սրտերում: Ողջ հայ ժողովուրդը միաձայն հաստատում էր, որ քանի կենդանի է Ներսեսը, չկա ուրիշ մեկը, որը կարող է նրան փոխարինել»⁴: Այստեղ էլ մեր ընթերցողի ուշադրությունը պիտի շեղենք: Շեղումն էլ, մեր կարծիքով, անեական չէ. մատենադարանում Լազարյանների արխիվն ուսումնասիրելիս, մեր ուշադրությունը գրավեց ռուսական «Сынъ отечества» թերթում զետեղված մի հոդված՝ «Правда вespристрастнаго Армянина о второй части последнего сочинения А.Н.Муравьева §Грузия и Армения» վերնագրով: Տողատակում մեր ուշադրությունը գրավեց արված հետևյալ ծանոթագրությունը. «Сынъ отечества»-ն իր ընթերցողներին արդեն ծանոթացրել է այս հետաքրքիր հրատարակության մասին: Սակայն աշխատության մասին անկողմնակալ ու արդարացի գնահատական կարող է տալ միայն մի մարդ, որն, իրավմամբ, ընդունված է մեզանում և իրապես տիրապետում է հայ եկեղեցու պատմությանը. այդ հարցում նա հեղինակություն է: Խոսքը Ալեքսանդր Մակարևիչ հուղաբաշյանի մասին է /ընդգծումը մերն է՝ Յ.Գ./: Նրա «Исторические памятники вероучения Армянской церкви» գիրքն իր ժամանակին հրատարակվել էր պարզաբանելու և ուղղելու մեզանում հարցի մասին եղած սխալ պատկերա-

¹ Տե՛ս՝ Մ.Նալբանդյան, ԵԼԺ, հ.3, էջ 217:

² Նույն տեղում, էջ 246:

³ Տե՛ս Худавяев Ал., նշված աշխատությունը, էջ 220,252:

⁴ Նույն տեղում, էջ 171-172:

ցումները: Չեր ուշադրությանը ներկայացվող այս քննադատական գրախոսականը, կարծում ենք, օգտակար կլինի գրքի հեղինակի համար»:¹ Ծանոթագրությունն ստորագրել էր թերթի խմբագիրը:

Հարկ չհամարելով անդրադառնալ գրեթե 11 էջի հասնող այս գրախոսականի բուն նյութին, ուղղակի հաստատենք, որ հուդաբաշյանը մեկ առ մեկ մանրամասնում ու բացատրություններ է տալիս Ա. Մուրավյովի գրքում հայ եկեղեցուն վերաբերող վրիպումներն ու սխալները, ներկայացնում ու բնութագրում է մեր եկեղեցու ծիսակարգն ու արարողությունները: Ուրեմն ի՞նչ է ստացվում. ռուսական հեղինակավոր թերթը տպագրում է հայ եկեղեցու պատմությանը քաջատեղյակ մարդու 11 էջանոց կարծիքը, իսկ ահա Նալբանդյանի կարծիքով, հուդաբաշյանը գլխավայր է ներկայացրել հայ եկեղեցու պատմությունը: Կարծում ենք, այստեղ ևս մեկնաբանելու կարիքը չկա: Չենք մեկնաբանում նաև հուդաբաշյանի գրքից բերված քաղվածքների առկայությունը, որին մենք հանդիպեցինք ռուս պատմաբան Վիկտոր Աբազայի «Հայոց պատմությունում»²:

Համաձայնվել չի կարելի նաև Ս. Նալբանդյանի քննադատական մյուս դրույթների հետ, երբ նա հուդաբաշյանի աշխատանքը համարում է պարբերականներից քաղված, փաստերն աղավաղած քառասյին մի գործ: Այստեղ ևս կցանկանայինք մի կարևոր հավելում կատարել: Հրապարակի վրա եղած գրականության մեջ, մասնավորապես բանասիրական գիտությունների դոկտոր Է. Հակոբյանի «Հայագիտությունը Ռուսաստանում/բանասիրության հարցեր/» արժեքավոր աշխատության մեջ, հեղինակը քննելով այս հարցը, գրում է. «հուդաբաշյանի գիրքը պատմական տեսակետից կարելի է, այդպիսով /այսինքն՝ քանի որ Ս. Նալբանդյանը «ջախջախել» է՝ Հ.Հ./ համարել անհաջող», չնայած, նա վերապահովություն է անում նշելով, որ այդ քննադատության մեծ մասն իրենց բնույթով, իր թեմային չեն վերաբերում³:

Արդարև, Է. Հակոբյանի ուսումնասիրության շրջանակներից դուրս է հարցի պատմագիտական կողմի քննարկումը: Եվ այնուհանդերձ, Նալբանդյանի քննադատությունը չի խանգարել Է. Հակոբյանին, ջանադրաբար հետազոտելու և քննարկելու հուդաբաշյանի աշխատության հայ գրականությանը նվիրված բաժինը և եթե ոչ ուղղակի, ապա գոնե անուղղակի, մեզ հասկացնել է տալիս, որ գրքի այս բաժինը, համեմայն դեպս, անհաջող չէ. «հուդաբաշյանի գրքի վերջին բաժնի մասին լրիվ պատկերացում կազմելու համար, - գրում է նա, - պետք է ասել, որ թեպետ երկրորդ և երրորդ շրջանների հեղինակների թվարկումը նա փոխառել է Ս. Սոմայանցից և Ս. Նազարյանից... սակայն հուդաբաշյանը դրանք լրացրել է մոր բնութագրություններով»⁴: Շարունակենք մեջբերել Է.Հակոբյանին.«Եվ, իհարկե, հուդաբաշյանը չի փորձել արատավորել հստակացնող բարի անունը, ինչպես այն ներկայաց-

¹ Լազարյանների արխիվ, քղբ. 110, վավ. 9:

² Տես՝ В.А.Аваза, История Армении, СПб, 1888, с.120:

³ Տես՝ Э.А.Акопян, Арменоведение в России, Ереван, 1988, с.111-112.

⁴ Նույն տեղում, էջ 112-113:

րել է Մ. Նալբանդյանը՝ միակողմանիորեն մեկնաբանելով «ոյուրահավատ» բառը որպես «թեթևամիտ» /ընդգծումը մերն է՝ Յ.Գ.Մ. Մինչդեռ,- շարունակում է Յակոբյանը,- հստակագուցում հստակաբայանը համարել է հռչակավոր պատմաբան, «գրականության և քերականության հայր»¹: Հիմա՝ մեքերերենը հստակաբայանին: «Չի կարելի վիճարկել, թե հստակագուցում շարադրանքում նկատելի է տեղեկությունների զմահատման անբավարարություն, որոնք նա քաղել է տարբեր աղբյուրներից: Բայց քանի նա մոտենում էր իր ժամանակին, այնքան ավելի է նրա պատմությունը ձեռք բերում արժանավորության նշանակություն.... հստակագուցում շարադրանքի պարզությունն ու անկեղծությունը վկայում են, որ միայն ճշմարտության նկատմամբ սերն է դեկավարել նրա գրչին... Առավել ևս նշանակություն պետք է ունենա նրա պատմությունը, քանի որ հնադարյան շատ պատմական հուշարձանների մասին մենք իմանում ենք միայն նրա շարադրանքից... Համաշխարհային պատմությունը կարող է թանկարժեք տեղեկություններ քաղել Մովսես հստակագուցից՝ հին Ասորեստանի, Պարսկաստանի, հռոմեացիների և հույների մասին, որոնք մենք ապարդյուն որոնում ենք մյուս պատմիչների մոտ»²: Ավելին, էլ ի՞նչ պետք է գրեր հստակաբայանը կամ ասվածում ո՞րն է սխալը: Այնպես որ, քննադատել հստակաբայանին՝ աղբյուրների և փաստերի խեղաթյուրման մեջ, մեղմ ասած, արդարացի չէ:

Եվ վերջապես, հստակաբայանի մասին Նալբանդյանը դրական կարծիք էլ է հայտնել. «1838թ Մոսկվայում հրատարակված հայ-ռուսական բառարանի հեղինակ Ալ. հստակաբայանը իր աշխատանքով օգնել և օգնում է շատ թարգմանիչների, որոնք հաստատում գիտելիքներ չունեն հայոց և ռուսաց լեզուների իմացության մեջ, հատկապես այն օգտակար է ռուսների համար, որոնք ցանկանում են հայերեն սովորել»³:

Ուստի, ժամանակը չէ՞, որ Ալ. հստակաբայանը իր արժանի տեղն ունենա 19-րդ դարի հայագետների շարքում, իսկ նրա աշխատությունը՝ արժանապատմագիտության ուշադրությանն ու զմահատականին:

¹ Նույն տեղում, էջ 112-113:

² Шу' Ал. Худабашев, *Где-то в ашхатությունը*, էջ 437:

³ Шу' М. Налбандян, *Избранные философские и общественно-политические произведения*, М., 1954, с.350:

ԿԻԼԻԿԻԱՅԻ 19-ՐԴ ԳԱՐԻ ՎԵՐՋԻ-20-ՐԴ ԳԱՐԻ ՄԿՁՔԻ ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏ-ՄՈՒԹՅՈՒՆԻՅ

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Թուրքիայում շարունակում էին տիրապետել ռազմաավատատիրական հարաբերությունները, տնտեսության վարման հին եղանակները, որոնց պատճառով ավելի էր խորանում Օսմանյան կայսրության տնտեսական և քաղաքական կախվածությունն օտարերկրյա դրամագլխից, մեծ տերություններից: Օսմանյան իշխանությունների ազգայնամոլները քաղաքականությունը, սոցիալական անարդարությունները պայմաններ էին ստեղծում երկրի տնտեսության զարգացման համար: Տնտեսական հետամնացության էական պատճառներից էր բազմակացութեան տնտեսությունը, որը տակավին շարունակում էր ամուր պահել իր դիրքերը Թուրքիայում: Այն, միաժամանակ, պայմանավորված էր սուլթանական-միապետական վարչակարգով, տնտեսական կյանքում տիրապետող ավատատիրական մնացուկներով:

Շուկայական հարաբերությունների որոշակիորեն արագ ձևավալորում և հաստատում, արտադրության աճ առկա էր հիմնականում կայսրության եվրոպական մասում և ծովամերձ շրջաններում: Այդ շրջաններից էր նաև Կիլիկիան, որտեղ շուկայական արտադրահարաբերություններն անհամեմատ ավելի արագ էին արմատավորվում, քան երկրի այլ վայրերում:

1860-70-ական թվականներից սկսյալ եվրոպական դրամագլուխը կոնկրետ հետաքրքրություններ է դրսևորվում երկրամասի բերրի հողատարածությունների, հարուստ օգտակար հանածոների նկատմամբ՝ իր ֆինանսական ներդրումներով մեծապես նպաստելով Կիլիկիայի տնտեսական զարգացմանը: Երկաթուղային լայն ցանցի առկայությունը (Մերսին-Տարսոն-Ադանա երկաթուղին և Բեռլին-Բաղդադ երկաթուղային գծի կիլիկյան հատվածը), Կ.Պոլսի հետ ծովային հաղորդակցությունը, ինչպես նաև՝ դեպի Ասորիք և Միջերկրականի ափերը տալով մի քանի տարանցիկ ճանապարհների խաչմերուկում գտնվելը, բարենպաստ աշխարհագրական դիրքով Արևելքն ու Արևմուտքն իրար կապող կարևորագույն կենտրոններից մեկը հանդիսանալով Կիլիկիային բացառիկ նշանակություն էր տալիս առևտրատնտեսական առումով:

Կիլիկիահայերն (մոտ՝ 400000) ակնառու նվաճումների էին հասել տնտեսական, մշակութային, հասարակական քնազավառներում և, չնայած օսմանյան բռնակալությանն ու տիրող կամայականություններին, հիմնականում իրենց ձեռքում էին կենտրոնացրել և՛ ներքին շուկայում ծավալվող առևտուրը, և՛ արդյունաբերական փոքրիշատե խոշոր ձեռնարկությունները, և՛ գյուղատնտեսական մթերքների արտադրությունը: Չնայած օտարերկրյա ապրանքների մուտքը ներքին շուկա դուրս էր մղում մրցակցությանը չդիմացող տեղական մանր ձեռնարկատերերին, այնուամենայնիվ, տեղի էր ունենում կապիտալիստական արտադրանքանակին անցնելու գործընթաց, որի շնորհիվ կիլիկիահայ գործարարները

կարողանում էին իրենց արտադրանքը վաճառահանել նաև արտաքին շուկա: Զ. Բրայսն իրավացիորեն նկատել է, որ Կիլիկիայում առևտուրը և արդյունաբերությունը, գրեթե ամբողջությամբ, հայկական տարրի ձեռքում էր, որը տնտեսապես գնալով ավելի հզորանում էր: «Թվում էր, - գրում է նա, - Կիլիկիայի հայերին նախասահմանված էր կարևոր դեր խաղալ Օսմանյան կայսրության հետագա զարգացման գործում»:¹

Դարասկզբին թուրքիայում տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր: Արտահանման ապրանքների ճնշող մեծամասնությունը գյուղատնտեսական մթերքներ էին: Սակայն երկրագործության զարգացմանը մեծապես խոչընդոտում էր հողի պետական սեփականությունը: Ուստի հասկանալի է, որ նյութական շահագրգռվածության բացակայության պայմաններում գյուղատնտեսությունը չէր կարող գտնվել բարվոք վիճակում՝ չնայած դրա զարգացման հեռանկարային հնարավորությունների, բերրի հողերի առկայությանը:

Բացասաբար էր անդրադառնում նաև քրիստոնյաներին, մասնավորապես՝ հայերին պատկանող հողերի զավթումը թուրք և քուրդ հողատերերի կողմից: Արդեն 20-րդ դարի սկզբին հայերից բռնագրավված հողերի չափն անցնում էր 741000 հեկտարից:² Կիլիկիայում այդ գործընթացն առավել խորացավ 1890-ական թթ., 1909թ. ջարդերից և Բալկանյան պատերազմներից հետո, երբ կառավարությունը հայերի հողատարածությունները հանձնում էր «եվրոպական թուրքիայից եկած մահմեդական գաղթականներին ու օտարերկրացիներին»:

Գյուղացիության դաժան շահագործումը, հողագործության վարման դարավոր, նահապետական եղանակներն արգելակում էին գյուղատնտեսության զարգացումը, թեև մինչև I աշխարհամարտը գյուղատնտեսությամբ էր զբաղվում թուրքիայի բնակչության 85%-ը:⁴

Թուրքիայում, եթե նկատի ունենանք նրա ներկա տարածքը, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում օգտագործվում էր պիտանի հողատարածության ընդամենը 17,5%-ը: Ամենաշատ հողերն օգտագործվում էին երկրի արևմուտքում և ծովափնյա շրջաններում: Այսպես, 1910թ. տվյալներով, Ադանայի վիլայեթում մշակվում էր պիտանի հողատարածության 27%-ը, Խարբեթում՝ 10%-ը, Դիարբեքիում՝ 1,5 %-ը, Վանում՝ 3,4 %-ը, Տրապիզոնում՝ 52,4%-ը:⁵

Ադանայի, ինչպես նաև՝ Տրապիզոնի վիլայեթներում հողօգտագործման անհամեմատ բարձր չափը պայմանավորված էր արգավանդ հողերի առկայությամբ և նրանց՝ մերձծովյան շրջաններ լինելով, որտեղ օտարերկրյա դրամագլուխը առանձնակի հետաքրքրություններ ուներ և որտեղ գյուղատնտեսության զարգացումը կապված էր առևտրի զարգացման հետ և հակառակը:

19-րդ դարի վերջին քառորդից էլ՝ ավելի վայրագ բնույթ ստացավ քրիստոնյա ազգաբնակչության տնտեսական շահագործումը: Ծանր էր, հատկապես, հայ ազգաբնակչության վիճակը, որը ենթարկվում էր տարաբնույթ հալածանքներ-

¹ Bryce J. The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916, London, 1916, p.465.

² Պողոսյան Մ.Կ. Գոյատնման պայքարի քառալիներում, Երևան, 1986, էջ 145:

³ Մշակ, Թիֆլիս, 1913, N 166, 31 հուլիսի:

⁴ Новичев А.Л., Очерки экономики Турции до мировой войны, М.-Л., 1934, с.43.

⁵ Նույն տեղում:

րի և դժնդակ շահագործման: Խիստ վատթար էր դրությունը այն շրջաններում, որտեղ հարկահանության իրավունքը պատկանում էր քուրդ ցեղապետերին: Վերջիններս հայերից գանձում էին ոչ միայն պետական հարկը, այլև դրա տասնապատկի վերցնում իրենց: Արդյունքում զնալով ավելի էր խորանում հայկական տնտեսությունների քայքայումը: Հարկ է նշել, որ հայերը մահմեդականներից 5 անգամ ավելի հարկեր էին վճարում: Օսմանյան կայսրության այլ շրջանների համեմատությամբ Կիլիկիայում հարկային համակարգի մեջ որևէ էական տարբերություն չկար: Կիլիկիահայ գյուղացին պետությանն էր վճարում աշար, զինվորական հարկ (բեդելի ասբերիե), կալվածական հարկ, անասնահարկ, կրթության հարկ, ճանապարհների հարկ, կատարում բազմաթիվ տարապարհակներ: Արհեստավորները վճարում էին թեմեթթին՝ զբաղմունքի հարկ: Տարեկան 30-50 ոսկի (կախված եկամուտի չափից) հարկ էին մուծում վաճառականները: Արդյունքում հայ աշխատավորի արյուն-քրտինքով և տքնաջան աշխատանքով ստեղծված բարիքի 70-80 %-ը անցնում էր պետությանը և հողատիրոջը: Նման թալանչիական հարկահանությունը միտում էր տնտեսապես կործանել հայերին, հարկադրել նրանց՝ լքել հայրական օջախները: Այս ճանապարհով և թուրքական իշխանությունները ցանկանում էին հայաթափել Արևմտյան Հայաստանը և հայաբնակ այլ շրջանները:

19-րդ դարի վերջին կեղեքիչ հարկահանության հետևանքով միայն Ադանայի վիլայեթից օսմանյան գանձարանը տարեկան միջին հաշվով ստանում էր 350.000 թուրքական ոսկի եկամուտ:¹

19-րդ դարի կեսերից դանդաղ և անհաստատ քայլերով գյուղատնտեսության մեջ էին թափանցում շուկայական հարաբերությունները: Գյուղն աստիճանաբար ներգրավվում էր ապրանքադրամական հարաբերությունների ոլորտը: Դրա վառ ապացույցն է և այն, որ հարկերն արդեն գանձվում էին ոչ միայն բնամթերքով, այլև դրամով: Դա ճանապարհի հարթեց շահագործման նոր եղանակների համար: Դրամական հարկը վճարել չկարողանալով՝ գյուղացին հարկադրված վաճառում էր անասունները, զույքի մի մասը կամ դիմում պանդխտության՝ դրամ վաստակելու հույսով: Հարկավ, պանդխտության պատճառը ոչ միայն տնտեսական ծանր կացությունն էր, այլև սոցիալական, ազգային, կրոնական և քաղաքական հալածանքները, ոչ միայն գույքի, այլև՝ կյանքի և պատվի անապահովությունը:

Տնտեսապես զարգացած լինելով, Կիլիկիան «գաղթական ժողովուրդներու բոյն մըն էր», որոնք որպես վարձու աշխատողներ, օրամշակներ, գալիս էին Թուրքիայի տարբեր շրջաններից²: Միայն Ադանա քաղաքում նրանց թիվն անցնում էր 22-25.000-ից, «որոնք տարեկան երեք-չորս ամիս ապրում էին քաղաքում և շրջակայքում՝ բամբակի բերքը հավաքելու և զտելու համար»³: Բանվորության թիվն աճում էր այն ընչազուրկ գյուղացիության հաշվին, որը վարձու աշխատանք

¹ Մատենադարան «Արաքսի», Կիլիկիա, փոքր աշխարհագրության արդի Կիլիկիոն /այսուհետև՝ Կիլիկիա.../, Պետքերուրգ, 1894, էջ 16:

² Մերովյան Մուշեղ եպիսկոպոս, Հովիվին խրատները ուղղված Ատանայի ու ամբողջ քեմական ժողովրդին, Կ. Պոլիս, 1908, էջ 29:

³ Ինճիկյան Հ. Գ., Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984, էջ 124:

քով (թե՛ արդյունաբերության, թե՛ գյուղատնտեսության ոլորտներում) հոգում էր իր ապրուստը: Նրանք հիմնականում զբաղված էին ծխախոտի, օփիումի, բամբակի, խաղողի, ծխապտղի մշակության և արտադրության մեջ: Նշենք, որ այդ կուլտուրաների մշակությունն աճում էր արտաքին շուկայի պահանջարկի ներքո:

19-րդ դարի 80-ական թվականներից մեծ ծավալ ընդունեց բերրի հողերի գնումը օտարերկրյա գործարարների կողմից: Թուրքերը, տեխնիկա և զարգացման համապատասխան մակարդակ չունենալով, հսկայական հողատարածություններ էին վաճառում օտարերկրացիներին, որոնք էլ հումքի աղբյուրների մոտ կառուցում էին իրենց ձեռնարկությունները՝ օգտագործելով տեղի աշխատուժը, արտադրանքի համար վաճառահանման շուկա ապահովելով և՛ երկրի ներսում, և՛ նրա սահմաններից դուրս: Փաստորեն՝ Օսմանյան Թուրքիան օտարերկրյա դրամագլխի համար դարձել էր հումքի աղբյուր և վաճառահանման շուկա:

Կիլիկիայում օտարերկրացիները գլխավորապես զբաղվում էին բամբակի, ծխախոտի և քունջութի մշակությամբ:

Դարասկզբին աննախընթաց զարգացում էր ապրել բամբակագործությունը: Եթե 1896թ. Թուրքիայի բամբակագործության կենտրոն Ադանայի վիլայեթում արտադրվել էր 400 տոննա բամբակ, ապա 1914-ին՝ 33.750 տոննա¹: Նման կտրուկ աճը պայմանավորված էր օտարերկրյա գործարարների շահագրգռվածությամբ, որոնք, համապատասխան պայմանագրեր կնքելով, շահագործում էին Ադանայի բամբակի պլանտացիաները: Առաջինը Գերմանիան ուշադրություն դարձրեց Կիլիկիայում բամբակի մշակությանը: 1903թ. գերմանացի ձեռնարկատերերը Դեզգլենում հիմնեցին «Գերմանա-լանտական բամբակագործական ընկերությունը», որը կարճ ժամանակում իր ձեռքը վերցրեց Կիլիկիայից բամբակի հումքի համարյա ողջ արտահանումը և անհրաժեշտ սարքավորումներով զինեց բամբակագործական և մանածագործական ձեռնարկությունները²: Կիլիկիայի բամբակը մեծ պահանջարկ ուներ ամենուրեք: Բամբակագործությամբ էր զբաղվում Կիլիկիայի աշխատավորության մի զգալի մասը: Ադանայի հայության հոգևոր առաջնորդ Մուշեղ Եպիսկոպոսը նշում է. «Բամբակի հումքի կույքը այս երկրագործ միջավայրին մեջ ապրուստին ամենագլխավոր միջոցներեն մեկն է, որուն կը վազեն Ադանայի գործավոր դասակարգին ընտանիքները, իրենց ուսանող զավակներով»³:

Բամբակի մշակությունը բավարար հիմքերի վրա էր գտնվում նաև Տարսոնում: Դնարավորություններ կային բամբակագործությունն առավել զարգացնելու: Ֆրանսիացի տնտեսագետ Շ.Աշարի հաշվարկներով՝ միայն Կիլիկիայի բամբակը կարող էր ֆրանսիական ողջ տեքստիլ արդյունաբերությունն ապահովել անհրաժեշտ հումքով: Ուստի զարմանալի և պատահական չէ, որ Ֆրանսիան սկսել էր աշխույժ հետաքրքրություն դրսևորել Կիլիկյան բամբակի նկատմամբ:

¹ Новичев А.Д., указ. соч. с.79.

² Раздел Азиатской Турции. По секретным документам министерство иностранных дел. Под ред. С.А.Аламова. М., 1924, с. 45.

³ Մերովրյան Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 29:

Լայնորեն տարածվել էր նաև քունջութի մշակությունը, մասնավորապես՝ Ջիհան գետի ավազանում: Միայն 1914 թ. Մերսինի նավահանգստով արտահանվել էր 14 տոննա քունջութ:¹ Ինչպես արդեն նշել ենք, Դաշտային Կիլիկիայում նկատելի էին երկրագործության զարգացման միտումներ: Կիլիկիայում հաշվում էր 2.600.000 հեկտար արգավանդ և բերրի հողատարածություն, որը լայն հնարավորություններ և բարենպաստ պայմաններ էր ստեղծում գյուղատնտեսության առավել զարգացման համար: Գողգործության կենտրոնը Ադանայի (Չուխուր Օվայի) դաշտավայրն էր, որն իր բերրիությամբ բաղադրվել է Նեղոսի դելտայի հետ: Տարածված էր ցորենի, վարսակի, գարու, կորեկի, ծիրանի, խնձորի, նռան, ընկույզի, ձիթապտղի և ցիտրուսների մշակությունը: Օտարերկրյա և տեղական հողատերերը կարողանում էին ապահովել գյուղատնտեսական մթերքների արտադրության զգալի աճ, որի շնորհիվ էլ Թուրքիան միջազգային շուկա էր արտահանում հացահատիկ, միրգ, բանջարեղեն և այլն: 1906թ. Կիլիկիայում արտադրված 45.000 տոննա ցորենից արտահանվել էր 11.000-ը: Բերքի աստիճանական ավելացմանը զուգահեռ աճեց նաև արտահանումը և արդեն 1914թ. կազմեց 23.000 տոննա: Իրական հնարավորություններ կային Կիլիկիայում հացահատիկային մշակությունների արտադրությունը 150.000 տոննայից հասցնել 1.800.000 տոննայի²:

Երկրամասում գյուղատնտեսական աշխատանքներում զբաղված էր բնակչության մոտ կեսը՝ 450.000 մարդ:

Երկրագործության զարգացումն առաջ քաշեց գյուղատնտեսության մեքենայացման հրամայականը: Մեքենաներ և սարքավորումներ էին ներմուծվում Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, մասամբ՝ Ռուսաստանից: Շ.Աշարի տեղեկության համաձայն՝ այդ գործի հիմնական կազմակերպիչը ոմն Լուիֆալլահի դեկավարած կազմակերպությունն էր: Թուրքիայում Բելգիայի գլխավոր հյուպատոս Ռոբերտ Շնեյդավերը նշում է, որ 1913թ. Կիլիկիայում կար 100 կալսիչ մեքենա, 1800 խոտհունձի մեքենա, 50 շոգեգութան: Միայն Լուիֆալլահի կազմակերպությունը Կիլիկիա էր ներմուծել 26 շոգեգութան, 2 շոգեշարժ /լոկոմոբիլ/, 96 կալսիչ մեքենա, 1 անգլիական, 1 ամերիկյան տրակտոր և այլն: Ներմուծված մեքենաների 89%-ը անգլիական էին, 10%-ը՝ ամերիկյան, 1%-ը՝ գերմանական³: Յո. Լեփսիուսի վկայությամբ՝ մեքենաներ էին ներմուծել և հայերը⁴:

Անդրադաժնայով Կիլիկիայում գյուղատնտեսության վիճակին՝ «Բյուրակն» շաբաթաթերթն արձանագրել է. «Ատանայի լայնածավալ դաշտորենին մեջ 150 քմ. երկարության և 40 քմ. լայնության միջին տարածության վրա 50-60 մեծ կալի մեքենաներ օրը 850-900 թոնո ապրանք կարտադրեն»⁵:

¹ Supple'ment a' „1' Asie Franc aise,, , Numero de juillet – aout 1922. Documents Economiques, Politiques et Scientifiques. Publie par „1' Asie Francaise,, N 4. Notes sur la Cilicie. Notes sur la Syrie, par L. Achard/այստեղծել: Notes sur la Cilicie/, Paris, 1922. p.72.

² Նույն տեղում, էջ 71:

³ Նույն տեղում, էջ 76-78:

⁴ Յո. Լեփսիուս, Հայաստանի ջարդերը, Կ. Պոլիս, 1919, էջ 258:

⁵ Բյուրակն, 1906, N19, էջ 453:

Գյուղատնտեսության զարգացումն ապահովելու և այդ ճանապարհով արտաքին շուկա դուրս գալու միտումով ստեղծվել էին երկրագործական բարձրագույն դպրոցներ: Դա կարևոր էր կադրերի պատրաստման, գիտատեխնիկական առաջադիմության նվաճումներն արտադրության ոլորտ ներդնելու առումով:

Շուկայական հարաբերությունների աստիճանական զարգացման, արտաքին և ներքին շուկայի պահանջարկի աճի ներքո տեղի էր ունենում գյուղատնտեսության մասնագիտացում: Դաշտային Կիլիկիան մասնագիտացել էր հացահատիկային և տեխնիկական կուլտուրաների մշակությամբ, որը համարյա ամբողջությամբ գտնվում էր հայերի և հույների ձեռքում՝ որպես առավել հմուտ հողագործների: Ծխախոտի մշակությունը հիմնականում տեղայնացված էր Չաքալ Դերեյում՝ Միսիսի և Ջիհանի միջև¹:

Խաղողագործությունն առավելապես զարգացած էր Ջեյթունում, Տարսունում, Միսիսում, Սուում, մասամբ՝ Ադանայի հարթավայրում: Նշված շրջաններում զբաղվում էին նաև ձիթենիների մշակությամբ:

Ցիտրուսային կուլտուրաների մշակությամբ մասնագիտացել էր Լեռնային Կիլիկիան: Մասնավորապես նարնջի մշակությունը տարածված էր Դյորթ-Յուլի շրջանում: Ֆրանսիացի տնտեսագետ Շ.Աշարի հավաստմամբ՝ այդ կուլտուրան հայերի մենաշնորհն էր: Մեկ հեկտար տարածության վրա միջին հաշվով աճում էր նարնջի 175 ծառ: 1913-1914թթ. Այասի փոքրիկ նավահանգստով արտահանվել էր 350.000 արկղ նարնջ (70%-ը՝ Ռուսաստան, մնացածը՝ Ռումինիա և Բուլղարիա)²:

Այգեգործությունը ևս զարգացած էր Լեռնային Կիլիկիայում: Տարածված էր կեռասենու, խնձորենու, թթենու, դեղձենու, սալորենու, տանձենու մշակությունը:

Բացի Ադանայի հարուստ և բերքառատ դաշտավայրից, Կիլիկիայի այլ վայրերում երկրագործությունն առանձին զարգացմամբ աչքի չի ընկել: Բացառություն էր Իսլահիեի սարահարթը, որն ուներ 177.000 հա. բերրի հողատարածություն³:

Շուկայական արտադրահարաբերությունների զարգացումն առավել շուշափելի էր արդյունաբերության մեջ: Արդյունաբերական ձեռնարկությունների մոտ 50%-ը պատկանում էր հույն գործարարներին, 26%-ը գտնվում էր հայերի ձեռքում, հրեաներն ու լևանտացիներն իրականացնում էին արտադրության 10%-ը, իսկ թուրքերը՝ 12%-ը⁴:

Բարձր զարգացման էր հասել ծխախոտագործությունը, որի նկատմամբ առանձնահատուկ հետաքրքրություն էին ցուցաբերում ֆրանսիացի արդյունաբերողները: Նրանք հիմնել էին «Օսմանյան կայսրության ծխախոտագործական

¹ Notes sur la Cilicie, p.73.

² Նույն տեղում, էջ 73-75:

³ Supplément a` «L' Asie Française», Numero de decembre 1921. Documents Economiques, Politiques et Scientifiques. Publie` par «L' Asie Française», N1. Que Vaut la Syrie, par Paul Huvelin /այստիես/ Que Vaut la Syrie/, Paris, 1921, p.7 .

⁴ Ինժեկյան Հ.Գ. նշվ.աշխ, էջ.253 :

ծեռնարկությունների վարչություն» ընկերությունը, որի ավելի քան 40 միլիոն ֆրանկ դրամագլխի 50%-ը պատկանում էր ֆրանսիական բանկիրներին: Ծխախոտը բացառապես արտադրվում էր Կիլիկիայի և Սիրիայի հուճքի հաշվին:

Արդյունաբերության մեջ առաջնակարգ տեղ էր գրավում տեքսիլ արտադրությունը: Դարեվերջին, ըստ «Բյուզանդիոնի», 6000 բանվոր-բանվորուհիներ Այնթապում զբաղվում էին մանուսայի արտադրությամբ:¹ Հայկական ծեռագործի լավագույն ավանդույթներով հռչակվել էր «Զարիֆե» ծեռնարկությունը, որն իր արտադրանքի համար սպառման շուկա էր ապահովել մույնիսկ ԱՄՆ-ում: Հայելալում Մեծ Բրիտանիայի հյուպատոս Կատոնին նշում է, որ մետաքսե արտադրանքով, «Ալազյազ» անունով հայտնի մետաքսյա և բամբակյա միահյուսվածքով մեծ ճանաչում էին ձեռք բերել Այնթապի և Մարաշի հայ վարպետները: Մետաքսագործ հայտնի վարպետ էր Սերոբ անունով մի հայ դերձակ, որը 1905 թվականին Փարիզում կազմակերպված ցուցահանդեսում արժանացել էր հատուկ պատվոգրի:²

Կիլիկիայում ընդհանրապես արդյունբերական, մասնավորապես՝ բամբակագործական և տեքստիլ արտադրության խոշոր կենտրոնն Ադանան էր, որի 66000 բնակիչներից 22000-ը հայեր էին: Բամբակի զտման և մանածագործական ծեռնարկություններում, տեքստիլ արտադրությունում աշխատում էին հիմնականում հայերը: Բամբակագործական խոշոր ծեռնարկություն էր հիմնադրել ազգությամբ հույն թրիփանին, որին հուճքը ամբողջությամբ մատակարարվում էր հայերի կողմից:

19-րդ դարավերջին Կիլիկիո վարչական կենտրոնում գործում էր բամբակի մշակության 7 գործարան:³

Երկրամասի արդյունաբերական և արհեստագործական կարևոր կենտրոններից էր Հաճըն քաղաքը, որն ունեն 20000-ից ավելի հայ ազգաբնակչություն: Կաշեգործական և ատաղձագործական փոքրիկ ծեռնարկություններ էին հիմնել Տկիրյանները, Սողնայանները, Քեշիշյանները, Էլիսանյանները, որոնց արտադրանքը վաճառահանվում էր Կեսարիայում և հարակից այլ նահանգներում:

Դարասկզբին Հաճընում զարգանում է ծեռագործի արտադրությունը: 1909 թվականին ծեռագործի գործարան է բացում Հակոբ Քեշիշյանը՝ աշխատանքով ապահովվելով մոտ 400 երիտասարդ կանանց և աղջիկների, որոնց արտադրանքը արտահանվում էր ԱՄՆ, Ֆրանսիա և այլուր: Նույն թվականին գորգագործական արհեստանոցներ էին հիմնել Մանիսաճյանները և անգլիական արևելյան գորգագործական ընկերությունը:⁴

¹ Տե՛ս նույն տեղում, էջ.192 :

² Diplomatic and Consular Reports. Turkey. Report for the year 1908 on the Trade and Commerce of the Vilayet of Aleppo.

Reference to the Previos Report, Annual Series N 4061, June.1909, London (այսուհետև՝ Diplomatic and Consular Reports...) p.3.

³ Էփրիկյան Հ.Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ քառաբան, Վենետիկ, Ս.Ղազար, 1900թ., էջ133:

⁴ Պողոսյան Հ.Պ., Հաճընի ընդհանուր պատմությունը, Լոս-Անջելոս, 1942, էջ169-171:

Կիլիկիայի տնտեսական կյանքում որոշակի դեր էր կատարում նաև Մա-
րաշը, որտեղ առավելապես զարգացած էին կահույքագործությունը, ոսկերչու-
թյունը:¹

Ինչպես արդեն նշել ենք, Կիլիկիան, շնորհիվ իր աշխարհագրական
դիրքի, բացառիկ նշանակություն ուներ Թուրքիայի արտաքին առևտրում: Ընդա-
մին, բազմաթիվ աղբյուրների վկայությամբ, այդ բնագավառում վճռորոշ դերը
պատկանում էր հայերին: Այսպես, ինչպես գրում է ռուս լրագրողուհի Ա.Տիրկո-
վան՝ «Եթե նոր ծնվող արդյունաբերական ձեռնարկություններն ու բանկերը տնո-
րինում են հույները, ապա հայերը վարում են առևտրական գործերը»:² Յ.Ֆիրք-
յուխերի վկայությամբ՝ «Ողջ երկրով մեկ, ընդհուպ մինչև Սիրիա և Պաղեստին,
առևտուրը գտնվում էր հայերի ձեռքում... Հայերը կամուրջ են ձգել դեպի եվրո-
պական առաջընթաց: Դա, բնականաբար, նրանց առևտրական ձեռներեցության
արդյունքն էր»:³ Բավական է նշել, որ օսմանյան ներմուծող առևտրի 60%-ը, ար-
տահանման 40%-ը և ներքին առևտրի 80%-ը կատարվում հայ առևտրական գոր-
ծարարների միջոցով:⁴

Երկրի տնտեսական շրջաններն իրար կապելու, առևտրի զարգացման,
ներքին շուկայի ձևավորման համար երիցս կարևոր էր երկաթուղային շինարա-
րությունը, որին զարկ տրվեց 1890-ական թթ.: Կիլիկիայով էր անցնում Բեռլին-
Բաղդադ երկաթուղու մի զգալի հատվածը, որի գլխավոր գծից, համապատաս-
խան պայմանագրեր կնքելով Բ.Պան հետ, նոր ուղղություններ անցկացրեցին
Ֆրանսիական և գերմանական ընկերությունները: Արդեն 1913թ. երկաթուղային
ցանցով միմյանց կապված էին Ադանան, Էրեզլին, Մերսինը, Հալեպը, Ալեքսանդ-
րետը, Բեյրութը և այլն⁵:

Ռազմավարական նշանակություն ունեցող երկաթուղու շինարարությու-
նը տեղի էր ունենում նաև առևտրի հրամայականով, քանզի հաղորդակցության
նոր ուղիները հնարավորություն էին ընձեռում ապրանքը տեղ հասցնել ժամա-
նակին, առանց ուշացումների և կորուստների:

Միջերկրածովյան Թուրքիայի արտաքին առևտրի մի զգալի մասը իրա-
կանանում էր Կիլիկիայի Մերսին և Ալեքսանդրետ նավահանգիստներով: Օսման-
յան Թուրքիայի տնտեսությանը նվիրված աշխատությունում ռուս պատմաբան
Ա. Նովիչևը նշում է առևտրի բնագավառում հայերի գրաված հեղինակավոր դիր-
քի մասին. «Մի քանի հայ առևտրականներ դառնում էին, այսպես կոչված մեծ
տերություններ, պատվավոր առևտրականներ և իրենց առևտրում օգտվում էին
կապիտուլյանտական իրավունքներից»: Նրա հավաստմամբ՝ Կիլիկիայում
գլխավորապես հայերի ձեռքում էր գտնվում երկաթի, տնտեսական ապրանքնե-

¹ Գոստույան Գ.Գ., Կիլիկյան աշխարհագրություն, Կ.Պոլիս, 1922, էջ 29:

² Търкова А., Старая Турция и младотурки, П.гр., 1916, с.131.

³ Фиркхер, Г., Амения, 1915. Уничтожение Турцией культурного народа, Ереван, 1991, с.35.

⁴ Guttman J. The beginnings of Genocide, New-York, 1948, p.13.

⁵ Архив Внешней Политики России, ф. Политархив, Азиатский департамент, г. 1900, л.997, л.217. См. также Earle Edward M., Turkey. The Great Powers and the Bagdad Railway, New-York, 1966, p.16-22, 147-149.

րի, մանուֆակտուրային արտադրության արտաքին առևտուրը, իսկ հրեաները հիմնականում զբաղվում էին արդուզարդի ապրանքների վաճառքով¹:

Թուրքիայի արտաքին առևտրում առաջին տեղը զբաղեցնում էր Անգլիան, որի առևտրի նշանակալից մասն իրականացվում էր Ալեքսանդրետի նավահանգստի միջոցով: Միայն 1890թ. մարտի 1-ից մինչև 1891թ. փետրվարի 28-ը Ալեքսանդրետում խարխիս են նետել անգլիական 69 շոգենավ, ֆրանսիական 65, եգիպտական 55, թուրքական 51 շոգենավ և 215 առաքատանավ, ռուսական 24 շոգենավ և այլն²:

Ալեքսանդրետի նավահանգստով արտահանվում էին (Ֆրանսիա, Իտալիա, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Ավստրիա, Յունաստան) բուրդ, ծեռագործ, արմտիքներ, գլխոտր, պիստակ, նուռ, պղինձ, բամբակ, խեժ, քունջութ, շինավայր, ծխախոտ, մեղրամոմ և այլն, ներմուծվում բամբակե գործվածքներ, դեղորայք, լեղակ, մետաքս, շաքար, սուրճ, կապար, անագ, ցինկ, թուղթ, ապակի և այլն: Միայն 1891թ. կատարվել է 24 մլն. 157.975 ֆրանկ ապրանքի արտահանում և 43 մլն. 622.070 ֆրանկ ապրանքի ներմուծում³:

1908թ. Կիլիկիայից և Սիրիայից Ալեքսանդրետի նավահանգստով արտահանվել է 1686տ. բամբակ (62.690 ֆունտ ստեռլինգ), 2240 տ. բուրդ (137.900 ֆունտ ստեռլինգ), 1688 տ. քունջութ, ծիտապտուղ, մանանեխ և այլն, հիմնականում Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Բելգիա և Իտալիա: Տարիների ընթացքում արտահանումն անշեղորեն աճում էր, որն արդյունք էր արտաքին շուկայում տվյալ ապրանքատեսակի պահանջարկի և արտադրության ծավալի աճի⁴:

1890-ական թթ. Կիլիկիայի արտահանման և ներմուծման կարևոր կենտրոն դարձավ Մերսին նավահանգիստը, որով իրականացվող առևտրի զգալի մասը վերահսկում էր հույն հայտնի վաճառական Մավրոմատին, որի հարստությունը բավարար էր «ամբողջ Կիլիկիան փողով գնելու»⁵:

1913 թ. Մերսինի նավահանգստով Կիլիկիա էր ներմուծվել 45.667 տոննա ապրանք: Նույն թվականին միայն Ադանայի վիլայեթից Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, Իտալիա, ԱՄՆ, Գերմանիա, Ավստրիա, Կիպրոս և Եգիպտոս արտահանվել էր 102 հազար տոննա ապրանք, որը վկայում է երկրամասի տնտեսական հզորության մասին:

Չարկ ենք համարում նշել, որ մեծ տեղություններին (Ֆրանսիա, Գերմանիա, Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Ավստրո-Յունգարիա) պատկանում էր Օսմանյան կայսրության արտաքին առևտրի 71,9%-ը (ներմուծման 71,5%, արտահանման 70,9%): Բացառությամբ Ֆրանսիայի՝ մյուս երկրները Թուրքիայում ակտիվ հաշվեկշիռ ունեին. նրանց կողմից իրականացվող ներմուծումը գերազանցում էր արտահանմանը:⁶

¹ Stb' Новичев А. Д., նշվ. աշխ.:

² Էփրիկյան Հ.Ս., նշվ. աշխ., էջ 47:

³ Նույն տեղում:

⁴ Diplomatic and Consular Reports, p.5-11.

⁵ Կիլիկիա..., էջ 222:

⁶ Новичев А.Д., указ. соч., с.180.

Սա ևս խորացնում էր Թուրքիայի կածվածությունը եվրոպական երկրներից, արագացնում նրա վերածվելը կիսազաղութի: Սկսվել էր Օսմանյան տերության մասնատումը, հանուն որի եվրոպան օգտագործում էր հնարավոր ամեն միջոց՝ ֆինանսական ներդրումներ, տնտեսական պայմանագրերի կնքում, տարբեր շրջանների հումքի աղբյուրների շահագործման իրավունք, երկաթուղային շինարարություն և այլն՝ ձգտելով Թուրքիայում հաստատվել նախ՝ տնտեսապես, ապա՝ քաղաքականապես: Հանուն այդ նպատակի մեծ տերությունները բազմիցս օգտագործել էին օսմանյան լծի ներքո հեծվող ժողովուրդների, նաև հայերի ազգային ազատագրական շարժումները՝ դրանք ծառայեցնելով իրենց տնտեսական և քաղաքական շահերին: Մասնավորապես՝ ֆրանսիական ծավալապաշտության ուշադրության բևեռում էր գտնվում ռազմավարական և տնտեսական հսկայական կարևորություն ունեցող Կիլիկիան, որի տիրապետումը կխթաներ իր տնտեսական զարգացումը և հնարավորություն կընձեռներ ռազմականապես վերահսկել միջերկրածովյան և Մերձավոր Արևելքի մի շարք շրջաններ, այն դարձնել հենակետ հետագա առաջխաղացման համար: Ուստի զարմանալի չէ, որ Կիլիկիայում և Սիրիայում սուր կերպով դրսևորվեցին մեծ տերությունների հակամարտությունները, երբ իրար բախվեցին Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի շահերը:

Օսմանյան կայսրությունում տիրապետող տնտեսական հարաբերությունները որոշակի և էական փոփոխությունների չենթարկվեցին և 1908թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո: Երիտթուրքները հետապնդում էին երկիրը քաղաքականապես և տնտեսապես ժամանակակից դարձնելու նպատակ, գլխավորապես՝ ըստ անգլիական և ֆրանսիական փորձի: Բայց թուրք գործարարները չունեին տնտեսական համապատասխան գիտելիքներ, տնտեսության կառավարման անհրաժեշտ փորձ, միջոցներ և կամա թե ակամա հարկադրված էին ընդունել օտարերկրյա դրամագլխի ներդրումները, որով ավելի էր խորանում Թուրքիայի տնտեսական, հետևաբար և քաղաքական կախվածությունը:

1908-1914 թթ. տնտեսական ճնշումները և հարստահարումներն է՛լ ավելի դաժան բնույթ ստացան: Հողային հարցում երիտթուրքերի վարած քաղաքականությունը խորացրեց և արագացրեց Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների տնտեսական քայքայումը: Իրավական ուժ էին ստանում նախկինում և այժմ հայերից հողերի բռնազավթումները:

Երիտթուրքները փորձեցին զարկ տալ գյուղատնտեսությանը: Այդ նպատակով 1914 թ. մարտին ընդունված օրենքով իրավունք տրվեց վաճառել, գրավ դնել կամ վարձակալության հանձնել հողատարածությունները: Դա կարող էր նոր լիցք հաղորդել գյուղում շուկայական հարաբերությունների զարգացմանը, բայց, ինչպես իրավագիտորեն նշել է Ա.Համբարյանը, «դրանք իթթիհատական կառավարության անվճռականության, իսկ հետո նաև առաջին համաշխարհային պատերազմի պատճառով մնացին հիմնականում թրթի վրա»:¹

¹ Համբարյան Ա.Ս., Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979, էջ 50:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՏԻՍՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԿԱՄՎՈՐԱԿԱՆ ԸՄՐԺՈՒՄԸ

Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուց երեք ամիս անց՝ 1914թ. հոկտեմբերի 19-ին բացվեց պատերազմի ռուս-թուրքական ճակատը: Հայ ժողովուրդը ակտիվորեն մասնակցեց պատերազմական գործողություններին, ինչը պայմանավորված էր Արևմտյան Հայաստանն ազատագրելու վաղեմի բաղձանքով: Ալեքսանդր Խատիսյանը այդ մասին գրում է. «Խայ ժողովուրդը գիտեր իր անելիքը», ապա շարունակում. «Նախքան տաճկական պատերազմի հռչակումը ռուս իշխանության և հայ ժողովրդի միջև տեղի կունենային բանակցություններ: Հայտնի են այդ մասին փոխարքայի և կաթողիկոսի նամակները: Խնդիր կվերաբերեր հայ կամավորական շարժման»¹: Ռուսական իշխանությունների վերաբերմունքի լուսաբանման առումով բնորոշ է փոխարքա, կոմս Վորոնցով-Դաշկովի պատասխան նամակը Ամենայն Հայոց կաթողիկոսի դիմումին՝ գրված 1914թ. սեպտեմբերի 2-ին: Փոխարքան գրում էր. «Խնդրում են Ձեր բարձր հեղինակությամբ ներգործեց Ձեր հոտի վրա, որպեսզի մեր (Ռուսաստանի-Ս.Ս.) և արտասահմանի հայերը ամեն թույլ պատրաստ լինեն Թուրքիայի դեմ պատերազմի դեպքում կատարելու այն հանձնարարությունները, որոնք ժամանակի թելադրանքով ես Ձեզ կներկայացնեմ»²:

Մինչ բուն կամավորական շարժման մեջ Ալ.Խատիսյանի գործունեությանն անդրադառնալը, անհրաժեշտ ենք գտնում չհամաձայնվել նրա հուշագրության մեջ տեղ գտած այն կարծիքին, թե «հայերը ... կուզեին պատերազմ»³: Մի քանի հազար հոգուց բաղկացած կամավորական խմբերի առկայությունը հիմք չի տալիս նման կարծիքի համար: Ոչ մի ժողովուրդ պատերազմ չի ցանկանում, առավել ևս հայ ժողովուրդը, որի երկու հատվածները, իրենց կամքից անկախ, հայտնվել էին հակամարտ ռազմաքաղաքական ուժերի վարչատարածքային ենթակայության ներքո: Թերևս Ալ.Խատիսյանին պետք է հասկանալ այն իմաստով, որ Ռուսաստանի հաղթանակը պատերազմում կազատագրեր արևմտահայերին թուրքական արյունարբու լծից: Հավանական է, որ Արևմտյան Հայաստանի ազատագրումը որոշ հայ գործիչներ ու խմբավորումներ տեսնում էին ռուսական զենքի հաղթանակի

¹ Խատիսյան Ալ., Քաղաքապետի մը հիշատակները, «Հայրենիք» ամսագիր, 1932, N12, էջ 155:

² ՀՀ ՀԶԿԳ ԿՊԱ, ֆ.4056, ց.1, գ.15, ք.1:

³ Խատիսյան Ալ., նշվ. աշխ. «Հայրենիք» ամսագիր, 1932թ., N11, էջ125:

մեջ: Սակայն դժվար է պնդել, թե նման մտայնությունը համակել էր ողջ հայ ժողովրդին:

Տակավին 1912թ. ընթացող Բալկանյան պատերազմի պայմաններում հայկական հարցի արծածման նպատակով՝ Թիֆլիսում ստեղծվել էր Հայկական Կենտրոնական ազգային բյուրո: Բյուրոյի կազմում ընդգրկված էին յոթ հասարակական գործիչներ՝ Ա.Հարությունյան, Ալ.Խատիսյան, Ա.Քալանթար, Հ.Առաքելյան, Ա.Պողոսյան, Հ.Թումանյան, Ն.Աղբալյան:¹ Այնուհետև այդ կազմն ընդլայնվեց՝ Լեո, Խ.Աֆրիկյան, Հ.Արղության, Ա.Աբեղյան, Գ.Խատիսյան, Ստ.Լիսիցյան, Հ.Խունուց, Հ.Ապենդիարյան, Ս.Կյուլպենկյան և ուրիշներ:² Ազգային բյուրոյի նախագահ է ընտրվում Ա.Հարությունյանը, փոխնախագահ՝ Ալ.Խատիսյանը: Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (Մագիստրոսը) ընտրվում է բյուրոյի պատվավոր նախագահ: Բնականաբար, բոլոր ազգային-քաղաքական ու հասարակական խնդիրները քննարկվում և լուծվումներ էին ստանում Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ համաձայնեցված:

Համաշխարհային պատերազմի սկզբում Ազգային բյուրոն առաջնահերթ խնդիր ուներ կազմակերպելու կամավորական խմբեր՝ ռուս-թուրքական ռազմաճակատում բանակին աջակցելու, ռազմական գործողություններին մասնակցելու նպատակով: Այդ կապակցությամբ բյուրոն իր կազմում ստեղծում է գործադիր մարմին, որի հիմնական անդամներն էին Մեսրոպ Եպիսկոպոսը, Ա.Հարությունյանը, Հ.Խունուցը, Ա.Խատիսյանը, բժիշկ Դ.Չավոկիյանը:³ Գործադիր մարմնի անդամները զաղտնի բանակցություններ էին վարում կառավարության հետ, խիստ անհրաժեշտ աշխատանքներ տանում կամավորական խմբերի համար:⁴ Գործադիր մարմնից Ալ.Խատիսյանը Ազգային բյուրոյի ներկայացուցիչն էր ռուս զինվորական իշխանության մոտ, կամավորական շարժման առնչվող բոլոր հարցերի քննարկումներն ու լուծումները նրան էր վստահված. «...որպես Ազգային բյուրոյի ներկայացուցիչ, որը կվարեր կամավորական գործերը, ես անձամբ կբանակցեի ռուս իշխանության մոտ, կամավորական խումբերուն վերաբերող բոլոր խնդիրներու մասին»:⁵ Բացի այդ, նա էր իրականացնում Ազգային բյուրոյի և փոխարքայի անմիջական կապը: Խատիսյանը վայելում էր Վորոնցով-Դաշկովի վստահությունը:

Ալ.Խատիսյանն այսպիսով դառնում է Հայոց ազգային բյուրոյի հիմնադիր անդամներից մեկը և բյուրոյի գործունեության նշանակալից բնագավառներից մեկի իրական ղեկավարն՝ ընդհուպ մինչև 1917թ. հոկտեմբերը, երբ բյուրոն դադարեց գործելուց ու դարձյալ Թիֆլիսում հիմնադրվեց Հայոց

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.5, գ.28: Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925թ., էջ245: Գ.Լազյան, Հայաստան և հայ դատ, Երևան, 1951, էջ154:

² «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1981, հատ.6, էջ 547: «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996թ., էջ11:

³ Լեո, նշվ.աշխ., էջ.296-297:

⁴ Նույն տեղում:

⁵ Խատիսյան Ալ., Քաղաքապետի մը հիշատակները, «Հայրենիք» ամսագիր, 1932թ., N12, էջ 155:

Ազգային խորհուրդը: Բնականաբար հասկանալի է թիֆլիսի հայ քաղաքագլխի դերը, որն ի պաշտոնն հնարավորություններ ուներ իր բարձր դիրքն ու Անդրկովկասի հայ բնակչության նյութական, հոգևոր ու մարդկային կարելիություններն ի սպաս դնել համազգային խնդիրների լուծման գործին: Մանավանդ, եթե նկատի ունենանք, որ 1914թ. սեպտեմբերի 8-ին Կովկասի 44 քաղաքների ներկայացուցիչների համաժողովում նա ընտրվեց Համառուսաստանյան քաղաքների միության Կովկասյան բաժանմունքի նախագահ և հանդիսացավ այդ միության անփոփոջ նախագահը՝ մինչև 1918թ.: Միության նպատակն էր Կովկասյան քաղաքների նյութական պաշարերը ծառայեցնել պատերազմի մեջ գտնվող Ռուսաստանին, նպաստել բանակի հաջողություններին¹: Վերոհիշյալ հանգամանքները ցույց են տալիս Ալ.Խատիսյանի լիազորությունները, իրավասության շրջանակները և այն ծանր ու դժվարին պատասխանատվությունը, որ կրում էր նա իբրև պետական պաշտոնյա, ազգային քաղաքական ու հասարակական գործիչ, հայրենասեր, ազգային դիմագիծ ունեցող հայ մարդ, որն իր բոլոր հնարավորությունները, կարողությունները կարող է ծառայեցնել համազգային խնդիրների լուծման գործին: Այդ բանն առանձնապես ակնառու դարձավ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ կամավորական շարժման կազմակերպական շրջանում:

Պատերազմի առաջին իսկ օրերից կամավորական շարժման հարցը գտնվում էր Ալ.Խատիսյանի գործունեության կիզակետում: Եվ քանի որ շարժման կազմակերպչական կենտրոնատեղին գտնվում էր Թիֆլիսում, ապա պարզ է, թե որքան կարևոր էր Թիֆլիսի քաղաքագլխի դերը: Ս.Վրացյանն իրավամբ գրում էր, որ Ալ. Խատիսյանը կամավորական զնդերի կազմակերպման նախաձեռնողներից մեկն էր²:

Նախքան պատերազմի սկսվելը, կատարվեցին ճշտումներ՝ զինվորական իշխանությունների և հայ ազգային կազմակերպությունների փոխհարաբերություններում, ձեռնարկվեցին որոշ քայլեր: Այսպես, իշխանությունների առաջարկությամբ Ալ.Խատիսյանը կազմում է բանտերում ու աքսորավայրերում գտնվող այն հայ հեղափոխականների ցուցակը, որոնք կարող են ընդգրկվել կամավորական խմբերում: Այդ ցուցակի համաձայն բանտերից ու աքսորավայրերից ազատ են արձակվում մի շարք գործիչներ³: Իշխանություններն առաջարկում են այնուհետև ահաբեկիչ ուղարկել Թուրքիա՝ էնվեր փաշային սպանելու նպատակով: Այս առաջարկությունը մերժվում է⁴:

Փոխարքա Վրոնցով-Դաշկովի և Ալ.Խատիսյանի փոխադարձ համաձայնությամբ ու նախաձեռնությամբ Թիֆլիսում 1914թ. սեպտեմբերին կայանում է Կովկասյան օկրուգի շտաբի ու Հայոց ազգային բյուրոյի ներկայացուցիչների առաջին համատեղ նիստը: Նիստում ճշտվում է կամավորական ջո-

¹ Хатисов А.И., Краткий обзор деятельности Кавказского отдела Всероссийского Союза городов, Тифлис, 1916.

² Խատիսյան Ալ., նշվ. աշխ., էջ 12:

³ Խատիսյան Ալ., նշվ. աշխ., էջ 156:

⁴ Նույն տեղում:

կատների թիվը, կամավորների քանակը, կազմվում է սպառազինության ու հանդերձանքի հետ կապված ծախսերի նախահաշիվ:
Որպես առաջին վճարում Ալ.Խատիսյանին հատկացվում է 245 000ռուբ.¹ բյուրոյի միջոցով հազուսուտ ու կոշիկ ձեռք բերելու համար՝ համապատասխան փաստաթղթերի ձևակերպմամբ: Ամբողջ գրագրությունը, ինչպես նշում է Ալ.Խատիսյանը, շտաբի ու խմբերի միջև կատարվում էր իր միջոցով: Կամավորական խմբերի համալրման, նրանց սպառազինության և հանդերձանքի ապահովության հարցերի լուծումը նույնպես դրվում է նրա վրա²:

Փոխադարձ համաձայնությամբ նախ կազմվում է չորս խումբ, հրամանատարներ՝ Անդրանիկ, Դրո, Զամազասպ և Քեռի: Խմբերը ռազմաճակատ են մեկնում 1914թ. հոկտեմբերի 24-ին, նոյեմբերի 3-ին և 6-ին: Ապա 1915թ. ապրիլին կազմակերպվում է 5-րդ խումբը՝ Վարդանի հրամանատարությամբ, այնուհետև 6-րդ և 7-րդ խմբերը՝ Ավշարյանի և Արղությանի գլխավորությամբ: Ալ.Խատիսյանը մշտական կապի մեջ էր Կովկասյան ռազմական օկրուգի շտաբի, գործող բանակի, հրամանատարության, Ամենայն Դայոց կաթողիկոսի ու ազգային-հասարակական կազմակերպությունների հետ³: Այսպես, փաստաթղթերը վկայում են, որ նա միջնորդություն է հղել օկրուգի գլխավոր հրամանատարին՝ ռումինահայ և բուլղարահայ կամավորներին Անդրկովկաս փոխադրելու նպատակով, որոնց մուտքը՝ իբրև հակառակորդ երկրների քաղաքացիներ, չէր թույլատրվում⁴: Խատիսյանը երբեմն հանդես էր գալիս թարգմանչի, մեկնաբանի և ուղեկցողի դերում: 1914թ. ամռանը նա Անդրկովկաս այցելած Նիկոլայ II թագավորին մեծապատիվ ու բարձրաստիճան դիմավորողների թվում էր: Խատիսյանն ուղեկցում էր թագավորին վերավոր զինվորներին այցելության ժամանակ, իսկ Արամյան հիվանդանոցում, Խատիսյանը թագավորին ներկայացրեց վիրավոր Դրոյին: Դենց այդտեղ Նիկոլայ II-ը կամավորական 2-րդ ջոկատի հրամանատարին պարգևատրեց Գեորգևյան խաչով⁵:

1914թ. օգոստոսի 12-ին Անդրանիկը Բուլղարիայից եկավ Անդրկովկաս: Ալ.Խատիսյանը միջնորդ ու թարգմանիչ եղավ գորավարի ու փոխարքայի, բանակի հրամանատարության միջև⁶:

Կամավորական ջոկատների ֆինանսական միջոցները գոյանում էին կամավոր նվիրատվություններից ու պետական հատկացումներից: «Ամբողջ հայությունը կամավորներու օգտին հանգանակեց 1 440 000 ռուբ., որմե 1 021 000 ռուբ. տված են ռուսահայերը: Եվրոպյան տված է 423 000 ռուբ., որմե 342 հազարը Ամերիկյան: Եգիպտոսը հանգանակած է 55 հազար ռուբլի: Ռուս գանձարկըը հատկացուցած է 4 000 000 ռուբ.»⁶: Նվիրատվությունների

¹ Նույն տեղում, էջ 156-157:

² ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.5, գ.56, քք 49-83:

³ Կարապետյան Մ., Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում, Երևան, 1999, էջ 179-180:

⁴ Դրո, Երևան, 1991, էջ 34: Ալ.Խատիսյան, նշվ. աշխ., էջ 159:

⁵ Андрянн Озаян, Документы и материалы, Ереван, 1991, стр.133.

⁶ Խատիսյան Ալ., նշվ. աշխ., «Հայրենիք», 1932թ., N12, էջ 159:

թվում զգալի է Ամենայն Հայոց կաթողիկոսի բաժինը¹: Կաթողիկոսական դիվանը միջոցները փոխադրում էր Հայոց Ազգային բյուրոյի հասցեին՝ Ալ.Խատիսյանի տնօրինությամբ:

Կամավորների թվաքանակի մասին գոյություն ունեն տարբեր կարծիքներ: Հեղինակները նշում են 2500², 4500³, 5000⁴, 6000⁵, 8000⁶ և 10000⁷ մարդ: Ըստ կարգադրիչ մարմնի հաշվետվության, կազմված 1915թ. փետրվարի 15-ին, կազմավորման պահին կամավորների թիվը եղել է 2482, իսկ հաշվետվությունը ներկայացնելիս՝ 4500⁸ մարդ: Այս անհամապատասխանության պատճառը թերևս ջոկատների համալրման մշտական փոփոխությունն էր և կանոնավոր հաշվառման բացակայությունը: Սակայն հայրենիքի համար կռվել ցանկացողների թիվը եղել է անհամեմատ շատ:

Որպես Համառուսաստանյան քաղաքների միության Կովկասյան բաժանմունքի նախագահ, Ալ.Խատիսյանի վրա ծանր պարտականություն էր դրված՝ նյութական միջոցներ հավաքել՝ հիվանդանոցներ, բաղնիքներ, սննդի կետեր բացելու, համաճարակների դեմն առնելու, գաղթականներին օգնելու համար: Միության Կովկասյան բաժանմունքը պատերազմի ընթացքում բացել է 32 հազար մահճակալներով հիվանդանոցներ ու բուժկետեր⁹: Բաժանմունքը Ծննդյան տոների առթիվ զինվորներին, այդ թվում և կամավորներին, նվերներ էր պատրաստել¹⁰: Բաժանմունքի 19000 պաշտոնյաների երկու երրորդը հայեր էին: Այս կազմակերպության կառույցներում պաշտոնավարում էին Հ.Օհանջանյանը, Հ.Քաջազունին, Խ.Կարծիկյանը, Ռ.Տեր-Սիմոնյանը, բժիշկ Ա.Բաբայանը և ուրիշներ¹¹: Ալ.Խատիսյանի ուշադրության կենտրոնում են եղել հատկապես արևմտահայ գաղթականության խնդիրները, որոնց լուծման համար նա ջանք չի խնայել¹²:

Կամավորական ջոկատները մասնակցելով ռազմական գործողություններին, միշտ գտնվելով ռազմաճակատի առաջին գծում, ցուցաբերել են սիրազործության ու քաջության փայլուն օրինակներ: Այդ մասին առկա են ռուսական գործող զորամիավորումների հրամանատարներ Տրուխինի, Բարաթովի, Նիկոլակի, Հերոնզուրովի, Կուլեբյակինի և ուրիշների դրվատանքի ու գովեստի մի շարք կարծիքներ, որոնք պահվում են ՀՀ ՊԿՊԱ ֆոնդերում:

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.5, գ.56, ք.47-53:

² Արղամով Գ., «Հայերի մասնակցությունը առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ռազմաճակատում», Փարիզ, 1927, էջ 10 (ֆրանս.):

³ Լազյան Գ., Հայերը և հայ դատը. փաստաթղթեր, Կահիրե, 1946թ., էջ 186-193:

⁴ Арутюнян А., Кавказский фронт 1914-1917 гг., Ереван, 1971, стр. 297.

⁵ Խատիսյան Ալ., նշվ. աշխ., էջ 158:

⁶ Բանբեր Հայաստանի արխիվների, 1992թ., N1-2, էջ 81 (Արալյանի նւայթը):

⁷ Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 179-180:

⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.5, գ.87, ք.18-33; ֆ.288, ց.1, գ.7, ք.1-3:

⁹ Хатисов А., Краткий обзор деятельности Кавказского отдела Всероссийского союза городов, Тифлис, 1916г.

¹⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ.223, ց.1, գ.80, ք.16:

¹¹ «Հռիփրեք», 1945, 7 ապրիլի:

¹² Хатисов А., указ. соч, с.11.

Սակայն, ի սկզբանե ռուսական զինվորական բարձր խավը երկակի վերաբերմունք է ցուցաբերել կամավորական ջոկատների գործունեության նկատմամբ: Ընդ որում, պատերազմի երկրորդ փուլում, երբ Արևմտյան Հայաստանի մեծ մասն արդեն ազատագրված էր և հայ կամավորների գոյությունը դարձել էր ավելորդ ու կայսրության համար քաղաքականապես վտանգավոր: Կամավորական ջոկատների սխրագործությունների շուրջ ստեղծված լուրջությունը, ժամանակի մամուլում տեղ գտած անտարբերությունն ու անտեսումը ևս բացասական դրսևորումների վկայություններն են: Այդ կապակցությամբ իր դժգոհությունն է հայտնում նաև Ալ.Խատիսյանը: Շտաբի պետից 1915թ. մարտի 18-ին ստացած նամակում հաղորդվում էր, որ համապատասխան դրական կարգադրություն է արվել¹:

Կամավորական ջոկատները ցրելու համար որոշ զինվորականներ դիմում էին նույնիսկ զրպարտության ու կեղծիքի: Այդ առումով հատկանշական է հետևյալ միջադեպը. 1915թ. հունիսի 1-ին զորավար Նիկոլանի անունից Վանից հեռագիր է հղվում կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարին ու շտաբին կից հայոց ներկայացուցիչ Ալ.Խատիսյանին այն մասին, թե իբր հայ կամավորները կրակել են ռուս զինվորների վրա²: Խնդիրը տեղում պարզելու նպատակով Վան է մեկնում Ազգային բյուրոյի հանձնախումբը՝ բանաստեղծ Դ.Թումանյանի և իրավաբան Դ.Խունուցի կազմով³: Վան հասած հանձնախումբը զորավարից բացատրություն է պահանջում: Պարզվում է, որ զորավարը տեղյակ չէ հեռագրից ընդհանրապես⁴: Իսկ Ալ.Խատիսյանի այդ կապակցությամբ հղած հեռագրին հունիսի 15-ին պատասխանում է. «Ես, հետևելով իմ ենթակայության տակ գտնվող երեք հայկական ջոկատների գերազանց մարտական ծառայությանը, ինձ իրավունք եմ վերապահում կատեգորիկ հայտարարել, որ զանգվածային բացասական դրսևորումներ չեն նկատվել»⁵:

Ազգային բյուրոյի երեք ներկայացուցիչների՝ Մեսրոպ Եպիսկոպոսի, Ալ.Խատիսյանի և Ս.Հարությունյանի ստորագրությամբ 1915թ. հուլիսի 3-ին բացատրագիր է ներկայացվում փոխարքա Վորոնցով-Դաշկովին, բարձրագույն զինվորական հրամանատարությանը: Բացատրագիր-նամակում փաստերով հիմնավորվում է զորավար Նիկոլանի անունից տրված փաստաթղթի կեղծ լինելը, մերժվում է հայ ջոկատների վերաբերյալ կասկածները, մեղադրանքի (ռուս զինվորների վրա կրակել, բռնություններ քրդերի հանդեպ, թալան) անտեղի ու անարդար լինելը, ցավ ու ափսոսանք հայտնվում կամավորների շուրջ տիրող կասկածանքի ու խուլ լուրջյան մթնոլորտի համար⁶:

Կամավորական ջոկատների զինաթափումն ու ցրումն արդեն օրակարգի հարց էր դարձել: Այս պարագայում ևս Ալ.Խատիսյանը ջանում է օգտակար լինել և գործում էր ի նպաստ կամավորների: Վերջիններս մի մասը

¹ Խատիսյան Ալ., նշվ. աշխ., էջ160:

² ՀՀ ՊԿՊԱ, ֆ.43, ց.1, գ.83, ք.46:

³ Լեո, Ամցյալից, Թիֆլիս, 1925, էջ325: Խատիսյան Ալ., նշվ. աշխ., էջ160:

⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ.43, ց.1, գ.83, ք.46:

⁵ Նույն տեղում, ք.47:

⁶ Նույն տեղում, ֆ.43, ց.1, գ.83, ք.46-48:

մտավ ռուսական բանակի շարքերը և հետագայում դարձավ հայկական կորպուսի կորիզը, մյուս մասը՝ հատկապես օտարախապատակները, վերադարձան իրենց բնակավայրերը:

Մի շարք փաստաթղթեր վկայում են, որ Ալ.Խատիսյանն իրեն հատուկ եռանդով ու նվիրվածությամբ հնարավորինս լուծել է վերադարձողների ճանապարհածախսի, վիրավորների բուժման ու ապաքինման, շուրջ 700 զոհված կամավորների ընտանիքներին օգնելու հարցերը¹:

Ամփոփելով վերոշարադրյալը, կարելի է հաստատապես ասել, որ Ալ.Խատիսյանը կանգնած է եղել հայ կամավորական շարժման ակունքներում, գործում մասնակցություն է ունեցել կամավորական ջոկատների կազմակերպմանը, նպաստել նրանց գործունեությանը, ջանք չխնայելով պաշտպանելու վերջիններիս շահերը: Տարիներ անց նա սթափ գնահատական տվեց շարժմանը: Բացահայտելով շարժման բացասական կողմերը՝ դրանք են՝ ռազմական, զինվորական գործին անտեղյակ ու անվարժ լինելը, անբավարար սպառազինությունը, առանձին հրամանատարների և ռուս հրամանատարության միջև ծագած անհամաձայնությունը, որը լինում էր մեծ մասամբ խմբերի հրամանատարների պատճառով, նա գրում է, թե կամավորական շարժումը «մեր քաղաքական անկախության կորիզը դարձավ»²: Իսկ ջոկատների լուծարումից մեկ տարի անց, 1917թ. հոկտեմբերին Թիֆլիսում կայացած Հայոց ազգային համախորհրդակցությունում Ազգային խորհրդի անդամ Նիկոլ Աղբալյանը հանդես եկավ կամավորական ջոկատների վերաբերյալ համառոտ զեկուցումով. «Այդ շարժումով հայ ժողովուրդն ապրեց ամբողջ երեք տարի: Դա բարոյական վերածննդի տարեթիվ է հայ ազգի համար: 10 հազարանոց անձնվեր բանակ հանելը մեր նոր պատմության մեջ եզակի երևույթ է: Վերջին դարում, կորուվագուրկ հայ ժողովուրդը առաջին անգամն է այդքան մի մեծ կազմակերպված ուժ ու կորով ցուցադրում: Նախքան կամավորական շարժումը մենք ենթադրում էինք թե կար՞ող ենք պետականորեն կազմակերպվելու և պաշտպանվելու, իսկ հիմա մենք այդ բանի ապացույցն ունենք: Կամավորական շարժման մի շարք պակասությունները նսեմանում են այս դրական կողմերի առաջ: Իսկ մնացածը պատկանում է պատմությանը»³:

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ.56, ց.16, գ.610, քք.161-162; ֆ.57, ց.5, քք.49-53, քք.55-56 և այլն:

² Խատիսյան Ալ., նշվ. աշխ., էջ161:

³ Բանբեր Հայաստանի արխիվների, 1992, N1-2, էջ80-81:

ԼՈՌՈՒ ԵՎ ԱՆԽԱԼՔԱՆԱԹԻ ՀԱՐՅԸ 1919 Թ. ՀԱՅ-ՎՐԱՑԱ- ԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ

1918թ. մայիսին Անդրկովկասյան դաշնային հանրապետության քայքայու-
մից հետո ստեղծվեցին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի հանրապետություն-
ները: Շուտով նրանց միջև փոխհարաբերություններում առաջնային նշանակություն
ստացան տարածքային-սահմանային վեճերի կարգավորման հարցերը: Հայ-վրացա-
կան հարաբերությունների փորձաքարը դարձավ Լոռու և Ախալքալաքի պատկանե-
լության հարցը:

1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո, երբ բոլոր ըննարկումներ
էին ընթանում Անդրկովկասի վարչական նոր վերաբաժանման նախագծի շուրջ /Յեդ.
Ավ. Շահխաթունյան/, վրաց ազդեցիկ քաղաքական կուսակցությունները՝ սոցիալ-դե-
մոկրատ մենշևիկները և սոցիալիստ-ֆեդերալիստները համաձայնվել էին նախագծի
գլխավոր՝ ազգագրական սկզբունքի հետ, իսկ վիճելի՝ խառը բնակչություն ունեցող
տարածքների պատկանելության վերաբերյալ, առաջ էին քաշել համարձակի տարբե-
րակը¹: Այդ էր պատճառը, որ նրանք դեմ էին Բորչալուի գավառի հարավային հատ-
վածը /Լոռի/ և Ախալքալաքի գավառը Հայկական շրջանի մեջ ընդգրկելու առաջար-
կին²: Սակայն իշխանության գալուց հետո վրաց մենշևիկներն իրենց թիկունքում ու-
նենալով հզոր հովանավոր՝ Գերմանիան, ինչպես նաև, օգտվելով Վրաստանի համար
մի շարք նպաստավոր հանգամանքներից. հաղորդակցության միջոցներ, տնտեսա-
կան առավել կայուն իրավիճակ, պատերազմում առավել նվազ կորուստներ, հայ ազ-
գաբնակչության և զաղթականության հոծ զանգվածի առկայություն Վրաստանում, ոչ
միայն փոխեցին իրենց դիրքորոշումը և հիշյալ տարածքները հայտարարեցին Վրաս-
տանի մաս, այլև զինագրավեցին նաև Լոռու մի մասը³: Քանի որ Բաթումի պայմա-
նագրով Ախալքալաքն անցել էր Օսմանյան կայսրությանը, իսկ Բորչալուի հարավա-
յին հատվածը զինագրավված էր թուրքական զորքերի կողմից, ապա Լոռու և Ախալ-
քալաքի շուրջ հայ-վրացական հակամարտությունն այդքան էլ սրությամբ չէր դրված:

¹ Տե՛ս Шахатунян Ав., Административный передел Закавказского края, Тифлис 1918. ՀՀ
ՊԿՊԱ ֆ. 200, ց. 104, ք. 1-40, Армяно-грузинский вооруженный конфликт на основании
фактических данных и подлинных документов, Баку, 1918.

² 1917թ. վիճակագրական տվյալների համաձայն Ախալքալաքի գավառում բնակվում էր
107713 մարդ, որից հայեր՝ 82775 կամ 77,23 %, վրացիներ՝ 10305 կամ 9,61 %, Բորչալուի
հարավային հատվածում՝ Լոռու ընդհ. բնակչութ. 94215, հայեր՝ 64000 կամ 67,92 % և
վրացիները՝ 115 կամ 0,12 %: Տե՛ս Кавказский календарь на 1917, Тифлис 1916, стр. 191-
193, Armenia; political and ethnic boundaries /1878-1948/ London 1998, p. 488-489.

³ 1918թ. ամռանը վրաց-գերմանական միացյալ զինված ուժերը գրավեցին Բորչալուի
գավառում Վերոնցովկա-Ալեքսանդրովկա-Այդեբեկ-Քոբերի կիսակայարան-Քարինջ-
Ծաթեր գիծը, իսկ թուրքերը՝ Չորագետ գետի աջ կողմը՝ Նովո-Պոկրովկա, Ջալալօղլի-
Նիկոլակա-Գյաղգառ-Վարդարաբուր-Կուրթան, մինչև՝ Ալեքսանդրապոլ-Թիֆլիս
երկաթուղու 117-րդ վերստը՝ Քոբեր, Զյուլագիրաճ, Մարց և Լորուստ:

Կողմերը հարցը փորձում էին լուծել դիվանագիտական ճանապարհով: Սակայն պայմանավորված աշխարհաքաղաքական պայմանների փոփոխությամբ, մոտ 6 ամիս ընդմիջումներով ընթացած և որոշակի ռազմական հակագործողություններով ուղեկցվող բանակցությունները, հաջողություն չունեցան: Ավելին, վրացական կառավարության անգիջում և կարծր դիրքորոշումն ու հակահայկական քաղաքականությունը հանգեցրին նրան, որ պատերազմը դարձավ անխուսափելի¹:

1918թ. դեկտեմբերի 13-ին Դրոն ստացավ Լոռի-Փամբակը վրացական զորքերից մաքրելու հրաման: Պատերազմը, որ տևեց երկու շաբաթ, հաջողությամբ պսակվեց հայերի համար: Հայկական կանոնավոր զորքերը և Լոռվա հայ գյուղացիությունը մի քանի օրվա ընթացքում ազատագրեցին Բորչալուի գավառի գրեթե ամբողջ վիճելի տարածքը:

Հայկական կողմի հաջողությունները խառնաշփոթ իրավիճակ ստեղծեցին Թիֆլիսում: Վրաստանի կառավարությունն անվերապահորեն ընդունեց դաշնակիցների միջնորդությունը՝ պատերազմը դադարեցնելու վերաբերյալ, մանավանդ, որ վերջիններիս առաջարկն ավելի քան բարենպաստ էին Վրաստանի համար²: Դեկտեմբերի 25-ին բրիտանացի զեներալ Ռայկոֆթը, ֆրանսիացի գնդապետ Շարդինին և Վրաստանի Վարչապետ Ն. Ժորդանիան ստորագրեցին համաձայնագիր, որով պատերազմական գործողությունները պետք է դադարեցվեցին, իսկ անգլիացի և ֆրանսիացի սպաներից կազմված մի հանձնաժողով պետք է մեկներ ռազմաճակատ՝ բացատրելու համաձայնության մանրամասները և հսկելու դրանց իրականացումը: Համաձայնագրում նշված էր. «վրացական զորքերը պետք է մնան իրենց գրաված այժմյան գծի վրա, հայկական զորքերը պետք է մահանջեն Դսեղ-Ջալալօղլի թուրքական գիծը:

Վրացական և հայկական զորքերի գրաված տարածության միջև, երկաթուղու վրա կցտնվեն բրիտանական պահակներ, վարչությունն այս վիճելի վայրում կլինի խառը: Ախալքալաքի գավառի վարչության գործունեությունը հսկելու էին դաշնակիցների հանձնախումբը /հայ և մահմեդական բնակչության ներկայացուցիչներ/:

ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալյանը հրաժարվեց ստորագրել համաձայնագիրը, բողոքելով մասնավորապես Ախալքալաքին վերաբերող մասի դեմ: Ինչևէ, նույն օրը համաձայնագրի տեքստը հեռագրով հաղորդվեց Երևան, իսկ դաշնակիցների ներկայացուցիչներն էլ դեկտեմբերի 28-ին ժամանեցին Դարաքիլիսա և հայ հրամանատարությանը ներկայացրին այդ պահանջները: Հայերը բողոքեցին, բայց բրիտանացիների ճնշման տակ ստիպված տեղի տվեցին և դեկտեմբերի 31-ին ժամը 24-ին պատերազմն ավարտվեց:

¹Դիվանագիտական բանակցությունների և Վրաստանի կառավարության հակահայկական քաղաքականության մասին տե՛ս Իз истории армяно-грузинских отношений, 1918г., Тифлис 1919, Армяно-грузинский вооруженный конфликт. Ջամալյան Ա., Հայ-վրացական կնճիռը, Հայրենիք, 1928 հոկտեմբեր, էջ 131-132: Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան 1993, էջ 214-255:

²Նախքան պատերազմը, զեներալ Թոմսոնի պատվիրակ կապիտան Գրինը ևս հանդես եկավ միջնորդությամբ, որի պայմանները ավելի չեզոք էին և ընդունվեցին հայերի կողմից: Սակայն այս միջնորդությունն անհետևանք մնաց: Տե՛ս ՀՀ ԴԿՊԱ ֆ. 198, ց. 1, գ. 17, քք. 16-17:

Պատերազմի արդյունքներն ամփոփվեցին 1919թ. հունվարի 9-17-ը Թիֆլիսում դաշնակիցների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած հայ-վրացական խորհրդաժողովում¹: խորհրդաժողովում Մեծ Բրիտանիայի կողմից մասնակցում և նախագահում էր գնդապետ Ստյուարտը, ֆրանսիական կողմը ներկայացնում էին կապիտան Պուլապերթը և Թիֆլիսում ֆրանսիական հյուպատոս Դյուրուան: Հայկական պատվիրակությունը ներկայացնում էին Ս. Մամիկոնյանը /Նախ.Ս./, Ս. Խաչատրյանը, Գ. Տեր-Խաչատրյանը, Ա. Խոնդկարյանը, զինվորական խորհրդական զեներալ Ղորղանյանը և պատվիրակության քարտուղար Ա. Ահարոնյանը: Վրաստանը ներկայացնում էին արտգործնախարար Ե. Գեգեչկորին, ներքին գործերի նախարար Ն. Ռամիշվիլին, Վրաստանի զինված ուժերի հրամանատար զեներալ Գեդևանով և գնդապետ Ջավարիժեն²:

Բացելով խորհրդաժողովը՝ նախագահող գնդապետ Ստյուարտը հայտարարեց, որ պետք է քննարկվեն միայն այն հարցերը, որոնք կառաջարկվեն Վրաստանի արտգործնախարարի կողմից: Հայ պատվիրակների փորձերը՝ հաստատելու խորհրդաժողովի օրակարգը, հաջողություն չունեցան: Գեգեչկորին հայտարարեց, որ օրակարգը հաստատված է զինադադարի պայմանագրի տեքստում, և, որ վրացական կողմը լիազորություններ ունի միայն քննարկելու զինադադարի որոշ անհասկանալի կետեր: Համաձայնվելով վրացական կողմի հետ՝ գնդապետ Ստյուարտն առաջարկեց, որ քննության չառնվեն տնտեսական բնույթի հարցեր, այլ միայն վրացական և հայկական զորքերի տեղաբաշխման, դրանց քանակի, չեզոք սահմանների ու կառավարման հետ կապված խնդիրներ: Հենց սկզբից ակնհայտ էր դառնում, որ գոյություն ունի վրաց-բրիտանական համաձայնություն, ինչն էլ հաստատվեց խորհրդաժողովի աշխատանքների ժամանակ և նրա ընդունած որոշումներով:

Գնդապետ Ստյուարտը մերժեց զեներալ Ղորղանյանի առաջարկը՝ չեզոք գոտու սահմանները զինվորական հանձնաժողովի որոշմանը թողնելու կապակցությամբ: Անհետևանք մնացին նաև հայ պատվիրակների բողոքները, որ վրացական զորքերը պետք է գտնվեն այնտեղ, որտեղ որ գտնվում էին Վրաստանի կառավարության հետ զինադադարը ստորագրելու պահին, այսինքն՝ դեկտեմբերի 25-ին: Ստյուարտը հայտարարեց, որ չեզոք գոտու հյուսիսային սահմանը պետք է լինի այն գիծը, որ զբաղեցնում էին վրացական զորքերը դեկտեմբերի 31-ի ժամը 24-ի դրությամբ, իսկ հայկական զորքերը պետք է ետ քաշվեին մինչև այն գիծը, որ զբաղեցնում էին թուրքերը՝ Բորչալուի գավառում:

Ստեղծված զինվորական հանձնաժողովը՝ Վրաստանի հանրապետության զորքերի հրամանատար զեներալ Գեդևանով, Հայաստանի Հանրապետության զին-

¹ Հայ-վրացական խորհրդաժողովը որոշ ընդմիջումներով տևեց մոտ 3 ամիս և քննարկեց բազմաթիվ հարցեր դիվանագիտական հարաբերությունների վերականգնման, միմյանց անկախության ճանաչման, Անդրկովկասյան Սեյմի գոյքի և ֆինանսական միջոցների բաժանման և այլ հարցեր: Հունվարի 9-17-ը ամփոփվեցին միայն պատերազմի արդյունքները և ժամանակավորապես լուծվեցին տարածքային հարցերը: Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ ֆ. 276, ց. 1, գ. 104, ք. 42-101:

² խորհրդաժողովի տարբեր նիստերին բացի նշված անձերից և՛ դաշնակիցների, և՛ Վրաստանի կողմից մասնակցում էին նաև այլ ներկայացուցիչներ, մասնավորապես կապիտաններ Գասֆիլդը և Տուդդին դաշնակիցների կողմից, և Աբակիժեն ու Մաքսալսարաշվիլին:

վորական նախարարության ներկայացուցիչ գեներալ Ղորղանյան և վրացական բանակի գնդապետ Ջափարիձե կազմով, հունվարի 10-ին խորհրդածողովի հաստատմանը ներկայացրեց մի որոշում, որով որոշվում էին չեզոք գոտու հյուսիսային և հարավային սահմանները, հայկական և վրացական զորքերի կողմից զբաղեցվելիք գծերը, դրանց թվակազմը: Չեզոք գոտու հյուսիսային սահման պետք է ծառայեր Իրգանչայ, Սաթի, Ջենդար, Ախ-Քյորփի, Օփրեթ, Խոժոնի, Բրդաձոր, Սադախլու գիծը, այնպես, որ նշված բնակավայրերը պետք է մնային Վրաստանին: Հայկական զորքերը պարտավոր էին ետ քաշվել և զբաղեցնել Նովո Պոկրովկա, Ջալալօղլի, Գյառզյառ, Նիկոլանկա, Քյուլագերան, Դսեղ գիծը, որն էլ պետք է լիներ չեզոք գոտու հարավային սահմանը: Չեզոք գոտու հյուսիսային և հարավային սահմանների որոշակի հատվածներում տեղակայվելիք վրացական և հայկական կայազորները պետք է ունենային յուրաքանչյուրը 660 զինվոր՝ իրենց համապատասխան զենքով: Որոշումն ուժի մեջ էր մտնում 1919թ. հունվարի 14-ի ժամը 24-ից¹:

Հայաստանի և Վրաստանի միջև ընկած տարածքում ստեղծվում էր չեզոք գոտի՝ քրիստանացի սպայի գլխավորությամբ: Վերջինս պետք է բնակվեր Թիֆլիսում կամ Ալավերդիում /որոշումը բողոքվում էր նրա հայեցողությանը/ և պետք է ունենար երկու օգնական. մեկը՝ հայ և մյուսը՝ վրացի: Միլիցիան և մյուս պետական հիմնարկությունների աշխատողները պետք է լինեին երկու ազգություններից՝ հավասարաչափ քանակությամբ: Չեզոք գոտու ֆինանսավորումը կատարվելու էր Հայաստանի և Վրաստանի կողմից²:

Խորհրդածողովի հունվարի 13-ի նիստում քննարկվեց նաև Ախալքալաքի գավառի հարցը, թեև այն արդեն իսկ որոշված էր Վրաստանի կառավարության և դաշնակիցների ներկայացուցիչների միջև ձեռք բերված վերոհիշյալ համաձայնագրով: Հայկական պատվիրակության բոլոր քանքերը՝ քննարկելու Ախալքալաքի գավառի պատկանելության հարցը, ապարդյուն եղան: Եվ գնդապետ Ստյուարտը, և Վրաստանի ներկայացուցիչները, հատկապես Գեգեչկորին, հայտարարեցին, որ հարցն արդեն լուծված է և չպետք է քննարկվի: Քննարկման դրվեցին Ախալքալաքի գավառում տեղակայվելիք վրացական կայազորի թվաքանակի, գավառի վարչական իշխանության, նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող հանձնաժողովի կազմակերպման հարցերը: Որոշվեց, որ մինչև դաշնակիցների զորքերի ժամանումը գավառ, ինչն այդպես էլ տեղի չունեցավ, Ախալքալաքի վրացական կայազորը պետք է կազմված լիներ երկու վաշտից, 800 զինվորով, իրենց համապատասխան զենքով: Բուռն վիճաբանություններ առաջացան հատկապես գավառի վարչական իշխանության կազմակերպման հետ կապված հարցերի շուրջ: Հայ պատվիրակները, հիշեցնելով, որ Ա. Ջամալյանի բողոքները վերաբերվում էին Ախալքալաքի գավառին, առաջարկում էին, որպեսզի Ախալքալաքի ներքին վարչությունը՝ միլիցիան և կոմիսարները լինեն ընտրովի, ինչպես նաև Հայաստանի կառավարությանն իրավունք վերապահվի նշանակել իր ներկայացուցչին՝ տեղական իշխանության մարմինների նկատ-

¹ Տես ՀՀ ՊԿՊԱ ֆ. 276, ց. 1, գ. 104, ք. 50-51:

² Նույն տեղում, ք. 94-101: Անդրկովկասում քրիստանական զորքերի հրամանատար գեներալ Ֆոքիեստեր Ուոքերի կողմից չեզոք գոտու մահանգապետ նշանակվեց կապիտան Դուգլասը, իսկ Հայաստանի կառավարությունն իր կողմից նրա օգնական-կոմիսար նշանակեց Նալբանդյանին: Տե՛ս նույն տեղում ֆ. 199, ց. 1, գ. 32, ք. 36:

ծածր վերահսկողությունն իրականացնող հանձնաժողովում: Սակայն այս առաջարկը ևս չընդունվեց, իսկ զեդապետ Ստյուարտը հայտարարեց. «Ախալքալաքի վարչության հարցը լուծված է զեմեդալ Ռայկոֆտի կողմից: Այդ հարցը քննարկման ենթակա չէ»: Վրաց-բրիտանական միասնությանը ընդունվեց վրացական կողմի առաջարկը, որով Վրաստանի կառավարությունն ինքն էր նշանակում գավառի իշխանությունը, իսկ վերահսկիչ հանձնաժողովում իր ներկայացուցչին ընտրելու իրավունքը տրվում էր տեղի հայ բնակչությանը: Հայաստանի կառավարությանը «իրավունք էր վերապահվում» միայն օգնելու Ախալքալաքի խոշտանգված ու սննկացած հայ բնակչությանը¹:

Հունվարի 17-ին ավարտվեց հայ-վրացական խորհրդաժողովի առաջին փուլը, որը «Ժամանակավորապես» լուծեց Ախալքալաքի և Լոռու պատկանելության հարցը: Նախքան դրան զեմահատականներ տալը, կցանկանալիքն պատասխանել հետևյալ հարցերին. ինչո՞վ էր պայմանավորված բրիտանական զորահրամանատարության նման դիրքորոշումը և պատահական էր արդյո՞ք այն: Ինչո՞վ էին բացատրվում հայկական կողմի զիջումները:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, համաձայն Մուդրոսի զինադադարի պայմանների, Անդրկովկասը զինագրավվեց բրիտանական զորքերի կողմից: Հայ ժողովուրդն ու նրա քաղաքական առաջնորդները ցնծությամբ ընդունեցին այն, ակնկալելով Հայկական հարցի արդարացի լուծում, քանզի եթե հաղթել էին մեծ դաշնակիցները, ուրեմն հաղթել էր նաև նրանց փոքր դաշնակիցը՝ հայ ժողովուրդը, մասնավոր, որ Վրաստանը ստեղծվել էր Գերմանիայի հովանավորությամբ և համարվում էր նրա դաշնակիցը: Սակայն Անդրկովկաս մտած բրիտանական զորքերը կոչված էին պաշտպանելու Մեծ Բրիտանիայի այս տարածաշրջանում ունեցած որոշակի քաղաքական, ռազմական և տնտեսական շահերը: Ելնելով այդ շահերից բրիտանական կառավարությունը 1918թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Անդրկովկասի նորանկախ հանրապետությունների նկատմամբ վարվելիք քաղաքականության մեջ առանձնահատուկ տեղ և դեր էր հատկացրել Վրաստանին²: Դրանից ելնելով՝ որոշվել էր բրիտանական դիրքորոշումն Անդրկովկասի հանրապետություններին տարածքային հարցերում: Մասնավորապես, Արևելքի կոմիտեն իր նոյեմբերի 21-ի հուշագրում և նրան կից քարտեզում Հայաստանի սահմանների մեջ չէր ընդգրկել Ախալքալաքի գավառը. «Ազգային տեսակետից, այս շրջանները /Ախալքալաքը և Ախալցխան- Վ. Խ./ պետք է որ պատկանեն Հայաստանին», նշված էր հուշագրում, բայց դրանք հանդիսանում են կարևորագույն ռազմավարական շրջաններ Վրաստանի համար, և հետևաբար ավելի արդար կլինի դրանք տալ Վրաստանին, իսկ այդ գավառներում ապրող հայ բնակչությանը պետք է հնարավորություն տրվի գաղթելու Հայաստանի հարավ-արևմտյան շրջաններ»³: Բացի դրանից, բրիտանական կառավարության և Վրաստանի կառավարության կարծիքով, Հայաստանը պետք է ընդարձակվեր արևմտահայ հողերի հաշվին: Հետևաբար Անդրկովկասի վիճելի տարածքները ճիշտ կլինեք զիջել Վրաստանին և՛ Ադրբեջանին: Միևնույն ժամանակ հզորացնելով Վրաստանին ու Ադրբեջանին, Մեծ Բրիտանիան ձգտում էր դրանով իսկ ամրաց-

¹ Տե՛ս նույն տեղում, ք. 77-82:

² Տե՛ս Armenia, p. 410-415, R. Hovannisian, The Republic of Armenia, vol. 1, Berkeley-Los Angeles 1971, p. 266-271.

³ Armenia, map 2, R. Hovannisian, The Republic of Armenia, vol 1, p. 267.

նել այն «արգելապատնեշը», որը պետք է կանխեր ռուսների, և հատկապես՝ բոլշևիկների առաջխաղացումն Անդրկովկաս:

Ինչ վերաբերվում է հայ պատվիրակների զիջողական քաղաքականությանը, ապա այն բացատրվում էր հետևյալ համագամաքներով. առաջին՝ Թիֆլիս-Երևան երկաթուղին Չայաստանի համար ուներ բացառիկ կարևորություն: Այն դարձել էր կյանքի ճանապարհ հայ ժողովրդի համար: Երկրորդ՝ ծանր և խիստ անտանելի վիճակում էին գտնվում Վրաստանում ապաստանած հայ զառթականները, ինչպես Վրաստանի բնիկ հայ ազգաբնակչությունը: Երրորդ՝ մեծ էին ակնկալիքները դաշնակիցներից, իսկ նրանց հակառակվելու յուրաքանչյուր փորձ կարող էր բացասական հետևանքներ ունենալ Չայկական հարցի լուծման վրա:

Այսպիսով, զմահատելով 1919թ. հունվարի 9-17-ը կայացած հայ-վրացական խորհրդաժողովի աշխատանքներն ու ընդունած որոշումները, կարող ենք նշել հետևյալը. խորհրդաժողովն ընթացավ Անդրկովկասի տարածքային հարցերի վերաբերյալ բրիտանական կառավարության հուշագրերի և Ռայկոֆ-Շարդինի-ժորդանիա համաձայնագրի ոգուն համապատասխան: Գերակշռությամբ հայ բնակչությունն ունեցող այս շրջանները՝ Ախալքալաքն ամբողջությամբ և Լոռին մասամբ, հանձնվեցին Վրաստանին: Եվ նույնիսկ չեզոք գոտում, որ ստեղծվեց հայ-վրացական պատերազմի ժամանակ հայկական զորքերի կողմից ազատագրված տարածքում, և ուր վրացիները բնակչության մեկ տոկոսն էլ չէին կազմում, Վրաստանի կառավարությունը ձեռք էր բերում հավասարաչափ իրավունքներ Չայաստանի կառավարության հետ միասին, այն դեպքում, երբ Ախալքալաքի գավառը, 80 տոկոս հայ բնակչության դեպքում, անցնում էր Վրաստանին, իսկ Չայաստանի կառավարությանը չէր թույլատրվում մասնակցել ու միջամտել տեղական իշխանության նկատմամբ վերահսկողությունն իրականացնող հանձնաժողովի գործերում: Ընդդիմանալով հայ պատվիրակների բողոքներին՝ և՛ դաշնակիցների ներկայացուցիչները, և՛ վրացիները նրանց հիշեցնում էին վիրահայոց մեծաքանակ համայնքի առկայության և երկաթուղային հաղորդակցության կարևորության մասին, ստիպում նրանց ավելի զիջող լինել, ընդունել իրենց ներկայացրած պահանջները: Բրիտանական միջնորդությունն ու հարցի նման լուծումը ցմնությամբ ընդունվեցին Վրաստանում, տեղիք տալով Վրաստանի կողմից տարածքային նոր պահանջների, մասնավորապես Կարսի մարզի՝ Արդահանի և Օլթիի օկրուգների նկատմամբ, իսկ վրացական մամուլն էլ համոզեա եկավ հիացական արտահայտություններով: Սոցիալիստ-ֆեդերալիստների «Ախալխտ սաքմե» թերթը գրում էր. «Համարեա բոլոր վիճելի հարցերը իրականորեն մեր օգտին են վճռուել: Գիշտ է՝ մենք Չայաստանից պահանջում էինք Փամբակի հովիտն ու Լոռու շրջանը, որ այժմ հայկական զորքն ունի բռնած, քայք դրա փոխարեն հայերը մեզանից կամենում էին վերցնել Թիֆլիս քաղաքն ու համարեա ամբողջ Արևելյան Վրաստանը... Այսօրվանից Թիֆլիսը իսկական վրացական քաղաք է»¹:

¹ Հառաջ, 17 հունվարի 1919թ.:

ՀԱՅ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԳՐՎԱԳՆԵՐԻ ԼՈՒՍԱՔԱՆՈՒՄԸ ՄԱՄՈՒԼՈՒՄ /1918-1920ԹԹ./

Հայաստանի Հանրապետության հռչակումը խթանեց քաղաքական կյանքի աշխուժացմանը: Հանրապետության հռչակումից հետո հայ քաղաքական կուսակցությունները որդեգրեցին առավել ազգային դիրքորոշում, ակտիվ աշխատանք ծավալելով հատկապես իշխանության մարմինների ձևավորման շրջանում: Հայաստանում գործող կուսակցությունները հետևյալներն էին՝ Հայ Հեղափոխական Ղաշնակցություն, Հայ Ժողովրդական, Սոցիալ-դեմոկրատական /մենշևիկյան-բոլշևիկյան/, Սոցիալիստ-հեղափոխական /էսեռական/, Հայ Սահմանադրական Ռամկավար, ՍԴ հնչակյան և «Սպեցիֆիկների» կազմակերպությունը: Դրանցից հասարակական-քաղաքական կյանքում առավել ազդեցիկները համապատասխան մանդատներ ստացան խորհրդարանում: Խորհրդարանական ամբիոնը հայ քաղաքական կուսակցությունների համար դարձավ միմյանց ընդհարմարելու և քաղաքական կոփվածություն ստանալու միջոց:

Հայտնի է, որ ՀՀԴ կուսակցության կենտրոնը մինչև 1918թ-ի հուլիս ամիսը գտնվում էր Թիֆլիսում, որտեղ գործում էր Ղաշնակցության բյուրոն, այն հրատարակում էր կուսակցության պաշտոնաթերթ «Հորիզոն»-ը: Հայոց Ազգային խորհրդի՝ երևան փոխադրվելու հետևանքով, ՀՀԴ-ն այնտեղ ուղարկեց գրեթե իր բոլոր պատասխանատու գործիչներին, Թիֆլիսում թողնելով «Աշխատավոր»-ի շուրջը համախմբված երիտասարդ այն կուսակցականներին, որոնք գլխավորեցին Վրաստանի կազմակերպությունը:¹ Հայտնի է, որ դեռևս Թիֆլիսում գտնվելու շրջանում որոշվեց ապագա խորհրդարանում կուսակցությունների անդամակցության թվի հարցը, ՀՀԴ-ն ստանալու էր 18 ծայն: Ղաշնակցական մամուլը, հակառակ ընդդիմադիր մամուլի, վկայում է, որ խորհրդարանում ստացած իրենց քվեները չէին համապատասխանում ո՛չ իրենց ունեցած հեղինակությանը, ո՛չ էլ հասարակության մեջ գրաված դիրքին: Դրանում չէր դրսևորված նաև կուսակցության անդամների ու համակիրների ճշմարիտ թվակազմը: «Կասկածից դուրս է, - գրում է, «ՎԷՄ» ամսագիրը, որ Ղաշնակցությունը շատ ավելի հետևորդներ ուներ, քան խորհրդարանական մյուս երեք կուսակցությունները միասին վերցրած»:² Հակառակը, ավելի ու ավելի էր տարածվում այն տեսակետը, թե Ղաշնակցությունը իրականում «չի վայելում այլևս հայ ժողովրդի վստահությունը»:

Իր կենտրոնը երևան փոխադրելուց հետո ՀՀԴ-ն Թիֆլիսյան շրջանի համեմատությամբ նկատելիորեն աշխուժացրեց իր աշխատանքները և ձեռք բերեց ազդեցիկ դիրք: Ղաշնակցական մամուլը Թիֆլիսյան շրջանը բնորոշում է Անդրկովկասյան «նեղիչ միջավայրում գտնվելու» շրջան, որի մեջ նա ընկել

¹ Տես, ՎԷՄ, Ե, 1934, մայիս-հունիս, էջ 42-60:

² Նույն տեղում, 1934, էջ 42-60:

եր Փետրվարյան հեղափոխության արդյունքում, ինչն էլ և խիստ թուլացրել էր նրա ուժն ու ազդեցությունը: Մենք համամիտ ենք դաշնակցական մամուլում հայտնված այն կարծիքի հետ, որ դաշնակցության փոխադրումը Երևան շահեկան էր, այն նպաստեց ուժերի համամասնության փոփոխմանը հոգուտ Ղաշնակցության:

Հակառակ ՀՅԴ-ի Երևան տեղափոխվելն անբարենպաստ անդրադարձավ ընդդիմադիր աջ դիրքերից հանդես եկող Հայ ժողովրդական կուսակցության վրա: Այս կուսակցության բարձրագույն մարմնի՝ ԿԿ-ի նախագահն էր Ս. Պապաքանյանը, փոխնախագահը՝ Ս. Հարությունյանը:¹ Կուսակցությունը կազմած էր հակասոցիալիստական դիրքերում: Այն կրում էր Ռուսական կադետների ազդեցությունը, ինչը և ցայտուն կերպով արտահայտված էր ծրագրի մեջ: Հայ ժողովրդականների որդեգրած գաղափարներն արտահայտվում էին հիմնականում կուսակցության կողմից հրատարակվող «Ժողովուրդ», «Մշակ» թերթերի էջերում: ՀԺԿ-ի ղեկավարությունը, որ հավակնում էր ստանձնել քաղաքական կյանքի կառավարումը, ուստի հայրենիք ուղարկեց կուսակցության գործիչներ՝ Ստեփան Մալխասյանին և Արշալույս Մխիթարյանին: Կուսակցության առավել երևելի հատվածը մնաց Թիֆլիսում: Կարելի է ամբողջովին համաձայնվել մամուլում արտահայտված այն կարծիքի հետ, որ ՀԺԿ-ն հայ հասարակության մեջ, ունենալով «ամուր հող», վերոհիշյալ սխալը թույլ տալով, կորցրեց իր ազդեցությունն ու բռնեց քայքայման ուղի²:

Այդ պատճառով կուսակցության ընդդիմադիր դիրքորոշումը որոշ չափով մեղմացավ, որը և հանդիսացավ ներկուսակցական պառակտման պատճառ: Երևանի ՀԺԿ թևի ցուցաբերած չափավոր դիրքորոշումը կամ ընդհանրապես ընդդիմադիր դիրքերի լուծումը, երևաց այն պահից, երբ ժողովրդականների խմբակցությունը քվեարկեց Հ. Քաջազունու կառավարության օգտին: Այդ կապակցությամբ աղմկոտ հրապարակումներ լույս տեսան Երևանում տպագրվող «Ժողովուրդ» թերթի էջերում:

«Մշակը» իր հերթին սուր քննադատության էր ենթարկում Հայոց ազգային խորհրդի գործունեությունն առհասարակ: Լույս տեսած բազմաթիվ հոդվածներում բացասական կարծիքներ էին արտահայտվում ինչպես կառավարության Հայաստան մեկնելու, այնպես էլ Հայոց ազգային խորհրդի յուրաքանչյուր քայլի վերաբերյալ: Նշված խնդիրների վերաբերյալ ՀԺԿ-ի կարծիքը մանրամասն ներկայացվեց «Մշակի»-ի 1918թ. հուլիսի 13-ի համարում:

«Երկրի այժմեան ֆինանսական, տնտեսական ծանր պարագաներին, այժմ երբ հայ ազգի բախտը որոշվում է համաշխարհային կենտրոններում, երբ կառավարության գլխավոր աշխատանքը պիտի կենտրոնանա դիվանագիտական կապերի և բանակցությունների վրա, մենք գտնում ենք միանգամայն սխալ և վտանգավոր քայլ՝ միևնույն կողմի մեկնելը Երևան:»³

Ինչ վերաբերում է Հայոց Ազգային խորհրդի Երևան մեկնելուն, Հայ ժողովրդականները գտնում էին, որ դա պետք է լինի ժամանակավոր, պատ-

¹ Տես Ժողովուրդ, 1918թ., 1 ղեկտեմբերի:

² Տես ՎԼԵՄ, 1934, մայիս-հունիս, 42-60:

³ Մշակ, 13 հուլիսի, 1918:

ճառաբանելով թե Չայոց Ազգային խորհուրդը ներկայացնում է ամբողջ Ռուսաստանի հայությունը, որը ապացույց է հանդիսանում այն բանի, որ հայությունը չի սահմանափակվում միայն Չայաստանի հանրապետության սահմանափակ տարածքով:

«Մշակի»-ի սուր քննադատությունը որոշ չափով մեղմացավ գլխավոր խմբագիր և Չայ ժողովրդական կուսակցության գաղափարախոս Չամբարծում Առաքելյանի սպանությունից հետո, երբ թերթը տնօրինող առավել երիտասարդ կուսակցականները սոցիալիստական ուղղվածություն ընդունեցին: Տարբեր հարցերի շուրջ, այնուհետև, հակասությունները շատ խորացան և համագեղրին կուսակցության երկու թևերի միջև լուրջ բախումների:

«ՎեՄ»-ում ծախակողմյան ընդդիմության առաջին շրջանի բնորոշումը այսպիսին է՝ «պատասխանատու», այսինքն մեղմ կամ արտախորհրդարանական կյանքում ոչ ակտիվ: Նման վարքագիծը, կարծում ենք, ավելի շատ պայմանավորված էր ֆրակցիաների փոքրաթիվ լինելով և ազդեցության ուղորտի բացակայությամբ՝ ինչպես խորհրդարանում, այնպես էլ ժողովրդի մեջ: Զախակողմյան ընդդիմությունը աշխատավորության լայն շրջաններում սոցիալական ձևավորված հենարան չուներ, մասնավորապես չկար բանվոր դասակարգ, ինչպես նշում էր հենց ծախակողմյան մամուլը: Նա հիմնականում իր գործունեությունը ծավալում էր խորհրդարանական քննարկումների միջոցով, այն էլ՝ շոշափելով հիմնականում մշակութային, սոցիալ-տնտեսական հարցեր:

Էսեները հրատարակում էին «Աշխատանքի դրոշակ», «Սոցիալիստ-հեղափոխական» թերթերը, որոնք և արտահայտում էին նրանց ծրագրային ու տակտիկական հիմնական սկզբունքները:

Զախ ընդդիմությունը հիմնական դիրքորոշումամբ չէր արտահայտում ինքնուրույնության գաղափարներ: Ազգային հարցի շուրջ այն իր կախվածությունն էր ընդգծում Ռուսաստանից և հանդես էր գալիս «համակուկասայան ֆեդերացիա» տնտեսական սերտ կապերով կապված Ռուսաստանի հետ» ձևավորելու², կամ Ռուսաստանի հետ համապետականություն ստեղծելու օգտին:³ Նրա նպատակներից ամենակարևորը, որն արտահայտվում էր թե՛ խորհրդարանում, թե՛ նրա պատերից դուրս, Չայաստանը կրկին Ռուսաստանի մի մասնիկը դարձնելն էր:⁴

Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը ԳԳ-ում, չուներ հարուստ սոցիալական բազա: Կուսակցությունը լույս էր ընծայում «Կայծ», «Խոսք», «Բանվորի ձայն» թերթերը: Նրանց կուսակցության հիմնական կարգախոսներից մեկը «հեռավոր հյուսիսի» հետ միավորելն էր: Չամարվում էր, որ «անկախ այն համգամանքից, թե ինչ կուսակցության ձեռքին է գտնվում կառավարության ղեկը... նա կարող է միայն մեր լավագույն բարե-

¹ Տես ՎԷՄ, Փաքիզ, 1933, 67-69:

² Խոսք, 1918, 22 սեպտեմբերի:

³ Տես Աշխատանք, 1919թ., 17 մայիսի:

⁴ Խոսք, 1918, 22 սեպտեմբերի:

կամը լինել, նա է մեզ մոտ, նրան ենք մենք արդեն ընտելացել և նա չի ձգտում Կովկասը գաղութ և շուկա դարձնել...»: Սոցիալ-դեմոկրատները «Բորբա»-ի էջերին իրենց բացասական կարծիքը հայտնեցին Հայոց ազգային խորհրդի և կառավարության երևան տեղափոխվելու հարցի վերաբերյալ պատճառաբանելով, որ քաղաքական դրությունը և արտաքին պայմանները չէին նպաստի այդ մարմինների արդյունավետ աշխատանքին: Հենց սկզբից սոց.-դեմոկրատները չէին ցանկանում իրենց կուսակցական կենտրոնը տեղափոխել Երևան: Այս կուսակցության նշանավոր անդամները ևս մնացին Թիֆլիսում Երևան ուղարկվեց Հ. Ազատյանը, այս փաստը հետագայում պատճառ հանդիսացավ կուսակցության միատարրության խաթարմանը:

Զախակողմյան կուսակցությունների համար «հայկական գավառների» մայրաքաղաք զավթ սկզբնական շրջանում մի ընդհանուր անբարենպաստ հող ստեղծեց: Նրանք կտրվեցին անդրկովկասյան մյուս մայրաքաղաքներում գործող իրենց մայր կուսակցություններից, որոնք բավականին հզոր էին, և զրկվեցին այն ամբողջ օժանդակությունից, որ իրենց ցույց էր տրվում դրանցից յուրաքանչյուրի կուսակցական կենտրոնից:

ԱՆԳՐԿՈՎԿԱՍԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐ- ԾԵՆԹԱՅՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Անդրկովկասի վարչաքաղաքական միավորումը պատմականորեն հիմնավորված անցյալ ունի: Մինչխորհրդային ժամանակաշրջանի և հետագայի ֆեդերացման գործընթացները չպետք է նույնացնել: Առկա են հիմնավորված պատժառաքանություններ և տարբերություններ: Բոլորովին տարբեր կերպով են ընկալվել նաև ֆեդերացման բուն էությունն ու հետապնդված նպատակները: Զգալիորեն տարբեր էին նաև այդ ուղղությամբ կատարվող քայլերն ու հիմնախնդրի ընդհանուր դրվածքը: Գոյություն ունեւ արդեն արմատական տարբերություն՝ երեք առանձին հանրապետություններում տիրող վարչաքաղաքական և կուսակցական իշխանակարգի միասնականությունը: Դեռ ց այս պարագան էլ կանխորոշում էր իրադարձությունների ողջ գործընթացը: Երկրամասի ֆեդերացման անհրաժեշտությունը հրամայական ու օբյեկտիվ դարձավ միայն երեք հանրապետություններում նույնական կուսակցական վարչակարգի հաստատումից հետո 1921թ.: Իսկ մինչ այդ՝ ցարական ինքնակալության տապալումից հետո 1917թ. մարտի 9-ին ստեղծվեց Անդրկովկասյան Հատուկ կոմիտե (Օգակոմ): Այս մարմինը փոխարինեց Կովկասի փոխարքայությանը, և կազմված էր չորրորդ Պետական Դումայի Կովկասի ներկայացուցիչներից: Օգակոմին փոխարինեց Անդրկովկասյան կոմիսարիատը, որը ստեղծվեց 1917թ. նոյեմբերի 15-ին Անդրկովկասի ազդեցիկ ազգային կուսակցությունների մասնակցությամբ: Ազգային կուսակցությունների փոխհարաբերությունները չափազանց սրված էրն տարաբնույն նպատակներով ու ձգտումներով: Այսպես, մեռնչիկները ձգտում էին ստեղծել անկախ պետություն և որպես առաջին քայլ Անդրկովկասն անջատել Ռուսաստանից, մուսաֆաթականները կոչւմ էին թուրքիային, դաշնակցականները՝ Անտանտին: Անդրկովկասյան կոմիսարիատը 1918թ. փետրվարի 10-ին զոււարեց Սեյմ, որը կազմված էր Սահմանադիր ժողովի՝ Անդրկովկասից ընտրված պատգամավորներից և կուսակցությունների ներկայացուցիչներից: Սեյմը լուծարեց կոմիսարիատը և 1918թ. մարտին Անդրկովկասն անջատ հռչակեց Ռուսաստանից: Ավելին, 1918թ. ապրիլի 9-ին հռչակեց Անդրկովկասյան Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետություն: Ռուսաստանը չճանաչեց այս հանրապետությունը. իսկ վերջինս էլ՝ Բրեստի հաշտությունը: 1918թ. մայիսի 26-28-ին հռչակվեցին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի անկախ, առանձին հանրապետությունները: Անդրկովկասի հանրապետությունների համար սկսվեց անջատ պետա-իրավական գոյության, վարչաքաղաքական անկախության շրջանը:

Փաստորեն, միայն երկրամասի խորհրդայնացումից հետո երեք հանրապետություններում հաստատվեց միատեսակ կուսակցական-քաղաքական համակարգ, տնտեսավարման նույնական ձև և նրանց այլևս մնում էր միավորել այդ ամենը: Ֆեդերացման գործընթացում կարևոր ու առաջնա-

յին նշանակություն ունեն պատմա-քաղաքական գործոններն ու նախադրյալները: Անդրկովկասի ֆեդերացիան ժողովուրդների միավորման այն կարևոր պետաիրավական ձևն էր, որի շրջանակներում համակողմանիորեն պետք է լուծվեին երկրամասի հիմնախնդիրները: Այդպիսիք էին. ազգային հարցի լուծումը, ժողովուրդների համագործակցության ամրապնդումը, տնտեսական ամենասերտ փոխհարաբերությունների հաստատումը: Ֆեդերացիայի ստեղծումը իրապես կապահովվեց առանձին հանրապետությունների հավաքական անվտանգության երաշխիքների կայունությունը արտաքին թշնամիներից:

Պատմաքաղաքական նախադրյալների համալիրում ազգային հարցի դրվածքից, նրա տարբեր կողմերի ընկալման, մեկնաբանման ու ներկայացման ձևերից կախված էր կայուն Անդրկովկասյան Դաշնության ստեղծումը: Երկրամասում պետա-իրավական շինարարության բնագավառում օրինաչափորեն ընկած էր ազգային գործոնը: Անհրաժեշտ էր գտնել այնպիսի լուծումներ, որոնք հնարավորություն կտային բավարարել երեք ազգային հանրապետությունների պահանջները: Երկրամասի ֆեդերացման քաղաքական նախադրյալներն առաջին հերթին պայմանավորված էին ազգային համակեցության ստեղծման պարագայով:

Կային նաեվ այլ կարևոր հարցեր: Օրինակ՝ Հայաստանի համար նման գեղինդիր էր գաղթականության հարցը, որն առկա ծանր ֆինանսացության վիճակի պայմաններում միայն սեփական ուժերով լուծել անհնարին էր: Այս առումով հիշատակենք, որ դեռևս 1920թ. դեկտեմբերի 1-ին Գ. Օրբոնիկիձեն նշում էր, թե Հայաստանը «քիչ էր մնացել վերածվի գաղթականների հանրապետության»¹:

Փաստորեն, գաղթականության խնդիրը ՀԱԽԴ-ի համար բավականին էական քաղաքական նախադրյալ էր, որպեսզի կողմ լինի ֆեդերացման գործընթացին:

Ազգային հարցի ամբողջական համալիրի մաս էր կազմում նաև սահմանային խնդիրը: Այս հարցի համապարփակ լուծումն իր քաղաքական կարևորությամբ պետք է ամրապնդեր և հավաստեր խորհրդային համակարգի ներպետական կայունությունը: Դա անհրաժեշտ էր կարգավորել համալիր ձևով: Սահմանային հիմնախնդրի արմատական լուծման համար երեք հանրապետություններն այլ ելք չունեին՝ քան միավորվել մեկ պետաիրավական միավորի մեջ: Չնայած այս հանգամանքին՝ խորհրդային կարգերի հենց սկզբից սահմանային հարցի կարգավորումն ընթանում էր շատ բարդ և վիճաբարույց մթնոլորտում: Մասնավորապես, փաստացիորեն անհաջողության մատնվեց 1921 թ. մայիսի 2-ին Կովկասյան բյուրոյի կողմից Ս. Կիրովի նախագահությամբ ստեղծված հանձնաժողովի գործունեությունը²: Այնուհանդերձ, արդեն 1921թ. նոյեմբերին համապատասխան պայմանագրեր կնքեցին Վրաստանն ու Ադրբեջանը, Վրաստանն ու Հայաստանը³:

¹ Օրբոնիկիձեն Գ., Ընտիր երկեր և ճառեր, Ե., 1950, էջ 34:

² ՀԶԿԳ ԿՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 40, ք. 9:

³ ՀԶԿԳ ԿՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 105, ք. 12, 16-17; ԵՊ ԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 55, ք. 10:

Արտաքին քաղաքականության բնագավառում հանրապետությունների միասնական դիրքորոշման վկայություն էր 1921թ. հոկտեմբերի 13-ին կնքված Կարսի պայմանագիրը: Այդտեղ արտաքին քաղաքական միասնությունը պահպանվեց ՌՍՖՍՀ-ի վերադաս մասնակցությամբ: Կարսի պայմանագրի որոշումներն ոչ բոլորին էին ձեռնտու: Հատկապես ՀՍՄՀ-ի համար այն անընդունելի էր, սակայն նրա դիրքորոշումները և պահանջները գերազանցապես հաշվի չէին առնվում, քանզի Թուրքիայի և Բաքվի նավթի գործոնների կարևորությունն անհամեմատ նշանակալից էր Ռուսաստանի համար: Մյուս կողմից, խորհրդային Հայաստանի ղեկավարությունը ակտիվորեն քննարկում և դրական էր գնահատում Կարսի պայմանագիրը: Այս հարցում հատկապես ակտիվ էին Ա. Մյասնիկյանը և Ա. Մռավյանը¹:

Հետագայում, Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարում անդրադառնալով այս հարցին Ս. Օրջոնիկիձեն նշում էր. «Թուրքերին հասկացնել տվեցինք, որ եթե նրանք ուզում են մեր կողմից՝ անդրկովկասյան ժողովուրդների, ունենալ համակրանք, ապա նրանք պետք է մեզ դիտարկեն որպես միասնական ամբողջություն, որպես միասնական եղբայրական հանրապետություն»²:

Երկրամասի ֆեդերացումը լայնամասշտաբ տեմպերով սկսվեց արդեն Վրաստանի խորհրդայնացումից հետո: 1921թ. ապրիլի 11-ին Բաքվի խորհրդի ընդլայնված նիստը Ս. Օրջոնիկիձեի և Ա. Կիրովի զեկուցումներից հետո ընդունեց որոշում Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միավորման մասին³:

Արդեն ապրիլի 14-ին Վ.Լենինը հատուկ նամակ ուղարկեց Անդրկովկասի և Դաղստանի ղեկավարներին⁴: Նախ, Վ. Լենինը ավելի կարևորում էր խորհրդային իշխանակարգի պաշտպանումն ու զարգացումը: Դրա համար Կովկասի կուսակցական ղեկավարությունը պետք է գործեր կոնկրետ պայմաններին համապատասխան: Նա շեշտում էր Ռուսաստանի և Կովկասի վիճակների միջև եղած արմատական տարբերությունները: Կովկասի համար Վ. Լենինը նպատակահարմար էր գտնում «ավելի դանդաղ, ավելի զգույշ, ավելի սիստեմատիկ անցում», հարկավոր էր «չընդօրինակել » Ռուսաստանի տակտիկան, կիրառել փորձի «ոչ թե տառը, այլ ոգին, իմաստը, դասերը»: Փաստորեն, այս նամակը քաղաքական ուղենիշ հանդիսացավ ոչ միայն երկրամասում խորհրդային իրավակարգի ամրապնդման, այլև՝ Անդրկովկասի ֆեդերացիայի հետագա ձևավորման տեսանկյունից: Ս. Օրախելաշվիլու համոզմամբ անդրկովկասյան ժողովուրդների պետական միավորման «հայրական իրավունքը» անառարկելիորեն պատկանում է Վ. Լենինին⁵:

1921 թ. հուլիսի 3-ին ՌԿ(բ)Կ Կովկասյան Բյուրոյի միացյալ պլենումն ընդունեց «Վրաստանում և Անդրկովկասում կոմունիզմի հերթական խնդիր-

¹ «Խորհրդային Հայաստան», 1921, թթ. 180, 199:

² Орджоникидзе Г. К., Избранные произведения, Е., 1986, с. 298-300.

³ Образование СССР, М., 1949, с. 270.

⁴ Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 43, էջ 246-248:

⁵ Орхелашвили М., Ленин и ЗСФСР, Т., 1925, с. 8.

ների մասին» բանաձևը: Այդտեղ նշվում էր. «1. Հաստատել Անդրկովկասի հանրապետությունների՝ կյանքում անկախության անցկացման անհրաժեշտությունը, 2. Փոխադարձ ռազմական և տնտեսական աջակցության բացարձակ անհրաժեշտությունն ի տես զոտնել Ռուսաստանի հետ կնքելու ռազմական, առևտրական և տնտեսա-ֆինանսական համաձայնագիր՝ կամավորության սկզբունքներով»¹:

1921 թ. հուլիսի 6-ին Թիֆլիսի կուսկազմակերպության ընդհանուր ժողովում Ի. Ստալինը շեշտում էր Վրաստանի և մյուս հանրապետությունների՝ թշնամական շրջապատի պայմաններում ռազմական և տնտեսական զարգացման տեսակետից մեկուսացված գոյության անհիմաստությունը: Մասնավորապես, նա ուշադրություն էր հրավիրում այն փաստի վրա, որ Վրաստանը առանց ռուսական հացի չի կարող գոյատևել: Այս պարագան նա կապում էր նաև Ադրբեջանի նավթի գործոնի հետ: Նա վրացի ղեկավարներին մատնացույց էր անում Վրաստանի ազգային կազմի վիճակը, երբ օրինակ Թիֆլիսի բնակչության մոտ կեսը հայեր էին: Այդ առումով, վրացիները պետք է անպայման «խաղաղություն և եղբայրական համագործակցություն» պահպանեն Հայաստանի հետ²:

Անդրկովկասի ֆեդերացման գործընթացում թեկունային էր 1921 թ. նոյեմբերի 3-ին Բաքվում կայացած ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումը: Այն ընդլայնված էր և մասնակցում էին երեք հանրապետությունների կուսակցական ակտիվը: Ի դեպ, պլենումի նշանակության ակնհայտ վկայությունն էր այնտեղ ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Վ. Մոլոտովի մասնակցությունը: Պլենումում Անդրկովկասի հանրապետությունների ֆեդերացիայի մասին զեկուցեց Շ. Էլիավան: Նա Ալ. Մյասնիկյանի հետ մշակեց հատուկ բանաձև, ըստ որի « հանրապետությունների անջատ քաղաքական գոյությունը նրանց թուլացնում է կապիտալիստական երկրների առջև և նրանց քաղաքական սերտ միությունը կծառայի ամուր երաշխիք արտաքին հակահեղափոխական ուժերի կողմից հարձակման դեպքում և արդյունքում Սերժավոր արևելքում խորհրդային իշխանությունը կամրապնդվի»³: Մյուս կողմից, համարվում էր, որ հանրապետությունների քաղաքական միությունը մեծապես կնպաստի տնտեսական միավորմանը ու կամրապնդի երկրամասի մասշտաբով խորհրդային իշխանությունը: Կովկասյան Բյուրոն հանրապետությունների ֆեդերացիայի ստեղծման անհրաժեշտությունը համարում էր անհետաձգելի՝ հարկավոր էր կնքել ռազմական, տնտեսական և ֆինանսական աշխատանքները և արտաքին քաղաքականությունը միավորող ֆեդերատիվ դաշինք: Որոշվեց ստեղծել երկրամասի վարչա-քաղաքական կենտրոնական մարմին՝ Միութենական խորհուրդ: Այդ մարմնի գործունեությանն ուղղված նախագծի մշակման համար ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ Էլիավա (նախագահ), Լեգրան, Լուկաշին, Եգորով, Էֆենդին (անդամներ) կազմով: Կովկասյան բյուրոյի պլենումի հատուկ որոշմամբ վերացվեցին Անդրկովկա-

¹ Борьба за упрочение советской власти, Тбилиси 1959, с. 59-60.

² Ստալին Ի., Երկեր, հ. 5, Ե., 1948, էջ 98-111:

³ Борьба за упрочение советской власти, Тбилиси., 1959, с. 65.

սի հանրապետությունների միջև գործող դիվանագիտական ներկայացուցչությունները: Իսկ արդեն միջհանրապետական ռազմական համաձայնագրի մշակման համար ստեղծվեց առանձին հանձնաժողով՝ Բ. Լեզրան, Ալ. Մյասնիկյան, Շ. Էլիավա, Ա. Կարան կազմով: Հանրապետությունների ազգային գործադիրությունները ընդգրկվեցին Կովկասյան առանձին բանակի մեջ:

1921թ. նոյեմբերի 8-ին Գ. Օրջոնիկիձեն ՌԿ(բ)Կ Կենտկոմին և Ի. Ստալինին հեռագրով հայտնեց հիշյալ որոշման մասին և խնդրեց նրանց եզրակացությունը¹:

Կովկասյան բյուրոյի պլենումի արդյունքները քննարկվեցին նաև ՀԿԿ Կենտկոմի 1921թ. նոյեմբերի 14-ի նիստում, ուր մանրամասն զեկուցեց Ալ. Մյասնիկյանը²: Նա ցույց տվեց Անդրկովկասի հանրապետությունների միություն ստեղծելու վերաբերյալ ընդունված որոշման կենսական անհրաժեշտությունը: ՀԿ(բ)Կ Կենտկոմը միանշանակ հավանություն տվեց և ցանկություն հայտնեց, որպեսզի անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիայի շրջագծում ընդգրկվեն նաև Կովկասի բոլոր ինքնավար հանրապետությունները:

Այս հարցը քննվեց նաև ՎԿ(բ)Կ Թիֆլիսի կոմիտեյում, ուր ընդունված բանաձևում և թեզիսներում կուսակցական կազմակերպությունների առջև դրվում էին գործունեության ուղենիշ հանդիսացող կոնկրետ խնդիրներ³:

Ինչևէ, Շ. Էլիավայի գլխավորած հանձնաժողովը 1921թ. նոյեմբերի 25-ին ավարտեց անդրկովկասյան հանրապետությունների միջև կնքվելիք միութենական պայմանագրի մշակումը⁴:

1921թ. նոյեմբերի 29-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն միաձայն հաստատեց Վ. Լենինի ներկայացրած բանաձևը՝ միավորումը համարելով «սկզբունքորեն բացարձակապես ճիշտ և անպայման ենթակա իրագործման, բայց անհապաղ գործնական իրականացման տեսանկյունից վաղաշամկետ, այսինքն՝ քննարկման համար հայտնի ժամանակամիջոց պահանջող»: Քաղբյուրոն Կովկասյան բյուրոյին և երեք հանրապետությունների ղեկավարությանը առաջարկում էր «ֆեդերացիայի մասին հարցը լայնորեն դնել կուսակցության և բանվոր-գյուղացիական զանգվածների քննարկման, ֆեդերացիայի օգտին եռանդուն պրոպագանդել և այն անցկացնել յուրաքանչյուր հանրապետության խորհուրդների համագումարում»⁵:

Հայաստանի կուսակցական ակտիվը 1921թ. նոյեմբերի 29-ին հավանություն տալով միութենական պայմանագրի նախագծին՝ հարևան հանրապետությունների կուսակցական ղեկավարությանը դիմեց դաշնության ստեղծումն արագացնելու կոչով⁶:

1921թ. դեկտեմբերի 1-ին Ադրբեջանի արհմիությունների խորհրդի պլենումում ընդունած բանաձևով ջերմորեն պաշտպանում էր Անդրկովկասի

¹ Орджоникидзе Г. К., Избранные произведения, Е., 1986, с. 266.

² ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, ֆ.1, ց.2, գ.15, ք.39:

³ Борьба за упрочение советской власти, с. 65-66.

⁴ ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, ֆ.1, գ.108, ք. 18; ՆՊ ԿՊԱ, ֆ.113, ց.3, գ.55, ք.5-7:

⁵ Վ. Լենին, ԵԼԺ, հ.44, էջ 305:

⁶ «Նորերդային Հայաստան», 1921, նոյեմբերի 30:

քաղաքական միավորումը: Արդեն 1921թ. դեկտեմբերի 2-ին Բաքվի խորհուրդը Ս. Կիրովի զեկուցումից հետո ֆեդերացիայի անհապաղ ստեղծման օգտին բանաձև ընդունեց¹:

Երկրամասի մասշտաբով քարոզչական ակտիվ գործունեություն ծավալող Ս. Կիրովը դեկտեմբերի 5-ին Վրաստանի արհմիությունների պլենումում շեշտում էր, որ երեք հանրապետությունների առջև հսկայական կարևորության խնդիրները պետք է և կարելի է լուծել «միայն համատեղ»²:

Այս ամենի ընդհանրացման առումով կարևոր նշանակություն ունեցավ 1921թ. դեկտեմբերի 7-ին գումարված Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների 2-րդ կոնֆերանսը, ուր Գ. Օրջոնիկիձեն զեկուցեց «Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում ֆեդերացիայի օգտին կոմպանիայի մասին»: Միութենական պայմանագրի նախագծի մասին զեկուցեց Շ. Էլիավան: Արդյունքում, կոնֆերանսը հավանություն տվեց Ալ. Մյասնիկյանի և Շ. Էլիավայի մշակած բանաձևին: Բանաձևում շեշտվում էր, որ ֆեդերատիվ միավորմամբ ավարտվում է «ազգամիջյան պայքարի երկարատև և ծանր շրջանը» և արդեն կհաստատվի «ամուր և անխախտ հաշտություն»: Նպատակահարմար էր գտնվում ագիտացիայից և պրոպագանդայից անցում կատարել խնդրի գործնական իրականացման լայն աշխատանքներին, արդեն խորհուրդների միջոցով: Քանի որ Ադրբեջանում արդեն իսկ ձևավորված էր խորհուրդների համակարգը, այդ պատճառով խնդրի դրվեց արագացնել դրանց ստեղծումը Վրաստանում և Հայաստանում³:

Այստեղ հիշատակենք նաև Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի ազիտ բաժնի մշակած «Թե ինչու» է մեզ հարկավոր ֆեդերացիան» թեզիսները: Այդտեղ նշվում էր, որ Ադրբեջանը առանց Հայաստանի արոտատեղիների, Հայաստանն առանց Բաքվի նավթի, Վրաստանն առանց Նախիջևանի աղի, բոլորն առանց Բաթումի ապրել չեն կարող: Ֆեդերացիայի կարևորությունը շեշտվում էր քաղաքական և տնտեսական նկատառումներից: Նշվում էր սպասվելիք առավելությունները և օգուտները⁴:

Այս կապակցությամբ ուշագրավ է Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի 1921 թ. դեկտեմբերի 14-ին հանրապետության բոլոր կազմակերպություններին ուղղված դիմումը: Այդտեղ բոլորին առաջարկվում էր «ամենալայն ագիտացիոն կամպանիա» ծավալել, բացատրել ֆեդերացիայի իմաստն ու նշանակությունը, որն է՝ հանրապետությունների «անկախության վստահելի ապահովումը» համաշխարհային կապիտալի և նախկին իշխանական կուսակցությունների «ոտնձգությունների» դեմ: Կապված այս դիմումի հետ Կենտկոմն ընդունեց նաև թեզիսներ, ուր նշվում էր, որ երեք հանրապետությունները «լիարժեք ազատություն» ստացան խորհրդայանցումից հետո և նրանք տնտեսապես չեն հզորանա, քանի դեռ գոյություն կունենան «ընդհանուր կապից և միմյանցից կախվածությունից» դուրս: Ավելին, համարվում էր, որ

¹ За образование СССР, Тбилиси., 1972, с. 172-174.

² Образование СССР, М., 1949, с. 284-286.

³ История советской конституции. В документах. М., 1957, с. 309-310.

⁴ «Խորհրդային Հայաստան», 1921, դեկտեմբերի 2:

Անդրկովկասի մասերի բաժանումը «արմատական խոչնդոտ» է նրա քաղաքական, ռազմական և տնտեսական հզորության զարգացման ճանապարհին¹:

Արդեն 1922թ. հունվարի 26-29-ին կայացած Հայաստանի Կոմկուսի 1-ին համագումարում Ալ. Մյասնիկյանը հանդես եկավ «խորհրդային շինարարության և անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիայի մասին» զեկուցմամբ: Նա առաջին հերթին շեշտեց ազգամիջյան փոխհարաբերությունների կարգավորման և ստեղծվելիք ֆեդերացիայի ունենալիք քաղաքական առավելությունների մասին: Այս առթիվ համագումարը ընդունեց համապատասխան բանաձև ուր միանշանակ շեշտվում էր, որ «Հայաստանում խորհրդային իշխանության կազմակերպությունը և ուժը այս պայմաններում կախված է Վրաստանի և Ադրբեջանի հետ սերտ կապից, այդ առումով ֆեդերացիան լրիվ համապատասխանում է մեր երկրի շահերին»²:

Նման մոտեցումները պաշտպանեց նաև 1922 թ. հունվարի 30-ից փետրվարի 4-ը կայացած ՀՍԽՀ խորհուրդների 1-ին համագումարը, ուր ֆեդերացիայի մասին հանգամանալից զեկուցեց Ա. Մռավյանը: Նա ֆեդերացիան անհրաժեշտ համարեց արտաքին և ներքին վտանգից պաշտպանվելու, երկրամասի տնտեսական կյանքը վերականգնելու առումներով, նրա համոզմամբ՝ ֆեդերացիայի խնդիրը «շատ հասուն է և օրվա պահանջ»։ Այս զեկուցման հիման վրա համագումարը ընդունեց բանաձև, ուր նորոգնտիո Կենտրոնականին հրահանգեց քայլեր ձեռնարկել ֆեդերացիան արագ իրագործելու համար: Ավելորդ չէ նշել, որ համագումարին ներկա էին Կովկասյան բյուրոյի քարտուղար Գ. Օրջոնիկիձեն, Անդրկովկասում ՌԽՖՍՀ ներկայացուցիչ Բ. Լեգրանը, Վրաստանի հեղկոմի նախագահ Ֆ. Մախարաձեն³:

Անդրկովկասի ֆեդերացման խնդիրը հանգամանալից քննարկեց նաև Վրաստանի Կոմկուսի 1-ին համագումարում, որը կայացավ 1922թ. հունվարի 23-ից փետրվարի 1-ը: Համագումարը հաստատում էր հանրապետությունների ֆեդերատիվ միավորման նախնական աշխատանքների արագացման անհրաժեշտությունը, իսկ արդեն համագումարի ընդունած դիմումում նշվում էր, որ անդրկովկասյան երկաթգծի և արտաքին առևտրի միավորումը, ինչպես նաև՝ մաքսային խոչընդոտների վերացումը հանրապետությունների միավորման գործում առաջին քայլերն էին: Կարևորելով այդ ամենը, միաժամանակ նշվում էր, որ միավորման գործը դրանով չպետք է կանգ առնի: Անհրաժեշտ էր համարվում, որպեսզի այդ միասնությունը ամրապնդվեր և ձևակերպվեր «անդրկովկասյան բոլոր հանրապետությունների ֆեդերատիվ մարմին» ստեղծման ձևով, ընդ որում, հանրապետությունների «հարկավոր ու անհրաժեշտ ինքնուրույնություն» պահպանմամբ⁴:

¹ Коммунистическая партия Азербайджана в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК, т. 1, Баку, 1986, с. 66-70.

² ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1. ց. 2. գ. 1. ք. 18-23:

³ ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների, կարմիր բանակայինների խորհուրդների Ա. համագումար, Ե., 1922, էջ 75-85, 119-120:

⁴ Коммунистическая партия Грузии в резолюциях, Тбилиси, 1985, с. 26-33.

Իր հերթին խորհուրդների Համավրաստանյան առաջին համագումարը 1922 թ. փետրվարի 25-ին ևս քննարկեց այս հարցը: Անդրկովկասի ֆեդերացիայի մասին զեկուցեց Ս. Օրախելաշվիլին: Նա լուսաբանեց դրա անհրաժեշտությունը և ցույց տվեց սպասվելիք առավելությունները: Համագումարի ընդունած բանաձևում Վրաստանի ԿԳԿ-ին պարտավորեցնում էին առաջին իսկ միստում հարց դնել Ադրբեջանի և Հայաստանի հետ ֆեդերատիվ միության անցկացման մասին: Համագումարը ընդունեց ՌԿ(բ)Կ Կենտկոմին ուղղված ողջույնի բանաձև, ուր միանշանակ շեշտվում էր. «Հավատում ենք, որ Անդրկովկասի աշխատավորների եղբայրական միասնությունը, կապերը Ռուսաստանի աշխատավորների հետ ֆեդերացիայի ձևով ավելի կամրապնդվի ՌԿ(բ)Կ գլխավորությամբ»: Իսկ ընդունած բանաձևում շեշտվում էր քաղաքական, ռազմական և տնտեսական ուղորտներում միավորման անհապաղ անհրաժեշտությունը: Ընդորում յուրաքանչյուր հանրապետության պետական անկախ գոյությամբ¹:

1922թ. փետրվարի 2-7-ին կայացավ Ադրբեջանի Կոմկուսի չորրորդ համագումարը: Այդտեղ Անդրկովկասի ֆեդերացիայի մասին զեկուցեց Ս. Կիրովը: Ի դեպ, տեղին է հիշատակել, որ այս հարցը սկզբում չկար օրակարգում, այլ մտցվեց աշխատանքի ընթացքում: Ինչևէ, համագումարը ընդունեց հատուկ բանաձև, ուր նշվում էին 1918թ. Ռուսաստանից Անդրկովկասի բաժանման աղետալից հետևանքները: Այդ առումով, տնտեսական քայքայվածության արագ վերացման և արտաքին հակաիեղափոխության դեմ «հզոր ռազմական բռնուցքի» ստեղծման համար անհրաժեշտ էր համարվում անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիայի գործնական իրականացումը²:

Կատարված աշխատանքներն ամփոփեց Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարը, որը կայացավ 1922 թ. փետրվարի 18-22-ին: Անդրկովկասի ֆեդերացիայի մասին Շ. Էլիավայի զեկուցումը, ինչպես նաև՝ միութենական պայմանագիրն ու բարձրագույն տնտեսական խորհրդի մասին կանոնադրությունը հաստատվեց առանց քննարկման: Կովկասյան բյուրոյի փոխարեն ստեղծվեց ՌԿ(բ)Կ Անդրկովկասի երկրամասային կոմիտե, որն առաջին իսկ միստոմ փետրվարի 23-ին, քննարկեց Անդրկովկասի ֆեդերացիայի անհապաղ ստեղծման խնդիրը: Անդրերկրկոմը հարցի վերջնական լուծման համար որոշեց հրավիրել հանրապետությունների ԿԳԿ-ների ներկայացուցիչների լիազոր կոնֆլեքտան³:

Այն կայացավ 1922 թ. մարտի 11-12-ին Թիֆլիսում: Յուրաքանչյուր հանրապետությունից մասնակցում էին 25-ական ներկայացուցիչ: Այս մարմինը երկրամասում հանդիսանում էր բարձրագույն պետական օրգանը և ու-

¹ Ахалая И. Д., Революционные комитеты Грузии, Сухуми, 1968, с. 274. Правда Грузии, 1922, 2 марта.

² Коммунистическая партия Азербайджана в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК, т. 1, с. 108.

³ Первый Закавказский съезд коммунистических организаций, Т., 1922, с. 150-162.

ներ մեկ տարվա իրավասություն: Ֆ. Մախարաձեն զեկուցեց քաղաքական խնդիրների միավորման նշանակության մասին: Նա հատկապես շեշտեց այն համոզումը, որ «պարզ և որոշակի հանգել են այն եզրակացության, թե առանց ֆեդերացիայի ստեղծման այլևս գոյատևել չեն կարող, անհնարին է առևտրի խորհրդային իշխանության գոյությունը առանց միավորման»: Կազմակերպչական հարցերը քննարկվեցին Շ. Էլիավայի զեկուցման մեջ: Նրա կարծիքով անհրաժեշտ էր տնտեսական միավորումը համատեղել քաղաքական իշխանության բարձրագույն մարմնի գոյության հետ: Տնտեսական կողմերի մասին զեկուցեց Ալ. Մյասնիկյանը: Ավարտելով աշխատանքները կոնֆերանսը ընտրեց երեք հանձնաժողովներ. 1. Քաղաքական-սահմանդրական՝ Միութենական պայմանագրի նախագծի և Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների Լիազոր կոնֆերանսի մասին կանոնադրության քննարկման համար (հանրապետությունների ԿԳԿ-ների նախագահներ Մախարաձե, Դամբարձումյան, Դաջի), 2. Տնտեսական՝ Բարձրագույն Տնտեսական խորհրդի նախագծի մասին (հանրապետությունների Տնտխորհուրդների նախագահներ Թորոշելիձե, Խանբուլդաղով, Լուկաշին), 3. Կազմակերպչական (Գեզեկորի, Կադիրլի, Շադունց)¹:

Արդեն մարտի 12-ին Լիազոր կոնֆերանսը ընդունեց Անդրկովկասի ֆեդերացիայի Միութենական պայմանագիրը և ԲՏԽ-ի կանոնադրությունը: Ընտրվեց Միութենական խորհրդի նախագահություն՝ Ալ. Մյասնիկյան, Ն. Նարիմանով, Պ. Մոկվանի²: խորհրդի անդամ դարձան նաև Անդրֆեդերացիայի ժողկոմները, Էլիավան (ռազմա-ծովային), Սվանիձեն (ֆինանսներ), Բեկզադյանը (փոստ-հեռագիր), Մուսաբեկովը (արտաքին առևտուր), Յակուբովը (աշխատանք), Թալիբլին (բանգյուղտնեսչություն), երկաթգծի վարչության պետ Շուշկովը և Անդրջեկայի պետ Ռուսանովը:

Փաստորեն, Լիազոր կոնֆերանսը հռչակեց նոր պետա-իրավական միավոր՝ Անդրկովկասի Սոցիալիստական խորհրդային Դանրապետությունների ֆեդերատիվ Միությունը: Այս նոր վարչական միավորի քաղաքական և իրավաբանական նախնական անհրաժեշտ ձևակերպումը տրվեց Միութենական պայմանագրում³:

Դրանով երեք հանրապետությունները մտնում էին սերտ ռազմա-քաղաքական և տնտեսական միության մեջ: Ֆեդերատիվ միության բարձրագույն իշխանություն էր հռչակվում հանրապետությունների ԿԳԿ-ների ներկայացուցիչների Լիազոր կոնֆերանսը՝ հավասարաչափ ընտրված: Գործադիր մարմինը կոնֆերանսին հաշվետու Միութենական խորհուրդն էր, որի անդամները ընտրվում ու հետ էին կանչվում կոնֆերանսի կողմից: Ըստ պայմանագրի՝ Միութենական խորհրդի տնօրինմանն էին անցնում արտաքին քաղաքականությունը, ֆինանսները, արտաքին առևտուրը, հաղորդակցության ուղիները, կապը, պաշտպանության գործը, հակահեղափոխության դեմ

¹Правда Грузии, 1922, 14-15 марта. Бакинские рабочие, 1922, 15 марта.

²Правда Грузии, 1922, 14 марта.

³История советской конституции. В документах. с. 358-359. Советское сотрудничество народов, М., 1972, с. 264-267.

պայաքարը և տնտեսական քաղաքականությունը: Միութենական խորհուրդը պետք է կազմված լիներ նախագահից, տեղակալից և անդամներից՝ ժողկոմներից: Ըստ այդմ, հանրապետություններում համապատասխան ժողկոմատները վերանուն էին՝ բացի Չեկայից: Մյուս կողմից, ռազմական, ֆինանսների, փոստ-հեռագրի ժողկոմատները հանրապետություններում պետք է ունենային իրենց լիազորներին, որոնք անդամի իրավունքով մտնում էին համապատասխան հանրապետության կառավարության մեջ: Միութենական խորհրդին կից գործում էր Բանգյուղտեսչությունը՝ հանրապետական ԲԳՏ-ների ղեկավարման և միավորման համար: Ինչ վերաբերում է տնտեսական բոլոր մարմինների միավորմանը՝ ապա ստեղծվեց Բարձրագույն Տնտեսական խորհուրդ՝ Միութենական խորհրդի մշտական հանձնաժողովի իրավունքներով: ԲՏԽ-ն պետք է կազմեր միասնական տնտեսական պլան՝ այն ներկայացնելով Լիազոր կոնֆերանսի հաստատմանը: Վերջում, տեղին է նշել, որ ԱՄԽՖՅՍ-ն ՌԽՖՍՀ-ի հետ հարաբերություններ էր հաստատում միութենական պայմանագրի հիման վրա:

Անդրադառնալով Լիազոր կոնֆերանսի ընդունած որոշմանը, Ս. Կասյանը նշում էր, որ երեք հանրապետություններում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո նրանք «իրապես» կապվեցին իրար հետ, իսկ արդեն մարտի 12-ին կապվեցին նաև «ձևականորեն», դրանով կապը դարձնելով «անժխտելի ու անքակտելի»: Այդ առումով, նրա համոզմամբ ֆեդերացիան արդյունք չէր «ժամավաճառ մտքի, զրասենյակային սպեկուլյացիայի», այլ այն արգասիք է «օրելիտիվ կյանքի, ժամանակակից համաշխարհային պատմության ընթացքով պայմանավորված կամքի»¹:

Այսպիսով, Անդրկովկասյան Դաշնության ստեղծումը պետա-իրավական տեսանկյունից առաջին սոցիալիստական միութենական ֆեդերատիվ պետության տիպական օրինակն եղավ: Նրա ստեղծումը վկայեց, որ միութենական պետությունն ընդհանուր առմամբ չի հանգեցնում մասնակից հանրապետությունների պետական ինքնուրույնության բնորոշ հատկանիշների վերացմանը և որոշ չափով այն կարող է համատեղվել ֆեդերացիայի ընդհանրական ինքնուրույնության հետ:

Փաստորեն, Անդրկովկասյան Դաշնության ստեղծումը հիմնավորեց նախկինում եղած տեսական և գործնական պետա-իրավական ու քաղաքական այն սկզբունքները, որոնք ձևավորում և արտահայտում են սոցիալիստական ֆեդերալիզմի ամբողջականությունը: Իսկ այս ամենն իրենց արտացոլումն գտան արդեն անդրկովկասյան հանրապետությունների կնքած միութենական պայմանագրում:

¹ Կասյան Ս., Ընտիր երկեր, Ե., 1967, էջ 285-286.

**«ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ» ՀԱՅԵՅԱԿԱՐԳԸ
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ 1952-1953ԹԹ.**

Հայրենական մեծ պատերազմից անմիջապես հետո կոմունիստական կուսակցությունն սկսեց հզոր արշավ մտավորականության շրջանում թուլացած գաղափարական հսկողությունը վերականգնելու համար:

1946թ. օգոստոսի 14-ին ՀամԿ(Բ)Կ կենտկոմն ընդունեց «պատմական» որոշում «Ջվեգդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին (առաջինը ստացավ նկատողություն, երկրորդը՝ փակվեց): Նրանք մեղադրվում էին «կուսակցությանը խորթ գաղափարներ» կրող գործերի՝ հատկապես բանաստեղծուհի Ա. Ախմատովայի և երկիծաբան Մ.Զոշչենկոյի ստեղծագործությունների հրապարակման մեջ¹:

Նույն ոգով ՀամԿ(Բ)Կ կենտկոմը 1947թ. «դատապարտեց» փիլիսոփայության, իսկ 1948թ. երաժշտության բնագավառների «սխալները»: Ըստ վերջին որոշման՝ մի քանի խորհրդային կոմպոզիտորներ, որոնց թվում Վ. Մուրադելին և Ա.Խաչատրյանը, «հեռացել էին ժողովրդական և դասական երաժշտության ավանդույթներից և ընտրել խորհրդային երաժշտությանը խորթ հակաժողովրդական ձևանույական (ֆորմալիստական) ուղղություն»²:

1948թ. վերջերին «ձևամոլության» քննադատության կողքին բացահայտվեց նոր «վնասակար» թեքում՝ «կոսմոպոլիզիզմը»: Իմիջայլոց, «ձևամոլությունը» և «կոսմոպոլիտիզմը» որակվեցին որպես նույն «արևմուտքի առջև խոնարհվելու» գործելակերպի երկու կողմեր:

Գաղափարական հսկողությունը տարածվում էր հոգեկան կյանքի բոլոր բնագավառների վրա: Նույն վստահությամբ, ինչպես պատմագիտության և փիլիսոփայության ասպարեզում, կուսակցության ղեկավարությունը հանդես եկավ որպես և լեզվաբանության, և կենսաբանության, և մաթեմատիկայի օրենսդիր՝ որոշ գիտություններ որակելով որպես «բուրժուական»: Այդպիսի գնահատականի արժանացան գեներտիկան և կիրեռնետիկան: Բանավեճ ծավալվեց նաև լեզվաբանության խնդիրների շուրջ:

ՀԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոն 1948թ. փետրվարի 4-ին և 1949թ. հունիսի 30-ին ընդունեց որոշումներ Հայաստանում լեզվագիտության վիճակի վերաբերյալ³: Մեջբերենք մի պարբերություն հունիսի 30-ի որոշումից. «Հայաստանի լեզվաբանների շրջանում կան գիտնականներ, որոնք ակադեմիկոս Ա. Ծառյանի ղեկավարությամբ մինչև այժմ կանգնած են հնդեվրոպական լեզվագիտության դիրքերում, որը հետևողականորեն իրականացնում է իր գիտահետազոտական և դասախոսական աշխատանքները հետադիմական, ի-

¹ Տես՝ ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերանսների և կենտկոմի պլենումների քանակներում ու որոշումներում, III մաս, Երևան, 1955, էջ 615-619:

² Правда, 1948, 11 февраля.

³ Տես՝ ՀՀ ԷԶԿԺ ԿՊԱ, ֆ.1, ց.28, գ.41, ք.37-39, ց.29, գ.46, ք.48-51:

դեալիստական բուրժուական լեզվագիտության կեղծ-գիտական սկզբունքներով, դրանով փորձելով վարկաբեկել ակադեմիկոս Մառի ուսմունքը լեզվի մասին»¹։ Նմանատիպ պիտակ է ստանում ակադեմիկոս Գ.Ղափանցյանը։ Գ.Սճառյանը ազատվում է դասախոսական աշխատանքից, իսկ Գ.Ղափանցյանը՝ իր գրադեցրած բոլոր պաշտոններից։

1950թ. Ստալինն անձամբ մասնակցեց լեզվաբանության խնդիրներին նվիրված բանավեճին, հանդես եկավ «Մարքսիզմի վերաբերյալ լեզվագիտության մեջ» հոդվածաշարով՝ ընդդեմ Ն.Մառի տեսության և իրադրությունը փոխվեց²։ Ելնելով ստալինյան դրույթներից, ԶԿ(բ)Կ կենտկոմի բյուրոն սխալ համարեց Գ.Ղափանցյանին ու Գ.Սճառյանին աշխատանքից հեռացումը և նրանց վերականգնեց նախկին պաշտոններում։ Կենտկոմի հուլիսի 25-ի որոշմամբ մեղքը բարդվեց «մառական» Արարատ Ղարիբյանի վրա, որը իր կողմնակիցներով «թույլ չէր տվել կարծիքների բախում լեզվագիտության քննադատում»³։

Խորհրդային մտավորականության գաղափարախոսական դիրքերից ճնշման վերջին ակորդը հանդիսացավ մի խումբ պատմաբանների և գրականագետների նկատմամբ մեղադրանքը հայ ժողովրդի 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի պատմությունը և գրականությունը այսպես կոչված «միասնական հոսանքի» դիրքերից շարադրելու մեջ։

1952թ. սեպտեմբերի 18-ին ԶԿ(բ)Կ կենտկոմը քննարկում է «ԳԱ գրականության ինստիտուտի աշխատանքների մասին» 1947թ. հոկտեմբերի 21-ի ընդունված որոշման կատարման մասին հարցը։ Արձանագրելով, որ ինստիտուտը չի կատարել կենտկոմի բյուրոյի նախորդ որոշումը՝ գրականության և հատկապես խորհրդահայ գրականության արդիական հարցերի վերաբերյալ, մարքսիստական լիարժեք գիտական աշխատություններ ստեղծելու մասին, կենտկոմի բյուրոն նշում է, որ ինստիտուտի գիտական արտադրանքում թույլ են տրվել մի շարք գաղափարա-քաղաքական սխալներ և գաղափարախոսական խեղաթյուրումներ։ Դա գրականության դասագրքում թույլ տրված սխալների ելակետ եղել է վնասակար բուրժուական, այսպես կոչված «միասնական հոսանքի» ստեղծումը։ Դա գրականության 19-րդ դարի երկրորդ կեսի բոլոր հիմնական հարցերը վերաբերվել են ազգային-ազատագրական շարժմանը, լռության են մատնվել դասակարգային պայքարի և առանձին խմբերի ու հասարակական հոսանքների մեջ պայքարի հետ կապված հարցերը⁴։

Այնուհետև շեշտվում էր համանման սխալների առկայությունը նաև 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի հասարակական-քաղաքական և ազգային-ազատագրական շարժումների գնահատման վերաբերյալ պատմաբանների և փիլիսոփաների առանձին աշխատություններում⁵։

¹ Նույն տեղում, ց.29, գ.46, ք.50։

² Նույն տեղում, ք.51։

³ Նույն տեղում, ք.1, ց.30, գ.28, ք.160։

⁴ Նույն տեղում, ց.32, գ.32, ք.110։

⁵ Նույն տեղում, ք.111։

«Միասնական հոսանքի» հայեցակարգը լուրջ քննարկման առարկա դարձավ 34(բ) և 16-րդ համագումարում /սեպտեմբեր 1952թ./: Համագումարին ներկայացրած հաշվետու զեկուցման մեջ /զեկ. Գր.Հարությունյան/ մասնավորապես քննադատության է ենթարկվում զրականագետ հորեն Սարգսյանը, որը հայ գրականության դասագրքի ներածությունում «աշխատել է ամեն կերպ մեղմացնել այն արմատական տարբերությունները, որոնք գոյություն են ունեցել Մ.Նալբանդյանի հեղափոխական դեմոկրատիզմի և Ստ.Նազարյանի բուրժուական լիբերալիզմի մեջ»¹:

Համագումարում «միասնական հոսանքի» հայեցակարգի վերլուծությանն էր նվիրված կենտկոմի քարտուղար Զավեն Գրիգորյանի ելույթը: Համաձայն նրա տեսակետի, «հայ բուրժուական մացիոնալիստները փորձում էին հայ հասարակությունը դիտել դասակարգային հակասություններից և դասակարգային պայքարից դուրս՝ բուրժուազիայի շահերը ներկայացնելով որպես հայ ժողովրդի համագային շահերը:

Այդ նպատակով նրանք չարաշահում էին հայերի հայրենասիրական բարձր զգացմունքները, առաջին պլանի վրա քաշելով ազգային-ազգայնագրական պայքարը, փորձում էին վերջինս ենթարկել բուրժուազիայի շահերին»: Եվ որպես վառ օրինակներ բերվում են Բաֆֆու «Կայծեր», «Խենթ», «Զալալեղդին» վեպերը, Ռ.Պատկանյանի ստեղծագործությունները, Գ.Արծրունու հրապարակախոսությունը:

Վերլուծության մեջ ասվում էր, որ «այդ գիծը առանձնապես եռանդազին անց էին կացնում դաշնակները իրենց ավանտյուրիստական գործունեության մեջ, որի նպատակն էր թմրացնել աշխատավորների դասակարգային գիտակցությունը և հաստատել հայ բուրժուազիայի տիրապետությունը»²:

Տեսական այս վերլուծությունից հետո կենտկոմի քարտուղարը իր ասածը ամրապնդում է Ստալինից կատարած մեջբերումներով, որից հետո անդրադառնում է այն գիտնականներին, որոնք «ազգային հարցը անջատում են ընդհանուր քաղաքական հարցերից, այն դարձնում ինքնուրույն հարց, դրանով իսկ գլորվելով բուրժուազիայի և պրոլետարիատի «համատեղ գործողության միասնական հողը» դրույթի դիրքերը, «միասնական հոսանքի» թեորիայի դիրքերը»³:

Եվ նա առաջին հարվածը ուղղում է Աշոտ Յովհաննիսյանի դեմ. «Նացիոնալիստական կոնցեպցիա է զարգացնում Աշոտ Յովհաննիսյանը 19-րդ դարի 50-60-ական թվականների հասարակական հոսանքների, մանավանդ բուրժուական լիբերալ Նազարյանի և ռևոլուցիոն-դեմոկրատ Նալբանդյանի գնահատման հարցում: Այդ ոգով են գրված նրա ոչ միայն հին գործերը՝ Մ.Նալբանդյանի «Անտիպ երկերի»-ի մեկնաբանությունները, այլև նոր աշխատությունը՝ «Միջայել Նալբանդյանը և նրա ժամանակը»⁴:

¹ Տես՝ «Մովետական Հայաստան», 1952, 21 սեպտեմբերի:

² Նույն տեղում, 24 սեպտեմբերի:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

Այս գաղափարախոսության գծով քարտուղարը շարունակելով իր ելույթը, նորից անդրադառնում է Րաֆֆուն. «Միասնական հոսանքի» արատավոր կոնցեպցիայի ազդեցության դրսևորում հանդիսացավ նաև Հայպետհրատի կողմից թույլ տրված սխալ՝ Րաֆֆու «Կայծեր» վեպի հրատարակումը, կցելով նրան քաղաքականապես սխալ առաջաբանը»¹:

ՀԿ(Բ)Կ կենտկոմի համաձայնությամբ Րաֆֆու «Կայծեր» վեպը հորհրդային Հայաստանում առաջին անգամ 1947թ. լույս էր ընծայվել հայերեն, իսկ 1949թ.² ռուսերեն: 1951թ. ամռանը, «Միասնական հոսանքի» դեմ «անհաշտ» պայքարի սկզբին, ՀԿ(Բ)Կ կենտկոմի հանձնարարությամբ Հայաստանի խորհրդային գրողների միության քարտուղարությունը վեպի հրատարակությունը համարեց «քաղաքական սխալ, որովհետև այդ գրվածքը ժողովուրդների մեջ թշնամանք հրահրելու իր բուրժուա-նացիոնալիստական տենդենցով խանգարում է սովետական մարդկանց ինտերնացիոնալ դաստիարակության գործին»³: ՀԿ(Բ)Կ կենտկոմի բյուրոն, 1951թ. օգոստոսի 10-ին քննարկելով Գրողների միության քարտուղարության որոշումը, նշեց, որ այդտեղ «տրվում է «Կայծեր» վեպի ճիշտ գնահատական»³:

Ասկայն նորից վերադառնանք Զ.Գրիգորյանի ելույթին: «Կայծերի» հրատարակման օրինակից հետո նա քերում է «Միասնական հոսանքի» թեորիայի ռեցիդիվի մի այլ օրինակ ևս. Սոսկվարճյան գրականագետ Կամսար Գրիգորյանի կողմից Ռ.Պատկանյանի տված գնահատականը «Հավ-հանճես Թումանյան» գրքում (Լենինգրադ, 1950թ.)⁴: Նրանում հեղինակը գրում է. «Պատկանյանը... կոչ էր անում միավորել ազգային ուժերը՝ հայրենիքի ազատության համար մղվող պայքարում» (էջ 45): Հեղինակի այս միտքը Զ.Գրիգորյանը բացատրում է հետևյալ կերպ. «Այստեղ պարզ երևում է, որ հեղինակը, խոսելով ազգային-ազատագրական շարժման կողմնակիցների մասին՝ ընդհանրապես չի փորձում շերտավորված վերլուծման ենթարկել այդ շարժման դասակարգային ուժերը և ցույց չի տալիս այն տարբեր նպատակներ, որ այդ շարժման մեջ առաջադրում էին առանձին դասակարգեր և նրանց իդեոլոգիաները»⁵:

Այս անցնելով «Միասնական հոսանքի» հայեցակարգի ազդեցության դրսևորումներին՝ նորագույն պատմության առանձին հարցերի ուսումնասիրման բնագավառին, Զ.Գրիգորյանը օրինակ է մատնանշում Խ.Բադալյանի «Անգլո-ամերիկյան գիշատիչ իմպերիալիզմի ազդեցիվ քաղաքականությունը Հայաստանում 1919-1920թթ.» գրքույկը, որը հրատարակել էր ԵՊՀ-ն 1951 թվականին: Պարզվում է, գրքույկի «հեղինակը հանդես բերելով օրեկտիվիստական մոտեցում, չի կարողացել մինչև վերջ մերկացնել դաշնակներին, որպես հայ ժողովրդի ամենաոխսերին թշնամիների ու անգլո-ամե-

¹ Նույն տեղում:

² «Գրական թերթ», 1951, 11 օգոստոսի:

³ ՀՀ ՀԶԿԲ ԿՊԱ, ֆ.1, ց.31, գ.37, ք.57:

⁴ «Սովետական Հայաստան», 1951, 24 սեպտեմբերի:

⁵ Նույն տեղում:

րիկյան իմպերիալիզմի գործակալների, և թույլ է տվել մի շարք կոպիտ սխալներ»¹:

Իհարկե, Խ.Բադալյանը թույլ էր տվել կոպիտ սխալներ, սակայն դրանք այլ կարգի էին, որոնք հետագայում քննադատվեցին և մերժվեցին հայ պատմագիտության կողմից:

Այս փաստերից հետո Ջ.Գրիգորյանը ներկայացնում է «միասնական հոսանքի» քաղաքական կողմը. «Անհրաժեշտ է հասկանալ, որ «միասնական հոսանքի» հարցը մեղ գիտական հարց չէ, ինչպես կարծում են ոմանք: Այդ հարցը մախ և առաջ քաղաքական մշակակություն ունի, մի բան, որ պետք է հստակորեն պատկերացնեն իդեոլոգիական ճակատի մեր աշխատողները»:

Որո՞նք են այդ հարցի քաղաքական կողմերն ըստ Ջ.Գրիգորյանի: Նորից կատարենք մեջբերում մեր ելույթից. «Հայտնի է, որ հայ բուրժուական մացիոնալիստական պատմագիտությունը, կեղծելով պատմական իրականությունը, 19-րդ դարի երկրորդ կեսի հասարակական-քաղաքական հոսանքները քննելիս ընդունում է միայն երկու հոսանք: Ֆեոդալական-կղերական ռեակցիոն հոսանքը և ազգային-ազատագրական պրոգրեսիվ հոսանքը:

Ազգային-ազատագրական հոսանքը ասելով, մացիոնալիստները հասկանում են բուրժուական հոսանքը, որի հաղթանակը պետք է հասցնեի հայ ռեակցիոն բուրժուազիայի տիրապետությանը:

Բուրժուական մացիոնալիստական պատմագիտությունը գիտակցաբար ժխտում էր ռևոլուցիոն-դեմոկրատական շարժման առկայությունը, որն արտահայտում էր հայ աշխատավորության շահերը: Դրանով իսկ բուրժուական մացիոնալիստներն աշխատում էին ապացուցել, որ հայ իրականության մեջ հող չի եղել ռևոլուցիոն դեմոկրատիզմի համար, ձգտում էին թուլացնել ռևոլուցիոն-դեմոկրատական շարժման աճը Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին:

Պաշնակները, շարունակելով բուրժուական-մացիոնալիստական այդ ռեակցիոն գիծը, այն ուղղեցին պրոլետարական ռևոլուցիոն շարժման և բուլշևիկյան պարտիայի դեմ, աշխատելով ցույց տալ, թե 20-րդ դարում հայ իրականության մեջ հող չի եղել սոցիալիստական ռևոլուցիայի համար: Այստեղից մրանք բխեցնում էին իրենց այն զառանցական ու ստահող հերյուրանքները, թե Սովետական իշխանությունը դրսից է փաթաթվել հայ ժողովրդի վզին...

Այդպիսով, այն մարդիկ, որոնք չեն ըմբռնում «միասնական հոսանքի» թերիայի քաղաքական վնասակարությունը և տուրք են տալիս այդ թերիային, օբեկտիվորեն ջուր են լցնում բուրժուական մացիոնալիզմի ջրաղացին:

Այդ սխալների պատճառը, մախ և առաջ, այն է, որ գիտական կադրերի գաղափարական կոփման և մարքսիստական իդեոլոգիայով զինելու ասպարեզում դեռ մինչև այժմ էլ լուրջ թերություններ կան»²:

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, 1952, 24 սեպտեմբերի:

Ելնելով վերոհիշյալից, Ձ.Գրիգորյանը խնդիր է դնում գիտական հիմնարկների և բուհերի կուսակազմակերպությունների և «գաղափարախոսական ճակատի» բոլոր աշխատողների առջև անդուլ կերպով պայքար մղել բուրժուական ազգայնականության ամեն տեսակ դրսևորումների դեմ, մասնավորապես «միասնական հոսանքի» տեսության դեմ¹:

Այս հանձնարարականների հիման վրա ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիան 1952թ. վերջերին կազմակերպեց գիտական բանավեճեր նվիրված «18-20 դարերի հասարակական-քաղաքական հոսանքների և ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրման բուրժուա-ազգայնական հայացքների դրսևորումների մերկացմանը»: Անցկացվեցին երեք բանավեճեր՝ «Հասարակական-քաղաքական հոսանքները 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի հայ ազատագրական շարժման մեջ», «Սխալ հայեցակարգը 19-րդ դարի 50-60-ական թվականների հայ հեղափոխական դեմոկրատների և բուրժուական լիբերալների գնահատելու գործում» և «Ազգային-ազատագրական շարժումները և հասարակական-քաղաքական հոսանքները Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին» թեմաներով²:

Բանավեճերի արդյունքների մասին ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, պատմության ինստիտուտի տնօրեն Արզար Հովհաննիսյանը դեկտեմբերի 26-ին ընդարձակ՝ «ոչ պաշտոնական» նամակով հայտնում է ՀԿ(Բ)Կ Կենտկոմի քարտուղար Գ.Հարությունյանին:

Նշելով, որ առաջին երկու բանավեճերը անցել են ընդհանուր առմամբ բավարար մակարդակով, սակայն երրորդը՝ կենտրոնականը, իր նշանակությամբ չի տվել ոչ մի արդյունք և փաստորեն ծախողվել է: Բանավեճի ծախողման մեղավոր Ար.Հովհաննիսյանը համարում էր ԳԱ փոխարեզիդենտ Մ.Ներսիսյանին, որն իր զեկուցման մեջ «ոչ միայն չբացահայտեց ինչպես իր աշխատանքներում, այնպես էլ այլ պատմաբանների աշխատանքներում (Վ.Պարսամյան և ուրիշներ) պարունակվող լուրջ սխալները, այլև, ըստ էության, նորից կրկնեց հայկական ազգային-ազատագրական շարժումների մասին ոչ մարքսյան հայեցակարգը, որոնք ընկած են նրա «Հայկական ազգային-ազատագրական շարժումները 19-րդ դարի 60-80-ական թվականներին» դոկտորական ատենախոսության հիմքում»³:

Մ. Ներսիսյանի կարծիքով, շարունակում է Ար. Հովհաննիսյանը, հայկական ազգային շարժումը կրում է գյուղացիական-դեմոկրատական բնույթ և նրանում գլխավոր դերը կատարում էր գյուղացիությունը: Այս «հայեցակարգը հակասում էր ազգային շարժման մասին մարքսիստական-լենինյան ուսմունքին, որը զարգացրել և հիմնավորել էր ընկ. Ստալինը»⁴: Առաջնորդը սովորեցնում էր, որ ցանկացած ազգային շարժում կապիտալիզմի դարաշր-

¹ Նույն տեղում:

² ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ.1, ց.33, գ.34, ք.16:

³ Նույն տեղում, ք.25:

⁴ Նույն տեղում, ք.25:

ջանում հանդիսանում էր իր բնույթով և իր էությամբ բուրժուական (Երկեր, հ.2, էջ 311):

Նամակի էջերում Ար.Յովհաննիսյանը վերլուծում է Մ.Ներսիսյանի վերոհիշյալ աշխատության «սխալները» և վերջում նշում. «ես կարծում եմ, որ անհրաժեշտ է հասնել նրան (որը ես չեմ կարող անել), որպեսզի ընկ.Ներսիսյանը այս կամ այն ձևով բացահայտի իր սխալները և միջոցներ ձեռնարկի դրանք ուղղելու համար: Առանց դրան անհնարին է իրագործել կենտրոնական կոմիտեի և անձամբ Ձեր տրված ցուցումները «միասնական հոսանքի» բուրժուա-ազգայնական հայեցակարգի դրսևորումները մինչև վերջ արմատախիլ անելու մասին, մասնավորապես 19-րդ դարի 2-րդ կեսի հասարակական-քաղաքական հոսանքների գնահատման հարցում»¹: Իր համոզմունքը նամակագիրը բացատրում է նրանով, որ ոչ հեռավոր անցյալում ինքն էլ է գտնվել նման վիճակում, սակայն երբ կենտրոնական կոմիտեն 1950թ. ապրիլի 5-ին քննարկել և բացահայտել էր նրա «Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումը 18-րդ դարի 80-ական թվականներին» մեմագրությունում թույլ տված սխալները, նա համոզես էր եկել ինքնաքննադատական հողվածներով՝ նվիրված այդ սխալներին, ապա համոզվել է, որ բարձրացել է իր հեղինակությունը հասարակության մեջ²:

Կենտկոմի առաջին քարտուղարի հանձնարարությամբ պատմաբան-կուսաշխատողներ Ծատուր Աղայանը, Յովհաննես Ինճիկյանը, Լևոն Բաբայանը, Վարդան Ավետիսյանը և նամակի հեղինակ Աբգար Յովհաննիսյանը 1953թ. հունվարի 6-ին ՅԿԿ Կենտկոմ են ներկայացնում բանավեճերի արդյունքների մասին զեկուցագիր, որտեղ Մ.Ներսիսյանի հետ ներկայացվում են նաև Վ.Պարսամյանի և Վ.Ռշտունու «սխալ հայեցակարգերը»³:

Հաջորդ օրը, հունվարի 7-ին ՅԿԿ Կենտկոմի բյուրոն քննարկում և ընդունում է «ՀԽՍՀ ԳԱ հասարակագիտական բաժանմունքի անցկացրած բանավեճերի մասին» որոշումը, որը հանդիսացավ Կենտկոմի՝ «միասնական հոսանքի» քննադատության վերջին անդրադարձը:

ՅԿԿ Կենտկոմի որոշման արձանագրային մասը հիմնականում կրկնում էր Աբգար Յովհաննիսյանի նամակի և 5 պատմաբանների զեկուցագրի բովանդակությունները, միայն ավելացված էր այն, որ Վ.Ռշտունու և Վ.Պարսամյանի աշխատանքները գրված են պատմաբաններ Լեոնի և Աշոտ Յովհաննիսյանի բուրժուա-ազգայնական հայեցակարգի ազդեցության տակ⁴:

ՅԿԿ Կենտկոմի բյուրոն հանձնարարում է ԳԱ հասարակագիտական բաժանմունքի հերթական «Հեղափոխական շարժումները և բուրժուա-ազգայնական հոսանքները ու կուսակցությունները 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին» թեմայով բանավեճում ընդգրկել և խորությամբ լուսաբանել նաև 19-րդ դարի 2-րդ կեսի ազգային-ազատագրական շարժումներին և հա-

¹ Նույն տեղում, ք.26:

² Նույն տեղում, ք.35:

³ Նույն տեղում, ք.15-24:

⁴ Նույն տեղում, գ.26, ք.5:

Ելնելով վերոհիշյալից, Ջ.Գրիգորյանը խնդիր է դնում գիտական հիմնարկների և բուհերի կուսակազմակերպությունների և «գաղափարախոսական ճակատի» բոլոր աշխատողների առջև անդուլ կերպով պայքար մղել բուրժուական ազգայնականության ամեն տեսակ դրսևորումների դեմ, մասնավորապես «միասնական հոսանքի» տեսության դեմ¹:

Այս համծնարարականների հիման վրա ՀիսՄԳ գիտությունների ակադեմիան 1952թ. վերջերին կազմակերպեց գիտական բանավեճեր նվիրված «18-20 դարերի հասարակական-քաղաքական հոսանքների և ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրման բուրժուա-ազգայնական հայացքների դրսևորումների մեկացմանը»: Անցկացվեցին երեք բանավեճեր՝ «Հասարակական-քաղաքական հոսանքները 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի հայ ազատագրական շարժման մեջ», «Սխալ հայեցակարգը 19-րդ դարի 50-60-ական թվականների հայ հեղափոխական դեմոկրատների և բուրժուական լիբերալների գնահատելու գործում» և «Ազգային-ազատագրական շարժումները և հասարակական-քաղաքական հոսանքները Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին» թեմաներով²:

Բանավեճերի արդյունքների մասին ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, պատմության ինստիտուտի տնօրեն Արգար Հովհաննիսյանը դեկտեմբերի 26-ին ընդարձակ՝ «ոչ պաշտոնական» նամակով հայտնում է ՀԿ(Բ)Կ Կենտկոմի քարտուղար Գ.Հարությունյանին:

Նշելով, որ առաջին երկու բանավեճերը անցել են ընդհանուր առմամբ բավարար մակարդակով, սակայն երրորդը՝ կենտրոնականը, իր նշանակությամբ չի տվել ոչ մի արդյունք և փաստորեն ծախսողվել է: Բանավեճի ծախսողման մեղավոր Ար.Հովհաննիսյանը համարում էր ԳԱ փոխարեգիդենտ Մ.Ներսիսյանին, որն իր զեկուցման մեջ «ոչ միայն չբացահայտեց ինչպես իր աշխատանքներում, այնպես էլ այլ պատմաբանների աշխատանքներում (Վ.Պարսամյան և ուրիշներ) պարունակվող լուրջ սխալները, այլև, ըստ էության, նորից կրկնեց հայկական ազգային-ազատագրական շարժումների մասին ոչ մարքայան հայեցակարգը, որոնք ընկած են նրա «Հայկական ազգային-ազատագրական շարժումները 19-րդ դարի 60-80-ական թվականներին» դոկտորական ատենախոսության հիմքում»³:

Մ. Ներսիսյանի կարծիքով, շարունակում է Ար. Հովհաննիսյանը, հայկական ազգային շարժումը կրում է գյուղացիական-դեմոկրատական բնույթ և նրանում գլխավոր դերը կատարում էր գյուղացիությունը: Այս «հայեցակարգը հակասում էր ազգային շարժման մասին մարքսիստական-լենինյան ուսմունքին, որը զարգացրել է հիմնավորել էր ընկ. Ստալինը»: Առաջնորդը սովորեցնում էր, որ ցանկացած ազգային շարժում կապիտալիզմի դարաշր-

¹ Նույն տեղում:

² ՀՀ ՀԲԿԳ ԿՊԱ, ֆ.1, ց.33, գ.34, ք.16:

³ Նույն տեղում, ք.25:

⁴ Նույն տեղում, ք.25:

ջանում հանդիսանում էր իր բնույթով և իր էությամբ բուրժուական (Երկեր, հ.2, էջ 311):

Նամակի էջերում Ար.Յովհաննիսյանը վերլուծում է Մ.Ներսիսյանի վե-րոհիչյալ աշխատության «սխալները» և վերջում նշում. «ես կարծում եմ, որ անհրաժեշտ է հասնել նրան (որը ես չեմ կարող անել), որպեսզի ընկ.Ներ-սիսյանը այս կամ այն ձևով բացահայտի իր սխալները և միջոցներ ձեռնար-կի դրանք ուղղելու համար: Առանց դրան անհնարին է իրազդոթել կենտրո-նական կոմիտեի և ամծամբ Ձեր տրված ցուցումները «միասնական հոսան-քի» բուրժուա-ազգայնական հայեցակարգի դրսևորումները մինչև վերջ ար-մատախիլ անելու մասին, մասնավորապես 19-րդ դարի 2-րդ կեսի հասարա-կական-քաղաքական հոսանքների գնահատման հարցում»¹: Իր համոզմուն-քը նամակագիրը բացատրում է նրանով, որ ոչ հեռավոր անցյալում ինքն էլ է գտնվել նման վիճակում, սակայն երբ կենտրոնական կոմիտեն 1950թ. ապ-րիլի 5-ին քննարկել և բացահայտել էր նրա «Ռուսաստանը և հայ ազատագ-րական շարժումը 18-րդ դարի 80-ական թվականներին» մեմագրությունում թույլ տված սխալները, նա հանդես էր եկել ինքնաքննադատական հողված-ներով՝ նվիրված այդ սխալներին, ապա համոզվել է, որ բարձրացել է իր հե-ղինակությունը հասարակության մեջ²:

Կենտկոմի առաջին քարտուղարի հանձնարարությամբ պատմաբան-կուսաշխատողներ Ծատուր Աղայանը, Յովհաննես Ինճիկյանը, Լևոն Բաբա-յանը, Վարդան Ավետիսյանը և նամակի հեղինակ Աբգար Յովհաննիսյանը 1953թ. հունվարի 6-ին ՅԿԿ Կենտկոմ են ներկայացնում բանավեճերի արդ-յունքների մասին զեկուցագիր, որտեղ Մ.Ներսիսյանի հետ ներկայացվում են նաև Վ.Պարսամյանի և Վ.Ռշտունու «սխալ հայեցակարգերը»³:

Չաջորդ օրը, հունվարի 7-ին ՅԿԿ Կենտկոմի բյուրոն քննարկում և ընդունում է «ՀԽՍՀ ԳԱ հասարակագիտական բաժանմունքի անցկացրած բանավեճերի մասին» որոշումը, որը հանդիսացավ Կենտկոմի՝ «միասնական հոսանքի» քննադատության վերջին անդրադարձը:

ՅԿԿ Կենտկոմի որոշման արձանագրային մասը հիմնականում կրկնում էր Աբգար Յովհաննիսյանի նամակի և 5 պատմաբանների զեկու-ցագրի բովանդակությունները, միայն ավելացված էր այն, որ Վ.Ռշտունու և Վ.Պարսամյանի աշխատանքները գրված են պատմաբաններ Լեոնի և Աշոտ Յովհաննիսյանի բուրժուա-ազգայնական հայեցակարգի ազդեցության տակ⁴:

ՅԿԿ Կենտկոմի բյուրոն հանձնարարում է ԳԱ հասարակագիտական բաժանմունքի հերթական «Չեղափոխական շարժումները և բուրժուա-ազ-գայնական հոսանքները ու կուսակցությունները 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին» թեմայով բանավեճում ընդգրկել և խորությամբ լուսաբանել նաև 19-րդ դարի 2-րդ կեսի ազգային-ազատագրական շարժումներին և հա-

¹ Նույն տեղում, թ.26:

² Նույն տեղում, թ.35:

³ Նույն տեղում, թ.15-24:

⁴ Նույն տեղում, գ.26, թ.5:

սարակական-քաղաքական հոսանքներին վերաբերվող հարցերը, մերկացնել բուրժուա-ազգայնական սխալների դրսևորումները պատմաբանների և գրականագետների տվյալ ժամանակաշրջանին վերաբերվող աշխատություններում¹:

ՀԿ(Բ)Կ Կենտկոմի որոշման ոգով «Սովետական Հայաստան» և «Կոմունիստ» թերթերը հունվարի 9-ին հրապարակում են «Արմատախիլ անել բուրժուա-նացիոնալիստական իդեոլոգիայի ամեն մի դրսևորումը տվետահայ պատմագիտության և գրականագիտության մեջ» վերնագրով խմբագրական հոդվածներ, որտեղ նշվում է, որ բանավեճերի «անբավարար ընթացքը, քննադատության և ինքնաքննադատության թույլ ծավալումը ցույց տվեցին, որ ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի նախագահությունը, հասարակական գիտությունների բաժանմունքը (բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ար. Հովհաննիսյան) և սկզբնական պարտիական կազմակերպությունները անհրաժեշտ լուրջամբ չեն զբաղվել դիսկուսիաները նախապատրաստելու և անցկացնելու խիստ կարևոր գործով»²:

Այս անհիմն մեղադրանքներին ծայրակցեց «Պրավդա» թերթը: Հունվարի 14-ին թերթում տպագրվեց հայաստանյան թղթակից Գ.Հայրյանի «Վեճականապես արմատախիլ անել գիտական աշխատանքներում եղած թերությունները» հոդվածը: ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի, գրականության և պատմության ինստիտուտի, փիլիսոփայության սեկտորի «աշխատանքների անբարեխիղճ վիճակի» մասին: Հոդվածագիրը, մերկայացնելով այդ ինստիտուտներում տիրող «խորթ բարքերը, փոխադարձ երաշխավորությունները, սխալների փոխադարձ ներումը», անզուսպ մեղադրանքների էր ենթարկում առանց այդ էլ կործանման եզրին հայտնված մի շարք պատմաբանների և գրականագետների՝ Ար.Հովհաննիսյանին, Վ.Մկրյանին, Աշ.Հովհաննիսյանին և ուրիշների: Հատկանշական է, որ հոդվածում մերկայացված էին նաև Կենտկոմի քարտուղար Զ.Գրիգորյանի և գեղարվեստական գրականության ու արվեստի բաժնի վարիչ Յ.Մամիկոնյանի «ամենակոպիտ սխալները»³:

Այս հոդվածից շատ չանցած՝ հունվարի 26-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն կատարում է «կազմակերպական հետևություն»՝ պատմության և գրականության ինստիտուտների տնօրեններ Ար.Հովհաննիսյանը և Մ.Մկրյանը ազատվում են զբաղեցրած պաշտոններից⁴: Գրականության ինստիտուտի տնօրեն է նշանակվում կուսակցական աշխատանքում թրծված Յ.Մամիկոնյանը, իսկ պատմության ինստիտուտի տնօրեն՝ Ս.Երեմյանը:

Խորհրդափայ մտավորականության դեմ ձեռնարկված «միասնական հոսանքի» կեղծ արշավն ավարտվեց Ստալինի վերափաս մահով և անհնարին է կանխատեսել, թե ինչ կլիներ, եթե այդ մահն ուշանար մի քանի տարի:

¹ Նույն տեղում, ք.6:

² «Սովետական Հայաստան», 1953, 9 հունվարի:

³ Правда, 1953, 14 января.

⁴ ՀՀ ԼՁԿԳ ԿԳԱ, ֆ.1, ց.33, գ.26, ք.109-110:

АРМЯНСКИЙ ВОПРОС НА НАЧАЛЬНОМ ЭТАПЕ ХОЛОДНОЙ ВОЙНЫ¹

Подлинно-объективную, научную и целостную историю холодной войны, причины ее возникновения, отдельные аспекты, последствия необходимо изучать именно сейчас, когда, во-первых: на пространстве распадавшегося Советского Союза образовались независимые национальные государства, отсутствует навязанная ее народам коммунистическая идеология. Во-вторых: объективную и правдивую историю любого исторического периода возможно дать лишь спустя определенное время, ведь на изучение периода, который еще не закончился, не стал „историей,,, наложит свой отпечаток фактор субъективизма, невозможности использования засекреченных архивных документов. Не секрет, что один или несколько секретных документов могут изменить всю картину того или иного исторического события. В-третьих: имеется возможность изучать историю холодной войны не изолированно и односторонне: с позиций США-Запада или СССР-Востока, НАТО или Варшавского блока, а сообща, скоординированно, с учетом сложившихся новых геополитических ситуаций, политико-идеологических, военно-экономических, национально-культурных, психологических реалий. В этом отношении приобретает большое значение налаживание международных контактов и совместная работа ученых. В истории холодной войны не второстепенное место занимает Армянский вопрос - поднятие которого на заре начала холодной войны некоторыми, в основном западными, исследователями связывается с „планами экспансии Сталина в отношении Турции“, „расширением коммунизма на Ближнем Востоке“.

Как известно- по московскому русско-турецкому договору от 16 марта 1921г. Советской Россией были незаконно уступлены Турции /вопрос ре-

¹ Статья в виде доклада была представлена на состоявшемся в г.Тбилиси 2 октября 2000г. Международном семинаре по теме „Азербайджан, Армения, Грузия и холодная война... Созданный в 1999г. по инициативе Архива национальной безопасности при Университете Джорджа Вашингтона /США/ в партнерстве с Проектом международной истории холодной войны при международном Центре Вудро Вильсона /США/ международный проект „Грузия, Армения, Азербайджан в период холодной войны,, имеет цель привлечь ученых – историков, архивистов, социологов и т.д. – стран Закавказья к международной исследовательской деятельности по освещению неизвестных аспектов „холодной войны,, ее начала и конца, ее кризисов и последствий, имевших место оттепелях и т.д. С армянской стороны на семинаре выступил также к.и.н. А.Вираван. Участникам международной встречи было зачтено приветствие и некоторые предложения относительно повестки дня предстоящей в 2001г. Международной конференции Академика НАН РА Г.А.Аветисяна.

шался без участия армянской стороны/ территории Армении-Карс и Ардаган, Сурмалинский уезд /со священной для армян горой Арарат/; под протекторат Советского Азербайджана был передан Нахичеванский уезд /спустя несколько месяцев большевиками Азербайджану был незаконно передан и Нагорный Карабах/. Вопрос о Западной Армении на конференции дипломатией на Лозаннской конференции 1922-1923гг. С этого периода восприятие Армянского вопроса предполагает восстановление исторической справедливости во всем ее объеме: всемирное признание геноцида армян 1915-1923гг., возмещение Турцией моральных, материальных и территориальных убытков.

В условиях, когда находившаяся в составе СССР Советская Армения была вынуждена определенное время хранить молчание, дело борьбы за справедливое решение Армянского вопроса возглавила армянская диаспора. Являясь одним из последствий геноцида и выступая носителем исторической памяти, армянская диаспора стала движущей силой борьбы за восстановление исторической справедливости, своих прав на историческую родину - Западную Армению. Надо отметить активную этнополитическую деятельность армянской диаспоры, всех ее организаций, армянских национальных партий, общественных движений, армянской церкви в деле возвращения Армянского вопроса в сферу международной политики с целью воссоединения отторгнутых армянских территорий к Советской Армении. К концу Второй мировой войны, в ходе которой десятки тысяч армян диаспоры сражались в армиях союзников, в рядах сопротивления и партизанских отрядах, оказывали материальную и финансовую помощь /в 1943г. в Нью-Йорке была создана антифашистская организация армян США в целях оказания помощи СССР и Советской Армении/, успехи Красной и союзнических армий возбудили в диаспоре надежду на справедливое решение Армянского вопроса. Надежды усилило и заявление Советского правительства от 19 марта 1945г. о денонсации советско-турецкого договора от 17 декабря 1925г. о дружбе и нейтралитете, как не соответствующего новой международной обстановке и нуждающегося в серьезном улучшении¹. Уже 7 апреля 1945г. действующий в Нью-Йорке Армянский Национальный комитет направил телеграмму Маршалу Сталину с надеждой, что тот не забыл декрет Советской России „ О Турецкой Армении „от 29 декабря 1917г. и содействует справедливым требованиям армянского народа². Особенно большие надежды были связаны с открывающимся в апреле 1945г. в Сан-Франциско конференции Объединенных Наций. Армянские национальные

¹ Внешняя политика Советского Союза в период Отечественной войны. Документы и материалы, т.3, Москва, 1947, с.146.

² ЦГА ДОПО РА, ф.1, оп.26, д.47, лл.145-146.

организации США обратились к конференции меморандумами по Армянскому вопросу, требуя его справедливого решения¹. Отмечалось, что это даст возможность армянам диаспоры наконец вернуться к своим потерянным очагам. В дальнейшем диаспорскими организациями были представлены обращения также к руководителям держав победительниц на Берлинской /Потсдамской/ конференции /август 1945г./, сессии Совета Министров иностранных дел в Лондоне /сентябрь 1945г./, Московскому совещанию министров иностранных дел трех держав /декабрь 1945г./, 1-ой сессии Генеральной Ассамблеи ООН в Лондоне /январь 1946г./ и т.д. 29 ноября 1945г. Католикос всех армян Геворг 6-ой обратился к главам правительств СССР, США и Великобритании с требованием о присоединении к Советской Армении территорий отторгнутых Турцией. Эти и многочисленные другие документы под грифом „совершенно секретно,, переправлялись советскому руководству².

Вопрос возвращения армянских территорий, поднятый диаспорой с конца 1944г., был поддержан правительством Советской Армении и поднят перед правительством СССР. Заметим, что добавлением к Советской Конституции от 1 февраля 1944г. республикам СССР предоставлялось право руководить делом своей национальной обороны и внешней политики. 15 мая 1945г. первый секретарь ЦК компартии Армении Григор Арутюнян обратился к И. Сталину с просьбой разрешить организовать возвращение зарубежных армян в Советскую Армению³. 6 июля Арутюнян вновь обращается к Сталину и Молотову с сообщением, что в Армении и диаспоре широко поднимается вопрос возвращения армянских территорий и есть надежда, что Советское правительство, которое содействовало объединению украинского, белорусского и других народов, пойдет навстречу желаниям армянского народа и на предстоящей „встрече трех руководителей великих держав будет ставить вопрос об объединении с территорией Советской Армении-территорий, отошедших к Турции после первой мировой войны“. В письме дипломатически намекалось, „что надо требовать восстановления границ 1914 года и передачи бывшей Карсской области и Сурмалинского уезда Армении“, указывалось, что с этим связывается также вопрос переселения зарубежных армян⁴. Интересен тот факт, что на состоявшихся в Москве в июне 1945г. советско-турецких переговорах об урегулировании отношений в связи с денонсацией договора 1925г. советская сторона уже заявила, что не против заключения союзнического договора на условиях, если Турция вернет некоторые армянские и грузинские территории. Соглашение не состоялось.

¹ Там же, оп.34, д.28, лл.46-64.

² Там же, ф.1, оп.26, д.47, оп.34, д.28 и т.д.

³ Там же, ф.1, оп.034, д.27, лл.33-34.

⁴ Там же, лл.40-43.

Вопрос возвращения территорий Карса и Ардагана был поднят советской делегацией на Берлинской /Потсдамской/ конференции, однако встретив упорное сопротивление США и Англии, она не настояла на его включение в повестку дня конференции. Несмотря на это-вопрос на конференции все таки был затронут в связи с вопросом о черноморских проливах Турции. На шестом заседании 22 июля 1945г. У.Черчилль обращает внимание И. Сталина на недопустимость пересмотра восточной границы Турции и об необходимости урегулирования советско-турецких отношений. По указанию Сталина Молотов заявляет, что советская сторона считает советско-турецкую границу несправедливой, так как Турция в 1921г. аннексировала известные территории Карса, Ардвина и Ардагана у Советской Армении и Грузии - во имя справедливости Турция должна вернуть эти территории. 23 июля вопрос в том же духе затронул и Сталин, заявив, что если Турция хочет подписать союзный договор, то должна пересмотреть советско-турецкую границу, в противном случае-вопрос о союзе исключается. Советская сторона выразила готовность подписать отдельное соглашение по вопросу черноморских проливов¹. В связи с этим надо отметить, что у некоторых исследователей вопроса сложилось определенное мнение, что территориальные требования СССР однозначно являлись лишь средством - нажима на Турцию с целью пересмотреть режим черноморских проливов и добиться их контролирования. Такие документы в армянских архивах встречаются², но есть и другие, например, американский политический - обозреватель Р. Миллер комментируя вопрос замечает, что не одобряя политику СССР по отношению Ирана, Маньчжурии, Восточной Европы, находит, что по отношению к Турции Советское правительство поступает правильно, поддерживая требования армян. Вместе с тем он считает, что - "американское правительство в данном случае не должно противодействовать желаниям армян, а наоборот, выразить симпатию русским начинаниям в этом деле"³. Отметим, что уже осенью 1945г. движение за воссоединение армянского народа и возвращение отторгнутых Турцией армянских территорий приняло в США довольно-таки значительные размеры. Группой видных американских политических, религиозных деятелей, искусства и культуры был создан "Американский комитет борьбы за права армян". Комитет, развернувший широкую кампанию в поддержку армянских требований, направил ряд обращений в ООН, в частности к делегации США, а также государственным деятелям США, совместно с

¹ Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941-1945гг.Т.6.Берлинская /Потсдамская/ конференция руководителей трех союзных держав-СССР,США и Великобритания.Св.док.,Москва,1984,док.#1,с.37-38, док.#13,с.135-136, док.#16,с.149.

² ЦГА ДОПО РА, ф.1,оп26,д.47,лл.161-166.

³ Там же, л. 172.

“Армянским Национальным Советом в Америке” организовал в США ряд митингов в защиту Армянского вопроса. В письме, опубликованном в мае 1946г. в „Нью-Йорк Таймсе„, председатель „Американского комитета борьбы за права армян„ Эдвин Смит пишет, что некоторые влиятельные американские круги, к сожалению, возражают против справедливых требований армян лишь по той причине, что это послужит стратегическим и экономическим интересам СССР. По этому поводу Смит заявляет: „Этот аргумент представляет собой призыв игнорировать требования человечности и справедливости только потому, что в результате будет случайно оказана помощь одному из великих союзников в недавней войне. Такая позиция не соответствует идеалам, за которые сражались и умирали американцы, русские, англичане и армяне. Армянский вопрос был создан черными страницами прошлой истории Турции, а не Советским Союзом„¹.

По нашему мнению — территориальные требования Советского правительства по отношению Турции нельзя объяснить ни „планами экспансии Сталина„, ни „расширением коммунизма на Ближнем Востоке„. Здесь уместно говорить о желании Советского руководства пойти навстречу требованиям армянского и грузинского народа, восстановить историческую справедливость. Заметим, что наличие большого контингента советских войск на советско-турецкой границе в годы Второй мировой войны было мерой не наступательного, а оборонительного характера. Известно, что по германо-турецкому официальному соглашению — после возможного падения Сталинграда 26 турецких дивизий, сосредоточенных на границе с Советской Арменией и Грузией, должны были вступить в Закавказье. Турецкое командование с нетерпением ждало вести о захвате фашистами Сталинграда, чтобы отдать долгожданный приказ о переходе советско-турецкой границы.

Борьба армян за справедливое решение Армянского вопроса продолжалась и в следующие годы холодной войны, начало которой, как принято считать, положила речь У.Черчилля, произнесенная в присутствии президента США Г.Трумэна в Фултоне 5 марта 1946г. Турции отводилась роль преграды на пути „расширения советского влияния„ на Ближнем Востоке, против „восточного коммунизма„. Состоявшийся весной 1947г. в Нью-Йорке Всемирный армянский конгресс, в работе которого приняли участие 715 делегатов из 22 стран мира, представляющих 70 зарубежных армянских организаций и 275 их отделений, 31 церковную епархию, поднял вопрос о возвращении Турцией армянских территорий. Выступивший на открытии конгресса сенатор Чарльз У.Тоби высказался за справедливое решение Армянского вопроса, за возвращение армянам Армении в границах предложенных В.Вильсоном в ноябре 1920г. Сенатора поддержали его коллеги, делегаты конгресса. Образованная последним делегация 12 мая

¹ Тамже, лл.175-178.

представила заместителю госсекретаря США меморандум, прося правительство США внести в повестку дня сессии ООН вопрос о территориальных требованиях по отношению Турции. Решение конгресса было передано также в секретариат ООН¹. Однако требования конгресса не нашли защиту в условиях холодной войны, в аспекте нового политического курса США. Принятая в начале апреля 1947г. „Доктрина Трумэна,, под предлогом защиты от „коммунистической опасности,, предусматривала оказание широкой финансовой и военной помощи Турции, гарантируя ее территориальную целостность.

Таким образом, рассматривая любые территориальные требования к Турции через призму „развертывания коммунизма,, США и западноевропейские державы на начальном этапе холодной войны отказались встать на защиту Армянского вопроса. В свою очередь, нарастание напряженности в международных отношениях, образование военно-политических союзов, подписание в апреле 1948г. договора о Североатлантическом союзе /НАТО/, вступление в него Турции, привело к тому, что руководство СССР, игнорируя чаяния армянского народа, 30 мая 1953г. заявило, что „во имя сохранения добрососедских отношений и укрепления мира и безопасности правительства Армении и Грузии сочли возможным отказаться от своих территориальных претензий к Турции...Советский Союз не имеет никаких территориальных претензий к Турции,,².

Начиная с 1965г., когда армяне всего света широко отметили 50-летнюю годовщину геноцида армян, армянский народ вступил в новый активный этап борьбы за справедливое решение Армянского вопроса.

¹ Армянский вопрос, энц., Ереван, 1991, с.105.

² Берлинская /Потсдамская/ конференция ... с.477.

ԳՐԱԳԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մշակութային դարավոր պատմություն ունեցող հայ ժողովուրդն առանձնահատուկ վերաբերմունք է դրսևորել գրադարանային գործի հանդեպ: XIX դարի սկզբներին Չայ առաքելական եկեղեցու հովանու ներքո գործող մատենադարանների կողքին, աշխարհիկ գործիչները և ստեղծեցին գրադարաններ, որոնց գրքային հավաքածուներն աստիճանաբար համալրվում և հարստացնում էին: Արդեն XX դարի սկզբին հայ իրակառության մեջ գործում էին բազմաթիվ գրադարան-ընթերցարաններ, որոնք նպաստում էին պատմական ճակատագրի բերուժով երկփեղկված հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության և կուլտուր-կրթական մակարդակի բարձրացմանը: Դժբախտաբար, առաջին աշխարհամարտի հետևանքով գրադարանային գործը հետագա զարգացում չունեցավ: Գրադարանների մեծ մասը փակվեց:

1918թ. մայիսին Չայաստանի հանրապետության հռչակումը պայմաններ ստեղծեց ազգային մշակույթի զարթոնքի համար:

Չայաստանի Հանրապետության առաջին կառավարությունը վարչապետ Յովհ. Քաջազնունու գլխավորությամբ հարկադրված էր գործել մղձավանջային իրադրության մեջ: Երկիրը գտնվում էր տնտեսական փլուզման, պարենային սուր ճգնաժամի, գաղթականության հոծ զանգվածների առկայության պայմաններում: Այդպիսի իրավիճակում մշակութային, կրթական հարցերը դիտում էին երկրորդական. «Դա խոշոր ու այծմեական պետական գործ է համարվում», - նշում էր Յովհ. Քաջազնունին¹:

Նորաստեղծ իշխանությունը տվյալ ասպարեզում ապավինում էր դարավոր մշակութային պատմական արժանույթն ունեցող ժողովրդի ստեղծագործական ուժին և ոգուն:

1918թ. ինչպես մշակութային բոլոր հիմնարկները, գրադանները ևս գտնվում էին քայքայման եզրին: Միայն հասարակական լայն խավերի աջակցության շնորհիվ հնարավոր էր վերաբացել նախկինում գործող գրադարանները և հիմնել նորերը: Քաղաքային գործադիր խորհուրդների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ 1919 թ. ընթացքում վերաբացվեցին Երևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Նոր Բայազետի քաղաքային գրադարանները: Գրադարանային համակարգի ստեղծման գործում իրենց ներդրումն ունեցան հանրապետությունում գործող հասարակական-քաղաքական կազմակերպությունները: Հատկապես այդ գործում զգալի դեր խաղաց Չայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը, որի ջանքերի շնորհիվ 1919 թ. փետրվար-մայիս ամիսներին Երևանում բացվեցին «Ազատության լույս» և «Ախպեր-Ռաֆայելյան» գրադարան-ընթերցարանները: Այս գրադարաններն ունեին հայերեն և օտար լեզուներով գրքերի հարուստ հավաքածուներ: Ընթերցողների մեծ մասն արևմտահայ գաղթական մտավորակալությունն էր: Հետագայում բացվում են Չայ օրիորդաց կոմիտեի «Ռոստոմի» և Սարիղամիշի գավառային կոմիտեի «Միխո» գրա-

¹ Ջանգ, 14 օգոստոսի, 1918թ., N 45:

դարանները: Հայ մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանի անվամբ գրադարան է ստեղծվում նրա ծննդավայրում՝ Դսեղ գյուղում, որի գրքային հավաքածուն համալրելու նպատակով գյուղացիությունը հանգանակություն է կատարում¹:

Վերաբացվում են նաև դպրոցական գրադարանները: Բավականին հարուստ գրադարաններ ունեին Երևանի ուսուցչական սեմինարիան, արական գիմնազիան, Գայանյան, քեմական դպրոցները²: Գավառային ինքնավարությունների տարրական դպրոցների մեծ մասում գործում էին փոքրիկ գրադարաններ:

1920 թ. սկզբին հանրապետության տարածքում սկսեց գործել մի քանի գերատեսչական գրադարան՝ խորհրդարանի, արտաքին գործերի, աշխատանքի նախարարությունների և այլն³:

Գրադարաններին կից մեծ մասամբ գործում էին ընթերցարաններ, որոնք ոչ միայն բավարարում էին ժողովրդի ընթերցասիրության պահանջը, այլև օգտագործում էին որպես հասարակական-քաղաքական տարրեր միջոցառումների անցկացման օջախ:

Բնակչության կուլտուր-կրթական մակարդակի բարձրացման գործը նոր հիմքերի վրա դնելու նպատակով 1920 թ. մայիսին նախարարների խորհուրդն ընդունեց օրենք՝ քաղաքներում և գավառներում Աշխատանքային կոմիտեի ատներին կից աշխատավորական գրադարան-ընթերցարաններ հիմնելու մասին: Աշխատանքի նախարարությանն այդ նպատակով հատկացվեց 1 մլն. ռուբլի վարկ⁴:

Այսպիսով, կարելի է նշել, որ 1920 թ. աշմանը հանրապետությունում վերականգնվել էր նախկինում գործող գրադարանային համակարգը, ինչպես նաև հիմնվել էին նոր գրադարաններ: Չմայած որոշ քանակական աճին, դեռևս սակավաթիվ էին հարուստ գրքային հավաքածու ունեցող գրադարանները:

Գրադարանային համակարգի ստեղծման ուղղությամբ հատկապես եռանդուն գործունեություն էին ծավալել տարբեր համակարգերում Հանրային կրթության և արվեստի /ԴԿԱ/ նախարարության նախարարներ Գ. Մելիք-Ղարապոյանը, Ս. Տիգրանյանը, Ն. Աղբալյանը և ուրիշներ, որոնց օրոք մշակվեցին և ընդունվեցին մի շարք կարևոր օրենքներ, ֆինանսական օժանդակություն ցույց տրվեց գրադարաններին:

Հանրապետության մշակութային կյանքում կարևոր երևույթ էր հանրային գրադարանի հիմնադրումը: 1919 թ. փետրվարին նախարարների խորհուրդը հավանություն է տալիս ՀԿՆ նախարար Գ. Մելիք-Ղարապոյանի առաջարկությամբ՝ հանրային գրադարան հիմնելու մասին⁵:

Հայ մտավորականության նշանավոր ներկայացուցիչները վաղուց էին երազում մայր հայրենիքում ունենալ ազգային գրադարան: Ուշագրավ է, որ դեռևս 1918 թ. նոյեմբերին «Արշյուր» և «Տարազ» հանդեսների խմբագիր Տիգրան Նազարյանը դիմել էր նախարարին՝ ցանկություն հայտնելով իր տոհմական հարուստ գրադարանը նվիրել ապագա ազգային գրադարանին: «Իմ բոլոր արժեքավոր գույքը,- գրել է նա,- նվեր սրբազան հայրենիքի լուսավորության գործին»⁶: Հայ մտավորականության մեկ

¹ Աշխատավոր, 15 մայիսի, 1919թ., N 20, Աշխատանք, 20 մայիսի, 1919թ., N 22:

² Երկանյան Վ., Հայկական մշկույթը 1800-1917թթ., Երևան, 1982, էջ 77:

³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 66, ք. 59: Ժողովուրդ, 7 փետրվարի, 1920թ., N 26:

⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 168, ք. 1:

⁵ Նույն տեղում, ֆ. 207, ց. 1, գ. 57, ք. 139:

⁶ Նույն տեղում, գ. 26, ք. 7:

այլ ներկայացուցիչ «Գեղարվեստ» հանդեսի խմբագիր Գարեգին Լևոնյանը զեկուցագիր է հղում հանրային կրթության նախարար Գ. Մելիք-Ղարաբյոքյանին, ուր հիմնավորում էր Հայաստանի մատենադարանի /գրադարանի/ կազմակերպման անհրաժեշտությունը, ներկայացնում աշխատանքային ծրագիր և նախահաշիվ: «Հայ պետականության ստեղծման դժվարին գործը հրամայականորեն պահանջ է առաջացնում պետության կենտրոնում ունենալ անհրաժեշտ գրքերի մի հավաքածու, եթե Հայաստանում համալսարան է բացվելու /որը միանգամայն կանկածից դուրս է/, ապա այդ համալսարանից ոչ շատ հեռու պետք է հիմնվի մի անկախ հարուստ և ճոխ ազգային մատենադարան», - գրում է Գ. Լևոնյանը¹:

1919 թ. հուլիսի 4-ին նախարաների խորհուրդն օրենք ընդունեց պետական հանրային մատենադարան հիմնելու մասին: Հաստատվեց գրադարանի հաստիքային ցուցակը և շուրջ 100 հազ. ռուբլի հատկացվեց արժեքավոր և հազվագյուտ գրքերի գնման համար²: Գրադարանի վերատեսուչ նշանակվեց մանկավարժ և բանասեր Ստեփան Կանայանը³: Եւ եռանդուն գործունեություն ծավալեց գրադարանի և պետական այլ հիմնարկների համար անհրաժեշտ գրականության հայթայթման ուղղությամբ: Հանրային կրթության անունից կոչ հղվեց համայն հայությանը նվիրատվություններ կատարել գրադարանային ֆոնդերի ստեղծման համար⁴: Արտերկրում գտնվող Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչներին հանձնարարվեց կազմակերպել գրքերի նվիրատվության գործը: «Ձեր կողմերի հայաշատ վայրերում գտնվող ականավոր և ազդեցիկ անձերի հանձնարարեք, որ հորդոր կարդան իրենց շրջանի հայերին գրքեր, ծեռագրեր, լրագրական ժողովածուներ, հնություններ և նման իրեր նիրաբեղելու մեր մատենադարանին», - ասված է «Կոչում»⁵:

1920թ. մարտին Հայաստանի խորհրդարանը հաստատում է Հանրային գրադարանի կանոնադրությունը: Այն բաղկացած էր 14 կետից: Կանոնադրության մեջ նշվում էր. «Հայաստանի պետական հանրային գրադարանը հիմնվում է պետության մեջ գիտական գործունեության զարգացման և հատկապես Հայաստանի և Առաջավոր Ասիայի հին ու նոր ժողովուրդների բազմակողմանի ուսումնասիրությանը նպաստելու համար»⁶:

Գրադարանը պահվում էր պետության միջոցներով և մասնավոր նվիրաբերություններով: Գրադարանն ստանում էր երեք օրինակ բոլոր հրատարակչություններից, որ լույս էին տեսնում Հայաստանում⁷: Գրադարանի գործունեությունը ղեկավարելու նպատակով ստեղծվում էր խորհուրդ, որի կազմում էին Պետական համալսարանի, ազգագրական-մարդաբանական թանգարանի ներկայացուցիչները, գրադարանապետը և նրա ավագ օգնականը⁸:

Արդեն 1920 թ. ամռանը Ստ. Կանայանի ջանքերով Թիֆլիսում կենտրոնացվել էր 20.000 կտոր գիրք: Գրադարանի համար գնվել էր Ն. Արղության-Երկայնաբա-

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 57, ք. 139:

³ Հառաջ, 11 հունիսի, 1919, N 31:

⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 207, ց. 1, գ. 26, ք. 5:

⁵ Նույն տեղում, գ. 26, ք. 134:

⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 207, ց. 1, գ. 26, ք. 5:

⁷ Նույն տեղում, գ. 26, ք. 134:

⁸ Հայաստանի հանրապետության օրենքների հավաքածու, 10 ապրիլի, 1920 թ., N 6:

գուկի հարուստ և արժեքավոր գրադարանը, որը բաղկացած էր 10.000 կտոր գրքից¹: Այդ հարուստ գրքային հավաքածուն ընդգրկում էր նվիրատվություններ՝ գրականագետներ Մ. Բեքբերյանի, Տ. Նազարյանի, գրող Մուրացանի և այլոց գրադարանները: Փարիզում Հայաստանի հանրապետության պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանի կողմից ուղարկվել էր 5000 ֆրանկ արժողությամբ եվրոպական լեզուներով գրականություն²: Գրքերի հավաքածուներ էին ուղարկվել Կ.Պոլսից: Կովկասի հայոց բարեգործական և Հայոց ազգագրական ընկերություններն իրենց գրադարանների մի մասը նվիրել էին Հայաստանին:

Գրադարանային ֆոնդերի ստեղծման գործում իրենց ներդրումն ունեցան Մայիլյան եղբայրների կողմից վարձակալած գրախանութը Թիֆլիսում և Կ.Պոլսում գտնվող «Կիլիկիա» գրատունը, որոնք գնում էին մասնագիտական գրականություն հանրապետության համար³:

Անդրկովկասի հանրապետությունների միջև մրցակություն էր սկսվել գրքերի ձեռքբերման համար: 1920 թ. մարտին ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը տեղեկացնում էր ՀԿԱՆ նախարարին, որ Ադրբեջանի վարչապետ Ուսուբբեկովը թույլ չի տալիս Հայաստան տեղափոխել Բաքվի հայոց մարդասիրական ընկերության գրադարանը, քանի որ դա քաղաքի միակ հարուստ գրադարանն էր, որից օգտվում էին ամբողջ բնակչությունը, առանց ազգային խտրականության: Ադրբեջանի կառավարությունը համաձայնվում է միայն անհատական գրադարանների տեղափոխմանը⁴: Վրաստանի կառավարությունն իր հերթին բազմաթիվ արգելքներ էր հարուցում Հանրային մատենադարանի գրքային հավաքածուն և գույքը Թիֆլիսից Հայաստան տեղափոխելու հարցում: Միայն 1921 թ., երբ հաստատվել էին խորհրդային կարգեր երկու հանրապետություններում, հնարավոր եղավ տեղափոխել արժեքավոր գրքային հավաքածուն:

Այդպիսով, իր գոյության երկու և կես տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում զգալի աշխատանք կատարվեց գրադարանային համակարգի ստեղծման գործում: Դրվեց Հանրային պետական գրադարանի հիմքը:

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 156, ք. 48, ֆ. 207, ց. 1, գ. 334, ք. 12:

² Ժողովուրդ, 9 մայիսի, 1919 թ., N 49, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 207, ց. 1, գ. 334, ք. 12:

³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 196, ց. 1, գ. 23, ք. 14, ֆ. 207, ց. 1, գ. 334, ք. 183:

⁴ Նույն տեղում, ֆ. 207, ց. 1, գ. 334, ք. 16-17:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Է. ՂԱՆԻԵՅԱՆ ՎՈԱՄՐԱՊԻՆԻ ԱՐՔԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻՆ	3
Ն. ՂԱՆԻԵՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՆՉԻՆ ՄՆԴՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՊԱՏՄԱՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ՄԵԹՈԴԸ	7
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ ՀԵՏՔԱԳԵՂՈՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՐՁԱՆԻ IV ԴԱՐԻ II ԿԵՍ-VI ԴԱՐ/ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ԸՈՒՐՁ	12
Ա. ՇԱՂՆԱՅԱՐՅԱՆ ՋԱՔԱՐՑԱՆՆԵՐԻ ԲՈՒՆ ՏՈՀՄԱՆՈՒՆԸ	18
Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱԽԱՋԽԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԸՍՏ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ (16-Դ. Դ. ՎԵՐՁ - 18-Դ. Դ. ՄԿԻՋՔ)	26
Հ. ԹՈՐՈՍՅԱՆ ԷՋՄԻԱՏԻ ՎԱՆԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՅՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ /16-18-Դ. Դ. Դ./	41
Վ. ՄՈՒՐԱԳՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԿԱՐՄԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ 19-Դ. ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՆԱՍՅԱԿԱՆՄ	51
С. МИНАСЯН УЧАСТИЕ АРМЯН НА КАВКАЗСКОМ ФРОНТЕ РУССКО-ТУРЕЦКОЙ ВОЙНЫ 1806-1812	60
Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽՈՒԴԱԲԱՇՇԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ԸՈՒՐՁ	65
Ո. ՊԱՍՊԱՐՅԱՆ ԿԻԼԻԿԻԱՅԻ 19-Դ. ԴԱՐԻ ՎԵՐՁԻ և 20-Դ. ԴԱՐԻ ՄԿՋՔԻ ՄՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ	81
Ա. ՄՈՐՁՈՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՏԻՍՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԸՄԺՈՒՄԸ	91
Վ. ԽԱՌԱՏՅԱՆ ԼՈՒՈՒ ԵՎ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՀԱՐՑԸ 1919 թ. ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ	98
Մ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՄԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՅԻՆ ԴԻՎԱԳՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՄԱՍՈՒԼՈՒՄ /1918-1920թթ./	104

Ա. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

ԱՆԴՐԿՈՎԱԿԱՄԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՅԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ 108

Ա. ՎԻՐԱՔՅԱՆ

«ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀՈՍՄԱՔԻ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ 1952-1953ԹԹ.

118

Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄՅԱՆՏԻԿԱԿԱՆ ՎՈՓՐՈՍ ՈՒՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈԼՈԴՈՒԹՅԱՆ ԵՐԱՆԻՍԻՆ

126

Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

132

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0066570